

ՍՏՈՒԳՎԱԾ 1951

Նաիրի Զարյան

ՍՏՈՒԳՎԱԾ 1951

ՀԱՏԸՆՏԻՐ



Երեւան Հայպէրհրատ 1951

Լ Ե Ն Ի Ն

Ոչ, դու ապրում ես, առաջնորդ,
Հավերժական, որպես արև.
Հանճարդ, կյանքդ լուսանորդ
Ոչ մի վայրկյան չեն դադարել:

Մեզ ուղեկցում է անխափան
Քո մարտական արթուն ոգին,
Լուսավորում է մեր ճամփան
Յուրաֆանշյուր փայլափոխին:

Մեզ հետ ես դու միշտ անբաժան,
Արյան պես վառ ու կենդանի,
Եվ հողմերում ատելության
Եվ հաղթական սիրո ժամին:

Կարծես երազ է մի ծանոթ,
Որ դու, այդքան մեծ ու անհուն,
Տեղավորված ես Կրեմլի մոտ,
Մի մարմարե դամբարանում:

Ոչ, այդ միայն մի տրտմառիթ
Ձեն է կյանքի և հարազո.
Դու կաս Կրեմլից մինչև Մադրիդ,
Ու Բեռլինից մինչև Տոկիո:

Քո անունով են գրոհում
Կոմունիզմի գեղերն անթիվ,
Գվադալուպի ճակատներում,
Զավոդներում Լենինգրադի:

Մեր երջանիկ հայրենիքի
Յուրաքանչյուր հարկի ներքո
Ու վանդակում ամեն կրծքի
Կա, որպես շունչ, անունը քո:

Կաս դու մեր վառ մանուկների
Շարքերի մեջ ամեն վայրկյան,
Եվ իբրև հասկ արտում բերրի,
Եվ երգերում գուսանական:

Դու կաս, դու կաս, և քեզ նըման
Քո զինակիցն է վառ շողում,
Ապրում էս դու Ստալինյան
Սեծ Օրենքի ամեն տողում:

Լենին, դու կյանք էս ճարակեզ,
Դու պատմությունն էս մարդկային,
Ու շառաշում էս գետի պես
Դեպի օվկիանոս ապագայի:

Եվ քանի դեռ կանգ չի առել
Կյանքի ընթացքը կենսաճորդ,
Դու կփայլես որպես արև,
Ուրպես ուղի և առաջնորդ:

Ս Տ Ա Լ Ի Ն

Աֆիլլեսին Հոմերն երգեց, Ռուստամ Զալին՝ Ֆիրդուսին,
Ոսկեգոծվեց նազար երգով Բոնապարտի փառքը սին,
Հազար կայծակ փայլատակեց մրրիկներում արևաներկ,
Ու շողացին գիշերներում հազար ասուպ, հազար երգ:
Բայց տառապած մարդու համար չէր ճառագել մի արև, ՝
Մարֆսի նրման ճանաչափայլ, էնգելսի պես հանճարեղ,
Լենինի պես բոցակորով, Լենինի պես լուսահորդ,
Եվ քեզ նրման հրստակ ու մեծ, ո՛վ պողպատե Առաջնորդ:
Ձի խավարի ծիրանավառ հորիզոնում պատմության
Ձեր հանճարի արեգնային շորրորդությունը տիտան,
Կրծավալվի նա անսահման, հավերժաբար կարևի,
Եվ կպատռի մըշուշն անցյալ և ապագա դարերի:
Հազար Հոմեր ու Ֆիրդուսի կառնեն զրբիչ ու քննար,
Ու երգելով չեն ըսպառի ձեր մեծությունն անհնար:
Կերգեն բոլոր լեզուներով բանաստեղծներ նորանոր,
Կրտան դարերը ձեզ վայել հուշարձաններ փառավոր:
Իսկ ես, զինվորդդ խանդավառ, հայ լենինյան բանաստեղծ,
Բերում եմ քեզ ժողովրդիս երախտապարտ սիրտը մեծ:
Ծրգում եմ քեզ, մեծ Ստալին, դու հարազատ ամենֆին,
Դու՝ ազգերի երջանկության ճարտարապետ ու դարբին:
Կանգնած էր նա, իմ ժողովուրդն, անկման վիճի եզերֆին՝
Իր հանճարի հազարամյա մարգարիտները ձեռֆին,
Կանգնած էր նա անդունդի մոտ, անօգնական ու հյուծված,
Արյունակից և այլազգի ոսոխներից հալածված,
Մահվան մրթին մրրիկների ամենակույ բերանում՝
Նա, հռչակված բազուկներով, մի էլ քեզ նոր որոնում,
Ազատարար Հոկտեմբերի ֆայլերն այն ժամ թընդացին,
Հընչեց քո ձայնը լենինյան, Լենինի հետ միասին.
Դուք օգնության լույս նետեցիք ժողովրդին իմ չոֆած,

Դուրս կոչեցի՜ մահվան վիհից դեպի կյանքի դուռը բաց:
Նա վեր կացավ գոտեպնդված, ոստենց բափով անագին
Ու միացավ կոմունիզմի աշխարհաերթ բանակին:
Մեռավ լենինն ու պատմության սիրտը մի պահ դադարեց
Ու շողացիր հորիզոնում դու արևի նման մեծ,
Նախորդներիդ հրգուր լույսով և ին լույսով սեփական
Տանում ես դու երկիրն անա դեպի պայծառ ապագան:
Անունըդ խոր երգի նրման մարդկանց հոգին ողողում,
Քեք տալիս ու հիաստանչ հերոսության է մըղում:
Եվ իմ չճանաչ Հայաստանի ծաղկածիծաղ լեռներում
Իր նոր աշխարհն է կառուցում քեզնով լեցուն մի սերունդ:
Եվ ես, նրա ծոցից ելած մի խանդավառ բանաստեղծ,
Քերում եմ քեզ իմ երջանիկ ժողովրդի սերը մեծ:
Երգում եմ քեզ, մեծ Ստալին, դու հարազատ ամենքին,
Դու մարդկային երջանկության ճարտարապետ ու դարբին:

1935, Երևան

ԲԱՆԱՍՏԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ



...Եվ իմ ջանող Հայաստանի ծաղկածիճաղ
լեռներում
իբի հոր աշխարհն է կառուցում փեղակ լեյուն
մի սերունդ :

ՖԻՐԴՈՒՍԻ

Հողմերի պես անցան անդարձ
Շահնշահները քո դարի:
Անցան Դարեհ և Իսֆանդար
Իրենց փառքով «չար» ու «բարի»:
Բայց դու ապրում ես կենդանի,
Դու արշավում ես սրընթաց
Դարերի հետ՝ քո հանճարի
Արևաբաշ ոաշխին նստած:

Դու շունեիր, ո՛վ մեծանուն,
Կախարդական մեր բանալին,
Բայց բաց արիր գանձեր անհուն
Ու գաղտնիքներ զարմանալի:
Դու շունեիր մեր բանալին,
Եվ արծվական քո թևերին
Մահմուդ Շահի փիղն էր նստած
Քարի պես խուլ և հայրենթաց:
Եվ դու նայում էիր անթարթ
Կյանքի կապույտ հեռաստանին՝
Մահմուդ Շահի ծանրաքանդակ
Դղյակի նեղ պատուհանից:
Բայց աչքերով քո լուսածոր
Կյանքը տեսար ավելի շատ,
Ավելի լայն, ավելի խոր,
Քան կարող էր տեսնել մի շահ:
Դու՝ համար դառնաթաթավ
Մայրամուտիդ վերջին պահին,
Խոցված հոգով դու հասկացար,
Նզովեցիր Մահմուդ Շահին:

Դու շունեիր, ո՛վ մեծանում,
Այն բանալին կախարդական,
Որով իմ դարն է բաց անում
Իր և՛ անցյալն, և՛ ապագան:
Բայց հանճարիդ բոցով անժիր,
Տարերային որպես արև,
Դու «Շահնամեն» հորինեցիր՝
Շղթայելով իրար դարեր:

Դու կերտեցիր արձանը վեհ
Քո դարերի հերոսության
Ու բարձրացար ավելի վեր,
Քան քո դարերը շահական:
Ինքըդ եղար ավելի մեծ,
Քան հերոսները քո արի:
Քո հանճարի լույսով փայլեց
Սուրն Թահաֆին Ռուստամ Զալի:
Եվ ես հազար տարի հետո,
Երբ վայելում եմ վերստին
Վեպիդ բեյթերը հոգեթով,—
Քո գոհարները թանկագին,—
Բացսզանչում եմ խանդավառ.
Ապրե՛ս հավետ, մեծ Ֆիրդուսի.
Դու, հիրավի, փառքիդ համար
Ադամանդե սյուն կերտեցիր:
Եվ ինձ այնժամ, անմա՛հ արև,
Վսեմ մի դող է պաշարում:
Մենք երգիչներս, ի՞նչ ենք արել
Դյուցազնական մեր մեծ դարում:

Միլիոնակուլ այս պայքարում
Ծիծաղելի են, Ֆիրդուսի,
Քո Սոհրաբները տաքարյուն,
Մենամարտերը երկուսի:
Դիպչում են գոռ՝ այսօր իրար
Ոչ թե երկու փահլևաններ,
Երկու երկիր — Իրան, Թուրան,
Երկու նիզակ ու երկու նետ:

Ոչ թե գորգեր կոպտաքանդակ,
Ոչ թե փրդեր դանդաղաքայլ,
Ոչ թե թըրեր ծանրադաստակ
Ու վահաններ պղնձափայլ,—
Այլ միլիոններն՝ սպառազեն
Մահվան ահեղ գործիքներով,
Որոնց մասին չի երազել
Ոչ մի դարում ոչ մի հերոս:

Ինչպե՞ս թվել, ո՛վ Ֆիրդուսի,
Մեր մահացման զենքերն ամեն.
Ինչպես գրել մեր օրերի
«Իլիականը» ու «Շահնամեն»:
Մի՞թե կարող էր երազել
Ռոստամը քո ծանրավահան
Թեկուզ փոքրիկ մի մառազի,
Որով զինված մեր երեխան
Մենամարտի կելներ մենակ
Ընդդեմ բոլոր քո Զալերի:
Ի՞նչ փիղ, բարան կդիմանար
Տանկի երթին զարհուրելի:
Մի՞թե կարող էր երազել
Մի շար վհուկ, մի Ահրիման
Ծիծաղեցնող թույնի գազեր,
Մահ անվրեպ և անիմաց:
Ոչ մի վիշապ հեքիաթական
Զի կլանել ոչ մի գլուխ
Այնքան արագ, այնքան ագռռ,
Ոչ մի ցեղի առասպելում,
Որքան արագ՝ մի զրահանավ
Կլափիլզի մեր օրերում
Հերոսների մի ողջ բանակ,
Մի ողջ քաղաք շեն ու եռուն:
Ո՞ր հեքիաթի թևավոր ձին,
Ի՞նչ թունավոր նիզակ ու նետ
Կըմրցեին սավառնակի
Մահ տարածող թռչնի հետ:
Այլ են հիմա կովի, մահվան

Մեքենաներն, և ահավոր:
Այլ են հիմա հերոսության
Ձեն ու իմաստը խորախոր:
Հիմա ամեն երկշոտ թզուկ
Չնչին շիթով մի՝ կապարի
Առյուծորդուն կաղնեբազուկ՝
Հեռվից գետին կտապալի:
Հիմա ուրիշ են մեր դարի
Չափանիշներն հերոսության:
Մենք աշխատանքն էլ դարձրինք
Նրա համար շափ ու սահման:
Ինչ դարերով եղել էր թույն,
Անեծք անանց և նախատինք
Ու ծանրացել «ադամորդու»
Չարքաշ ուսին և ճակատին,
Մենք դարձրինք խորհրդանիշ
Հերոսության ու պարծանքի:
Մենք նոր իմաստ ու լույս տվինք
Աշխարհաշեն աշխատանքին:

Նա էլ է արդ մեզ մոտ հերոս,
Նա էլ է մեծն ու պանծալին,
Ով իր կաղնյա բազուկներով
Ձև է տալիս թուշին, քարին:
Ով երկաթե մագիլներով
Փորում է կուրծքը կուռ՝ հողի,
Հեռնաշղթան երկրից քերում,
Խառնում է ծովն անափ ծովին:
Ով թափանցում է աննկուն
Սառցյա բերդերը բեռի.
Երկրագնդի կաշին պոկում,
Որ նրան նոր կեղև կարի:
Ով կտրատում է պատմության
Կուռ շղթաները դարավոր,
Քանդում դժոխքը հավիտյան,
Կերտում նոր կյանք, նոր առավոտ:
Հերոս է նա մեծ ու վսեմ,
Նա — կառուցողը մեր դարի:

*Մանկան խաղեր են նըրա դեմ
Արշավանքներն Իսկանդարի:*

*Բարդ է նա իր զենքերի պես,
Խորն՝ փորած հանքի նման,
Բարձր է նա իր շենքերի պես,
Իր մըշակած արտերից լայն:
Եվ պահանջում է նա երգեր՝
Վայել նրա հզոր հոգուն,
Ու վիճակված է մեզ երգել
Երգը նրա դժվարագույն:
Երգել նրա ձեռքը ճարտար,
Նրա հոգին մեծ ու եռուն,
Երգել այնպես, որ նա կարդա,
Զգա իրեն մեր երգերում:
Պատմել նրա գործերն ամբողջ,
Նրա կյանքի բարդ էպոպեն:
Երգել այնպես կայտառ յամբով,
Որ սրտի պես երգը տրոփե:
Երգել, և մեր երգի լեզուն
Լինի հստակ, հասկանալի:
Բան հաղորդի սրտին, հոգուն,
Մարդուն հուզի, խանդավառի:
Երգել, և մեր երգը լինի
Աղբյուրի պես պարզ ու զուլալ,
Արբեցընող որպես գինի,
Եվ հարկադրի հրճվել ու լալ:
Մուրճի նըման կայծակնացայտ
Երգը զարկել հոգիներին,
Երգով ձուլել, տաշել մարդկանց,
Երգով հղկել ծուռն ու թերին:
Երգել... ինչպես գարնան անձրև՝
Երգը թափվի կյանքի վրա:
Երգը շողա կայծակնաձև.
Ծիածանի պես հուրհուրա:
Գնդերի պես բանվորական
Երգը քայլի ճամփեքով նոր,
Մտնի և գյուղ, և գործարան,*

Եվ տուն, և սիրտ, և հանքահոր:
Երգը գործի դազգահի մոտ,
Եվ զբոսնի աստղերի տակ,
Ժպտա հեռվից՝ որպես ծանոթ՝
Հույսի պես մեղմ, սիրո պես տաք:
Երգը պայթի որպես նռնակ,
Ցրի բերդերը թշնամու,
Դառնա երկինք և սավառակ,
Եվ շառաչի որպես սամում...

Այդպիսի մեծ երգ է ուզում
Կերտող հերոսը մեր դարի:
Երգ, որ նրա հետ միասին
Քանդի, շինի ու պայքարի:
Երգ, որ լինի հորդ ու վարար,
Պատմությունով ու կյանքով լի:
Երգ, որ լինի կյանքի համար
Եվ զենք, և զարդ, և հայելի:
Երգ, որ հոգին քաղցր կիզի,
Լուսավորի որպես արև,
Եվ քեզ նման, մեծ Ֆիրդուսի,
Երգ, որ ապրի դարե՛ր, դարե՛ր:


Քեզ եմ դիմում, երգի՛ արև,
Քո վեհ ծագման այս օրերին.
Բայց ես խոսում եմ ոչ քեզ հետ,
Այլ իմ երգիչ ընկերների:
Ամեն ոք, ով երգ է գրում,
Ուզում է, որ ապրի հավետ.
Ամեն երգիչ իր երգերում
Այդ հույսն ունի երանավետ:
Եվ վա՛յ նրան, որի սրտում
Չի առկայծում այդ հույսը վառ:
Ամո՛թ նրան, ով չի ձգտում
Իր երգերում ապրել անմար:
Նրա համար գրիչը սուրբ
Ասեղ է լոկ կարկատողի:
Ծանոթ չէ նա հոգեսարսուտ

Ճշմարտության վսեմ դողին:
 Նա կծեփի գույներ բազում,
 Բառեր խրթին՝ միջին դարից,
 Նա կըփայլի որպես ասուպ,
 Որ մի վայրկյան հետո մարի:
 Ով չի ձգտում հոգով ազնիվ
 Ամպածրար կատարներին,
 Նա բլուրին էլ չի հասնի
 Իր երգի գորշ ճանապարհին:
 Դըրա համար՝ փառք ու ներքող
 Քեզ, մեր դարի խիզախ պոետ,
 Որ կամենում ես քո երգով
 Քայլել անմահ՝ դարերի հետ:
 Ես հավատում եմ քո երգին,
 Քո հանճարին հողից հորդող.
 Բայց պաշարում է իմ հոգին
 Մի ահավոր ու քաղցր դող:
 Զգո՛ւյշ եղիր, որպեսզի դու
 Չմոլորվես ճանապարհին,
 Չմոռանաս իմաստությունն
 Ու գոտեմարտը քո դարի:
 Չհավատաս շուրջդ հաժող
 Խավարամոլ մոմիաներին.
 Նըրանց ճաշակը բըրածո
 Զըրոշի երգիդ ուղին.
 Չմոռանաս քո իսկական
 Դյուցազնական ընթերցողին,
 Զկորցրնես դու ապագան,
 Զկորցրնես երկաթուղին:
 Ու հին, մեռած մի կածանով
 Ետ չգնաս դու, սիրելիս,
 Դեպի մթին գերեզմանոցն,
 Ուր վականներն անցյալի:
 Անմահության քո անեզերք
 Տենչը երբեք չի կատարվի,
 Եթե չտաս սեփական երգ,
 Ոգին ու հույզը քո դարի,
 Եթե թողած մեր լենինյան

Էլեկտրական լույսը հրզոր՝
Գանձեր փնտրես դու պատմության
Ուղիներում ձեթի լույսով: •
Թեկուզ և ձեթը վերցրած
Խորենացուց, թեկուզ Դանտից,
Թեկուզ կերտված լինի ճըրագդ
Ամենագուտ ադամանդից:
Քեզ չեն փրկի գանձերը հին
Մթաքանդակ Նարեկացու:
Եվ կտանի քեզ այդ ուղին
Լոկ դեպի մահ ու մոռացում:
Չկորցընես քո բյուրավոր,
Միլիոնավոր ընկերներին,
Որ ինքնասպառ մի ծարավով
Միտքդ մթնում չդեգերի:
Չթափառես ու չըռռաս
Չհոշոտես հոգիդ տրտում
Վագրի նման՝ հավերժ մենակ՝
«Ես»-իդ ամպած անապատում:
Այլ միշտ կապված մնա կյանքին,
Առօրյայի՝ մեր բոցավառ.
Եվ կզտվի ճիշտ քո հոգին,
Լար կգտնի երգի համար:
Թերթի՛ր, կարդա և՛ կյանք, և՛ գիրք,
Լցրու հոգիդ հույզով, խոհով,
Ու հորդառատ երգդ երգիր
Ամրան պես շոգ, աշնան պես հով:
Եվ դու երգիր քո հերոսին
Սիրիր այնպես տաք, սրտալի,
Ինչպես սիրում էր Ֆիրդուսին
Իր քաջ, առյուծ Ռուստամ Զալին,
Ինչպես Հոմերոս Աքիլլեսին,
Ինչպես Սաֆոն իր սիրածին,
Ինչպես ծերով այն տրոյացին՝
Կորդակաճոճ իր զառվակին:
Սիրի՛ր նրան և ճանաչիր,
Ինչպես ծախոթ ես ինքդ քեզ,
Հետո միայն նրան երգիր

Ու քո երգով արի հանդես:
Եվ, հավատա՛, երգդ ապահով՝
Դարերի հետ տեղ կհասնի:
Կանցնես փառքի ճանապարհով
Քո վաստակով սուրբ ու ազնիվ:

1934, հոկտեմբեր



ԵՐԿՈՒ ՀԱՆՃԱՐԵՂ ԳԼՈՒԽ

Վառվում էր վիթխարի մի մայրամուտ
Հեռու հորիզոնից մինչև անտառ,
Խոնարհ թեքվում էին թեթև քամուց
Ծղկնինները սեզ, վեհակատար:

Պարում էին ճկուն ճյուղ ու տերև
Իրիկնային քամու նվազի տակ:
Միայն կաղնին կանգնած էր աներեր՝
Գլուխն անշարժ և իրանով շիտակ:

Եվ այդ պահին այդ անտառի մոտով
Դանդաղաճեմ նրանք անցնում էին՝
Ոսկեզօծված անհուն մայրամուտով,
Իրենց հանճարներով արևային:

Մեկը բարձրահասակ և գեղիրան՝
Որպես նոճին արքայական այգու,
Մյուսը վայրի, կոպիտ կաղնու նման՝
Խռիվ գանգուրներով և ահարկու:

Մեկը մարմնով, հոգով ծանրազարդված
Շքանշաններով իր գոռ դարի,
Վսեմ որպես ոլիմպիական աստված,
Տիպար հզորության ու հանճարի:

Իսկ մյուսը պարզ, անշուք և գլխաբաց,
Կրծքի վրա և ոչ մի ժապավեն,
Ծովածավալ հոգուն ոչ մի կապանք
Ճանապարհով քայլում էր վեհորեն:

Մեկը նայում էր այն շրջապատին
Ու նշմարում ամեն հակասություն,
Որսում ամեն ժպիտ, փառք ու պատիվ,
Կուռքերն էր տապալում և աղոթում:

Մյուսը խորասուզված իր խոհերում՝
Ջէր նկատում կյանքի ճշարն ու բարին»,
Հուժկու իր աչքերով չէր նշմարում
Մանրունքն առօրյական ճանապարհին:

Հայացքը լեռներին արևաներկ՝
Նա պատմության քայլերն էր սոսկ լսում,
Որոնք դարձան հուժկու սիմֆոնիաներ
Նրա հոգու հուզված օվկիանոսում:

Պրանք էին Գյոթենն ու Բեթհովեն,
Խոսքի արքան և հնչյունի արքան,
Որ զբոսնում էին դանդաղորեն
Որսի անտառներում արքայական:

Երգի, իմաստության երկու պետեր՝
Նրանք վիճում էին մեղմ ու հանդարտ,
Մերթ մռայլվում, մերթ ծիծաղում թեթև,
Քրքրելով կյանքի կծիկը բարդ:

Եվ երազում էին երկու արքան՝
Մարդու, կյանքի, ապագայի մասին,
Ծաղրում կարգերը ժանտ ֆեոդալական,
Գիտությունները կեղծ, խավարծին:

Ծաղրում էին նրանք և հոգևոր,
Եվ աշխարհիկ ապուշ արքաներին,
Որոնք որպես դեեր խավարամուլ
Կրանքի ելքերը լույս՝ փակել էին:

Ծաղրում էին կեղծիքը, ճորտությունն
Ու շողոքորթությունն իրենց դարի,
Եվ այն մարդկանց, որոնք իրենց լեզուն
Շինել էին սրբիչ գարշապարի :

Որոնք հացից՝ ազնիվ գործով առած՝
Գերադասում էին ձրի ծակոր.
Հեզ կատուներ տխմար տիրոջ առաջ,
Իսկ արտաքուստ վագրեր ամպագողգոռ:

Նրանք խոսում էին հոգեկորով
Հպարտ ինքնավայել մարդու մասին,
Որ իր ազնիվ բազկով, իր հանճարով
Տիրում էր փառքին և իր հացին,

Որ պիտի դար, քայլեր, այս անտառում,
Կյանքում, հավերժական արևի տակ՝
Առանց ապուշների՝ գլուխ տալու,
Հոգով ազատ և իրանով շիտակ:

Որ խոնարհվեր հիացմունքով հպարտ
Միայն հանճարների փայլի առաջ,
Անցներ առանց վախի, ճակատը պարզ,
Զզվար հոգում ստորովթյան արատ:

Երկու մրրկահույզ երազողներ՝
Նրանք անցել էին եզր ու սահման,
Խոհերն անհուն իրար էին խառնել
Իրկու ծովի կամ երկնքի նման:

Վառվում էր հորիզոնն արևաներկ
Նրանց հոգում՝ նման լուսաբացին...
Թվում էր կյանքը հանճարեղ մի երգ,
Մահվան, կյանքի, ապագայի մասին:

Անցնում էին նրանք, երկու տիտան,
Արքայական որսի ճամփաներով՝
Հրպարտ իրենց անխառն ընկերովթյամբ
Ու երջանիկ՝ իրենց վսեմ սիրով:

Իվ նոճիները հեզ ու հնազանդ՝
Ուժեղացող քամուց թեքվում էին.
Միայն կաղնին խշշում էր անսասան
Կռվի, հպարտության իր երգը հին:

Եվ այդ պահին հանկարծակի լսվեց
նժույգների խրխինջ, շների հաշ,
Եվ արձագանք տվին անտառի մեջ
Հրացանի զարկերը հողմաշաշ:

Արքան էր այդ վերադառնում որսից
Իր արքունի փայլուն շքախմբով,
Ծառս էր լինում նրա ահավոր ձին
Իր արշավում արքայական ճամփով:

Այն ժամանակ Գյոթենն՝ խոսքի արքան,
Ճանապարհից ելավ ակնածաճաճով,
Կանգնեց հեռու որպես վսեմ արձան՝
Խոնարհելով գլուխը գանգրաթով:

Եվ սպասեց այդպես նա գլխահակ,
Ինչպես վայել էր հեզ հպատակին,
Մինչև անցավ իշխողն այն ստահակ՝
Գոռոզության կնճիռը ճակատին:

Իսկ Բեթհովենն ինքնավայել ու լուռ,
Դանդաղ, շարունակեց իրեն ճամփան,
Մինչև անգամ առանց մտիկ տալու
Մեծածխոք երթին արքայական:

Եվ երբ վերջին ձիավորներն անցան
Ու փարատվեց նրանց փողին օդում,
Կանգնեց հզոր հնչյունների արքան,
Որպես կաղնի, տիտանաբար տրտում:

Ու գլխահակ այդպես մնաց կանգնած,
Մինչև հասավ Գյոթենն մռայլ ու հեզ,
Իրար հանդիպեցին երկու հայացք
Երկու կայծակնալից ամպերի պես:

— Ինչպե՞ս չամաչեցիր, — գոչեց ահեղ
Հնչյունների արքան՝ արդեն սառած, —
Որ թեքեցիր գլուխդ հանճարեղ
Այն թագակիր տիմար գլխի առաջ:

**Ու լռություն տիրեց այնուհետեւ,
Երկարատեւ, դաժան մի լռություն,
Մի լռություն, որ կտիրեր, եթե
Հանկարծ անէանար անտառն արթուն:**

**Խոր նայեցին նրանք իրար մի պահ,
Որպես երկու վշտաքանդակ արձան:
Ոչ ոք չարտասանեց էլ ոչ մի բառ,
Եվ, ծանրաճեմ, քաղաք վերադարձան:**

**Իսկ անտառում մարում էր մայրամուտ
Նրան հանգչող սիրո գունատ բոցին:
Խոնարհ թեքվում էին գոռոզ քամուց
Եղևիններն ու գեղիրան նոճին:**

**Հեծում էին անհույս ուռենիներ,
Պարում էր սոսկահար խարտյաշ հացին,
Միայն կաղնին խշշում էր խոլ մի երգ
Գալիք հպարտ սերունդների մասին:**

Ե Ր Ե Վ Ա Ն Ի Ն

Ողջո՛ւյն քեզ, կյանք և Երևա՛ն,
Քո արևին, հողին:
Կրկին ժպտում է քո աշնան
Խարտյաշ գեղեցկուհին:

Գանգուրներով արևաբույր,
Ողկույզներով իր թաց,
Իր բերքերի հրապույրը բուռն
Ահա իմ դեմ հորդած:

Ահա շրջում եմ ես էլի
Ծանոթ փողոցներով:
Նոր հույզերով ու սիրով լի,
Նոր տքնությամբ խըռով:

Հանդիպումներ ջերմագորով
Եվ չար հանդիպումներ —
Լըցնում են սիրտըս նոր կորով
Ու պայքարի նոր եռ:

Եվ ես դիտում եմ կառուցվող
Թաղամասերը քո՝
Աշնան անափ, շռայլաշող
Մայրամուտի ներքո:

Այստեղ կանգնած է նոր մի տուն,
Շուրջն — ավերակ ու հող:
Այստեղ ելնում է հաստատուն
Մի նոր երկինք-քերող:

Եվ կան տներ դեռ կավակող,
Տանիքներով տափակ:
Լի հնավանդ սովորույթով,
Ժանգով-դարբաս ու բակ:

Բայց ես սրտով իմ անհամբեր
Անցնում եմ քիչ առաջ,
Ահա լըրիվ թաղամասեր,
Պողոտաներ քարած:

Տեսնում եմ ես, որ անդադար
Տարիներից հետո
Դարձել ես դու վեմ, որձաքար,
Մարմար ու տուֆ, բետոն:

Եվ չեն լինի նորքի, Կոնդի
Թաղերը գողջ ու հին:
Փողոցներում չի փոշոտվի
Խարտյաջ գեղեցկուհին:

Եվ իրական այս երազում
Ցնդում են առհավետ
Անհատական վերք ու ցասում
Այս հին շենքերի հետ:

Եվ ես կրկին հոգով եռուն
Նետվում եմ կյանքն անմար՝
Պայքարելու և սիրելու
Կառուցելու համար:

Ես պայքարում եղել եմ տաք,
Նետվել եմ միշտ առաջ,
Ուստի պայթել է ոտքիս տակ
Ռումբը մեծաշառաչ:

Հրահրուացել է թշնամին
Ռումբի որոտմունքից,
«Կենդանի եմ, մեկ էլ արի» —
Ասել եմ ես հանգիստ:

Հըռհըռացել է թշնամին,
Իսկ ես նըրան,— «հիմա՛ր,
Այդ մեծ դարձինն է կոփում ինձ՝
Ամբացնելու համար»:

Որ ես նետվեմ ոգով ջլուտ
Ծովն ալեկոծ կյանքի՝
Պայքարելու և ատելու
Եվ սիրելու կրկին:

Եվ ես կապված եմ քո գերող,
Քո մեծ առօրյային
Հազարավոր արմատներով,
Ինչպես հողում կաղնին:

Ու որքան խիստ քամին փրչե
Իմ անտառի վրա,
Այնքան ուժգին կշառաչե
Երգս կրովում գըրած:

Քանի որ իմ հողն անհատակ
Քո առօրյան է մեծ:
Եվ նա ինձ նոր ավյուն կըտա,
Նոր կյանք, ինչպես տվեց:

Ես քեզ սիրում եմ, Երևան,
Ինչպես երգիս ուղին:
Ինձ կախարդում է քո աշնան
Խարոյաշ գեղեցկուհին:

Ս Ե Վ Ա Ն

«Եվ կաբոտած աչքի նման

Քեզ կժպտա վհիտ Սեանս:

Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Սեանս, կապո'ւյտ գեղեցկուհի,
Ծնված մեր վեհ լեռնաշխարհի
Հրակա ընտանիքում:
Աչքեր ունես հստակ ու խոր,
Մերթ ալիքներ հողմաժխոր
Ընդվզումներ հոգուս

Անց է կացել քո ասիերով,
Քեզ կուպտաբար կողոպտելով,
Դարերի կույր հորդան,
Սրբել, տարել է անհոգին
Քո սարերի սոսն ու նոճին,
Զուքսերը քո փարթամ:

Եվ մնացել ես դու քո մերկ,
Հազար անգամ արյունաներկ
Ծնողների գրկում՝
Որպես անմահ սիրո ժառանգ,
Որպես վերջին մխիթարանք,
Զքնազ ու փոթորկում:

Եվ հմայված քո լազուրով՝
Քեզ են նայում վսեմ սիրով
Սարերը գեղամա,
Քեզ են հղում հովի համբույր
Ու վտակներ արծաթաշուր՝
Ծիծաղների նման:

Երկինքն էլ զմայլված քեզնով
Վար է նետում շապիկը մով
Քո պաղպաղուն ուսին,
Տալիս է քեզ արևը հուր
Իր ծիրանին վարդասարսուռ
Ամեն արշալույսին :

Ոսկեծոպ ամպն արած հովհար —
Քեզ են հսկում հսկայաբար
Գյունեյն ու Աղմաղան,
Որ, որպես դուռը հոգեթով,
Հետմիջօրյա խաղից հետո
Դու քոն մտնես խաղաղ:

Հետո քնում է կիսաքուն
Քո պատանի երկրպագուն,
Լուսինն արծաթահեր,
Որ շաղ տա քո քնած լանջին,
Քո երեսին, քո ականջին
Լույսի փսփսուկներ:

Այդ պահերին հոգիս եռուն
Ման է գալիս քո ջրերում
Որպես սիրո նավակ:
Սիրում են քեզ լուսին, պոետ,
Սեա՛ն, բնության դու լուսավետ,
Սքանչելի՛ զավակ:

Ահա լուսնի հետ միասին
Թիկն է տվել սարի ուսին
Մի լենինյան քերթող,
Ու յամբերով հին հայկական,
Սիրագործով եղբոր նման,
Գրում է՝ քեզ ներբող:

Անց են կացել անթիվ դարեր,
Անթիվ սրտեր են դադարել
Սիրով տրոփելուց,

Իմ շուրջդ քար թողել միայն
Հիշատակներ հրնադարյան,
Վանքեր անդամալույծ:

Այստեղ իրար հաջորդեցին
Բռնակալներ խավարածին
Գիշերների նման,
Հազար բանակ, հազար բարաճ
Դևերի պես իրար դիպան —
Սփռելով մութ ու մահ:

Բայց ժողովուրդդ քրտնաթոր,
Նման մամոհն կենսատուր,
Քո ավերին կառչած՝
Մնաց որպես համառ ջանքի,
Տառապանքի, երգի, կյանքի
Հերոսական արձան:

Ժամանակի բազումն անդու
Հանրակործան իր մկունդով
Չտապալեց նրան:
Մեր հանճարի ծաղիկն աճեց
Աղքատության շոր հողմածեծ
Ապառաժի վրա:

Մինչև ելավ նա ապստամբ,
Հուզված մի նոր իմաստությամբ,
Հողմով Հոկտեմբերի.
Ու որոտով նետվեց հեռուն
Խնչպես կապույտ քո ջրերում
Հոնդացող մորիկ:

Ընկավ վերջին արյունոտ լուծն
Ու նախարարը պորտաբույծ
Նրա ցասկոտ զարկով.
Անցավ անցյալդ համրնթաց
Խնչպես հոգուդ վրա նստած
Մառախուղները քո:

Այժմ կանաչ քո լեռներում
Բուլշևիկյան մի նոր սերունդ,
Մի նոր կյանքի ծաղիկ,
Զմայլված նազուն քո լազուրով՝
Քեզ է նայում հզոր սիրով,
Հույզով ստեղծարար:

Նա կփոխի, սիրուն Սեան,
Ճակատագիրըդ հնավանդ,
Ափերըդ մերկ ու քար.
Ուժերըդ նա դուրս կհանի
Քո դարավոր ավազանից
Դեպի մի նոր աշխարհ:

Դուրս կվազի՝ զվարթ Զանգուն,
Քո երեխան լուսագանգուր,
Եզերքներից իր հին,
Եվ կբուսնեն թավ անտառներ,
Կբարձրանան հացի լեռներ
Քո նոր ճանապարհին:

Եվ նժույգները փրփրաբաշ,
Որ արշավում են վաշտ առ վաշտ,
Կույր տարերքին հլու՝
Հենց որ նրանց ասպանդակեն
Սարից փախած հողմերը խենթ,
Առանց ափսոսալու,—

Քո նժույգներն արագավազ —
Հազար լարով սանձահարված
Առաջ կսլանան՝
Թուցընելով երկիրը մեր
Դեպի կատարն արևամերձ,
Երջանկովյունն անանց:

Կզարդարեն ափերըդ մերկ
Հազար մարմար ապարանքներ,
Բուրաստաններ գերող:

Ու նավակներ ծիծաղով լի
Կբեկբեկեն քո հայելին
Զմրուխտ երիզներով:

Երկրե-երկիր ու շուրթեշուրթ
Կզրնգա քաղցրախորհուրդ
Անունդ սիրտ հուզող:
Ամեն կողմից հյուրեր կգան
Առնելու շունչդ դուրեկան
Ու քո համբույրը զով:

Տոն կլինի ամբողջ գիշեր,
Էլեկտրական հազար լույսեր
Դեմքիդ կշողշողան:
Կգտնատվի խանդից անքուն
Քո մոռացված երկրպագուն,
Գիշերվա շեկ տղան:

Եվ արևի հետ միասին,
Թիկն տված սարի ուսին,
Ուրիշ մի բանաստեղծ
Կներբողի ուրիշ երգով
Կախարդական լազուրը քո
Ու փառքդ բարձրաբերձ:

1935, Սևան

ՇՔԱՆՇԱՆԻՆԻ ԵՐԴՈՒՄ

Արշալույսի նման շիկնած հոգով
Եվ ճակատով հպարտ որպես Մասիս՝
Կրում եմ արդ, իմ Հայրենիք, ես քո
Շքանշանը շողշողուն՝ կրծքիս:

Դու հանեցիր ինձ մովթ հատակներից,
Զեռքըս տվիր քնար Հոկտեմբերյան,
Եվ ես դարձա երգիչ անհատնելի
Բազկով իմ, քրտինքով և իմ արյամբ:

Ես երգեցի մեծ ընդվզումը քո
Հին, գազանաբարո աշխարհի դեմ,
Ես հարվածներ տվի իմ թեժ երգով,
Ցավից ոռնաց քո թշնամին դժխեմ:

Ես երգեցի հանճարն Ստալինի,
Եվ քո քաղաքների հեքը տիտան:
Արտաշատի կոլխոզական գինին,
Մրրիկը ծիրանի քո խնդովյան:

Իսկ դու, Սովետական իմ Հայրենիք
Զքնաղ, ամենազոր, իմաստուն մա՛յր,
Սխտատրոփ սիրով դիտում էիր
Որդուդ ոգորումները խանդավառ:

Եվ հաղթանակներիդ այս վեհ տոնին
Դու, որպես մեծ պարզե ծնողական,
Որպես պատիվ ու որպես բարձր նիշ,
Տվիր ինձ լենինյան շքանշան:

Որպիսի՞ անպարփակ երջանկություն:
Կանգնած եմ ես՝ լի խոհերով խորին,
Ծանր պարտքի գիտակցությամբ լեցուն...
Կարծես արևն իջավ իմ ուսերին:

Եվ բարձրանում է իմ հոգում ահա,
Որպես հալոցքը դոմենի խորքում,
Որպես ծովում ալիք՝ մի ափահա,
Բուշեկյան մի սրբազան երդում.—

Երդվում եմ քո առաջ, մե՛ծ Առաջնորդ,
Քրտընքի հորդ գետով իմ ճակատի,
Եվ ձեր առաջ, գնդեր հանքադղորդ,
Եվ ձեզ, կոլխոզնիկներ Արտաշատի:

Դուք, ստախանովյան իմ հերոսներ,
Եվ դուք, Դեմշենկոներ, քույրե՛ր փառքի,
Որոնց բազուկների մեջ անձնվեր՝
Ուժն է հորդում մեր նոր հանրակարգի:

Երդվում եմ ձեր առաջ իմ երգերով,
Բուշեկյան սիրով, եղբայրաբար,
Եվ քեզ, կարմիր մարշալ Վորոշիլով,
Ձեզ, Գոմելի գնդեր սահմանապահ:

Այս վեհ պահին երդվում եմ ձեր առաջ
Երգիս պատվով և այս երջանկությամբ.
Ես չեմ քնի՝ փառքի դափներն առած,
Զի թուլանա ոգին իմ առնաթափ:

Ես կշարունակեմ տփնել համառ,
Երգիս վրա որպես Ստախանով,
Ես կգինվեմ նոր մարտերի համար
Դեպի չգրավված բերդեր տանող:

Ախ, ես գիտեմ՝ դեռ կան բարձրություններ,
Կան գագաթներ անհաս, հավերժական,
Կան հսկաներ երգի, դեռ կա Հոմեր,
Կա Ֆիրդուսի անմահ և Պուշկին կա:

Դեռ պետք է բարձրանա ու բարձրանա
Մեր արվեստի ամրոցը երկնակիպ,
Ամրոցը մեծ՝ լուսավորված-անմահ
Առանջնորդի ոգով արեգնատիպ:

Դեռ կան սրտեր խավալ: ու խարխափող,
Կան խավարում խայթող թռնոտ իժեր,
Որոնց վրա, տիտանական թափով,
Պիտի իջնի երգիս մկունդը դեռ:

Դրա համար տալիս եմ քեզ երդում,
Իմ սոցիալիստական սուրբ Հայրենիք,
Երգիս ոգին ես կպահեմ արթուն,
Փառքիդ թևերի տակ ես չեմ քնի:

Առաջնորդի պատկերն աչքիս առաջ,
Աչքս հռոած անհաս գազաթներին,
Ես կտքենեմ համառ երգիս վրա,
Երգըս ես կսրեմ որպես սվին:

Երգըս կզարդարեմ սիրով վառման,
Երգս ես կհղկեմ հայելու պես
Եվ այն ծերուկ Միշուրինի նման
Կխնամեմ երգիս մրգերը կեզ:

Որ արժանի լինեմ երգովս քեզ,
Քո պարգևին վսեմ և իմաստուն.
Իմ Հայրենի՛ք, կարմիր զինվորի պես
Տալիս եմ քեզ ահա երգչի երդում:

1936, Միսսկ

ՈՂՋՈՒՅՆ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ

Քեզ—արևոտ մեր սարերից, հովիտներից ու մեր սրտից,
Սովետական Հայաստանի աշխատավոր ժողովրդից.
Դու, որ ելար մեր Կովկասյան բազմազազաթ լեռնաստանից,
Շղթայակալ ժողովրդի ցասման անեզր օվկիանոսից,
Ու կոփեցիր լենինիզմի դարբընոցում քո մեծ հոգին,
Քո հանճարի ամպրոպաշող տիտանական թուր-կայծակին,
Դու, որ հսկա լենինի հետ հսկայաբար միշտ անբաժան՝
Դըրիւր հիմքերը երկաթե կոմունիզմի կուսակցութեան,
Դու, որ տեսնում էիր հստակ պայքարների մոտն ու հեռոն,
Նկուղներում ընդհատակյա, Հոկտեմբերյան հրդեհներում,
Դու, որ տարար մեր բանակները դեպի մարտ ու հաղթանակ
Ցարիցիւնյան ստեպներում, Պետերբուրգի պատերի տակ,
Դու, որի ձեռքն ինչպես ամպրոպ, ահեղ ընկավ նրանց գլխին,
Որ պարտութիւն էին նշում ինքնապարտ ժողովրդին,
Դու, մեծ հաղթող, մեծ Առաջնորդ, մեծ շինարարող պատմութեան,
Քեզ ողջունում է ժողովուրդն ու բանաստեղծը հայկական:
Դու փշրեցիր քո հանճարի կայծակնացայտ հարվածներով
Հին աշխարհի բերդերն ամեն, օրենքները գալլաբարո,
Դու գրեցիր սոցիալիզմի երկաթագիր Օրենքը մեծ,
Որ պատմութեան պողպատներն արևի պես լուսավորեց.
Դու լուսատու, անեզր օվկիան, կյանքի ակունքդ վիթխարի,
Լի են քեզնով ժողովուրդներն ու պոետները քո դարի:
Քեզ — արևոտ մեր սարերից, հովիտներից ու մեր սրտից,
Սովետական Հայաստանի վերածնված ժողովրդից,
Ողջուն և սերը սրտաբովս և այս ներբողն իր պոետից:

1986

ԳՈԼՈՐԵՍ ՈՒ ՄԱՐԳԱՐԻՏ

Արարատյան դաշտում փռված են այգիներ խաղողի,
լիճն է ոսկով ու մետաքսով հիասքանչ գիրկը հողի:
Ամեն վազից հնչում է զիւ կանացի կանչ ու ծիծաղ,
Տոն է այնտեղ աշխատանքի, կոլխոզային այգեքաղ:
Նա թռչկոտում է վազից վազ՝ հոգու կրրակն աչքերում
Ու մերթ կանգնած թրմբի վրա, տենդոտ նայում է հեռու:
Կանգնած առողջ և գեղեցիկ որպես կանաչ բարդենի,
Որպես ոգին կոլխոզային առատաբեր դաշտերի:
Թևերն ինչպես դալար վազեր գլխի վրա ոլորած,
Կրծքի ողկույզը դողդոջուն՝ շապկածալի մեջ կորած,
Կիզված են այտերի դեղձերն արարատյան արևից
Ու սև խոշոր աչքերի մեջ կա անսովոր մի թախիծ:
Նայում է նա դեպի հեռուն, հորիզոնին ամպամած:
Ու շրթունքները նռնաճաք՝ ասես դողում են կամաց:
Տեսնում են կին ու տղամարդ — նրբան տանջում է մի ցավ:
Ու խաղողի ճուճը ձեռին մայրը նրբան մոտեցավ:

— Ո՛ւր ես նայում էդպես տխուր ու մտածկոտ, Մարգարի՛տ,
Ով է տըվել մըտածելու ու տխրելու քեզ առիթ:
Արդյոք դըրո՞շը սոցմրցման տըվել ես դու ուրիշի,
Գուցե քեզնից առա՞ջ անցավ օղակը մեր Սիրուշի:

— Ախ ո՛չ, մայրի՛կ, ինձ մոտ է դեռ մրցման դըրոշն անաստան,
Տալիս եմ ես հարվածային աշխատանքի նոր նըշան:
Իմ օղակով է պարծենում շրջանային կոմիտեն,
Ընտրել են ինձ պատգամավոր, չե՞ս իմացել դու միթե:
Նա կըտեսնեմ Ստալինին այն երազած քաղաքում,
Կասեմ նրբան, թե առաջինն է մայրս իմ օղակում:

— Կանա՛շ մընաս, կյանքիս գարուն, էլ ի՞նչ ես հոնքըդ կախել...
Չլինի, թե խաբել է քեզ խոսքըդ առած մի ջահել:

— Ախ ոչ, մայրի՛կ, մի՛ վախենա, այդ շի հուզում իմ հոգին,
Դեռ չեմ տվել ոչ ոքի խոսք ու չեմ սիրել ոչ ոքի:
էն ո՛ր ջահելն ունի հոգի իմ աչքերին դիմացող,
Որի՛ն նայեմ, որ շըշիկնի, չզգա սրտում սիրո դող,
Իմ անունով են երգվում տղերքը մեր շրջանի:
Ում ցանկանամ, ինձ կըսիրի, կզգա իրեն երջանիկ:

— Հիվանդ ես դու, աղջիկը՛ս...

— Ոչ, առողջ եմ, մա՛յր, ես անչափ.
Մարզված ու բաց իմ թևերում, տես՝ ինչ եռանդ կա ու թափ,
Կարող եմ գունդ նետել, վազել՝ տված մազերրս քամուն,
Կարող եմ ես կռվել. փշրել. փոշիացնել թշնամուն:

— Ասա՛, որդի՛ս, էլ ի՛նչ ես դու էդքան հուզված ու խըռով,
Ինչ ես նայում հորիզոնին էդպես ազա՛ն աչքերով.
Միրտըս դողում է երկյուղից... գլխիդ մի բան չբերե՞ս...
Դու էս գիշեր քնի միջին կանչում էիր... «Դուլորես»:

— Այո, մայրի՛կ, Դուլորեսի երկրի համար եմ տրտում,
Դուլորեսին եմ երազում ես երազում, թե արթո՞ւմ:
Աղջիկն է նա Իսպանիայի: Այնտեղ հիմա ամեն կին
Ռազմի դաշտում անահ կռվում է՝ հըրացանը ձեռքին:
Եվ հիտլեռները, այդ դեերն ու դահիճներն աշխարհի,
Հուր են թափում նըրանց գլխին ծովից օդից ու սարից,
Հուր են թափում ու հրդեհում, կործանում գյուղ ու քաղաք,
Ու բարձրանում է հըրդեհում մի սրտակեզ աղաղակ.
«Իսպանացիք, դեպի առաջ,— կանչում է նա լիաթոք,—
Հավ է մեռնել ոտքի վըրա, քան թե ապրել ծնկաչոք:
Իսպանուհիք, լավ է դառնալ հերոսների այրիներ,
Քան թե կանայք վախկոտների ու ֆաշիզմի գերիներ»:
Եվ այդ կանչով Դուլորեսյան այնտեղ կռվում են կանայք,
Ծըխի, բոցի, արյան միջով սողում դեպի հաղթանակ:
Ուզում եմ եմ թռչել այնտեղ, կռվել նրանց շարքերում,
Իմ սրտի մեջ Դուլորեսի բոցոտ արյունն է եռում:
Միրտըս այնտեղ է սըլանում թափով նետված գնդի պես,
Սըրա համար, մա՛յր, ես քընում կանչում էի Դուլորես:

Ա. Ս. ՊՈԽԵԿԻՆԻՆ

Առած քընար զվարթաձայն՝
Դու երգեցիր, ազատություն,
Ու երգըդ վառ այգի նրման
Շիկնեց քո մեծ հաղթենիքում:

Ապստամբեց արյունըդ բոց,
Եվ քո քնարը քնքշալար:
Դու նետեցիր ցարին ձեռնոց,
Երգի սրրով հանդես ելար:

Անհավասար մենամարտում
Մաքառեցիր դու միշտ անպարտ,
Անցար ուղին քո իմաստուն՝
Մի ձեռքիդ սուր, մի ձեռքիդ վարդ:

Ի՞նչն էր տալիս քո քնարին
Այդքան կորով ու քնքշություն,
Քանի որ քո ճանապարհին
Ճաշակեցիր դու այդքան թույն:

Կա՞մքն էր քո սեգ ժողովրդի,
Ազատության ծարա՞վն անհագ,
Բո՞ցն էր հզոր նրա սրտի,
Որ կար նաև քո կրծքի տակ:

Քո բոցարյուն ընկերների
Սե՞րն էր հոգիդ խանդավառում,
Եվ քո հաճառը վիթխարի,
Բուրումնալից, որպես գարուն:

Սիրում էիր դու կյանքը լայն
Կախարդական իր գույներով,
Առվակի ձայնը կըլկըլան,
Անտառի թավ ու երկնի մով:

Սիրում էիր աղմուկ, ժրխոր,
Խոսքի դաշույն, կանացի պար,
Մենակության պահերը խոր.
Ու նեվայի ասիերը քար:

Սիրում էիր գիշերային
Խրախճանքից հետո գընալ
Գտնել խոհուն Չաադակին
Ու ողջ գիշեր նստած մռայլ՝

Քննել, կշռել խիզախաբար
Սթափ հոգով մարգարեի,
Ժողովրդի վիճակը չար
Ու շղթաներն անտանելի:

Հաճախ էիր ճախրում դու ետ,
Մինչև դարերը մըշուշոտ,
Ապստամբում Բրուտոսի հետ,
Հանգստանում Վիրգիլի մոտ:

Ու դարերի հեռվից մըթին
Սուրում էիր նետի նըման,
Նստած երգիչ հրեղեն ձին,
Մինչև այսօրն ու ապագան:

Ծանոթ էր քեզ և հարազատ
Ողջ պատմությանը մարդկային,
Ինչպես նեան մշուշապատ
Ու դայակիդ երգերը հին:

Ձգտում էին նրանք համառ՝
Սառնակ քո հողմը ահագին,
Ու քո երգի նժույզը վառ
Լծել ցարի ձիակառքին:

Ջուգեւի իրենց զահր մըթին
Երգի պայծառ ծիածանով,
Կարգի կոչել ժողովրդին
Պալատական երգչի ձայնով:

Ձգտում էին... Բայց, ո՛վ դու մեծ,
Գահի մոտից այն գարշահոտ
Քո անապակ հոգին դիմեց
Դեպի ազատ ու մաքուր օդ:

Քեզ ժողովուրդը հրմայեց
Անապական իր դանձերով,
Երազներով իր աստղամերձ,
Իր խնդությամբ ու ցավերով,

Դու թովչական քո քրնարով
Ժողովրդի բանակն անցար,
Արքայի հետ անդարձ խռով՝
Պուգաշովին մտերմացար:

Այցի եկար դու կարոտով
Մեր Կովկասյան լեռնաստանին,
Քեզ ողջունեց սիրաթոթով
Հերոսական շերքեզուհին:

Ֆշշաց Թերեքը անհանգիստ,
Հորիզոնում շողաց կայծակ,
Ու Վրաստանը գեղանիստ
Փովեց քո ջերմ հայացքի տակ:

Տեսար այնտեղ՝ հոգով պայծառ
Բայց կաշկանդված մի ժողովուրդ,
Տխուր ժպտով դու բարձրացար
Հայաստանի լեռները ցուրտ:

Տեսար կարիք ու ցնցոտի,
«Թշվառությունն ասիական»,
Ու խոնարհված ժողովրդի .
Հոգին մռայլ ու առնական:

Միաց հոգիդ օվկիանաբար
Ու շառաչեց մրրիկն էլի.
Դու երգեցիր ցասումն արդար
Ընկած մարդկանց ու ցեղերի:

Երգըդ որպես վրրեժի թուր
Ժողովրդի ձեռքին շողաց,
Լուսավորեց սրտերը բոլոր,
Գահի վրա արքան դողաց:

Եվ քեզ վրա նա հարձակվեց
Պալատական իր ամբոխով,
Ինքնակալի ուժով իր մեծ,
Ճորտատիրոջ անարգ ոխով:

Դավով ստոր ու մատնությամբ,
Ժանդարմական մոլի կամքով,
Հալածանքով, զրպարտությամբ,
Մաղրի թույնով ու զրկանքով:

Եվ դու ընկար հոգով անպարտ
Անհավասար մենամարտում,
Մի ձեռքդ սուր, մի ձեռքդ վարդ՝
Մարեց հայացքըդ իմաստուն:

Ընկավ բազուկըդ անկենդան,
Հաղթանակեց դավը մթին:
Բայց երգերիդ հերոսական
Սուրը չընկավ, չընկավ գետին:

Քո փայլուն սուրը ժառանգեց
Քո ժողովուրդը մեծագործ,
Քո ժողովուրդը, որ նետեց
Նոր ցասումով ցարին ձեռնոց:

Ախ, թե լիներ հընարավոր
(Քաղցր է ըզձալ անկարելին),
Դու զարթնեիր հանկարծ մի օր
Ստալինյան մեր օրերին...

Ինչպիսի փառք, ինչպիսի սե՛ր
Կճաշակեր հոգին քո հուր,
Երկիրը քեզ կըողջունեն՝
Ոտքի ելած միահամուռ:

Քեզ Առաջնորդը կընդունեն՝
Կրեմլի պայծառ դահլիճներում,
Քեզ հայրաբար կհամբուրեն,
Հարցեր կտար, մեղմ ու խոհուն:

Նա կշողար քո դեմ, որպես
Մտքի երկինք, հոգու օվկիան,
Եվ կհուզեր, կայրեր նա քեզ
Հզոր, բոցով երջանկության:

Դու կանցնեիր դուցե կրկին
Լեռնակուտակ Հայաստանով,
Քեզ ջուր կտար ոչ թե մի կին
Քսենոֆոնյան մի ամանով:

Քեզ կընդունեն ուրախ սրտով՝
Վերածնված մի ժողովուրդ,
Ու մեր լեռները ծաղկաթով
Զէին թվա այնքան էլ ցուրտ:

Կտեսնեիր երկիրը քո՝
Արփաշայից մինչև Անգար
Ստալինյան մեծ Օրենքով
Միաձուլված հղբայրաբար:

Կտեսնեիր դու նոր աշխարհ
Քո երգերով, սիրով լեցուն,
Որտեղ հիշում է խանդավառ
Քեզ ամեն սիրտ, ամեն լեզու:

Ուր ծավալվում է չորս բոլոր
Երջանկության ծիրանի ծով,
Որտեղ հնչում է երգը՝ նոր,
Հավերժական դղրդոցով:

Վ Ե Ր Ա Ծ Ն Ո Ւ Ն Ի

Հանգստանում էր արեգակը՝ հեռավոր լեռան քով,
Խնչպես հնձվորը՝ ողողված ոսկեհոսուն քրտինքով:
Ծռում էին աշխատանքի մեր բանակները հանդում.
Համայնական արոտներից նախիր ու հոտ եկան տուն:
Փսկ ես կանգնած ոսկի արտում նայում էի լեռներին,
Ու հմայվում աղմուկներով, երանգներով երկրային:

Մի թուփ տեսա ճամփամիջին, ապրեմ-չապրեմ սպիտակ,
Նա կոխոտվել էր, կըռացել անցորդների ոտքի տակ:
Կաթում էր հյուսիս ինչպես արյուն ցողուններից նրա ցած,
Եվ տերևներն էին բուրբ փոշաթաթախ, ծվատված:
Բայց նա պահել էր լուսեղեն իր ծաղիկներն անաղարտ,
Եվ արևով էր ողողված նրա հայացքը հըպարտ,
Ես ցանկացա պոկել ծաղիկը արմատից ու նետել,
Ամենօրյա դանդաղ մահից նրան ընդմիշտ ազատել:
Բայց նա ցողունը լոկ զիջեց՝ պայքարելով մինչև վերջ
Ու խորամուխ արմատներով մնաց կրկին հողի մեջ:
Մընաց... նորից նա կարծակի և նոր ծիլեր և ցողուն
Եվ կըտոկա նախիրների ու հողմերի անցներուն:
Ծտ նայեցի ես մի վայրկյան մոտիկ, հեռու դարերին,
Եվ հիշեցի ի՛մ ժողովուրդ, հերոսական քո ուղին:

Արեւաններկ այս լեռներում, ուր կա երկինք այսքան լուրթ,
Տառապեցիր դու դարերով, իմ ժըրաջա՛ն ժողովուրդ:
Անցավ հազար ահեղ բանակ և կոխոտեց անխընա,
Քեզ տըրորեց որպես ծաղիկ՝ ճամփին ընկած անխընամ.
Անցավ այս վեհ գագաթներով հազար մորիկ, հազար ամառ,
Հազար թըրեր կոտորվեցին կայծակների սաստկությամբ:
Հին արեւելքն ու արեւմուտքն այստեղ իրար բախվեցին

Պղնձակոտ զրահներով, նիզակներով շանթածին:
Անցան պարսիկ բռնակալները ծանրաքայլ փղերով
Հողով, հոգսով ծանրաբեռնված խրճիթներիդ վրայով:
Քանի՜ անգամ հավաքեցին տարան քո հին լեռներից
Նրժույզների երամակներ ու ջորիներ ու երինջ:
Հետո Հոռմի ագահ ու նենգ զորավարն իր եկան
Ու քամեցին արծաթ, ոսկի՝ քո քրտինքից ռամկական:
Դե Ջինգիզ-խանն ասպատակեց գյուղերը քո գետնափոր,
Անցավ ինչպես պտուտահողմ, ինչպես ամպրոպ ահավոր,
Եվ լենկ-Թեմուրն ինչպես հեղեղ քո կիրճերով արշավեց,
Քանդեց-քեց քեզ տեղահան ամբոխներով դառնահեծ:
Եվ քո արյան ու քրտինքի գետերը հորդ և արդար
Քո տնաբույս տերերն էին խըմում ագահ, դարեդար.
Բայց դու կրկին ճամփամիջի փողիներից բարձրացար
Ու ծաղիկներըդ պարզեցիր դեպի արևը պայծառ:
Ընդլրգեցիր տերերիդ դեմ կղերական, աշխարհիկ
Ու նրանց վայր գլորեցիր քո ժայռերից անառիկ:
Չդադարեց կարկաչելուց հավերժաբուխ քո հոգին,
Նման ձյունոտ գագաթներից ներքև իջնող գետակին.
Փուլներ տվիր նկարչական, արշալույսի նման վառ,
Հանճարափայլ Նաղաշների վրձինը նուրբ ու ճարտար,
Շողշողացին ադամանդե տաղերն անմահ Քուլչակի,
Սայաթ-Նովան սփռեց շրույլ երգի գոհար ու հակինթ,
Եվ իբր անանց խորհրդանիշ քո կենսաթով հանճարի՝
Դու ողկույզներ քանդակեցիր քո շենքերին վիթխարի:

Եվ քեզ դիպավ օսմանական սուլթանների թուրը կեռ,
Բերավ քեզ նոր ստրկության ծանրախավար տարիներ.
Եվ ռուսական ցարի դաժան կրունկն իջավ քո մեջքին,
Ճգմեց մարմինըդ հոշոտված ու հոշոտեց քո հոգին:
Անցան Դարեհ ու լենկ-Թեմուր իրենց փառքով արնաներկ.
Ու ծնվեցին երկրի վրա ոսկու խարդախ արքաներ:
Քո տառապած մարմնի վրա բուսավ մի նոր թշնամի
Ավելի ժանտ, քան դահիճներն անցյալ բոլոր դարերի.
Քո թշնամին այդ նենգավոր կոշվում էր հայ փողատեր.
Նա քո արյունը վաճառեց շուկաներում շահաբեր,
Նա լողացավ քո արցունքով ու բախտը քո ծանրագին
Հանձնեց հըլու իր շըների արյունատենչ ոհմակին:

Նրանք իրենց ատելության ոռնոցներից կատաղած
Քեզ մղդեցին զանգվածաբար՝ կոտորածից-կոտորած:
Քանի՜ անգամ դու ծառացար դահիճներիդ հանդիման,
Փռլըվեցին քո ալիքները ժայռի դեմ բռնության,
Քանի՜ ճամփա որոնեցին քո որդիները հերոս,
Քանի՜ սրտեր իջան շիրիմ չկատարված իղձերով:
Փայլատակեց մառախուղում նալբանդյանի բոց հոգին,
Շաշեց անմահ Պարոնյանի ծաղրի մտրակն ահագին,
Մեծ խռեցին իր քրնարով և քաղցրախոս, և ցավոտ,
Ինչքան երգեց ու երազեց քեզ մի խաղաղ առավոտ,—
Մինչև ելավ կյանքի ծովից բուշեհիկյան մի սերունդ,
Անցած, գալիք մրրիկների կայծակի փայլն աչքերում,
Սպանդարյանը բոցարյուն և Շահումյանը պայծառ,
Որ Լենինի ու Ստալինի պատգամներով փրկարար
Տարան կորած քո քարավանն ու մոլորված քո ուղին՝
Միացնելու օվկիանածուփ դասակարգի գրոհին:
Ապրեմ-չապրեմ ծաղկի միջից վերածնված դու ելար,
Ինչպես Վահագնը պատանի՝ այն եղեգից բոցավառ:
Եվ Հոկտեմբերը քեզ տվեց բոցափրփուր նժույգներ,
Եվ նետվեցին ռազմի ճակատ քո զավակներն անվեհեր:
Քո սուրբ արյունը թափեցիր դու այս անգամ քաջաբար
Կոմունիզմի դրոշի համար, հանուն գործի քո արդար:
Եղբայրական ժողովուրդները, հեռավոր ու մոտիկ,
Պատենք եղան թշնամու դեմ ու քո բազկին զորավիգ.
Ձեռք մեկնեցին ու բուժեցին նրանք վերքերդ բոլոր,
Վերքերը քո և նոր, և հին, գերմարդկային, դարավոր:

Ահա քո լույս երկնքի տակ, մետաքսաքող լեռներում,
Աշխարհաշեն զավակներիդ բազմություններն են եռում:
Ահա դաշտերդ բամբակի և այգիներդ առատ,
Խաղաղ ու հաշտ, առյուծակերպ, նստած է լեռն Արարատ,
Եվ նժույգներդ երկաթե ճամփաների վրա լայն,
Բերքի շույլ խրախճանքներ ու բաշխումներ լիսվան:
Ու գեղջկուհին արարատյան, դարերի լուռն անտեղյակ,
Մեծածխոր հանդեսներում, ձեռքին մատիտ ու տետրակ,
Պատմում է վառ հիացմունքով, ինչպես ամուր նա սեղմեց
Կրեմլի պայծառ դահլիճներում Առաջնորդի՝ Լենինի մեծ,

Այն ձեռքը, որ հավետ հանձնեց հողն իր տիրոջ իսկական,
Այն ձեռքը, որ գրեց օրենքն Աշխատանքի, Միության,
Որի անշեղ ցուցամատով փոխվում է կյանք ու քարտեզ,
Բերդ է դառնում ճահիճն անանց, և անապատը՝ պարտեզ:
Սևանա լիճը, լեռների գեղեցկուհին կապուտաշ,
Որ քեզ դյութել է դարեդար ու մնացել աննըվաճ,
Այսօր իջած իր բարձունքից՝ անցնում է խոր ձորերով՝
Տալով քեզ լույս ու զորություն ու ջերմություն ու կորով:
Եվ հրեանը, քո ոստանն իր շենքերով վարդագույն,
Նման երգով երջանկությամբ շառագունած քո հոգուն,
Ուր ծովսն է գործարաններիդ գանգրագիսակ ելնում վեր,
Ձուլվում կապույտ քո երկնքին, անէանում անըստվեր:
Ահա վառվում են ամեն օր մայրամուտներդ շուայլ
Ու զարդարում լեռներդ սեզ՝ զրահներով բոցափայլ,
Արշալույսներն են կարմրում կատարներին քո ձյունոտ,
Կիզում է լուռ մարդու հոգին հազար երազ ու կարոտ...
Ուր կա երկինք այսքան կապույտ, այսքան հստակ, ոսկեծիր.
Ջքնաղ ես դու, որպես առողջ մանկան երազ, իմ երկի՜ր:

1937, Երևան

ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Թշնամիներ, ի՞նչ եք ուզում —
Որ դեգերեմ ես գլխահակ՝
Իմ երջանիկ հայրենիքում,
Իմ հարազատ արևի տա՞կ:

Հաճելի չէ՞ ձեր ճորտ հոգուն,
Ձեր կործանված ոճովը չի՞
Կեցվածքն իմ սեգ և աննըկուն՝
Սովետական խիզախ երգչի:

Այդ չեք տեսնի, դուք, շարված
Եվ անըշար թշնամիներ.
Ձի սասանի ոչ մի հարված
Ստալինյան իրանը մեր:

Ինչքան ոռնաք ու կաղկանձեք,
Ծս կրնթանամ ինքնավայել,
Քանի որ իմ կեցվածքը սեգ
Իմ Հայրենիքն է ինձ տվել:

Իմ ժողովուրդն ինձ դուրս հանեց
Կյանքի անհույս հատակներից,
Ինձ պըղնձե տավիղ հանձնեց.
— Հպարտ երգիր, — ասավ նա ինձ:

Իմ պարտիան ինձ ուղարկեց
Ծրգի ճակատը վեհ ու բարդ,
Տավիղիս լարը նա պրկեց
Եվ ինձ ասաց. — երգից հըպա՛րտ:

Ես երգեցի, և իմ երգի
Հարվածներից փոթորկածին
Իմ լենինյան հայրենիքի
Քրջնամինները ոռնացին:

Անցա ես իմ երգի ճամփան
Բոլշևիկյան հավատով լի:
Ես երգեցի դյուցազնական
Գործերն անմահ Ստալինի:

Ես մարդկային երջանկության
Արևածաղը երգեցի
Որպես արտուտն առավոտյան,
Մաքուր խանդով բանաստեղծի:

Իմ ժողովուրդն ինձ ընդունեց
Խնչպես Գեան իր զավակին.
Նա իմ խրոխտ երգերի մեջ
Տեսավ իր սիրտն ու իր հոգին:

Եվ ժողովուրդն ինձ պարգևեց
Երգչի կոչումը սրբազան.
Առաջնորդի ձեռքով տվեց
Ինձ լենինի շքանշան:

Եվ ես՝ հպարտ եմ ու խոհուն
Այս մեծ պատվի ծանրության տակ.
Գլխիս արևն է շողշողում,
Շուրջըս իմ հողն է լայնարձակ:

Շուրջըս — հպարտ հերոսների
Շարքերն են խանդավառ քայլում,
Ու սրտերում անհանգելի
Խնդության երգն է դալալում:

Իսկ դուք ուզում եք, որ խրոխտ
Անցնեմ ես լուռ ու զլխահակ
Իմ տոնական փողոցներով,
Իմ հարազատ աբևի առակ:

Այդ չեք տեսնի, թշնամիներ՝
Հայրենիքի՝ և պոետի։—
Զրպարտության սև օձը ձեր
Ինչքան էլ սեղմ ինձ փաթաթվի,

Ինչքան ձեր հողմը թռնավոր
Ծեծի անտառն իմ երգերի,
Այնքան արմատըս կերթա խոր
Հայրենիքիս հողում բերրի։

Ես կկանգնեմ շիտակիրան,
Հոգով անպարտ ու աննրկուն,
Փառքի, պատվի, հպարտության
Իմ հոյակապ Հայրենիքում։

1937 զեկտեմբեր, Մոսկվա

18-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Միտերը բարախում են անհամբեր,
Ինչպես կանաչ տերևը արևածագին:
Ինչպես գարնանային կայտառ ամպեր՝
Կողըրդան ծափերը հրրճվագին,

Եվ առաջնորդը ժողովուրդների
Նորից հանդարտ կրարձրանա ամբիոն
Լեխարհն անծայրածիր կծածանվի,
Նա կըտեսնի ամեն մի հորիզոն:

Եվ կհոսեն նրա խոսքերն անդարձ
Ինչպես ճառագայթներն արեգական,
Եվ կըտեսնեն ազգերն ավելի պարզ
Իրենց երեկն, այսօրն ու ապագան:

Նորից կըխոյանան երկինքն ի վեր
Դոմենների բերդերը պողպատյա,
Ու շոգեշունչ միլիոնավոր ձիեր
Կըխըրխընջան մեր դաշտերի վրա:

Նորից կըզգանք մենք ուժը մայր հողի,
Կըսոսափեն ծառերն այգիներում,
Նա իր խոսքի լույսով կողողի
Սըրտերը մեր և կլինի գարուն:

Նրա խոսքում նորից կըորոտան
Էսկադրիլները մեր արծիվների,
Կանցնի Կարմիր Բանակը հաղթական
Լեռնապարի նըման անընկճելի:

Նըրա խոսքերը բոցեղեն թևով
Երկրի վըրա կըսավառեն անմեռ,
Կնթիվ մառախուղներ փարատելով,
Թափանցելով դարեր, հեռաստաններ:

Ամեն հոգի, որ լի է հարցերով,
Հանգուցներով ու վերքերով վառման,
Նըրա խոսքից կըստանա նոր կորով —
Իր հարցերին լուծում ու պատասխան:

Խանդավառված նըրա խոսքի բոցով՝
Մենք դուրս կըգանք եռուն դահլիճներից
Նվ աննահանջ կանցնենք ցամաք ու ծով՝
Պայքարելու և հաղթելու նորից:

Պատրաստ են հոգիներն ինչպես տերև
Քո ջերմության և քո լույսի համար:
Ինչպես կյանքի ակունք, ինչպես արև,
Ծագի՛ր, մեր լենինյա՛ն Համագումար:

1939 փետրվար, Մոսկվա

Կ Ո Մ Ի Տ Ա Ս

Նվերում եմ Կոմիտասի առկա
կվարտետին:

Վաստակաբեկ ժողովրդի տըրտումն չը կա քո երգերում,
Կյանքի, սիրո հավերժական շըշումն չը կա քո երգերում:

Հորովելները թախծալուր, զընգոցն ու փայլը գերանդու,
Մեր լեռնային արշալույսի զով շունչը կա քո երգերում:

Անմեղ ծիծաղը, որ աղի արտասուքով էր ոռոգված,
Մեր արնացող ծաղիկների վառ փունջը կա քո երգերում:

Չըկա գիշեր առանց լուսնի, չըկա հընձվոր առանց յարի,
Թիրող սըրտի համար հանգիստ ու քուն չըկա քո երգերում:

Սըրընգի ձայնը մեղրածոր, հարսանիքի աղմուկն ուրախ,
Աղքատության ու կարիքի մըռունչը կա քո երգերում:

Պանդուխտների անդարձ ուղին, հարսի մորմոքը մենավոր,
Անհաս անմար կարոտների մըրմունջը կա քո երգերում:

Դու տընության, սիրո երգիչ, դու խորթ էիր հին աշխարհին,
Ոսկու գահերը հաստատող մի տուն չըկա քո երգերում:

Դու հարազատ ես իմ ազատ մեծաքանքար ժողովրդին.
Դարերի գանձը մեզ բերող կամուրջը կա քո երգերում:

Աղբյուրի պես կարկաչելով կերթաս դու ծովն ապագայի,
Անմահական գարուն ես դու, աշուն չըկա քո երգերում:

1939, գնացքում

Գ Ա Ր Ո Ւ Ն

Գարուն է: Կախարդում եք, աղջիկներ՝
Կանչում և խուսափում եք որպես վիթ:
Արևը ձեր սիրուց ահա շիկնել՝
Նայում է երջանիկ, ոսկեժրպիտ:

Նայում է նա. ինչ վա՛ռ երանգներով
Այգում ծաղկել են տանձենին, դեղձին:
Նայում է նա՝ վերից նախանձելով
Ծրկրի վրա շրջող բանաստեղծին:

Անցնում եմ ես, ահա, ոսկեզօծված,
Այս արևով և ձեր ժրպիտներով
Քայլում եմ թեթևոտ ու սրտաբաց,
Կրժքումբս երգելու անմար կորով:

Պատրաստ եմ ես գրկել աշխարհն համայն,
Ճըշալ և համբուլել և ներբողել,
Եվ իմ հոգում հեղեղների նման
Խշշում են խոլ գարնանային խոհեր:

Գարուն էր, երբ լենինն աշխարհ եկավ:
Ի՛նչ իմաստուն գալուստ, ի՛նչ մեծ գարուն:
Ի՛նչ արշալույս բացվեց, լուսաթաթավ,
Մարդկանց հոգիներին և աշխարհում:

Բացվեց մի նոր գարուն և արշալույս
Իմ բազմադետ ժողովրդի վրա.
Հավետ նա դադարեց խարխափելուց,
Ութի ոստենց կայտառ, կարծրազրբահ:

Դառն էր լինել ծածված մի ժողովուրդ,
Տնքալ հրզոր հարևանի ձեռքից,
Բայց ավելի քան դառն էր աշխարհում
Լինել ծածված ժողովրդի երգիչ:

Եվրոպայի փոքրիկ ժողովուրդներ,
Ծանոթ է մեզ ձեր բախտը շատ վաղուց.
Մեզ շատ ըզգեստնեցին օտար ոտներ
Հայրենական հողում մեր հինավուրց:

Մինչև եկավ Լենինը, և բերեց
Մի նոր կրշիռ ու չափ այս աշխարհին:
Տկարն իրեն ըզգաց հրզոր ու մեծ,
Իզբայրացան փոքրիկն ու վիթխարին:

Իմ ես այսօր նայում եմ քեզ, աշխարհ՜ր,
Բանտկներին, գարնան այս կենսաթով:
Երկու հարյուր միլիոնանոց անպարտ
Ժողովրդի՝ խիզախ իմ հայացքով:

Իմ իմ հոգուց անցնում է տխրություն
Ինչպես ուրուրի ստվերն անամպ դաշտով,
Ինչպես լուծվում է ծուխը պարզ օդում,
Դյուլթում է կյանքը, կապուտակ մի ծով:

Իմ ես չափում եմ փողոցները Ֆոֆ,
Ժպտում եմ ծանոթին, անծանոթին,
Իմ խոյ մի տենչ, անհանգչելի մի բուց
Ամեն վայրկյան այսում է իմ հոգին.

Այնպես անցնել երկրի ճամփաներով,
Որ գալ տարիների սերունդն ասեր.
— Ապրել է նա Հայրենիքի սիրով,
Մեռել է նա որպես հայրենասեր:

Գարուն է, վետվետում եր, աղջիկնե՛ր,
Ծաղկած, խոստումնալից, ինչպես դեղձին,
Արևը ձեր սիրուց ահա շիկնել՝
Նայում է նախանձով՝ բանաստեղծին:

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶԾ

*Դու քաղցր ես հող իմ հայրենի,
Ձկա քեզնից պայծառ անուն,
Բայց վտանգի ահեղ ժամին,
Իրք սպառնում է թշնամին,
Դու ավելի ես քաղցրանում:*

**1947, հունիսի 22,
Մոսկվա**

Մ Ա Ր Տ Ա Կ Ո Չ

Թըռի՛ր, իմ երգ, որպես արկի շառաշ,
Որպես մրրիկ նետվի՛ր նորից հանդես,
Պայթիր ոսոխների դռան առաջ,
Նրանց ականջի տակ շաշիր — այսպես.

— Դուք, որ գալիս եք ոռնոցով մի ժանտ
Կոմունիզմի մեր Սասնա տան ընդդեմ,
Խելագարվա՞ծ եք, մոլուցքով հիվա՞նդ,
Թե՞ գերեզման եք որոնում... խնդրե՛մ:

Մեր այս երկիրը մեծ է, անեզերք,
Աշխատանքով, կյանքով միշտ ալեկոծ,
Իսկ ձեզ, եթե այդքան թաղվել կուզեք,
Կարող ենք տալ հարմար... դերեզմանոց:

Սիրում ենք մենք երկիրքը մեր պայծառ,
Դաշտերն ալեծածան, լեռները զով,
Արյամբ ենք ոռոգել ամեն մի ծառ,
Ամեն ծաղիկ ցողել մեր քրտինքով:

Մենք մեր մեջքով կրել ենք վեմ ու կիր,
Ժայռ ենք խժռել, ծամել ենք թեժ երկաթ...
Արևի տակ չկա մի այլ երկիր
Սիրված այսքան խորունկ ու խանդակաթ:

Ջուգել ենք լանջը սեգ ավանների;
Քաղաքների լուսաշողշող զարդով,
Պճնել նըրա ճակատը մայրենի
Միշուրինյան այգիների վարդով:

Տարել ենք մենք նըրան մեր ուսերին
Վերելքներից վերելք ու փառքից փառք,
Առել ենք անառիկն, անկարելին,
Լեռներ են խոնարհվել մեր ոտքի տակ:

Եվ չէր ուղին մեր հեշտ ու հարթ: Բնավ,
Այդ հո դուք լավ գիտեք, թշնամիներ.
Ոչ մի ջըրով չի անցել ոչ մի նավ,
Որի ճամփին այսքան մորիկ լիներ:

Այդ դուք էիք մեր տունը քարկոծում
Ու ներս խուժում ոխով գոֆմանական,
Դուք կամենում էիք — օրորոցում,
Արյամբ խեղդել կոմունիզմի մանկան:

Այդ դուք էիք դավով, լրտեսությանմբ,
Որպես բացիլ անտես տարածվելով,
Զրպարտությանմբ, վրնասարարությանմբ,
Մահվան բոլոր դժնի գործիքներով,

Այդ դուք էիք ոճրագործում մեր դեմ:
Բայց հաղթեցինք մենք ամեն վերք ու ցավ.
Քնցանք զրկանքների ուղին դժխեմ,
Եվ մեր երկիրն աճեց, հզորացավ:

Ջկա մի այլ երկիր արևի տակ՝
Այսքան խիզախ երազներով լեցուն,
Ուր ապագան լիներ այսքան հստակ,
Այսքան թովիչ լիներ կյանքի լեզուն:

Ջկա մի այլ երկիր... իսկ դուք, շնե՛ր,
Դու պատմության ճամփի մեծ ավազակ,
Կարծում էիք, թե Հայրենիքը մեր
Հանկարծահար կրնկնի ձեր ոտքի տակ:

Ոչ, անառիկ է Հայրենիքը մեր,
Իղբայրությանմբ, սիրով ձուլված երկիր,
Բալթից մինչև խաղաղական ափեր
Միայն մի կամք է, սրբազան մի կիրք.

Ջարդել արնոտ մոռութը Հիտլերի,
Ցրել նըրա ցընորքը խաւարչտին —
Նըրա երկաթազգեստ բանակների
Անպարտության առասպելները սին:

Արխաւվեցիք և փրկություն չունեք,
Դուք խաղացիք հոգով ձեր անհեթեթ
Երկու հարյուր միլիոնանոց մեր սեպ
Ժողովրդի ցասման բոցերի հետ:

Այդ բոցերում անդարձ կմոխրանան
Հիտլերն ու բանակներն իր ամպագոռ,
Ու փախուստի համար ձեզ չի մնա
Ձեր խորտակված նավից ոչ մի բեկոր:

Վերջին պարանո ահեղ արդարության
Ձեր պիղծ պարանոցին կփաթաթվի,
Իվ չեն մաքրի դետերը ձեր արյան
Վնեծքը հանցավոր ձեր հակատի...

Թշուի՛ր, իմ ե՛րգ, որպես արկի շառաչ,
Պատուի՛ր, անցի՛ր բերդերն անմատչելի.
Իվ հայրենի հողից ավյուն առած՝
Շաչի՛ր անկումը, վերջը Հիտլերի:

1941, հունիս

ՆԱ ՊԻՏԻ ԿԱԽՎԻ

Ես տեսնում եմ պարզ. աշխարհասասան այս թոհուրոհում
Հիտլերի զրոռը երկաթե հորդան պիտի ջախջախվի:
Ճիվաղն օրհասի պարանը ձեռքին պատրաստ է պահում —
նա պիտի կախվի:

Ծածկելու համար իր ոճիրների մերկութունը բիրտ՝
նա չի դտնելու արար-աշխարհում և ոչ մի տերև,
Չի լինի տանջված երկրի երեսին մարդկային մի սիրտ,
Որ նրան ներեր:

Սա չէ Ալեքսանդր ու ոչ էլ թեկուզ մի գոռ Բոնապարտ,
Որին չըժպտաց Աուստեռլիցի արևը կրկին,
Եվ զուր է փորձում ընդունել նրանց կեցվածքը հըպարտ
Այս հտպիտ հոգին:

Չինգիզխանն անգամ մարդ էր՝ արնախում այս հրեշի քով:
Գերմա՛նիա, սրան քո ամոթը սև՝ կընեբե՛ս միթե:
Ո՛չ, դու չես ների, և պիտի կախվի նա ինքն իր ձեռքով —
Այդ ինքն էլ գիտե:

Ինչո՞ւ է, ուրեմն, այսքան մոլեռանդ, այսքան ոխերիմ
Մըղում իր մըռայլ խաժամուժ բանակն աշխարհի վրա,
Ինչո՞ւ մեր հողում իր զորքի համար փորում են շիրիմ
Տանկերը նրա:

Ընկնում են մահվան հորդաներն ինչպես մորեխի ամպեր
Կարմիր Բանակի հուժկու կործանիչ հարվածների տակ.
Ընկնում են, մեռնում միլիոնավորներն անթաղ և անտեր
Եվ անհիշատակ:

Բայց շարժում է դեռ նա իր դիվային ռազմի մեքենան
նեքս քաշելով խժռում, շաղախում նոր ժողովուրդներ,
Ճգմում, որ նրրանք մի անարգ, անմիտ արշավի գընան՝
Մի ամբողջի դեմ իրենց ուժից վեր:

Առաջ է սողում համառ ջարդվելով ու խորտակվելով,
Դիզելով դիակ դիակի վըրա, տանկի վըրա՝ տանկ:
Ինչո՞ւ: Մի՞թե մենք, անթաղ դիերի կույտին խղճալով,
Մեր հողը կըտանք:

Մի՞թե, հերավի, հավատում է նա՝ իր հաղթանակին:
Ոչ: Նա լավ գիտե, որ իր գոռ հորդան պիտի ջախջախվի,
նա իր օրհասի պարանը պատրաստ պահում է ձեռքին,
Գիտե, վաղ թե ուշ նա պիտի կախվի:

Բայց վճռել է նա տանել իր խենեշ երազն ի կատար.
Մըղել դեպի մահ նոր ժողովուրդներ ու նոր բանականեր,
Եթե չէր հերոս, գոնե դահիճի ահեղ արնավառ
Պատմուճան հագնել:

Հին Հռոմն այրեց ներոնը՝ փառքի ծարավից անհագ,
Բիրտ Կալիգուլան սենատոր կարգեց մոլեգնած իր ձին:
Նրանք մարդկային մեր պատմության մեջ որպես նշավակ՝
Այդ սև գործերով անմահ մընացին:

Բայց վճռել է սա լինել ավելին, քան խենթ մի ներոն,
Կալիգուլայից ավելի խուժողուժ, ավելի դաժան,
Աշխարհը խեղդել ռազմի բոցերով ու բացիլներով,
Տանկը դարձրենի ծերակուտական:

Մինչև որ զրկվի իր վայրաբարո վերջին զինվորից,
Մինչև որ նրա տանկերի նախիրն ընկնի ջարդուբուրդ,
Ու Հայրենական Կարմիր Բանակի ոտնաձայներից
Փողոց բարձրանա ամեն ժողովուրդ:

Այնժամ կհնչի և կըզդրդա ռուպեն հատուցման,
Նրան կօղակեն բանականներն արդար վրեժի բոցով,
Նոր այն ժամանակ նա հուսահատված կարիճի նման
Կսպանի իրեն իր իսկ խայթոցով:

Եվ նա կթողնի գալիք դարերին մի գարշ՝ հիշատակ,
Թե մարդ եղել է այսքան մարդակեր և այսքան տխեղժ:
Առանց նողկանքի չի հիշի նրան այս արևի տակ
Ոչ մի բանաստեղծ:

ՄԻՑԿԵՎԻՉ ԵՎ ՀԻՏԼԵՐ

Ո, եթե ես կարենայի գոռալ աշխարհով մեկ
Ձորս տոննանոց ֆուգասային ռումբի դղրդոցով,
Կըգոռայի.— այս հոգեսպան դահիճներին բռնեք,
Ով դուք, ազա՛տ ժողովուրդներ, եթե՛ր, երկի՛ր և ծո՛վ:

Կանգնած էր Կրակովում արձանն Ադամ Միցկևիչի
Որպես կոթող Լեհաստանի ազատագրող հոգու:
Այդ ժողովուրդն էր սև կոպեկներով իրեն վերջին
Բարձրացրել նրան ավանդական իր քաղաքում:

Կանգնած էր սեզ իր կեցվածքով լեհ բանաստեղծը մեծ,
Վրսեմ իդեալների կախարդ երգիչն ու ռահվիրան,
Երբ այդ պահին, ցուլի նրման պարարտ ու շնչահեղձ,
Հիտլերական քարոզախոսը, իսեթ, նայեց նրան:

— Տեսե՛ք սրբա կեցվածքը,— բառաչեց նա հեզնորեն,—
Սա լեհ է, իրավունք չունի կանգնել այսպես հրպարտ:
Նա հրամայեց, որ կործանման մեքենաներ բերեն:
Մահվան ոհմակը մոտ եկավ՝ չանցած մի ակնթարթ:

Եվ ահաբեկ, անխոս մի բաղմության աչքի առաջ
Շառաչելով գետին ընկավ արձանը վիթխարի:
Կործանողները՝ ծանրակոթ կացին ու մուրճ առած՝
Փշրում էին մարմարը մանրագույն բեկորների: -

Ըսպասեցե՛ք... ինչո՞ւ... Նա ի՞նչ հանցանք էր կատարել:
Մի՞թե մարդիկ մարդու իդեալն այդպես կմորթեին.
Բարբարոսնե՛ր, նա բանաստեղծ էր, անաղաշտ արև,
Ոճրագործնե՛ր, նա չէ՞ որ հավասար էր Գյոթեին:

Նա ի՞նչ հանցանք ուներ... Միայն երգել է նա սրտանց
իր հալածադատ Հեհաստանի արարչագործ հոգին,
նվ ընծայել է դարերին, որպես ավանդ ու զանձ.
Դուք որ ունեք իր ժողովուրդը վեհ ու թանկագին:

Նա սիրտն իր բոցավառ նետել է ժողովուրդներին
նվ կոչ արել եղբայրության ու հավասարության,
երգել է նա ավերվել զգացմունքները մարդկային
Մեր հանձարեզ ու հարազատ Ալեքսանդրի նրման:

Բայց բուժ ու բիրտ են դարչնագույն դեերը Հիտլերի.
Նորանք փշրում են մեծ երգչի գրչուխը գանգրահներ
նվ բեկորները սուրբ՝ առնում ձեռքով քրատմենի
Ու շրպըրտում են Վիսլայի կոհակներին ի կեր:

Ահեղ տնքում է Հիսլան՝ կուլ տալով կատաղաբար
իր հռչակովոց հալածների վիրավորանքը մեծ:
Կախվել էին հորվոցնից ամպերն ինչպես կապար,
Մի բոցարյուն տղա բազմությունից առաջ նետվեց:

— Բարբարոսներ, կարծում եք դուք, արձանը փշրելով
Փշրում եք լեհ ժողովրդի ազատամարդ ոգի՞ն:
Երբե՛ք: Ամեն մի լեհ, իրեն սրտի խորքում խռով,
Իրեն ըմբոստ իդեալ կրում է իր Միցկևիչին:

Կացինը բարձրացավ ու վայր իջավ զոհի գլխին:
Ճըշաց մի կին ու հառաչեց ամբոխը — «ա՛խ...»:
Իր կուրծքը վշտակոծ՝ մայր Վիսլան բաց արավ կրկին
Ու գիրկն առավ իր զավակի դիակն արնաշաղախ:

Օ, ես ինչպես կուղենայի գոռալ աշխարհով մեկ
Չորս տոննանոց ֆուգասային-ռումբի դղրդոցով.
Ազա՛տ ժողովուրդներ, այս դեերին մոխրացրեք
Ձեր սուրբ ցասման կայծակների վրեժխնդրի բոցով:

1941, հուլիս



ԿԱՊԻՏԱՆ ԳԱՍՏԵԼԼՈ

Մարդիկ ծնվել, մեռել են շարունակ,
Լեցուն է մահերով աշխարհն այս հին:
Իայց մահ կա, մահ էլ կա արևի տակ,
Որ հիշելիս դողում է թշնամին:

Հիտլերական հորդան խուժում է գոռ
Լահմանը մեր սովետական հողի:
Ջարդվում է ունաձայն, ոսկոր-ոսկոր,
Բայց ներս է հոխորտում դեռ կատաղի:
Ծամում է պողպատե ծնոտներով,
Փըսլընքոտում մեր հողը սըրբաղան:
Եվ բազենները մեր քաջակորով
Մարտի համար երկինք բարձրացան:

Նայում է կապիտանը, Գաստելլոն,
Ծըխում կորած ահեղ ռազմադաշտին:
Ահա վառվեց անտառն ինչպես կերոն,
Իարբարոսներն ահա երևացին:
Եվ մարտը բորբոքվեց: Որպես հեղեղ
Արկի դեմ արկ եկավ, տանկի դեմ տանկ,
Զենիթային թընդանոթներն ահեղ
Ռեկինքն ի վեր հաշում են խելահեղ՝
Շրպրտելով լորձուներ և հոխորտանք:

Ներքեր ռազմադաշտն է փոթորկվում,
Իսկ վերը՝ հայրենի երկինքն ահա.
Անտառներից այն կողմ, կապույտ միգում,
Կապույտ ու լուսավոր մի սենյակում,
Ննջում է կապուտաչ մի երեխա՞.

Եվ հարազատ սիրող մի զույգ աչքեր
Հույսով լեցուն նայում են երկնքին...
Օ, դյութական և անմոռաց սլատկեր.
Նա հայր է երջանիկ և ամուսին:
Եվ ինչ... իմ Աննայի գլխի վերև,
Իմ լույս մանկան օրորոցի գլխին
Ճախրում է հիտլերյան ուրո՞ւրը սև...»:
Ցասմաբ եռաց Գաստելլոյի հոգին,
Նա ումբաձիգը շուռ տվեց կրկին
Ու խոյընթաց իջավ թշնամու դեմ:
Խոսեց իր գնդացիին ու դըրդաց:
Մի ակնթարթ... և գարշ ուրուրն արդեն
Բոցակուլով գահավիժում էր ցած:
Չղիմացան խիզախ գըրոհներին
Յաշխատական թնդերը կառաչուն.
Խոցված խուճապախույս փախչում էին
Ինչպես մորեխն է տարմերից փախչում:

Ծրխում է ռազմադաշտը ծանրահեռ:
Իսկ վերը՝ հայրենի երկինքն է լուրթ:
Այն կապտավուն անտառների ետև
Տրներ կան հոյակապ, դաշտեր, դետեր,
Եվ մեծ աշխարհաշեն մի ժողովուրդ:
Այնտեղ շողում է հարազատ Մոսկվան,
Իլյին է վեհ իդեալներով ննջում,
Ու Ստալինի ծանոթ ծխամորճում
Անմար է հուրն իր խոհերի նրման,
Գիշեր մինչև ծագումն արեգական:
Մի՞թե Կրեմլի վըրա կախել կուղեն
Սըրանք իրենց սըվաստիկան հըտպիտ
Ու դամբարան մտնել խուժդուժ ու բիրտ...
Երբե՛ք... Եվ խոյընթաց թըռավ բազեն
Դեպի ոհմակը հակառակորդի:
Ահա նըրանց տանկերը ոռնաձայն;
Ահա ցիստերնների մի կարավան
Շարժվում է... Ռո՛ւմբ, հանուն Առաջնորդի՞,
Եվ ոռմբն իջավ իր նըշանակետին,
Տանկերը շուռ եկան թավալգըլոր,

Ռնդանոթները վեր շրպրտեցին
Արկի շատրվանները: Չորս բոլոր
Սուլում, ոռնում է մահը մոլեգնած
Եվ հրաշեկ ձեռքերը վեր մեկնած՝
Ուզում է շուտ որսալ այդ խիզախին:
Բայց Գաստելլոն բոմբում է զայրագին
Նրբանց որջերն ու գործիքները սև,
Մահով է պատասխան տալիս մահին.
Ծախրում է շեշտակի կայծակնաձև
Ռումբերը շաղ տալով ինչպես անձրև
Նրբանց գրվի վրա...

Եվ այդ պահին
Մի արկ դիպավ նրա սալառնակին,
Ու բենդինի ամբարը բուն՝ պայթեց:
Հրդեհը դուրս հանեց իր շեկ լեզուն:
Այդ մահն է... նա է բիրտ խոսում:
Այսպես... գուցե այստեղ նա ավարտեց,
Իր կյանքը... ոչ. քանդի՛ր կապերը, շո՛ւտ.
Դեռ փրկության մի դուռ կա — պարաշուտ:
Բայց ի՞նչ... Պարաշուտով իջնել գերի,
Լնկնել թակարդը նենդ դահիճների՝
Նրբանց անարգ ծաղրին ենթարկվելու,
Իր հարազատների աչքից հեռո՛ւ.
Ոչ, օղաշուն իրեն այդ չի ների:
Ոչ. այդ դուք չեք տեսնի, մարդակերներ՝,
Դուք հառաչանքըս չեք լրսի. երբե՛ք,
Հիմա ձեզ ցույց կըտամ, և դուք տեսե՛ք,
Թե ինչպիսի մահով գիտե մեռնել
Նտալիսյան բազեն... Մի երկվայրկյան,
Մի ականթարթ անցավ նրա գլխով
Իր Աննայի ժըպիտը քաղցրաթով,
Օրորոցում ննջած իր երեխան,
Սուտակավառ աստղերը վեհ Կրեմլի,
Վայրերն ամեն, դեմքերը սիրելի...
Մեռնե՛լ... ահա այսպե՛ս... Մընաք
բարո՛վ...

Նա հրդեհից խաշված իր մատնիքով
Ուղղեց իր ինքնաթիռը բոցավառ

**Դեպի ցիստերնների քարվանը մեծ,
Ընկավ և խոլ թափով նըրան զարկվեց...**

**Եվ լըսեցի՞ր, հերոսը՛դ անըսպառ,
Թե ինչ վիշապաքաղ դորդոցով
Մահվան մեքենաները պայթեցին,
Թե քո մահվան հերոսական բոցով
Դու ինչ հարված տըվիր այդ ժանտ օձին,
Թե ինչ անասնական սարսափով լի
Փախան բորենիներն այն արնախում,
Ինչպե՞ս թնդաց անունըդ պանծալի
Քո մեծ Հայրենիքում և աշխարհում:**

1941, հուլիս

.

ԿՈՄՈՒՆԻՉՄԻ ԶՈՐԱՎԱՐԸ

ՄԵԾ ՍՏԱԼԻՆԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺՈՂԱՍՄ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԱՌԹԻՎ

«ԵՎ ուղարկում էր քեզ Հենինն
Այն ճակատները դաժան,
Որտեղ ապրում էր հայրենիքն
Օրհասական ճգնաժամ»:

«ԴՅՈՒՑԱԶՆԱԳԻՐ»

Ելավ Ստալինը — առաջնորդը մեծ ժողովուրդների,
Ելավ ու կանգնեց իր վիշապաքաղ բանակի գլուխ,
Եվ աշխարհն ասաց. — «Նա մեզ հաղթանակ և լույս կբերի»:
Թշնամու հոգուն տիրեց մառախուղ:

Իր ձեռքին բռնած Հենինի անունն իբրև թուր կայծակ,
Զինված հին և նոր զորավարների հանճարեղ փորձով,
Դյուցազններգական այն Սովորովի նման համարձակ,
Եվ խորն ու խոհեմ իբրև Կուտուզով:

Իր մեջ ամբարած ոգին իր տարած հաղթանակների,
Իր աշխարհաշեն ժողովուրդների խոհերն իմաստուն,
Ժողովրդի պես, հողի պես անպարտ և անընկճելի,
Ուշիմ որպես հայր, ոգու պես արթուն:

Նետած իր պատգամն արևի նման ջերմ ու կենսաբուխ
Իր ժողովրդին և բոլոր խիզախ ժողովուրդներին,
Ելավ Ստալինն ու կանգնեց Կարմիր Բանակի գլուխ՝
Պատասխան տալու անարգ Հիտլերին:

Թըռեք, բազենե՛ր, սուրացն՛ք, տանկե՛ր, դեպի Թշնամին,
Բոլոր փողերից կրա՛կ տեղացեք ամպրոպի նըման,
Հայրենիքն է մեզ կանչում ահավոր վտանգի ժամին,
Ու Ստալինն է մեզ տալիս հրաման:

Եվ կոմունիզմի երկիրը ելավ ամեն կողմերից,
Ելավ ռուսական տափաստաններից մոտիկ ու հեռու,
Կազակի նժուլդն անժայր դաշտերում խրխնջաց նորից՝
Պատրաստ ոսոխին ընդդեմ նետվելու:

Եվ զապարոժյան քրքիշը թնդաց՝ որպես մարտակոչ,
Շարժվեցին տեղից լեռներն անառիկ մեր վեա Կովկասի.
— Մա՛հ. մարդակերին, չենք տա մենք նըրան մեր հողը և ոչ
Մեկ հատիկն անգամ մեր արդար հացի:

Ամեն կողմերից եկան թե առած լափին առ լափին,
Հնչեցին ձայներն իբրև ալեկոծ օվկիանի շառաչ.
— Տա՛ր մեզ, Առաջնորդ, մեր հաղթանակի անսխա՛լ դարբին,
Տար մեզ դեպի մարտ, առա՛ջ, միշտ առա՛ջ:

1941, Երևան

ՈՒՂԵՐՁ ԻՄ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Իմ հա՛յ ժողովուրդ, եղբայրնե՛ր, քույրնե՛ր հայրենապապակ,
Որտեղ էլ որ կաս այս հողմագալար երկրի երեսին,
Որ կիսագնդում, որ ծովի ափին, որ երկնքի տակ,—
Լսի՛ր քո որդուն, քո բանաստեղծին:

Աշխարհի վրա Հիտլերի հտպիտ մռութն է կախվել,
Դարերի որջից աշխարհ է խուժել նորից մի Կայեն,
Որ ոտքից գլուխ ժողովուրդների արյամբ շաղախվել,
Ոռնում է ձայնով նախամարդկային:

Նվրոպան արդեն այրվում է ոխով նրա ոտքի տակ,
Լիքն է սարսափով այս մարդասպանի մոլեգնած հոգին,
Մահից խելագար՝ նա մեկնեց ահա իր դունչն այլանդակ՝
Կոմունիստական մեր Հայրենիքին:

Կրակ է տեղում խաղաղ և կանաչ դաշտերի վրա,
Հողի մշակին կտտում է խուժողւժ, կենդանի թաղում,
Տանկի թրթուրով ճզմում է, ճխլում ծեր ու երեխա,
Մոր վշտի հանդեպ լկտի ծիծաղում:

Չկա 'Գանձեական Դժոխքի դժխեմ պարունակներում
Ոչ մի սատանա այսքան շարագործ ու խավարամիտ,
Սրա հանդիման անզոր ու հեզ գառներ են թվում
Ամենայն Աթիլլ ու Սուլթան-Համիդ:

Կանգնած է ահա հիտլերյան պղտոր այս հեղեղի դեմ
Լենինյան ազատ ժողովուրդների մեր պատնեջն անառ,
Ջարդվել են նեոֆ ամենահուժկու հորդաներն արդեն,
Բայց գալիս է նա դեռ բիրտ ու համառ:

Ինչ է երազում, ինչո՞ւ է այդպես հոխորտում առաջ՝
Ստի, կեղծիքի հեղեղ հորդելով իր երախներից...
Իմ վեհ ժողովուրդ, այդ խոլ մոլուցքին ծանոթ ես դու քաջ,
Հիշում եմ ուղին քո փոթորկալից:

Այդ պիղծ ու պղտոր բռնակալական մոլուցքն է Բելի,
Որ վայր տապալվեց մեր կաղնեբազուկ նախահոր նետով,
Շամիրամն է դա իր ցնորքներով ցոփ ու գարշելի,
Որի դեմ կանգնեց Արան գեղաթով:

Այդ Հռոմն է հին, որ իր ընչաքաղց լեգեոններով
Արշավում էր քո ոստանների դեմ ճոխ հելլենական,
Հազկերտն է գալիս իր խավարամոլ մռայլ մոգերով
Այրելու մեր Գիրն ու մեր Ապագան:

Այդ արաբական անապատների խորշակն է շաշում,
Արյան ու պատվի հարկն է հավաքում արնախում Բուղան,
Այդ ուխտադրուժ Մսրա-Մելիքն է գոռոզ պահանջում
«Քառասուն կանայք, որ երկանք աղան»:

Այդ մոնղոլական հեղեղն է գալիս խուժդուժ ոռնաձայն,
Որ քեզ տեղահան անտառների պես քշի և տանի,
Բյուզանդիոնն է դա, որ խարդախ անարգ աղվեսի նըման
Մեր տունն է մտնում, գեղակերտ Անի:

Սա ժառանգն է ժանտ, հարազատ որդին Վիհելմ կայզերի,
Որ խիղճը նետեց մեր հայոց մարդկանց արյան ծովի տակ,
Որ կոտորածի յաթաղանն օրհնեց ձեռքով զազրելի՝
Մեր արդարությանն ու վշտին գիտակ:

Այդ նա է գալիս... Եվ դու, դարերի անխո՛նջ ուղեկից,
Բռնության բոլոր հորդանների դեմ ծառացար ու սեգ
Դու մարտնչեցիր ու հերոսացար — նահապետ Հայկից
Մինչև քաջ Վարդան, մինչև Դավիթ-բեկ:

Դու հրդեհների ճարակին թողիր օջախ, արտ ու հաց,
Եվ շալակեցիր մատյաններդ սուրբ, հայրերիդ հողին,
Անցար ծանր ուղին՝ քո արյունվա ձեռքերում բռնաժ
Թուրն ազատության, քո Թուր-Կայծակին:

Եվ իդեալներինդ վսեմ ճաճանշով եկար, միացար
Կոմունիստական ժողովուրդների մեծ ընտանիքին,
Մեր ուսուցիչներն, արևների պես հավետ անկաշառ,
Առավել նիշով քեզ ընդունեցին:

Եվ Լենինն ասաց.— ահա ժողովուրդ, որ քաջ պայքարեց,
Եվ սուրբ երբեք պատյան չդրեց բռնության հանդեպ,
Ու Ստալինն ասաց.— ահա ժողովուրդ, որ արյամբ գրեց
Հանճարեղ ու մեծ մի Դյուցազնավեպ:

Եվ ստալինյան արեգակնային պայծառ աչքի տակ
Մեր գանձերը բլուր նոր պայծառությամբ դարձյալ շողացին,
Կրեմլի դահլիճում ամբիոն բարձրացան խոհուն, համարձակ,
Ջուլհակը Մոկսի, Լոռվա գյուղացին:

Եվ հայրենախոս մեր երգը հնչեց թովչանքով անհաս,
Քուշակը հուզեց Պուշկինի թոռան առնական հոգին,
Մոսկվան հոյակապ իր դահլիճներում կանչեց.— Կոմիտաս,
Դավիթը կանգնեց Մուրոմցու կողքին:

Եվ եղբայրական ժողովուրդների սիրով ջերմագին
Մոխրից բարձրացած վերըստին ծաղկեց Հայաստանը մեր,
Կանգնեց Արագածն արտերի թավշյա թիկնոցը հագին,
Շուրջը նորատունկ փարթամ այգիներ:

Բարձրանում եմ ես Նորքի ծառախիտ բլուրի վրա,
Նայում եմ ներքև, վարդազույն երազ իմ Երևանին,
Ահա նա, բռնած արևը գլխին իբրև շեկ զրբահ,
Ոստանր մեր նոր, մեր շքեղ Անին:

Իջնում եմ, անցնում լայնարձակ ու լույս պողոտաներով,
Ողջունում է ինձ հայրենաբարբառ բազմութիւնը հոծ,
Երիտասարդներ քաջալանչ, առողջ և առնակորով,
Աղջիկներ դալար, հայացքները բոց:

Իմ հայ ժողովուրդ, այս դու ես այսպես, հպարտ, գեղեցիկ,
Անցնում հարազատ քո ճամփաներով, քո արևի տակ,
Այս դու ես այսօր, որ ունես օջախ և մեծ հայրենիք
Ջանգլիք մինչև Դոն և ծովն Սպիտակ:

Ծվ մեր այս կապույտ ու կախարդական երկնքի վերա,
Անդորրի վրա մեր շեն գյուղերի և քաղաքների,
Մեր խաղաղության, մեր երջանկության, մեր երգի վերա
Մըռութն է կախվել հըրեշ Հիտլերի:

Նա կուզե, որ մեր կանաչ դաշտերում երգի փոխարեն
Միայն դարչնագույն ըստրկատիրոջ մտրակը շաշե,
Որ լուսաբարբառ մարգարենները հավիտյան լըռեն
Ու Գեբելսը լոկ խռպոտած հաշե:

Նա կուզե, որ մարդն իսպառ մոռանա երազներն իր վես,
Մոռանա, որ կան հոգու խոյանքներ, Շեքըսպիր, Լենին,
Բանականության լույսը հանգցընի, չկերտե արվեստ
Ու վերադառնա քարե դարերին:

Ինչ խուժողուժ երազ և ինչ կապկային կամեցողություն,
Ինչ ստոր կարծիք մարդկային ըմբոստ բնության մասին,
Ստորուկ է ծնվել և մարդկությանն էլ ստորուկ է կարծում
Այս բուժ բռնակալն, այս բարեկացին:

Ծվ չի հասկանում նա իր մութ հոգով, ուղեղով իր ծուլ
Աննըկուն ոգին մեր վիշապաքաղ Կարմիր Բանակի,
Մեր եղբայրական ժողովուրդների կամքը միաձուլ,
Գաղտնիքը վսեմ մեր հաղթանակի:

Նա չի հասկանում ազատ ազգերի դաշինքն անկաշառ,
Որ հետզհետե սեղմում է նըրա կոկորդը բրդոտ,
Որ ստի, գազի ամպերում խեղդվող աշխարհի համար
Կգա փրկության մի նոր առավոտ:

Ծվ կխորտակվի գոռոզ խաժամուժ հորդան Հիտլերի,
Կայենն արյունոտ կքշվի նորից որջը մոռացման:
Այդ կամքն է հըզոր և աշխարհաշեն ժողովուրդների
Պատմությունն է մեզ տալիս հըրաման:

Ծվ դու չես անմասն այս գոտեմարտում աշխարհաստան.
Կարմիր Բանակի առյուծների մեջ, վագրերի շարքում
Կուլում են նաև զավակները քաջ քո սեգ Սասնա տուն,
Ծվ Դավթի թափով ոսոխին զարկում:

Իմ հա՛յ ժողովուրդ, դու ազատության ձգտումով անհագ,
Որտեղ էլ որ կաս այս հողմագալար երկրի երեսին,
Որ կիսագնդում, որ ծովի ափին, որ երկնքի տակ,
Լսի՛ր քո որդուն... զա՛րկ այս հրեշին:

Զարկ և մի խաբվիր գեթելսյան ստի նախշուն գորգերից,
Հիշի՛ր քո ոսոխ Մսրա-Մելիքի ժպիտը խարդախ,
Եվ զգուշացիր գորգի տակ փորված քառսուն գազ հորից,
Զա՛րկ, փոշիացրու նրանց աջ և ձախ:

Զա՛րկ, շատ ես զարկել դու քո հին և նոր թշնամիներին,
Դու շատ ես կռվել հանուն գեղեցկի, լույսի և բարու,
Զա՛րկ վերջին անգամ վիշապահալած կայծակով քո հին,
Նոր մելիքն է սա ծնված աշխարհում:

Ժողովուրդների դաշինքն անդադար հյուսվում է ահա
Եվ անդույ սեղմում այս մարդակերի կոկորդը բրդոտ,
Զարկ և հավատա՛, որ մթնում հյուժվող աշխարհի վրա
Ծագում է արդեն Կարմիր Առավոտ:

1941, Երևան

ԿԻՆՎԸ ՄԵՐՆ Է

(ՆԱՄԱԿ ՈՒԿՐԱՅԻՆԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԻՆ)

Հիտլերը բռնուտ իր թաթը սեղմեց
Զքնաղ Կիևի կրծքին մայրական:
Մերն է ձեր վիշտը և զայրույթը մեծ,
Գրչի՝ եղբայրներ, Տիչի՛նա, Բաժա՛ն...

Մանր է կորցնել հայրական օջախ,
Չուված է հոգիդ ամեն մի քարին:
Մենք այդ զգում ենք, տեսել ենք հաճախ
Դարավոր, արնոտ մեր ճանապարհին:

Պիղծ կոշիկներով կղտփեն նրանք
Մեր սուրբ քաղաքի մարմարներն անգին,
Գոմ կղարձենն ամեն ապարանք,
Կանարգեն մեր մեծ հայրերի հոգին:

Նրանք թաղե թաղ կանցնեն անամոթ,
Ահից մոլեգնած գողերի նըման,
Ավար կփնտրեն մինչև առավոտ,
Մինչև կհասնի ըոպեն հատուցման:

Այո, կհասնի... նա չի ուշանա,
Չի ների նրանց երկիրը մեր վես.
Ահեղ ցասումով սեղմվում է նա
Մոր սրտի նման, հոր բռունցքի պես:

Զենք թողնի լկտի գողերի ձեռքին
Մեր ուկրաինական սիրտը մայրենի.
Մենք մարտ կենտվենք նորից և կրկին,
Կիևը մերն է, մերը կլինի:

ԱՐՁԱՔԱՆԴԻ ԽՆՁՈՐՆԵՐԸ

Ռազմաճակատ, լսիր: Դյուցազուններ,
Հսեք մի պահ դուք ձեր բանաստեղծին:
Ես ձեզ համար երգում եմ այս գիշեր
Արզաքանդի խնձորների մասին:

Փռված է ջերմ կապույտ երկնքի տակ
Խնձորենու լայնածավալ այգին:
Վազում է ձորակով մի խենթ գետակ
Որպես մանուկ անհոգ ու հրճվագին:
Ծառերն այնտեղ տնքում են հաճույքից՝
Պտուղը թևերով հագիլ գրկած,
Կարծես շիկնած իրենց փարթամ բերքից՝
Ինչպես համեստ հարսներ՝ նայելով ցած:
Ամեն խնձոր ասես մի ձմերուկ,
Որ հրաշքով է լուկ՝ բուսել ծառին:
Այդ շէր տեսել արևն անգամ ծերուկ
Իր ճոխ արարչական ճանապարհին:
Ծառերի տակ հարսներ ու աղջիկներ
Խնձոր են հավաքում հատված-հատված:
Ծեր այգեպանը կանաչին թիկնել՝
Նայում է աշխարհին որպես աստված:
Ստվերի տակ նստած տարեց մի կին
Արտորալով գործում է իր գուլպան:
— Բարև՛, մայրի՛կ, հրաշք է ձեր այգին,
Դուք խնձորներ ունեք անմահական:
Այստեղ եղել եմ տարիներ առաջ,
Այս ձորն ամուկ էր, կորդ էր, աննվաճ.
Այս բուրավետ այգին ինչպե՞ս բուսավ:
Պառավ կոլխոզուհին ժպտաց, ասավ.

— Բարո՛ւմ եկար, որդի՛, հազար բարով,
Միշտ անց կենաս դալար ճանապարհով,
Քոնն է այգին, մտիր դու համարձակ:
Թող Հիտլերին դիպչի հազար կայծակ:
Թափում է նա հեղեղներով արյուն,
Որ տիրանա մեր նորատունկ այգուն:
Իմ զավակներն են քաջ՝ փորիլ այգին,
Մեր առվակներն են պաղ՝ ջրել այգին,
Մեր զով հովերն են օրորել այգին,
Մեր արևից է կարմրել այգին:
Ես եմ այգին պահել ու փայփայել:
Ասում են ինձ. արի՛, այգուցըդ ե՛լ:
Ինչո՞ւ ելնեմ ես իմ տնկած այգուց.
Հազար զավակ ունեմ, հազար առյուծ.
Նրանք հեռվում կռվում են հուսովառ,
Գուպա եմ ես գործում նրանց համար:

Աշուն է, ամպամած մի հորիզոն:
Եղյամն է պաղ նստել խըրամատին:
Շտապ հասավ նվիրաբեր ավտոն
Ու մարտիկներն արկղներն արագ բացին:
Մի արկղի մեջ գուպա տասներկու զույգ,
Ամեն մի զույգի հետ մի զույգ խնձոր,
Ամեն խնձոր ասես մի ձմերուկ,
Եվ գիրը կարդացին խորհրդավոր.
«Ձեզ, իմ քաջեր, հեռու Հայաստանից,
Արգաքանդում ապրող պառավ նանից:
Ծաղկել է այս այգին այն աշխարհում,
Որի համար թափում եք դուք արյուն:
Առե՛ք այս խնձորներն, անո՛ւշ արեք,
Ճուտեր եք արծվի, արծի՛վ դառեք,
Եվ միշտ հիշե՛ք, ոնց որ սիրած անուն,
Թե ինչ երկիր, ինչ հող եք սրաշտպանում»:

ՄԵՆՔ ԶԵՆՔ ՏԱ ՄՈՍԿՎԱՆ

Զեզ, որ գալիս եք՝ ձեր անարգ արյունն անհույս ճողփելով,
Ինչպես ճիվաղներ, որոնց մղում է մոլուցքը մահվան,
Զեզ, որ գալիս եք հարբած գարշահոտ երազանքներով,
Զեզ, մարդագայլի՛ր, մենք չենք տա Մոսկվան:

Մոսկվան սիրտն է մեր... Թրծվում են այնտեղ ինչպես հնոցում
Մարդկային սիրտ և եղբայրության աղյուսները տաք,
Ժպտում են իրար՝ զազախն ուզրեկին, հայն ուկրաինացուն
Մի ջերմ հայրական առաստաղի տակ:

Նա մեր գլուխն է, որ լույս է տալիս արար աշխարհին:
Այնտեղ են կանգնած տաճարները վեհ մեր իմաստությամբ.
Այնտեղ է ձուլվում առեղծվածների ոսկյա բաճախին,
Այնտեղ է բացվում մեր դեմ ապագան:

Մոսկվան մեր համար ուխտավայր է մեծ և նվիրական.
Որին բերում ենք ազնիվ տքնության պտուղները մեր.
Եվ նայում է նա մեր վաստակներին աչքով մայրական
Ու մեզ պարգևում նոր խանդ ու թևեր:

Մոսկվան վեհագույն մեր սրբությունն է... Այնտեղ է նիրհում
Մեր փոթորկածուհի ժամանակների խիզախ ռահվիրան,
Այնտեղ է Լենինն իր մարմարակերտ այն դամբարանում:
Դուք երազում եք մոտենալ նրա՞ն...

Դուք ցնորում եք մեր սուրբ ոստանի քարերը կոխել
Ժողովուրդների արյունով ներկված բրդոտ ոտքերո՞վ,
Արվեստի մարմար աստիճանները խորխով ողողել՝
Գիշեր մինչև լույս լկտի երգելո՞վ...

Ոչէ Ամեն մի քայլ, որ դուք ոռնաձայն առաջ եք նետում,
Մոտեցնում է ձեզ ոչ թե Մոսկվային, այլ ձեր պիղծ մահվան: .
Մոսկվայի համար անանց պատնեշ կա ամեն մի սրտում,
Ամեն մի կրծքում՝ անխորտակ վահան:

Մոսկվան մեր սիրտն է, նա չի հանձնվի մեր շար ոսոխին,
Նա մեր գլուխն է, որ չի խոնարհվի ոչ մի բռնության,
Նա մեր պատիվն է, մեր սրբությունը, մեր ուխտատեղին...
Մենք չենք տա Մսկվան:

Ամեն մի ֆուգաս, որ վայր եք նետում դուք ճիվաղաբար,
Հրդեհում է մեզ անհուն վրեժի սրբազան հրով,
Մոսկվայում քերծվող ամեն կամարի և քարի համար
Պատասխան կտաք դուք ձեր որջերով:

Մոսկվայի համար, երկի՛ր իմ, ելիր եզերքից եզերք,
Նետվի՛ր հսկայի քո հզոր լիցքով՝ թշնամու վրա,
Գործի դիր և տա՛նկ, և՛ ուսմբ, և՛ ցասում, և՛ հանճար, և՛ երգ,
Իվ համառության անառիկ զրրահ:

Շարժվի՛ր, տափաստա՛ն, հողմե՛ր, սուրացե՛ք դեպի թշնամին,
Այս մութ ուղիս դեմ կանգնեցե՛ք անառ, Կովկասյան լեռնե՛ր,
Թող հերոսանա ամեն ժողովուրդդ այս ահեղ ժամին,
Շեփո՛ր վերցըրեք, երգիչ ընկերնե՛ր:

Մեր սրտերն արդեն ուռչում են որպես օվկիան մակերնթաց,
Իվ ամեն բռունցք բարձրանում է վեր իբրև շոգեմուրճ.
Վճռական մարտի երկաթե նժույգն արդեն խրխնջաց,
Զկա հաշտության և ոչ մի կամուրջ:

Մենք ձեզ չենք թողնի մեր սուրբ հողերից ոչ մի մատնաչափ,
Դուք հող կստանաք մեզանից՝ միայն թաղվելու համար,
Մենք ձեզ կխեղդենք մեր ձմեռային բքի սաստկությամբ
Իվ դուք չեք տեսնի նորից մի ամառ:

Մոսկվան մեր սիրտն է, նա չի հանձնվի մեր շար ոսխին,
Նա մեր գլուխն է, և չի խոնարհի ոչ մի բռնության,
Նա մեր պատիվն է, մեր սրբությունը, մեր ուխտատեղին...
Մենք չենք տա Մոսկվան:

Լ Ս Ե Ք, Գ Ա Ր Ե Ր

**Լսե՛ք, դարե՛ր, ու հեռավոր գալիքների սերունդներ,
Ձեր երջանիկ օրոցքներում լսեք ահեղ երգը մեր:**

Եվ մարդակեր Հիտլերն ահա տվեց խուժդուժ հրաման.
—Ամեն գնով առնել կարմիր մայրաքաղաքը — Մոսկվան:
Շարժվեց խուժանը տանկերի՝ համայնական դաշտերով՝
Մեր ծաղիկներն ու ոսկեհատ հասկերն ամեն ջարդելով,
Ինքնաթիռները մահասույլ ոռմբեր էին թափում ցած,
Քանդվում էին մեր հանճարով ու ձեռքերով կառուցած
Մեր քաղաքները պերճագեղ և մեր գյուղերը խաղաղ:
Ամենուրեք երգեց հրդեհն իբրև ցնդած աքաղաղ:
Գալիս էին էսէսական դիվիզիաներն արնախում,
Մեր մայրերի աչքի առաջ մանուկներին գլխատում,
Բռնաբարում էին կանանց, մորթում անզեն ծերերին,
Ռազմաճակատն արյունահեղ գալիս էր ետ օր-օրին:

**Լսե՛ք, դարեր ու հեռավոր գալիքների սերունդներ,
Ձեր ապահով օրոցքներում լսեք տենդոտ երգը մեր...**
Առան Օրյոլ ու Կալինին, Զվենիգորոդը հասան,
Կրեմլի վրա ճախրեց վրտանգն իբրև ուրուր մի դաժան,
Ֆաշիստական ռադիոն ոռնաց հաղթանակի մի սև երգ,
Հիտլերն իր պիղծ երազներով աճապարեց Արևելք,
Որ փոխարեն Հոկտեմբերյան նվիրական մեր տոնի
Ինքը Կարմիր հրապարակում ռազմի շքերթ ընդունի,
Որ Կրեմլը մտնի հետո, լկտի ժըպիտ՝ երեսին,
Բռնապարտի նըման հեծած հաղթանակի ճերմակ ձին:

**Լսեք, դարեր ու հեռավոր գալիքների սերունդներ,
Ձեր անվրդով օրոցքներում լսեք ցասկոտ երգը մեր:**

Մինչև Մոսկվա մի հրանոթի թափ էր միայն մնացել,
Մեր նահանջի աղեղն արդեն վերջին լարման էր հասել,
Երբ Ստալինն ասաց.

—Այլևս դեպի ետ ոչ մի քայլ.

Եվ շառաչեց հակագրոհի հորձանքը մեր բոցափայլ:
Տանկերի դեմ տանկեր ելան, արկի դեմ արկ որոտաց,
Մեսսեր-Շմիդտները փետրաթափ անգղերի պես ընկան ցած,
Ֆաշիստական լեռներն անթիվ մորեխի պես փռվեցին,
Բայց հոխորտում էին առաջ առնոցներով մոլեգին,
Եվ այն պահին, երբ մոտենում էր թշնամին դարչնագույն
Ու երկաթե իր թաթերով մեր դարձասները թակում,
Երբ որ թվում էր, թե կընկնեն դռները մեր ամրափակ,
Երբ որ աշխարհը ճարձատեց, ինչպես անտառ հողմի տակ,
Երբ առասպելն էր զառանցում.— «Չկա այլևս մի ուժ,
Որ դեմ կանգնի հիտլերական հեղեղներին խուժամուժ»:
Այդ գոռ պահին բացվեց ահա Կրեմլի դարձասն Սպասյան
Ու տողանցում կանգնած կարմիր զորամասերը տեսան
Ստալինին...

Նորից հանդարտ ու հաստատուն քայլերով
Նա դամբարանը բարձրացավ: Շողաց բանակն իբրև ծով,
Երբ ամպրոպի մռայլ պահին պայծառ արևն է ծագում:
Հաղթանակի ոգին թնդաց ամեն կրծքի վանդակում:
Էսկադրիլներն ուռանների դեպի երկինք սլացան:
Ու ցասմախառն ուրախության աղմուկներում խլացան
Հեռվում պայթող ֆուգասային դրդոցները բուրբ:
Մինչ ոսոխները Մոսկվայի մատույցներում մոտավոր
Անտարակույս հաղթանակի ավարն էին հոտոտում,
Մինչ մոլեգնում էր մարտը բիրտ՝ երկրի վրա և օդում,
Խոսեց խիզախ մեր առաջնորդը... ցուցամատը պարզած
Դեպի ճակատը ճարձատող՝ այսպես խոսեց և ասաց.
— Սովետական ժողովրդի դյուցազնազա՛րմ զավակներ,
Ձեզ է նայում ամբողջ աշխարհը, ձեր բազկին անվեհեր,
Ձեզ են նայում ժողովուրդները հավատքով աննրկուն,
Մեծ Լենինի դրոշի տակ՝ առա՛ջ, դեպի հաղթությո՛ւն:
Եվ նրա ձայնը որոտաց որպես կայծակ ցասմալառ
Երկրից երկիր, հոգուց հոգի, լեռնապարից լեռնապար,
Եվ թունդ ելան, փոթորկվեցին ժողովուրդներն իբրև ծով,
Շքերթներից ի մարտ անցան նրա աչքի առաջով,

Անցան հուժկու թնդանոթներն ու սայլակներն արկերի,
Անցան տանկերը ծանրակուռ՝ դղրդոցով ահռելի,
Անցան վերից ուժաձիգներն՝ առած բեռները մահվան,
Կործանիչները գոռ թափով դեպի կոխվ խոյացան:

Լսե՛ք, դարե՛ր ու հեռավոր գալիքների սերունդներ,
Ձեր լույս խաղաղ օրոցքներում լսե՛ք մարտի երգը մեր...
Կանգնեց Մոսկվան թշնամու դեմ որպես ամրոց անխորտակ,
Կանգնեց բանակը Հիտլերի դժնների դեմ նրա փակ:
Եվ մեր հարվածը կործանիչ, հարվածը մեր վճռական,
Որ պատրաստել էր մեծագույն զորավարը պատմության,
Հավերժական շառաչունով իջավ նրա ճակատին:
Նրա գոռոզ դիվիզիաները փուլ եկան, ցրվեցին՝
Անթաղ դիերը թողնելով մերձսկոլյան ձրներում:
Խուճապախույս փախչում էին, կանգնում անհույս ու գերվում՝
Իրենց անլուր ոճիրների ծանրությունից կրճացած:
Դողում էին սարսափահար կամ ամոթով նայում ցած,
Փախավ Հիտլերը կաղալով մինչև իր որջը, Բեռլին,
Գազանային իր մոլուցքի արնոտ փրփուրը բերնին,
Հրաշակերտ ու անառիկ... Նորից կանգնած է Մոսկվան
Որպես ամրոց անմատչելի և լույս օջախ մարդկության:

Լսե՛ք, դարե՛ր ու հեռավոր գալիքների սերունդներ,
Ձեր երջանիկ օրոցքներում լսեք նորից երգը մեր:
Որքան էլ դուք լինեք հեռու, որքան էլ վեհ, անխռով,
Մեզ կհիշեք հիացմունքի երախտապարտ երգերով,
Եվ դարերի կույտի միջով մեր դարը ձեզ կերևա,
Ինչպես էլբրուսն է երևում լեռնակույտից հեռակա,
Եվ կըթռչի ձեզ մոտ իմ երգն, ինչպես իմ սիրտն արնածոր,
Ինչպես ահեղ այս օրերում պայթած արկի մի կըտոր,
Որ սուղելով ձեր վեհ անդորրը մի վայրկյան խանգարի
Եվ ձեզ հուշի մարտերն անմահ՝ ամպրոպաշունչ մեր դարի:
Եվ կնայի դեպի անցյալը մեծագեղ ձեր հոգին,
Դուք կըտեսնեք Ստալինի ուրվանկարն ահագին,
Որ մեր դարի պատվանդանին կանգնեց հավետ անսասան,
Որպես կամքի, խիզախության մի հրաշակերտ հուշարձան:

1943, հունվար

ՆՐԱ ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔԸ

Գնդապետ Զաքարի հիշատակին:

Գիշերը լիքն է բոցերով ցամաքն,
Պայթյուններով մոտիկ ու հեռավոր,
Գետնափորում, հանգչող լույսի նրժան,
Պառկած է գնդապետը վիրավոր:

Ինչ երազներ անցան նրա սրտով.
Զավա՞կ, թե՛ մայր, սիրած ընկերուհի՞ն,
Թե՛ հայրենի երկինքը լուսաթով.
Այդ նա շասաց իր զինակիցներին:

Նրա խոհերն ու խոսքերը վերջին
Թռան ինչպես վերջին արկի շառաչ,
— Ինձ միացրե՛ք հրետանու պետին...
Կրա՛կ... հանուն հայրենիքի... առա՛ջ...

1943 ապրիլ,

Գործող Բառակ

ԲԼԻՆԴԱԺՈՒՄ

Իմ Անահիտին

Գիշերը թանձր է և անվերջ,
Հեռվում թնդում են ոռամբ, ական:
Թաղված խոժոռ խավարի մեջ՝
Հեռում է դաշտը ուղմական:

Պառկած են թաց գետնափորում,
Զինակիցները հոգնաբեկ:
Քամին հեռվից երգ է բերում,
Հայրենական ծանոթ մի երգ:

Միայն կոմբատն է լուռ նստած՝
Զեռքին փոքրիկ լուսանկար,
Գիշերվա պես հայացքը թաց,
Նայում է ջերմ ու խանդավառ:

Այդ իր զավակն՝ է աչքերում
Զքնաղ ժրպիտը մանկական:
Հայրը նորից է համբուրում,
Ու երազում է բարձրաձայն.

— Դու իմ անմեղ, իմ լո՛ւյս մանկիկ,
Իմ արշալույս և իմ գարուն,
Քո երկնքում չկա ամպիկ,
Դեռ մահ չկա քո աշխարհում:

Երբ կենսաշող արցունքն հերում,
Դու ծիծաղում ես հրճվագին,
Կարծես ծաղիկն է ծիծաղում,
Առավոտյան շաղիկն աչքին:

Քնած ես դու հանգիստ ու լուռ
Հայրենական քո հարկի տակ,
Մինչդեռ ոսոխն իբրև ուրուր
Այստեղ ճախրում է սանձարձակ:

Կուզե խուժողուժ ցուլի նման
Խուժել այգին քո անխըռով,
Ճգմել ծիծաղդ մանկական
Իր արյունոտ պճեղներով:

Նա կամենում է խորտակել
Քո Հայրենիքն ու ապագան,
Արտասուքովըդ ոռոգել,
Փխրել մեր հողը սրբազան,

Որի կրծքին պիտի աճեն,
Իր հետնորդները գարշելի,
Իր մտրակները շառաշեն
Մեջքի վըրա մեր թոռների...

Ոչ... դու մանկիկ իմ աննման.
Ննչի՛ր քո լույս օրորոցում,
Ահա նորից ստալինյան
Հրետանին է որոտում:

Ես մարտ կերթամ նորից, կրկին՝
Կրծքիս գլուխըդ գանգրահեր,
Մինչև մեր սուրբ հայրենիքին
Բերենք նորից անամպ օրեր:

Ես տուն կըգամ հաղթանակով՝
Կրծքիս փառքի շըքանշան,
Որ կառուցեմ ազատ երգով
Պայծառ քո բախտն ու ապագան:

Իսկ եթե կուլ դառնամ մահի՝
Կրծքիս վերքի շըքանշան,
Երկիրըս քեզ կըփայփայի
Մեծագործով մի հոր նըման:

Եվ դու կաճես՝ իմ արյունով
Ներկված հողում, բերքով պուտա,
Կանցնես մեր լույս ճամփաներով՝
Կրժքիդ անունն իմ անարատ:

Գիշերը թանձր է և անվերջ,
Դեռ դղրդում են ումբ, ական,
Թաղված խոժոռ խավարի մեջ՝
Խոկում է դաշտը ռազմական:

Պառկած են թաց գետնափորում
Զինակիցները հոգնաբեկ:
Կոմբատը երգ է ոլորում,
Հայրենական սիրած մի երգ:

1943 ապրիլ, Ղրիմ

Ս Տ Ա Լ Ի Ն Գ Ր Ա Դ

Ստալինգրա՛դ, հերոսների երկաթաձո՛ւլլ օրորոց,
Քեզ է նայում այսօր աշխարհը հույսերով ալեկոծ:
Կանգնած ես դու՝ կուրծքդ հրին՝ որպես մարտիկ, որպես բերդ,
Որ կյանքը միշտ կանաչ մնա քաղաքներով բարձրաբերձ:
Եվ ես, երգիչ Հայաստանի, ըզգում եմ քո շունչը տաք,
Քեզ լափիլզով բոսոր բոցերն այրվում են իմ կրծքի տակ:
Այստեղ գլխիս Արարատյան լաջվարդ երկինքն է լացված:
Հոկտեմբերյան անձրևներից ապակու պես լվացված:
Այստեղ իմ շուրջը Երևանն է, վարդագույն մի երազ,
Ուր մտերիմ աչքերի պես կարծես նայում են վրաս
Ամեն կամար ու լուսամուտ: Անցնում եմ լուռ թաղեթաղ:
Աչքիս առաջ են բարձրացել այս պալատները չքնաղ:
Բայց ես գիտեմ, կրփշրվեր այս մաքրափայլ ապակին,
Իվ կենսառաք արևի տեղ մահ կըթափվե՜ր մեր դլխին,
Եթե, քաղաք Ստալինյան, չկանգնեիր մահվան դեմ,
Կույ շտապիր կըրակներին ապարանքներդ վրսեմ:
Եվ այս պահին եթե նրանք քայլում են գոհ, ապահով
Բազմարդ նյու-Յորքներում, Լոնդոնի լայն մայթերով,
Այդ նըրանից է, որ կանգնած ես դու մարտի բոցերում,
Եվ արկ ու ուժը քո հոյաշեն հրապարակներն են փոքրում:
Նրա համար ունեն նըրանք ճերմակ երես ու ձեռնուց,
Ուր մայր Վոլգան շառագունել է արյունով իր որդոց:
Ստալինգրա՛դ, հերո՛ս քաղաք, հերոսների մեծամայր,
Աշխարհն ամբողջ հիացմունքի երգ է հյուսում քեզ համար:
Եվ ես, երգիչըդ հին, նորից զգում եմ քո շունչը տաք,
Ազատարար զարկերը քո թնդում են իմ կրծքի տակ:
Զա՛րկ, թշնամին կընկնի անուժ՝ քո անառիկ դռան մոտ,
Քո բոցերից կըբարձրանա հաղթանակի առավոտ:

1942 հոկտեմբեր, Երևան

Լ ՈՒ Ս Ա Ն Կ Ա Ր

Այրում է սիրտըս մի անանց մրմուռ,
Ու մռնչում է խիղճըս խելագար.
Իմ սեղանի վրա ընկած է լուռ
Մի աշակերտուհու լուսանըկար:

Խեղված է նռնակով, այլանդակված,
Այտի վրա փորված է խոր խոռոչ,
Քերանը դեռ սիրո խոսքեր չասած
Գալիք երջանկության մի ընկերոջ՝

Դարձել է անբարբառ մի ավերակ,
Ուր վիշտն է բնակվում անձուկի հետ,
Նըրա շրթունքների լուսաճառագ
Ժպիտը խորտակված է առհավետ:

Աչքերի մեջ թախիժ կա մի անհուն:
Աչքերը մնացել են անվրթար,
Որ տանջանքով նայեն միշտ հայելուն
Եվ լան չարգված գեղեցկության համար:

Փակում եմ դեմքըս լուռ ու մորմոքում,
Ու մըռնչում է իմ հոգին վրեժ:
— Դու, բերխտեսգադենյան գետնահարկում
Պատսպարված կապկակենցաղ հրեշ,

Փո գործն է սա: Հրճվի՛ր, ուրախացի՛ր.
Փլված է մի կապույտ երկնակամար...
Քո գործն է սա... ահա ճակատագիր,
Որ դու նյութել ես աշխարհի համար:

Կշախշախվի քո նըզովյալ հորդան
Մինչև վերջին վարձկանըդ արնախոտմ,
Նվ մեր գնդերն անմահ՝ Ստալինգրադյան,
Թրծված մարտի դժոխային բոցում,

Կանցնեն ձեր դիերի լեռնակույտով
Մինչև քո որջը մուժ — Բերխտեսգադեն,
Քեզ կըրռնեն արդար մի զայրույթով
Եվ... թող կախեն, այրեն, կամ գլխատեն,

Այդ միևնույն է. քո արյունը պիղծ
Չի հանգցնի հրդեհըս խելագար,
Քանի որ իմ հոգու անխուփ աչքից
Կախված է այսպիսի լուսանրկար:

Ասա՛, ինչպե՛ս, ինչո՛ւ՝ հատուցանենք,
Տևտոն, քո ոճիրներն անմարդկային.
Մենք է՞լ այսպես լլկենք ու կործանենք
Ձեր մայրերին, մանկանց, աղջիկներին...

Ուրեմն ինչո՞ւ դու քեզ կարդարացնես
Այս խորտակված անմեղուժյան առաջ:
Ապառաժված ես դու ահից... Իսկ ես
Այս ահավոր լուսանկարն առած՝

Կանցնեմ երկրե երկիր և դարեդար
Իմ երգերի դղրդալից ոտքով...
Թող անիծե արևը հայրաբար,
Անարգ և արյունոտ անունը քո:

1942 Նոյեմբերի, Երևան

«ՎԵՐՋԻՆ ՓԱՄ»

Ինֆորմըյուրոն տալիս է «վերջին ժամ»:
Մեր հաղթության համբավն է քաղցրագին:
Եվ ես լսում եմ այս ամենն անգամ,
Առաքաստի նման բացվում է իմ հոգին:

Անցան դժխեմ օրեր և ամիսներ,
Երբ լուրը մեզ խեղդում էր որպես թուղ.
Համառ կովից հետո զորքերը մեր
Թողին Ռոստովը, Արմավիր, Մոզդոկ...

Գալիս էր թշնամին արյամբ արբշիռ,
Դառնում էր վայրկյանից վայրկյանն ահեղ,
Նահանջելով ձգվում էր ողջ երկիրն
Ինչպես հզոր տիտանական աղեղ:

Եվ այժմ հերթը մերն է. թշնամին
Մեր առջևից փախչում է արնաքամ:
Ավետելով և մեզ, և աշխարհին՝
Ինֆորմըյուրոն տալիս է «վերջին ժամ»:

Լսում ենք ուշ գիշեր, լուսաբացին,
Մեր հաղթության համբավը քաղցրաթուղ.
Մերոնք համառ կովով գրավեցին
Մոզդոկը, Արմավիր, Ռոստով...

Առա՛ջ, ընկե՛ր, գարունն է հաղթության,
Արդարության կայծակն է մեր ձեռքին,
Շուտով ինֆորմըյուրոն Սովետական
Կտա մի ժամ ևս — ամենավերջին.

— Բեռլին մտալ մեր զորքը: Ջախջախվեց
Ֆաշիստական բանակն արյունախում:
Ադոլֆ Հիտլերն առաստաղից կախվեց
Իր բերխտեսզադենյան ներքնահարկում:

1943, հունվար

Ց Ա Ս ՈՒ Մ

Անցնում եմ հինավուրց այս քաղաքով:
Ո՞ւր են ծանոթ շենքերը,
Սյունաշարը մեծարվեստ պալատների:
Ո՞ւր է փարթամ բուլվարը, լորենին այն զով,
Որի սովերում ես առաջին իմ սերը թաքցրի:

Ֆրված է փողոցում գմբթը — հանճարեղ մի պանգ,
Որին դիպել է վանդալի կացին մի անողոք:
Ամենուր ավերածություն և անարգանք:
Լոկ ծխաններն են մնացել կանգուն իբրև բողոք:

Սուվում է օդային տագնապը: Մայրը փողոցում
Մարմնով ծածկում է իր սարսափահար մանկան:
Իսկ վերևից ավերակներն է դեռ գնդակոծում
Մոտորասիրտ մի խուլիգան:

Մինչ բազմությունը բուլվարում կանգնած է լուռ
Վերքի պես լայն եղբայրական շիրմափոսի առաջ:
Խոշտանգամահ դիակների մի ահավոր բլուր
Լցնում է լուռթյունն իբրև մարմնավորված հառաչ:

Բարակ ու ձիգ ձայնով, ինչպես կախաղսնի պարան,
Զգվում է նահատակների ցուցակն անվերջ:
Եվ մի անուն, ծանոթ աստղի նման,
Պոկվում է երկնքից, գահավիժում է ծովի մեջ:

Այդ իմ ընկերն էր:
Մլտերիմըս մանկություն:
Ինչպես ջոկեմ նրան դիակներից:

Ինչպե՞ս ես ճանաչեմ նրան:
Ոչ աչք է մընացել, ոչ այտ և ոչ բերան,
Որով այնքան նա ժպտացել էր ինձ:

Իսկ մայրը, ճամփելիս, խնդրում էր ինձ անհագ,
Որ որոնեմ, գտնեմ իր մինուճար որդուն,
Որ միասին կռվենք, շուտ-շուտ գրենք նամակ...
Ինչպե՞ս մենակ վերադառնամ ես տուն:

Ես լաց չեղա:
Ախ, «քնարականներ»:
Կարծում եք, թե չունե՞մ ես արտասուք:
Հեղեղըս, թողնեի, շառաչելով կառներ
Թացությունից մզլած հատորիկները ձեր
Եվ կտաներ անդարձ մոռացության... Բայց դուք

Անձրևեցեք աշնան պես միալար՝
Կողոպտելով ամպերը Տերյանի:
Կաթակն եմ ես ընտրում հոգիս շորացնելու համար,
Որ դարձնեմ վառող և հրետանի:

Դուք թակեցե՛ք հավերժության լուսամուտները՝ փակ:
Իսկ ես դիմում եմ ժողովուրդներին
Ի՞նչ որ բարձրացրել է մարդն արևի տակ,
Հավատացե՛ք, մոտիկ ու թանկ է իմ սրտին:

Եւ միշտ նայել եմ աշխարհին հիացմունքով հպարտ:
Ինչպես հոգին մթնալույսի՝ Հեգեյն էի կարդում,
Ինչպես Կոմիտասին սիրել են Բեթհովեն, Մոցարտ,
Շիլլերի հետ ես սովորել եմ Շտուտգարդում:

Բայց իմ քաղաքն ահա
Եվ իմ ընկերը մանկության:
Երկուսն էլ ավերակ և անճանաչելի:
Ինչո՞ւ համար... ինչո՞ւ...
Որ մի շիկամըռովթ օրան-գուտան
Մեր սուրբ վաստակն ու մեր հոգու գանձերը վայելի:

Նուում է իմ հոգին ինչպես Վեզուվը կուլ տված մի ծով:
Ահա թե ուր հասավ այն անասունը, որ կոչվում էր մարդ:
Ս'եր հրդեհված քաղաքների ամբողջ մռնչոցով
Գոչում եմ ես.

— Կործանեցեք որջերը ոճրապարտ:

Թափե՛ք ռումբեր, արագ և անդադար ինչպես կարկուտ,
Թող օդ նետվեն ոճրաբըները ժանտագին,
Թող հերարձակ փողոց փախչեն նրանց մայրիկն անգուլթ,
Որ օրորել են այս հրեշներին:

Փռչին ու ծուխը թող ցերեկը դարձնեն գիշեր,
Հրդեհների ցուքով գիշերը թող դառնա ցորեկ,
Թո՛ղ ածխանան հազարավոր իժեր:
Նրանք այդ երազել են և գործել ամենուրեք:

Որ քաղաքները մեծարվեստ մնան միշտ հաստատուն,
Որ աշխարհի վրա
Չըբարձրանա կրկին կործանարար մի ձեռք,
Որ ոչ մի մայր չըկորցրնի իր մինուճար որդուն,—
Պատերազմի որջերը պիղծ՝ կործանեցե՛ք:

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒՆ

Արի՛, Լիբա՛յր, փառաբանե՛նք մեր քաղցրաբառ հայոց լեզուն,
Մեր սրտի ջուր, մեր ձեռքի թուր, մեր հոգու լար հայոց լեզուն:

Հոսել է նա մեր դարերից, մեր սարերից ու մեր սրտից,
Արաքսի պես միշտ կենդանի, միշտ անսպառ՝ հայոց լեզուն:

Նու առաջին կանչն է եղել դուցազնական մեր նախահոր,
Ուրորոցից մեզ փայփայել է մայրաբար հայոց լեզուն:

Քերթողահայր Խորենացուց մինչև Քուչակն ու ձեր ծառան
Տվել է մեզ երաղ ու երգ և ճանապարհ՝ հայոց լեզուն:

Կոմիտիներ մեր քարավանն ամպրոպաշունչ գիշերներին,
Կրկրչեհինք, եթե ճամփին շրթոցկտար հայոց լեզուն:

Քանի՜ ցեղեր ցամաքեցին ինչպես հեղեղն ավազի մեջ,
Ռայց լենինյան ծովին հասավ մեսրոպատառ հայոց լեզուն:

Նրան իր ձեռքն է վերցրել մեր պետությունն աշխարհաշեն,
Այդ վեհ ձեռքով է բարձրանում դեպի կատար՝ հայոց լեզուն:

Այսօր էլ նա բռնություն դեմ փայլատակում է բարկացալու,
Հերոսական լեզուների հերոս եղբայր հայոց լեզուն:

Ուրեմն եկ՝ փառաբանենք, փայլեցնենք թրրի նման,
Որ զրնգա արևի տակ հավետ պայծառ հայոց լեզուն:

1943, հունիս, Երևան

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԳԻՐ ՌԻԿՐԱԽՆԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐԻՆ

Կիւր մերն է —

Այսպես երգեցի ես այն ժամանակ,
Երբ հիտլերական կոշիկը զնգաց այն սեգ ոստանում,
Երբ վիշտը ցցվեց մեր սրտերի մեջ իբրև մի դանակ,
Որ խուլիգանն է գրպանից հանում:

Կիւր մերն է —

Ահեղ նահանջի այն գիշերներին
Ես ձեզ դիմեցի իմ՝ ուկրաինական անպա՛րտ եղբայրներ,
Մեր գլխի վրա աւապերն ահավոր խտանում էին,
Բայց մեր հավատքը մնաց միշտ անմեռ:

Կիւր մերն է...

Ռադիոն ցնծության ձայներ է բերում.
Պուք այնտեղ թռաք բնին կարոտած բազենների պես,
Ես այդ լսեցի հեռավոր չքնաղ իմ Արմավիրում
Եվ հոգով ձեզ հետ սավառնում եմ ես:

Անցնում եք ահա բերկրանքով, ցավով անպարփակելի
Մայրաքաղաքի շենքերի մոտով ծանոթ, կիսախանձ,
Հետքերն եք տեսնում այն ժանտ խելագար ավազակների
Եվ փայփայում եք մազապուրծ մարդկանց:

Ես պարզ եմ լսում ոսկյա դաշտերից իմ Արարատյան
Ձեր հաղթանակի ձայները Դնեպրի կանաչ եզերքին,
Եվ իբրև Սասնա սարերում կանգնած մի ձենով Օհան,
Գոչում եմ, մերն է Կիւր կրկին:

**Ձեզ հետ ենք եղել մենք վշտի ժամին և ուրախության,
Մեր ուկրաինական գրչի եղբայրներ, Բաժա՛ն, Սոսյուրա՛,
Եվ հպարտ եմ ես, որ ազնիվ արյունն իմ նայիրական
Թափվել է ձեր սուրբ դաշտերի վրա:**

**Եվ այս վեհ տոնին հոգիս անհանգիստ առաջ է թռչում.
Ողջո՛ւյն քեզ, Պյատրուա, Մինսկի պատերն էլ շուտով կերևան,
Յանկա Կուպալան մեռավ փրկության փափագը սրտում,
Կտեսնեք այդ դուք, Տանկը, Կրապիվան:**

**Կիևը մերն է,
Եվ մերն են դարձյալ մինչև հորիզոն
Մեր Հայրենիքի բոլոր քաղաքներն ու գետերը հին:
Մոտ է այն օրը, երբ կազդարարե Սովինֆորմբյուրոն.
— Մեր բանակաները մտել են Բեռլին:**

1943, Աբմազիւր զյուլ

ԿՅՈՒՐՈՍԻ ԿՏԱԿՐ

(ԸՍՑ ՔՍԵՆՈՑՈՒ)

Երբ ես կըմեռնեմ, ոսկով արծաթով
Մի պճնազարդեք երջանիկ իմ դին,
Զեմ ուզում զմուռս անթառամ հոտով.
Դուք ինձ անհապաղ հանձնեցեք հողին:

Զկա առավել վսեմ մի վիճակ,
Քան ձուլվել հողին սուրբ և իմաստուն,
Զի հողն է ծնում այս արևի տակ
Ամենայն բարիք և գեղեցկություն:

Սիրել եմ մարդկանց ես միշտ կաթոփին,
Եվ քաղցր է լինել մասունքն այն բանի,
Ինչ մահից հետո ծաղկում է կրկին,
Որ ցեղը մարդու՝ հավետ պահպանի:

1943, Արմավիր գյուղ

Բ Ա Ց Ի Կ ԲԱՆԱԿԻ ԳԵՆԵՐԱԼ Հ. ԲԱՂՐԱՄՅԱՆԻՆ

Ազատարար մեր բանակները Արևմուտք են տանում
Սովետական գեներալներն ու մարշալները մեծանուն:
Եվ փառապանծ աստղերի մեջ հորիզոնում հաղթության
Շողում է վառ հայ հարազատ անունը քո, Բաղրամյան:

Երբ Գերագույնը քեզ դիմում է շնորհակալ հրամանով,
Կոչում գնդերդ քո առած քաղաքների անունով,—
Ես դղրդում եմ բերկրանքով. կարծես դիմում է նա ինձ,
Հայ բանաստեղծն իրեն զգում է քո փառքին մասնակից:

Ժողովրդիդ համբավն ես դու, նրա ոգին քաջարանց,
Հայաստանում ամեն խրճիթ քո պարծանքով է լեցուն,
Քո հաղթական արշավների ոտնաձայները առած՝
Ավելի բարձր են որոտում հայոց քնարն ու լեզուն:

1944, Երևան

ՀԱՂԹԱՆԱԿԻ ԲԵՐԿՐԱՆՔ

Երազի պես կապույտ երկնքի տակ,
Գլխին մշուշների մետաքսը փողփողեջ՝
Կանգնած է Երևանն ահա գեղաքանդակ
Հոկտեմբերյան ոսկեխարտյաշ ծառերի մեջ:

Հոգիներում և շենքերի վրա
խայտանդկար լույսերն են շողշողում նորից:
Հաղթող ժողովրդի ուրախությունն է դա,
Որ դուրս է ճառագեւել, թնշպես ծաղիկն իր կեկոնից:

Անցավ նահանջն իբրև մըռայլ մի ամպ,
Որ ծանրացել էր աշխարհի վըրա և մեր սրտին:
Երկինքը լայնացած է լուսավոր գիտակցությամբ.
Ազատ է հայրենիքը վերըստին:

Նենգ թշնամին փախչում է ծնկածալ՝
Թաղած իր բանականերն ու երազները մեր հողում:
Եվ մեր բոլոր ոստանների վըրա դարձյալ
Մեր լենինյան դրոշն է փողփողում:

Ուռչում և լայնանում է մեր հոգին
Ինչպես երևանյան կապույտ երկնակամար:
Մենք հավատում էինք հաղթանակին
Եվ քաջ պայքարեցինք նըրա համար:

Եվ բարձրանում է սուրբ մերկ՝ տալու վերջին հարված,
Թեև դեռ մահառիթ գոտեմարտում է թշնամին:
Աշխարհը մեծ հույսով թևավորված
Սպասում է վերջնական հաղթանակի հըրամանին:

1945 թվի ՄԱՅԻՍԻ 9-Ը

Նկա՛ր, հաղթանակի՛ Մայիս, եկա՛ր...
Ըս հավատում էի քո մեծ գալուն:
Սանձահարվեց մրրիկը խելագար,
Դու աշխարհին ավետելով գարուն՝
Նկար, հաղթանակի Մայիս, եկա՛ր:

Ըս հավատում էի քո մեծ գալուն:
Մինչև իսկ նահանջի մռայլ աշնան,
Երբ քրոշին գրած Հիտլեր անուն՝
Քայլում էր մահը դեպի մայր Մոսկվան,
Ըս հավատում էի քո մեծ գալուն:

Սանձահարվեց մրրիկը խելագար,
Ինչպես վիշապ կիսվեց նա երկուսի,
Պռչավ հարավ նետվեց, գլխով՝ հյուսիս,
Հուլսով լուսավորվեց աշխարհն-արար,
Սանձահարվեց մրրիկը խելագար:

Դեռ չէր բացվել այսքան այրող գարուն,
Այսքան ն՛ վերք, և վա՛րդ, և դրոշակ,
Այսքան կսկիծ, այսքան ուրախությո՛ւն...
Այս ծեր և միշտ մանուկ արևի տակ
Դեռ չէր բացվել այսքան՝ այրող գարուն:

Նվ դու, հաղթանակի Մայիս, եկար,
Ընկած հերոսների արյան ցոլքով,
Վերադարձողների հուլսով պայծառ,
Մեր տքնությամբ, կովով և այս երգով
Նկա՛ր:

1945, Երևան

Փ Ո Թ Ո Ր Կ Ի Ց Հ Ե Տ Ո

ՆԵՐՔՈՂ ՀԱՂԹՈՒԹՅԱՆ

Ա՛ռ քո շեփորը նորից, հաղթանակի՛ բանաստեղծ,
Երգիր հպա՛րտ բերկրանքով, երգ հաղորդիր աշխարհին.
Կյանքի—մահվան պայքարում քո հայրենի՛քը հաղթեց,
Քո ծնկի տակն է արդեն նրա դուռը թշնամին:

Պատերազմի սանձարձակ աշխարհակուլ հողմերում,
Բարբարոսի և մարդու գոտեմարտում ահարկու
Քո հայրենիքն էր բոլոր ծանր զարկերն ընդունում,
Նրա հարվածն էր շողում բոլորից վեր և հատու:

Եվ արդ, այսօր, երբ տակավ թաց են վերքերն աշխարհի,
Երբ թաց են դեռ շիրիմներն աչքերի պես մայրական,
Նա է ազգերը կոչում անդորրության մի բարի,
Նա է աշխարհը տանում դեպի անքեն ապագան:

Մինչդեռ հյուսում են այնտեղ ատելության նոր դավեր,
Նդեռնական գանգերով ու ձեռքերով արյունոտ,
Քո հայրենիքն է կանգնած պահակի պես աներեր,
Քո հայրենիքն է կանգնած խաղաղության բերդի մոտ:

Ա՛ռ քո շեփորը դարձյալ, սովետական՝ բանաստեղծ,
Հյուսի՛ր վեպեր երազի և պոեմներ կառուցման:
Կյանքի—մահվան գուպարում քո հայրենիքը հաղթեց,
Նա է աշխարհը տանում դեպի անամպ ապագան...

ՀԱՅՐԵՆԱԲԱՂՁՈՒԹՅՈՒՆ

Մենք այս ափից ազատ սովետական
Նայում ենք մեր գերված Արարատին:
Մեր մայր Արաքսն իբրև մի յաթաղան
Կիսում է մեր երկիրն ու մեր հոգին:

Այստեղ վերածնության արևի տակ
Ծաղկել են ճոխ այգեստանները մեր,
Շենքեր են բարձրացել պերճաքանդակ
Եվ բորբոքվել են անթեղված հույսեր,

Հույսերը մեր պանդուխտ եղբայրների,
Որ աշխարհում շրջում են ցանուցիր,
Եվ լոկ մի տենչ ունեն անհանգչելի —
Վերադառնալ, վերադառնալ երկիր,

Այն հողը հարազատ, որ մեր նախնյաց
Արդար ոսկորներից է գոյացել,
Ուր վաստակել ենք պատմություն և հաց,
Ուր մենք ծնվել ենք, ծիծաղել, լացել,

Ուր մեր մասին, եթե հարցնեն նրանց,
Քարերը բարձրաձայն կըվկայեն,
Ուր վարդը մեր արյամբ է կարմրած,
Ջրերը կարկաչում են հայերեն:

Կապուտանից մինչև Նաիրյան ծով,
Մինչև լեռները Բինգյուլի և Տավր,
Ապրել ենք մենք հազարամյակներով,
Հերկել ու կառուցել ենք անդադար

Իրկիրն այն սուրբ, որից մեզ պոկեցին
Խնչպես անտառն այրված, արմատահան,
Իվ մեր քարավանները մատնեցին
Անտուն, անհյուրընկալ օտարության:

Իվ հաղթության այս ջերմ օրերի մեջ,
Այս մեծ գարնան այսքան կենսագրգիռ,
Հայ պանդոխտին կիզում է հին մի տենչ —
Վերադառնա՛յ, վերադառնալ երկի՛ր..

1946, Իրևան

ԸՆԿՈՒՋԵՆՈՒ ՍՏՎԵՐՈՒՄ

Նիրհում են այգիներն Այրարատյան

Գարնան արևի տակ:

Պահակների նրման

Լեռներն են բոլորվել շորս դին:

Հնկուզենու ստվերում նստած են ծալապատակ:

Ու բրիգադիրը նոր, թիկնեղ, բարձրահասակ,

Կարդում է կոլխոզի նամակն Առաջնորդին:

Կարդում է ծանրակշիռ ու բարձրաձայն:

Կարծես իր դասակին հրաման է հաղորդում էլի՝

Ջնգացնելով շարանը ռազմական

Շքանշանների...

Ապա կանգնում, խոսում է նա այսպես

— Բարեկամներ՝,

Մենք հաղթեցինք ու տուն վերադարձանք:

Մեր հայրենիքն այսօր նորից կանչում է մեզ

Դեպի աշխարհաշեն մի աշխատանք:

Ստալինը մեզ տարավ Զանգվից մինչև Օդես:

Նա մեզ տվեց կոլտղի փառք

Ու հաղթողի պատիվ:

Բեռլին մտանք: Ծվ հս,

Այգեգործի այս դանակովս կեռ,

Սև խաչը քերեցի Ռայխստագի պատից:

Մեր սիրասուն հայրենիքի համար

Մենք չըխնայեցինք ոչ հաց և ոչ արյուն:

Քանի՞ մայրեր լացին,

Քանի՞ մանուկ մնաց անհայր,

Քանի օջախասեր հերոս

Չեկավ այլևս տուն:

Մենք մեր երկիրը քաջ պաշտպանեցինք:
Կանգնած է նա խաղաղության պահակ:
Եկեք հիմա թափենք արդար քրտինք
Մեր այս ազատ պայծառ արևի տակ:
Գործենք այնպես,
Որ հեռավոր օտար այն հողերում
Հանգիստ քնեն մեր ընկերներն ազնիվ,
Որ ձայնը մեր հրգորության թնդա հեռում,
Աշխարհներին, ապագային հասնի:

Թող մեր կալերի մեջ
Հացի դեղերը կուտակվեն
Մեր այս անհաս Մասիսների նման,
Հայոց լեռները հովասուն անտառներով զուգվեն,
Ծանապարհները ծառուղի դառնան:

Թող մեր արոտներում,
Ուր խոտը՝ կաթ, ծաղիկը մեղր է որոճում,
Աճեն ու բազմաճան հոտերը մեր Հայաստանի,
Թող կարմրի պլտոտլն այգում,
Մանուկն՝ օրորոցում,
Թող մեր ամառը բերք լինի,
Զմեռը՝ հարսանիք:

Երբ որ կռիվ էր, մենք հայրենիքի համար
Մրցում էինք՝ տալու մեր կյանքը, մեր հոգին,
Ազատ է նա այսօր,
Ուրեմն՝ ե՛կ մրցենք հերոսաբար
Նրա ծաղկման այս նոր հնգամյակին:

Եկե՛ք, բարեկամնե՛ր, գործենք այնպե՛ս,
Որ բարիքները մեր հոսեն
Առա՛տ, առա՛տ, առա՛տ...

Որ Առաջնորդը մեզ,
Ամեն մեկիս ասի՝ «Ապրե՛ս»
Եվ մեզ դեպի կոմունիզմի կատարն
Առաջնորդե առա՛ջ:

1947, Երևան

ԱՍՔ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ

Դու, լենինյա՛ն իմ ժողովուրդ,
Իմ ա՛զգ ուովետական,
Հաստակներից ելար այն Մեծ Հոկտեմբերին,
Եվ թամբելով փոթորկաբաշ նժույզը պատմության,
Թոթափեցիր քո ուսերից հին աշխարհի շղթան՝
Կարգերն և օրենքները հին:

Ատելություն խոժոռ խավարը ճեղքելով՝
Ահա դու մեծընթաց քայլում ես երեսուն տարի
Դեպի քո երազի կատարը լուսաթով:
Եվ քո ամեն մի քայլը հավասար է մի դարի:

Քո վեհ երազը՝
Կոմունիզմն է այդ երջանկավետ,
Որ գուշակել էին առաջնորդները քո:
Նրանք դժվար ուղին
Անցնում են անդադար քեզ հետ
Իրենց դարաթափանց իմաստությանը
Եվ երկաթյա ձեռքով:

Հին աշխարհի ագռավը քո անկումն էր կոպտում:
Եվ քո ճամփին փորում էին գերեզմաններ:
Բայց դու,
Զորանալով բոլոր փորձանքների բովում,
Քայլում էիր դեպի կատարը երազիդ,
Միշտ վե՛ր:

Դու քաջընթաց քայլում էիր
Եվ ծանր ափսոսում ՝

Այս պատմութիւնը նոր գարնան արեւիդ տակ:
Դյուցազնական քո հետքերի յուրաքանչյուր փոսում
Թաղվում էր հին աշխարհն իբրև դիակ:

Եվ նա կյանքի հեղեղը սանձելու համար,
Ջորացնելու համար գարունը կենսածով,
Հանեց քո դեմ բոլոր հողմերը խելագար,
Իվ քեզ վրա ոստնեց
Հիտլերական մռնչոցով:

Ժողովուրդները քաջ տեսան,
Ինչպես գոտեմարտում այն աշխարհասասան
Դու զգեստնեցիր ահեղ քո ոսոխին
Եվ ծանր ծնկիդ տակ սանձահարել նրան՝
Նորից վարում ես լուսապայտ քո ձին

Դեպի քո երազի կատարը լուսահորդ,
Դեպի աշխարհներթ քո ապագան:
Դու, մարդկության հավատ և առաջնորդ,
Դու, ստալինյան իմ ժողովուրդ,
Իմ ազգ սովետական:

Քո վեհ երազը՝
Կոմունիզմն է այդ անշեջ,
Ու ջերմագին եռում է քո զավակների սրտում,
Ինչպես ավիրն ամեն տերևի մեջ,
Ինչպես մշտանորոգ շնչառութիւն:

Մեզ հետ էր նա, երբ մենք,
Սիրով ու ցասումով լեցուն,
Ռազմի բոլոր դժոխքներով անմահ անցնում էինք:
Այդ նա է լույս տալիս սովետական քաղաքացուն,
Երբ որ ասում է նա
Ստալին կամ Հալբենիթ:

Մեզ հետ է նա այսօր,
Մեր գործերում,
Յուրաքանչյուր տաշված քարի,

Հալվող մետաղի մեջ,
նա է մեր խնդության բոլոր բաժաններում,
նա մեր կովի դռն է փողփողել:

նա ծրագիրն է մեր,
հրազն է, ապագա՛ն,
Ամենավեհն է մեր և ամենաբարի՛ն,
նվ դու, իմ ժողովո՛ւրդ,
Իմ ե՛րգ սովետական,
Կոմունիզմի համար ընդվզեցիր այն վիպական
Այն Մեծ Հոկտեմբերին:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՎՐԱՍՏԱՆԻՆ

Կրկին սիրո քնարն առած, որպես մի նոր Հովնաթան,
Քեզ եմ հրգում, իմ գեղեցիկ արյունակից Վրաստան:

Երգում եմ քո լեռները սեզ — արծիվների օրորոց,
Գետերը քո վազրագալար, ըմբոստ ոգին քո որդոց:

Երգում եմ քո ժողովրդին եղբայրասեր քաջարի
Ու բարձրացնում հզոր գինին իմ Հայաստան աշխարհի:

Ավանդական դարերի մեջ մենք միասին քայլեցինք՝
Իրար ձուլած վահան ու տեգ, խառնած արյուն ու քրտինք:

Նույն կայծակներն էին ծեծում լեռները մեր ձյունաթագ,
Նույն ոսոխներն էին խուժողուժ՝ մեր հողն անում ասպատակ:

Եվ երբ անցնում էր թշնամին, ցրվում օտար ամպի պես,
Մեկ հայրական աչքի նման նույն արևն էր նայում մեզ:

Եվ նույն կապույտ երկնքի տակ ծիածանվում էին վեր
Հայոց, վրաց եղբայրական ոգու ճարտար կոթողներ:

Ես իմ հայոց քնարն առած, որպես մի նոր Թումանյան,
Քեզ եմ հրգում իմ հրջանիկ, արևամայր Վրաստան:

Տեսնում եմ քեզ հայոց աչքով, հիացմունքով դարավոր,
Ինչպես տեսնում է մի եղբայր ծաղկուն հասակն իր եղբոր:

Կանգնած ես դու քո լեռներով, կաղնիներով հաստաբուն,
Ինչպես խիզախ աշխարհաշեն երազների արծվաբուն:

Այստեղ լարեց իր լույս տալիղը քաղցրախոս քո Շոթան
Ու կարկաշեց վեպը սիրո, հոգիների միության:

Այստեղ դու նոր քո երգերով խստաբարո և բարի
Օրորեցիր վեհ մանկությունը մեծագույն հանճարի:

Իբրև մի կայծ նա պլպլաց օջախի մեջ քո արդար,
Հետո հուժկու ճառագայթեց երկրե երկիր, դարեդար:

Քո Ամիրանն աստվածային հուրն աշխարհին ընծայեց,
Դու աշխարհին ընծայեցիր քո Ստալինի սիրտը մեծ:

Եվ աշխարհը վերև բռնած նրան իբրև մի կերոն՝
Տեսնում է իր ճանապարհը հորիզոնից հորիզոն:

Եվ ես կրկին քնար առած, որպես մի նոր երգասան,
Քեզ եմ երգում արևաշող, արև ծնող Վրաստան:

ՈՂՋՈՒՅՆ ՈՒՋԲԵԿԱՍԱՆԻՆ

Ալիշերի երա՛զ երկիր, գեղեցկապաշտ, աստղալից,
Քեզ ողջունում է բանաստեղծն արմինների աշխարհից:

Այն աշխարհից, որ ոսկերառ քո Ալիշերն է երգել՝
Երկրից երկիր ու սրտե-սիրտ սեր կապելով ոսկեթել:

Քո մեծ որդին դարեր առաջ աչքով իր ջերմ ու բարի
Տեսավ պայծառ գեղեցկությունն իմ հեռավոր աշխարհի:

Հերոսուհի ընտրեց իրեն նա մեր հայոց գեղուհուն,
Իր մարդասեր երազներին իբրև աղբյուր, իբրև հուն:

Սուզվեց նա ծովն իմաստության իր հանճարով սիրահար
Ու դուրս հանեց մեր Շիրինին իբրև շքեղ մի գոհար:

Հանեց, պահեց իր երգերի ականակուռ ամրոցում,
Որ իր գանձերը լիովին միայն այսօր է բացում,

Ստալինյան եղբայրության այս միջօրյա լույսի տակ:
Միայն այսօր է երևում նա աշխարհին բովանդակ:

Եվ պարտապան չի մնացել հայոց աշխարհը մեր հին
Իր հեռավոր, երախտավոր սիրահարին ու երգչին:

Իր բարձրածերպ անձավներում, իր բեռներում ծանրակ,
Պահել է նա Ալիշերին մատյաններով ձեռագիր,

Պահել է նա իր կաշեկազմ գրքերի հետ միատեղ
Իբրև մի սուրբ ժառանգություն, իբրև գոհար մի շքեղ:

**Թողել է նա իր տունն ու հացն իբրև ճարակ հրդեհին,
Բայց փախցրել է իր գրքերը, իր հանճարն ու ոգին:**

**Նա իր անգին գրքերի հետ այս ձեռագիրն է բերել,
Ու ստալինյան եղբայրության այս հանդեսին հասցրել:**

**Առե՛ք այս գիրքն իբրև նվեր արմինների աշխարհից,
Իբրև ազնիվ եղբայրության մի հնավանդ մարգարիտ:**

**Որ թաքնըված էր դարերով անհայտության անձավում
Ու ստալինյան արևի տակ հիմա պայծառ է շողում:**

**Առե՛ք այս գիրքն ու իմ ողջույնը, որ հյուսված է սիրով,
Մեր հնամյա արևելյան ալիշերյան բեյթերով:**

1948, Տաշքենդ

ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆ

Դու ժնվեցիր Հայաստանի վերքից:
Հայ կացության գեհենն էր քո ուղին լուսավորում,
Երբ դու քայլում էիր, անխոնջ, անուղեկից,
Հայոց բախտի խավար սառնամանիքներում:

Կանգնած Քանաքեռի դարավանդին՝
Դիտում էիր դու հայրենի հովիտն Այրարատյան,
Որ քո դիմաց բացվում էր տխրագին
Ինչպես տառապանքի մատյան:

Տեսնում էիր, ինչպես
Թշնամիները քո ժողովրդի,
Բռնակայներն օտար և տընաբույս,
Մղձավանջի նրման նստած նրա սրտին,
Փակում էին ամեն մի ելք,
Մարում ամեն մի լույս
Եվ դոնափակ խավարի մեջ խեղդում էին նրան:
Տեսնում էիր դու այդ, և քո հոգին
Հարվում էր մեր հայրենավանդ այն աղեղի նման,
Որից թռավ մեր նետը զայրագին
Եվ մահառիթ հասավ Բելի կրծքին:

Բայց ժամանակը չէր նետի և աղեղի:
Թշնամիներն ուրիշ էին,
Կռվի զենքերը՝ այլ:
Դու քո մենակությունն ըմպում էիր իբրև լեղի,
Որով սնվում էր քո ցասումը բոցափայլ:

Օ, քո ցասումը սրբազան, որով քո Աղասին
Բարձրացրեց իր սուրը վրիժառու

Ի՞նչ պիղծ գրկից ազատելով հայոց կույսին՝
Հեծավ նժույգը հանճարիդ
Ու սըլացավ հեռու:

Քո Հայաստանը խոր քնից ելած
Իրանական լժի կապերը խորտակեց
Ի՞նչ սուրը՝ մեկ ձեռքին,
Մյուսի մեջ՝ աղ ու հաց՝
Առաջացավ դեպի ոռոս ժողովուրդը մեծ,

Մեծ Ռուսիան,
Որ թեպետ և ինքն էր խոր տնքում
Վանտ ինքնակալության խավարակուռ սմբակի տակ,
Բայց իր հողում անծայրածիր
Ինչպես և իր հոգում
Կրում էր գալիքի սերմերը լուսածագ:

Դա մեծագույն բեկումն էր մեր ճանապարհի,
Ամենաերջանիկ պայծառացում,
Թուխք էր մի, որով մեր միտքը խավարից
Դեպի արևն էր թևածում:

Ի՞նչ դու կանգնած այդ մեծ ուղեդարձի դարում,
Զոդման տեղի վրա մեր պատմության,
Քո ցուցամատը հյուսիսին ես կարկառում
Որպես մի ուղեցույց մարգարեի արձան:

Ոչ, չխաբվեց քո լուսարաղծ հոգին,
Որ քո ժողովրդի բընազդն էր անսրխալ:
Ազատարար այն կովի մեջ ընկավ քո Աղասին,
Բայց նրա թուրը իր որդիների ձեռքին
Ռուս թրի հետ շարունակեց շողալ:

Ազատարաղծ քո պայքարի Հրազդանը զայրագին
Ձուվեց Վոլգայի հետ այն մեծահուն:
Քո քաջ թոռները մեր գալիքը զանգեցին
Ռուս ռեզուցիայի դարբններում:

Նրանք պայքարեցին ազնիվ և անձնավեր
Կոմունիզմի պայծառ դրոշի տակ,
Եվ կարկտահար, կծղած այն ժողովուրդը մեր
Կանգնեց՝ ինչպես այրարատյան բարդին՝
Շիտակ:

Կոմունիզմը կյանք տվեց
Քո կիսամեռ ժողովրդին,
Նրան դեպի նոր փառք ու հաղթանակ տարավ:
Քո թողը ստալինյան գնդերի հետ մտավ Բեռլին.
Նա, որ գերի էր դարձրել,
Դարձավ ազատարար:

*
* * *

Այսօր, երբ մեր հպարտ կամարների ներքո
Թնդում են հանդեսները քո հիշատակին,
Մենք հասկանում ենք անպատում
տառապանքները քո,
Քո մեծ և հուսահատ և խանդավառ հոգին:

Դու մենավոր կրակ — մթնում քայլում էիր առաջ,
Քեզ բորբոքում էր հառաչանքը աշգային,
Եվ հայ վշտի հրաշեկ թելերն առած՝
Դու հյուսեցիր քո «Վերք Հայաստանին»:

Դու ծնվեցիր Հայաստանի վերքից:
Սակայն ինչպե՞ս մեռար.
Շիրիմրդ հավիտյան չկա:
Եվ ի՞նչ շիրիմ,
Երբ դու անմահությանն ես ուղեկից,
Երբ դու կյանքում հիշատակվում ես միշտ
Իբրև ներկա:

1948, Երևան

XIV ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

Հայրենիքի սիրո հիշատակներ կան պանծալի,
Սրբագործել են հայրենիքն արյան հեղեղներով:
Բայց երազել իսկ չէր կարող հերոսը անցյալի
Բոլշևիկյան ջերմաստիճանը հայրենյաց սիրո:

Լինինն ասել է մեզ. սիրո՞ւմ ես հայրենիքդ, ապա
Նրա համար նետվիր հրդեհը ռևոլուցիայի:
Ստալինն ասել է. կառուցիր նրան տիտանաբար,
Կրծքովդ պաշտպանիր նրան արհավիրքի սլահլին:

Եվ մենք, բոլշևիկներս հայ քայլել ենք համընթաց
Մայր պարտիայի երթին դեպի կատարը լուսավոր,
Այսօր կրկին մեր ուժերի համագումարն ենք հավաքված
Մեծ կառուցման հնգամյակի ճակատներից բոլոր:

Մենք, մեր երկրի տերերն ու մշակներն ենք խանդավառ՝
Ճարտարապետ, դարբին և հյուան են հավաքվել այստեղ,
Կոլխոզային բերքի բրիգադավար,
Ստալինյան մտքի պրոպագանդիստ ու բանաստեղծ:

Եվ մենք մեր Հայաստանը, մեր երկիրը լեռնախումբ
Սիրում ենք բոլշևիկների աշխարհաշեն սիրով:
Գլուխը Թամանյան պալատներով ենք պսակում,
Ու լանջը զարդարում միջուրինյան այգիներով:

Եվ մենք նրան տալիս ենք նոր ոգի և նոր տենչեր,
Փոխել ենք հայրենյաց սիրո կշեռքը հին.
Նա է հիմա հերոս և իսկական հայրենասեր,
Ով հայրենիքն արագ է հասցընում կոմունիզմին:

ԳԵԼԵԳԱՏ ՊԱՐՏԻԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ

Իմ պա՛րտիա,
Դեկեզատն եմ ես քո համագումարի,
Իս քեզանից եմ այս ամբիոնը առաքված:
Ի՛նչ գերագույն պարծանք՝
Լինել իշուկն քո հանճարի,
Բո հանճարով
Աշխարհը ջերմացնող մի ճառագայթ:

Ինչպես արեն է ինքնիրեն
Իր ընդերքից հորդում՝
Նորոգելով իր լույսն
Ու ջերմությունը կենարար,
Այդպես տալիս է քեզ նոր ուժ
Ի՞մ նոր իմաստություն
Յուրաքանչյուր քո նոր համադումար:

Յուրաքանչյուր քո նոր համագումար
Մի փայլ տիտանյան
Դեպի առաջ՝
Կոմունիզմի կատարը երփնավետ:
Մինչդեռ քո շուրջը
Կույր ուժերն իմպերիալիստական
Բազմաշարժար գնացքը պատմության
Քաշում են ետ:

Իմ պա՛րտիա,
Աննահանջ քո շարքերումն եմ ես:
Ի՛նչ խոսքերով ես հաղորդեմ
Պարծանքըս անպատում:

Հոգուս խորքից ահա
Մովի մեջ լեռնագող ալիքի պես
Վերև է բարձրանում
Մի ջերմ ու վիթխարի զգացում:

Ունխոնջ առաջ քայլել
Քո սրբազան դրոշի տակ,
Լինել ընդմիշտ քեզ անձնվեր
Հավատարիմ որդի,
Բարեկամի և թշնամու
Դեմքին նայել շիտակ
Իմ տալ քեզ կյանքս բովանդակ
Ուռնաց մնացորդի:

Բոլոր իղձերս մարդկային
Կամքի ամեն կորով
Լսորադասել քո մեծ կամքին,
Քո լույս երազներին,
Միշտ նորոգել հոգիս
Ուռնցորդի պայծառ պատվամներով,
Եվ քո սիրույն հաղթահարել
Ուհասն, անմատչելին:

Դո՛ւ ինձ իմ էության խորքից
Հանել ես ասպարեզ՝
Մառայելու համար
Հայրենիքին և աշխարհին:
Սովետական քաղաքացի
Ու կոմունիստ եմ ես:
Մի՞թե սրանից վսեմ ու բարձր
Բախտ կա մարդկային:

Ես երջանիկ եմ, որ ծովիդ
Ուլիքն է իմ հոգին,
Քո փոթորկով հուզված,
Քո հանճարով ձուլված մի զանգ:
Տա՛ր ինձ, պատրաստ եմ ես քո նոր
Վշխարհաշեն կոչին,
Դու, հարազատ իմ պա՛րտիա,
Իմ երկի՛ր, իմ կյա՛նք:

Մ Ո Ս Կ Վ Ա

(ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՆԵՐՔՈՂ)

Շողում են քաղաքները մեծ
Այս հին արևի դեմ՝
Իրենց անվան լաքով
Եվ աշտարակներով տիտան,
Բայց դու Մոսկվա,
Դու բարձրանում ես բոլորից վսեմ,
Քանզի մայրաքաղաքն ես դու
Նոր մարդկության:

Հոնդո՞նր:
Մեծ է, բազմամարդ է, փառահեղ:
Աստղեր են շողացել
Նրա մառախլապատ հոգում:
Բայց խտանում է մառախուղն այսօր այնտեղ,
Չերչիլն աշխարհի դեմ
Իր հին դավերն է որոճում:

Նյու-Յորք: Օ՛...
Ժպտում է դեռ «ազատության» գեղեցկուհին
Եվ աշխարհին նայում
Իր աչքերով էլեկտրական,
Բայց Ռուզվելտի աթոռը նա
Տվել է Տրումենին,
Որի հոգին դուլար է մոլեգնած,
Ուղեղն՝ ատոմային ական:

Մոսկվա, բոլոր մեծերի մեջ
Ամենամեծն ես դու,

Հզորներից հզոր,
Պայծառագույն
Եվ ամենաբարին.
Քանզի քո հողի տակ
Լենինն է լուսերազ ննջում
Եվ քո կրծքից է Ստալինը
Շունչ տալիս մեր այս դարին:

Մոսկվա, քեզ ներբողում է հայ մի բանաստեղծ,
Որի նախնիք ահով են թոթովել
Անունը մեծ մայրաքաղաքների:
Ուր է Տիգրանն,
Ուր մեր հայոց հանճարն էր մորթազերծ,
Հռոմը, որտեղ մենք դեգերում էինք
Որպես գերի:

Մկները Բեռլինի և Փարիզի արխիվներում
Հայոց խնդրագրերի թղթով են գիրացած:
Մեզ ծաղըր նետեցին,
Իրո մենք արդարություն էինք խնդրում,
Մեզ քար տվեց,
Ով մեզանից առել էր հաց:

Մոսկվա,
Իմ այս ոգին ազատ ու բոցաթև,
Որով շնչում եմ ես այսօր
Եվ քեզ ներբող գրում,
Կոփվել է քո գեղածիծաղ կամարների ետև,
Քո հանճարի հզոր հնոցներում:

Դու առաջին մայրաքաղաքն ես
Լկյա արևի տակ,
Որտեղ շրջում է փոքրաթիվ ազգի որդին
Ոչ թե ձեռքին շղթա
Ու հոգու մեջ ապտակ,
Վլյ ինքնարժան, հպարտ
Ու հավասար ամեն քո անցորդին:

Դրանից չէ՞ր, արդյոք
Երբ հիտլերյան խավարակուռ ոգին
Չոքեց քո դռների առաջ նվիրական:
Ժողովուրդները զայրագոչ որոտացին.
— Մոսկվան մեր սիրտն է, մեր ուխտատեղին,
Մենք չենք տա մեր Մոսկվան:

Որդիական մեր օղակում
Քո թշնամին խեղդվեց,
Նորից կանգնած ես դու՝
Կրեմլի աստղերը վառ քո ճակատին:
Եվ վերստին քեզ ներբողում է հայ մի բանաստեղծ,
Քո հարազատ քաղաքացին:

Դու մեր փոթորկահույզ դարի
Փարոսն ես բարձրափայլ,
Բոլոր եզերքներում
Դու երևում ես աշխարհին:
Դու ես հաստել
Սոցիալիզմի օրենքը անայլալ,
Բոլոր օրենքներից ամենակատարյալ
Եվ ամենաբարին:

Բոլոր վսեմ խոհերն
Ու երազները մեծ
Ելնում են քո Կրեմլից մշտապայծառ,
Քեզ են գալիս
Գիտուն, հերոս ու բանաստեղծ՝
Իրենց հանճարը քո բոցով
Մկրտելու համար:

Փառաբանում եմ քեզ, Մոսկվա,
Խնչպես հայրենի տուն,
Խնչպես ծննդավայրս հոգեկան:
Քո մտերիմ փողոցներով քայլում եմ ես խոհուն
Դեպի Սովետների Պալատը, Ապագան...

Մոսկվա,
Քեզ ներբողում է հայ մի բանաստեղծ,
Քո փառքը իմն է և քո տոնն
Իմ տոնն է սրբազան:
Գողում եմ էությանս հյուսիսից մինչև աստղեր,
Հպարտ եմ ես, հզոր եմ ես, որովհետեւ
Մայրաքաղաքն է իմ՝
Մոսկվան:

1948, Երևան

ԲՈՐԵՆԻՆԵՐԻ ՍԻՄՖՈՆԻԱ

«Թյուրքական մեջլիսում խավարամուլ գե-
պուաաա Գուրտուշը փրփուրը բերնին պո-
հանջում էր, որ Թյուրքիայում արգելվեն
«ռուսական կոմունիստներ լերմոնտովի և
Գոգոլի» երկերը» (Թերթերեց)։

Գերազանցում եք դուք Կլեյին տխրահուշակ,
Ու՛ մազ մնաց Մայակովսկու պորտրետը բանտարկեր,
Մեդի՛նան—դատավորը Նյու-Յորքի—ձեր մոնթն է խակ,
Օ՛, ձեզ Հերման Գյորինգն անգամ կնախանձե՛ր։

Դուք, ժառանգներդ Համիդի, Թալաաթի,
Դուք խավարի մռայլ թիկնապահներ,
Դուք ոչ ոքի, հայտնի է, չեք զիջի
Բարբարոսի առաջնությունը ձեր։

~ Ձեր մեջլիսում, ուր արյունոտ կիսալուսնի փոխան
Դուլլարն է ծածանվում խշրտոցով մոլի,—
Դուք պահանջում եք արգելել գրքերը ռուսական
Կոմունիստներ... լերմոնտովի և Գոգոլի։

Ծանոթ է մեզ ձեր կամքը խավարչտին,
Այդ քարանձավային տգիտությունը ձեր,
Լերմոնտովն ու Գոգոլը ձեր խավարամուլ աչքին
Կարող էին թվալ կոմունիստներ։

Ատում եք Ռուսաստանը դուք նրա համար,
Ու՛ նա զսպում է ախորժակը ձեր զազանային,
Ձեր զնդանից ազգեր է նա հանել ազատ աշխարհ՝
Ի՞վ ընծայել նրանց իր սերն ու հովանին։

Լերմոնտովն ու Գոգոլն, Իհարկե, ձեզ համար,
Շատ խիստ են կոմունիստ ու ահապոր:
Նրանք լույսի նետեր են, դուք՝ խավար:
Եվ Լերմոնտովը արգելում եք դուք այսօր:

Երբ որ ստամբուլյան ձեր ֆիլհարմոնիայում
Դիրիժյորում է Քեմփֆը՝ մի գերմանական նացիստ,
Նա, որ «Հարմոնիայի» համար հնչում էր հավաքում
Մորթվող մանկանց մահասարսուռ լացից:

Դա ձեզ, Իհարկե, շատ է սազական:
Վիճելիմ Քեմփֆի համար ձեզ մոտ ունենդիրներ կային:
Իհարկե, պետք է որ կարիք զգան
Բորենիները բորենու սիմֆոնիային:

Լսել դուք չեք կարող միայն ձայները մարդկային,
Եթե մինչև անգամ նրանք հնչում են թյուրքերեն:
Նազիմ Հիքմեթը՝ լուսաբաղձ պոետը Թյուրքիայի,
Սուեթ գերվիշր, որ սիրում էր Թյուրքիան քնքշորեն,—

Թյուրք բանաստեղծն ու վիպասանուհին
Ձեր ժանտ կամքով հյուծվում են զնդանում խավար,
Մինչ զբոսնում են Բոսֆորի կապուտաշող ափին
Ամեն կարգի նացիստ ու մարշալյան գաղութարար:

Այսօր ամերիկյան ատոմագործ քեռին
Նոր սպանդի համար տենչում է հորդաններ զինել:
Կափկափեցնում եք դուք ձեր ժանիքները հին,
Որպես չարավաստակ բորենիներ:

Դուք գոլլարի շփերթ ռազմակառքին լծվել՝
Խաղաղությունն եք հալածում գալարքներով մոլի:
Գալարվեցե՛ք, խաղաղությունը խեղդելու է ձեզ
Հզոր սեղմումներով միլիոնավոր իր մատների:

1949, հուլիս

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԻՆ

Դու կրժքերի պատենեշ մեր անխորտակ,
Որին դիպավ, ջարդվեց մեր թշնամին,
Քո ուժն եմ ես զգում իմ կրժքի տակ
Իմ նոր երգի ու տառերի ժամին:

Քո ուժն է զրնգում իբրև ծնծղա
Մեր կառուցման հզոր համերգներում,
Միջերկրական՝ ամբիոնների վրա
Դու ես մեր բոցեղեն լեզուն սրում:

Քո ուժն է շեկ ծիածանի նման
Սանձում փոթորիկները շարիքի,
Հաստում կամարը մեծ խաղաղության,
Բեղմնավորում սերմերը գալիքի:

Թող կուտակվեն ռումբերն ատոմային,
Դավադործեն թող հրձիգներն անքուն,
Դու կյանքն ես աշխարհի, մահն ես մահի,
Քո մեջ է հաղթանակ և փրկություն:

Եվ հույսը մարդկության չի սասանի,
Երգերը չեն լռի արևի տակ,
Քսենի որ կա բազուկն Ստալինի,
Քանի որ կա Սովետական Բանակ:

ԿՈՄՈՒՆԻՉՄԻ ԲԱՆԱԿ

Լենինն ու Ստալինը քո սուրբ կոփեցին
Մեծ ռեուցիայի դարբնոցներում:
Դու ծնվեցիր այն փոթորկամրուռնչ պահին,
Երբ երկրագունդը նոր կյանքի
Ճավով էր գալարվում:

Հենց նոր քո բոցեղեն օրորոցից ելած՝
Առար զենքերդ փայլարձակ
Ու նետվեցիր մարտի,
Քո դեմ օղակն էր տասնեչորս խաչակրաց,
Ուժեղ էր թշնամին,
Արնածարավ և տմարդի:

Շրջապատել էին քեզ պատերազմ և սուլ,
Կրճրտացնում էին քո դեմ
Ատելության ատամ և արկ:
Եվ դավն էր գալարվում
Հուդայական իր ակնոցով
Քո գարնանային կանաչ ոտքերի տակ:

Բայց հաղթեցիր դու բազմագլուխ
Քո հակառակորդին,
Դու, մեկ բանակ
Նրա բազում բանականների դիմաց,
Որովհետև ժողովրդի ցասման
Կայծակն էր քո ձեռքին,
Լենինն էր քո ոգին
Ու Ստալինի հանճարն էր քեզ
Առաջնորդում ի մարտ:

Ձինված իր հին ատելության
Հրով ու երկաթով

Քո դեմ պարտված քո թշնամին՝
Շարժվեց երկրորդ անգամ,
Երբ որ սնված կոմունիզմի
Տիտանական կաթով՝
Դու չափահաս էիր արդեն և հաղթանդամ:

Եվ քո երկրորդ հարվածը
Առավել էր խորտակիչ:
Եղջյուրաբեկ ընկավ
Դոռոզ այն ցուլը հիտլերյան:
Եվ արյունոտ նրա պճեղներին տակից
Եվրոպայի ժողովուրդներն
Ազատաբաղձ ելան:

Հիմա աշխարհի դեմ
Մի նոր մրրիկ են ամբարում
Ատլանտական հողմերն իրենց
Ծրագներով հտպիտ:
Իսկ դու կանգնած ես
Այս խուժողուժ խորշակների դարում
Ստալինյան դաշտապաշտպան
Անտառների պես խիտ:

Դու հույսն ես աշխարհի,
Ազնիվ պահակն ես մարդկության,
Պատերազմի մոլուցքի դեմ
Պատնեշ ու զսպանակ,
Բոլոր բանականներից հզոր և անսասան
Դու մեր Սովետական Բանակ:

Քո հարվածով պիտի լուծվի
Մեծ վեճը մարդկային,
Կնճիռը դարավոր գոտեմարտի՝
Ով — ում:
Եվ կոմունիզմը կթաղի
Իր թշնամիներին
Խաղաղության, առատության
Անծայրածիր ծովում:

1949, Երևան

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն

Հայրի՛կ,— գրում է ինձ իմ ուսանող որդին,—
Իմ անունից և իմ ընկերների՝ խնդրում եմ քեզ,
Դու նոր մի երգ ձոնիր անմահ առաջնորդին,
Մի երգ, որով մեր խոհերին արձագանքես:

Մի երգ, որ մեր հոգուց բխի, ինչպես ջինջ Հրազդանը
Սևանգեսի խորունկ թունելների միջով,
Իրար կապի Ուրալն ու Քաջարանը
Եվ աղջկա նման ժպտա հոգեթով:

Մի երգ, որ կայծկլտա մեր սրտերում,
Ինչպես մեր թասերում Արտաշատի գինին,
Որ լսելի դառնա մեր այս դժբաղդ դարում
Եվ արժանի՝ մեր հայր Ստալինին:

Ես ի՞նչ պատասխանեմ այս նամակին.
Ինչպե՞ս ես հորինեմ քեզ արժանի մի երգ:
Մեր դարը հանճարեղ մի երգ է քո մասին,
Նրբում է քեզ աշխարհը եզերքից եզերք:

Դու ռահվիրան ես ժողովուրդների,
Բոլոր օվկիանների փարոսն ու լուսատուն,
Դու առաջնորդն ես առաջնորդների.
Քեզ ուսուցիչ են անվանում Թորեզ, Մառ-ցղէ-դուն:

Այս քաջ գիտեն և ներբողում են քեզ
Երկրագնդի բանաստեղծները խանդավառ,
Իսկ ես այսօր կուգենայի սրտիս խորքից երգել,
Թե ինչ ես դու իմ հայ ժողովրդի համար:

Քո մեծ կոչով խորխորատից մահվան
Նույս-կյանք ելավ իմ Հայաստանը բյուրախոց,
Դարձավ կոմունիզմի մի անառիկ օրրան
Եվ տուն կանչեց իր տարագիր որդոց:

Արարատյան կանաչահորդ կոլխոզների համար,
Ճամփաների համար մեր շեն ու լավատես,
Մեր վարդազույն գեղաքանդակ Երևանի համար
Երախտագետ իմ ժողովուրդը պարտական է քեզ:

Այդ քաջ գիտեն և ներբողում են հոգեզմայլ
Հայաստանի բանաստեղծները ցնծագին:
Իսկ ես այսօր ուզում եմ շնջալ,
Թե ինչ ես պարգևել դու ինձ և իմ երպին:

Կարող էր պատահել,— կպատահեր անշուշտ,
Եթե լենինն ու դու չլիներիր,—
Որ ես հիմա լծած նախնադարյան մի շուրթ,
Ճակատիս վրա տաժանակիր բախտի կնիք,

Վար կաննի թախծոտ հորովելով,
Կանցներ արտիս մոտով մի համիդյան տաճիկ,
Եվ հայությունը իմ հայհույելով
Կհափշտակեր իմ սերմացուն մինչև վերջին հատիկ:

Ես կպաշտպանեի իմ իրավունքը մարդկային
Բոունցքներով իմ ծանր գեղջկական,
Նա ինձ ապա կմատներ իրենց դատարանին,
Ուր դատավորն ատելությունն էր հին
Եվ սզգային խտրանքը՝ միանձյա վկան:

Դու փոխեցիր ճակատագիրն իմ անիծված,
Ինձ բարձրացրիր՝ բռնած իմ որոնող ձեռքից,
Ես հողազուրկ շղթայակապ գեղջուկ էի ծնված,
Դու ինձ դարձրիր կոմունիզմի ազատաշունչ երգիչ:

Շնորհակալ եմ քեզանից այս վեհ բախտի համար,
Որ դու բերիր և ինձ և իմ ժողովրդին:
Ահա թե ինչ կուզենայի, որ ողջ աշխարհը իմանար,
Եվ հավիտյան հիշեր իմ ուսանող որդին:

ՆԱՄԱԿ ԸՆԿԵՐ ՓԱՆԻՍ ԶՈՒՑՄԱԶԻՆ

«Իմ հայրենիքի վրայով թռել է ամերիկյան ուղղակի ինքնաթիռ... Ի՞նչպես եք հանդիմանում, պարոնայք ամերիկյան իմպերիալիստներ, խախտել մեր երկրի սահմանները» (Լատվիական ապակուրծ բանվոր ընկեր Փանիս Զույմաչի նամակից: «Լիտերատուրնայա զագետա»):

Ընկեր Փանիս Զույմաչ, ես «Լիտգազետայում»
Հենց նոր ձեր բաց նամակը կարդացի:
Ես հասկանում եմ ձեզ, և իմ երակներում
Ճուտ է ձեր ցասումն արդարացի:

Պատերազմի հրձիգներին այդ լավ եք բռնեցրել.
— Դուք, պարոնայք, ինչպե՞ս եք հանդիմանում
Մեր սրբազան հայրենիքի սահմանն անցնել
Եվ սանձարձակ ճախրել մեր երկնքում:

Ձեր խոսքն, ընկեր Փանիս, դիպուկ էր ոչ պակաս,
Քան օդային այն կրակոցը կորովի,
Որից լրտես ուրուրն ահաբեկված՝
Անհետացավ հեռուններում Բալթիկ ծովի:

Լատվիան ծաղկում է մայր հյուսիս-արևմուտքում,
Իսկ իմ ռեսպուբլիկան հարավն է մեր:
Նրանք այստեղ էլ են մեզ լրտեսում՝
Սողոսկելով Արարատի կատարն՝ իբրև գողեր:

Նրանք մեզ լրտեսում են հարավից և հյուսիսից,
Արևելքից, արևմտքից-անկյուններից բոլոր,
Դեսպանական շենքի լուսամուտից,
Տուրիստական դիտակներից հարյուրավոր:

Նրանք նայում են մեզ գողի աչքով շլած:
Տեսնում են մեր ծաղկումը լիաթոք,
Տեսնում են լեռներով երկաթ և գիրք և հաց
Բուդապեշտից մինչև Վլադիվոստոկ:

Նրանք տեսնում են ամենուր,
Բայց չեն ուզում խոստովանել
Խաղաղության մեր կամքը, մեր հոգին բարի,
Որ պարզ է ցերեկվա լույսից էլ առավել,
Մեր ձեռքը կարկառած, որ հույսն է աշխարհի:

Դուք մեր սովետական պայծառ հոգին
Ամուր եք վկայել, ընկեր ժանիս:
Սրտով ես միացա ձեր նամակին
Իմ սահմանագլխային Հայաստանից:

Թեպետև անծանոթ բարեկամներ ենք մենք:
Դուք Ռիգայից եք ձեռքը ձեր մեկնում,
Իսկ ես՝ Երևանից: Բարև ձեզ: Հանդիպենք
Մեր հարազատ թերթի սյունակներում:

Դուք ապակու գործարանի բանվոր եք նորարար,
Իսկ ինքս, թույլ տվեք ներկայանալ — պոետ:
Պաշտոններով էլ հարազատ ենք մենք իրար.
Այսինքն՝ գործ ունենք երկուսս էլ լույսի հետ:

Ծա ձեզ տեսնում եմ պարզ ձեր նամակից,
Ծվ ձեր մանուկ որդիներին՝ խաղաղ ննջած:
Ձեր հոգսը հայրական իմ սիրտն էլ համակեց...
— Գրիր նրան, — կարծես թե մեկը շշնջաց:

Երևանում հիմա արև է և գարուն
Տեսնում եմ ես լուսամուտից լայն
Նորակառույցների աշտարակները կարկառուն
Ծվ նորատունկ անտառը դիմացի բլրան:

Դուրսը, ասֆալտապատ պողոտայի վրա,
Մանուկների ծիծաղն է կարկաշում:
Պատշգամբիս դիմաց վարպետ Վարդանն ահա
Այս նոր շենքի համար քար է տաշում:

Պատերազմում կորցրել է նա երկու կտրիճ տղա:
Բայց նա նոր տուն է կառուցում կրկին,
Որի լասամուտում պուցե կշողշողա
Լսավիական պայծառ ձեր ապակին:

Մըտքով թռչում եմ այլ թաղեր և քաղաքներ,
Որ բարձրանում են հարկ առ հարկ,
Բացվում փողոց-փողոց:
Ինչքան շքեղ շենքեր դեռ պետք է ավարտվեն,
Պիտի ծաղկեն ինչքան կոկոն և օրորոց...

Մենք նոր աշխարհ ենք բարձրացնում արևի տակ,
Կերտում ենք նոր հոգի, նոր սեր, նոր տուն,
Դրա համար մեզ պետք ժամանակ,
Օղից էլ, արևից էլ առավել՝
Խաղաղություն:

Խաղաղություն ենք ցանկանում,
Բայց ոչ վախից: Երբեք:
Չենք մոռացել մարտերը Մոսկվայից Բեռլին:
Խաղաղություն ենք ցանկանում — ամենուրեք,
Որովհետև սիրում և ափսոսում ենք մենք
Եվ Ռիգայում, և Նյու-Յորքում ննջող մանուկներին:

Եվ մենք պատերազմի հրձիգներին կասենք.
«Թուղ բերդով» փորձել դուք ցանկացաք,
Թե մենք ինչ ուժ և ինչ ներվեր ունենք,
Թե մենք ինչքան ենք զուսպ ու հանդուրժող: Տեսա՞ք:

Ամերիկյան «թուղ բերդի» վիճակը թող հիշե
Ռազմածարավ ամեն մի տերություն,
Ով ախորժակ ունի այսօր, էգուց, երբևիցե,
Իր քիթն ատոմային՝ խցկել ուրիշի տուն:

Խաղաղությունը պետք է մեզ, բայց չենք խնդրի:
Կնվաճենք միլիարդ մարդու կամքով անվախ:
Մեզ հետ է ուժը ֆրանսական հերոս դոկերների,
Խաղաղությունը կազմակուռ բանակ ունի
Լիվորնոյից, Անավերպենից մինչև Շանհայ:

Տ Ո Ն Օ Ր Յ Ա Խ Ո Հ Ե Ր

Նվիրում եմ մեր հարստագետներին

Գարուն է: Առավոտ է: Հարազատ քաղաք:
Անցնում եմ փողոցով, խաղա՛ղ, ինչպես զեփյուռ:
Հորդ անձրևով կարծես թե լրվացված երկնքի տակ
հայտում է Երևանը ծաղկաբույր:
Նորակառույց շքեղ շենքերի մեջ
Իշխում է Տունը Կառավարական:
Բարձրից շողում է սյունաշարը պերճ
Քարով մարմնավորված մի երազի նման:
Հրապարակի վրա ահա կանգնեց նոր տուն.
Սա կառուցված է իմ նախագծով:
Քաղցր է խորհել, որ իմ երկրի սրտում
Ես կամ այսքան տեսանելի գործով:
Մայիսի ինն է, օրը մեծ Հաղթանակի:
Քաղաքը լիքն է ժըպիտով, ծաղիկներով:
Այգում գգվում է իր մանկանը մանկամարդ մի կին՝
Աչքում ծնողական մի անհագուրդ գորով:
Այստեղ քաղաք է բարձրանում, ծաղկում է կյանք:
Այնինչ, օվկիանոսից այն կողմ, հեռվում,
Ատերթթյան շվալտ սուլոցի տակ
Փնտրում են նոր շրջանային գերուումբ...
Ցասումը շիկացնում է ինձ: Ինչպե՞ս...
Մէնք մի՞թե չպետք է կասեցնենք ոճիրը հեսանվող:
Եվ ես իմ խոսքը բոցավառ՝ ուղղում եմ ձեզ,
Ձեզ, Միացյալ Նահանգների ճարտարապետ, բանվոր:
Դուք բարձրացրել եք Բրուկլինյան կամուրջը,
Կերտել եք դուք Բրոդվեյը լուսածեփ:
Դուք պետք է հասկանաք շինարարի զայրույթս,
խաղաղության մեր կոչը պետք է դուք լսե՛ք:

Ափսոսացե՛ք դուք մեր և ձեր քաղաքներին.
Ոլորեցե՛ք դուք ոռամբ ձուլողների ձեռքերը.
Մենք առաջինը չենք նետի ոռամբերն ատումային,
Բայց զարկը վերջնական, հավատացեք, կըլինի մերը...
Սանձահարե՛ք դուք ձեր ատոմախեններին:
Եվ իմ պատշգամբից մինչև կամուրջը Բրուկլինյան
Թո՛ղ տարածվի խաղաղությունը մարդկային՝
Կապո՛ւյտ, կապո՛ւտ այս երկնքի նման:

Ն Ա Ջ Ի Մ Հ Ի Ք Մ Ե Թ

Աչքիս առաջ ես դու անվերջ: Ես անդադար
Կրկնում եմ իմ մտքում «Նազիմ Հիքմեթ»...
Իմ բարեկամ, ես լավ գիտեմ, թե ինչ է դա՝
Օսմանական բանտում նստած պոետ:
Ես լավ գիտեմ քո թշնամիներին:
Մենք ծանոթներ ենք վերցհարյուր տարվա:
Նրանք իրենց վարպետությունը դահճային
Վարժել են իմ ժողովրդի վրա:
Օ՛, այդ նրանք են քեզ նետել զնդանը,
Որոնց յաթաղանից արյունախում
Ընկան լուսարադձիկ Զոհրապը, Վարուժանը,
Հայ բանաստեղծների ամբողջ մի աստղախումբ:
Իսկ դու, իմ բարեկամ, այդ զնդանները
Անվերադարձ ուզում ես խորտակել.
Բանալ քո Թուրքիայի առաջ լույսի դռները,
Բոսֆորը ոճրաբեռ նավերի դեմ փակել:
Իսկ դու, եղբայր իմ, քո խիզախ երգով
Դու բորբոքել ես գազանի հին վերքը:
Նա քեզ բռնել է իր ոսկրոտ ձեռքով՝
Եվ նա պատրաստ է հռչակել, փշրել քեզ:
Բայց կարծր են ոսկորները քո, Հիքմեթ,
Եվ ժանիքները քո ոսոխների՝ փրտած:
Դու թիկունքիդ բարեկամներ ունես թիկնեղ,
Այդ մարդկությունն է ողջ առաջընթաց:
Քեզ հետ ենք Մոսկվայում, Հոմմում և Փարիզում,
Քո մոր վշտով աչքերը աշխարհի լցվել են:
Քո դահճի դեմ ցասկոտ երգեր են որոտում
Սովետական Հայաստանի բանաստեղծները:
Դու Թուրքիայի կենդանությունն են,

Դրա համար են քեզ զնդան նետել.
Դու քո ժողովրդի ազնիվ վկայականն ես,
Նրանք ուզում են քեզ պատառոտել:
Բայց մեր աչքերն անթարթ նայում են քո բանտին,
Հնչում են տագնապով միլիոնավոր ձայներ.
— Այդ ո՞ւմ վրա եք բարձրացրել ձեր գերանդին,
Դուք, եղենի պագշոտ պաշտոնյաներ:
Նոր Թուրքիայի արևածա՛ղն ես դու, Նազիմ,
Եվ չի կարող տեղավորել քեզ բանտը:
Եվ քո դահիճն իզուր թող չերազի,
Թե դու միայն հացադուլից հյուծվող հիվանդ ես,
Որի վախճանը բարբաջում են բժիշկները
Եվ գորշ հիվանդանոց «Ջերար փաշան»:
Քեզ մահացնե՞լ. նրանց ուժից այդ վեր է,
Թող դահիճներն իզուր շուրախանան:
Ո՛չ, դու ազատ ես, քաջառողջ ես և ջահել,
Նրանց արնաթաթավ յաթաղանից հեռու,
Քեմալական զնդանը դու վաղուց ես խորտակել,
Եվ երգելով քայլում ես քո քսաներորդ դարում:
Դու Մոսկվայում կանգնում ես տրիբունի վրա,
Խիզախ ինչպես մեծ ուսուցիչդ՝ Մայակովսկի՛ն.
Քո տողերում հուրհրատում է մեզ ծանոթ կրակ
Եվ մենք լսում ենք հարազատ քո խոսքը:
Քայլում ես դու խաղաղության խիզախ բանակի հետ,
Կանգնած ես դու Ռոտտերդամյան դոկերների շարքում,
Ոյ Նյու-Յորքից եկած նավին նայում են ակընդետ,
Նայում են խեթ և շեն բեռնաթափում:
Դու պղտորված քո Բոսֆորից անցնում ես Անկարա,
Քայլում ես փողոցում խոժոռ ու մրահոն,
Կտրում ես մարշալլյան միսիոների առաջ,
— Ի՞նչ եք փնտրում դուք իմ հայրենիքում, պարո՞ն:
Դու ժպտադեմ մտնում ես՝ հյուղը ձկնորսի,
Հիվանդ մանկան գլուխը փայփայում,
Եվ մորը հուսադրում ես՝ սպասի՛ր,
Շուտո՞ւ վ կճառագի արևը Թուրքիայում:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՂԱՎՆԻՆ

Նվերում եմ իմ Անահիտին

Խաղաղության կոնգրեսն էր մեծ

Պրագայում գեղեցիկ:

Եվ բեմ ելավ, մեզ ողջունեց

Վեց տարեկան մի աղջիկ:

Ճերմակ տիկնիկ ուներ գրկին,

Երկշոտ ժպիտն աչքերում:

Խոսեց ու մեզ նայեց կրկին.

Ումն էր արդյոք որոնում:

Ճերմակ, ճերմակ ու ոսկեթել

Մի ժապավեն կար մազին:

Կարծես թե բեմ էր բարձրացել

Խաղաղության աղավնին:

Ծափահարում էր անկյունից

Ֆեոդորովն անընդհատ—

Սովետական Միությանից

Կոնգրես եկած դելեգատ:

Հայնաթիկունք հսկա էր նա,

Բեխերը թավ, աչքը՝ սև:

Շողում էր լայն կրծքի վրա

Երկու աստղիկ ոսկեթել:

Նայեց աղջիկը հերոսին,

Ոսկե աստղերը տեսավ,

Տիկնիկն ամուր սեղմեց կրծքին

Ու մանրաքայլ մոտեցավ:

Ասաց. — Քեռի, շունեմ ես հայր...
Սպանված է նա Աթենքում...
Ես տիկնիկիս և ինձ համար
Խաղաղություն եմ ուզում:

Ֆեոդորովը գրկեց նրան,
Սեղմեց կրծքին փառավոր:
Ալեկոծված ոտքի ելան
Դեկեզատները բոլոր:

Դեկեզատներ կային այնտեղ՝
Մորթերը սև ու սպիտակ
Մազերը կոշտ, աչքերը շեղ,
Բայց հոգիները՝ շիտակ:

Բոլորն ուրախ ժպտում էին,
Ծափահարում և գոռում.
— Խաղաղություն մանուկներին
Երկրի բոլոր կողմերում:

Իսկ մեր հերոսն օամուր ձեռքով
Գրկել էր այն փոքրիկին:
Նրա գրկում ժպտում էր գոհ
Խաղաղության աղավնին:

Ե Ր Ե Վ Ա Ն

Ամառ է:

Կառուցվում ես դու, իմ Երևան:

Դու բարձրանում ես հարկ առ հարկ

Ու թաղ առ թաղ բացվում:

Ամեն օր նոր ես,

Ոչ հերվանն ես դու, ոչ երեկվան:

Ինչպես հեքիաթական մանուկն օրորոցում

Դու մեծանում ես ժամերով:

Քանդվում է ամեն օր

Հնադարյան խարխուլ մի տուն,

Եվ կառուցման փողին

Արևի տակ ծածանելով՝

Ելնում է նորը

Հոյակապ ու վարդազուն:

Ասֆալտը քեզ ծածկում է փողոցից փողոց,

Ժպտում են քո հրապարակները սափրված:

Քո պարտեզները

Թովչական տերևների դողով

Քո պատանիներին կանչում են գրկաբաց:

Ահա Ղուկասյանի այգին:

Զուգված է նա գաւնգուր շինարներով:

Այստեղ ամեն սաղարթ

Մի տաղավար է գիտության:

Այստեղ երկսեռ ուսանողները ժամերով

Սերտում ու երազում են ապագան:

Ահա Օպերայի և Բալետի Թատրոնն այնտեղ:

Նա բարձր է, վիթխարի,

Խնչպես մի ձեռագործ Մասիս:
Տես, Կառավարական Պալատը սյունագեղ-
Կարծես կերտված է ոչ թե քարերով,
Այլ՝ երազից:

Կարո՞ղ եմ անտարբեր անցնել նրա կողքով:
Ոչ, ես կանգնում եմ ակամա,
Նայում կամարներին:
Ամեն անգամ նա ինձ կիզում է նոր մի հմայքով,
Խնչպես հենց նոր եկած գեղեցկուհին:

Նրա կամարների և սյուների միջից
Կապույտ ու ջինջ երկինքն է երևում,
Որի ֆոնին գործարաններդ մրցակից
Շնչում են անդադար քո արվարձաններում:

Կամուրջը Հրազդանի կամարներով իր հայկական,
Ցայտաղբյուրները զով,
Մեքենաներ բազմաքանակ,
Կոլխոզային ասֆալտապատ շուկան,
Որով այնքան ուրախ են հատկապես կանայք:

Եվ լենինի արձանը քո սրտում խրախտակեղ,
Ու մոռումենտը Ստալինի այն բարձունքին:
Նրանք մի օր կործանումից փրկել են քեզ,
Այժմ նայում են կառուցմանը քո,
Քո նոր կյանքին:

Բարեշինվում ես դու, իմ Երևան:
Դու բարձրանում ես ժամ առ ժամ
Եվ քայլ առ քայլ բացվում:
Ամեն ժամ նոր ես.
Ոչ հերվանն ես դու, ոչ երեկվան:
Խնչպես հենց նոր զարթնած մանուկն օրորոցում՝
Դու գեղեցիկ ես: Շենքերիդ նըման
Քո ժողովուրդն էլ է աճում և մեծանում:
Մի տասնամյակ առաջ,

Ամեն անցորդ ու դռնապան,
Ամեն մի զուլֆ,
Որ զբոսնում էր քո Աբովյանում,
Ծանոթ էր ինձ դեմքով և անունով:
Այսօր անցնում են բյուր նորեր,
Անխոնջ ու խայտալից,
Անցնում են նոր պատանությամբ գինով:
Նրանք խմում են կյանքը
Քո բոլոր ցայտակներից:

Եվ անծանոթ ու հարազատ
Այս բազմության միջով
Անցնում եմ ես հուզված ու երջանիկ:
Ծփում է իմ հոգում
Երգի ծիրանավառ մի ծով,
Տանում է ինձ մի լեռնացած ալիք:
Այս դու ես, դու ես, դու, իմ Երևան
Եվ ես, քո բանաստեղծը նոր
Եվ քո քաղաքացին
Իմ անունից
Եվ ապագա սերունդների անվամբ
Գողում եմ.

Փա՛ռք

Քո շինարարներին:

ԽՈՍՔ ԵՂԲԱՅՐՈՒԹՅԱՆ

Արաքսն ու Քուռը քույրերի նման
Իրար փաթաթված դառնում են մի գետ,
Մեկտեղ են մտնում ծովը Կասպիական
Եվ այնտեղ ձուլվում մեծ Վոլգայի հետ:

Մենք նույն բընության ծոցումն ենք ծնվել—
Անդրկովկասի երեք ժողովուրդ,
Նույն երկինքն է մեր գլխին բարձրացել,
Մեկտեղ ենք մաշել մշուշները ցուրտ:

Եվ նույնն է եղել ոսոխը մեր հին
Իր բնազդներով բիրտ, կործանարար,
Դավիթն, Ամիրան ու քաջ Քյոռ-օղլին
Հաճախ են ձուլել վահաններն իրար:

Եվ ոսոխները ներքին և օտար
Պղտորել են մեր սերը հինավուրց,
Մենք մթնում հաճախ կորցրել ենք իրար —
Երեք ուղեկից եղբայր ժողովուրդ:

Եվ նա էր միայն — ժողովուրդների,
Ժամանակների պայծառ լուսատուն,—
Ցրեց գժտության մշուշն ահալի՝
Տալով մեզ նոր սեր ու եղբայրություն:

Նա մեզ արթնացրեց և կոփեց իրար
Անշեղ կրակով իր լույս հանճարի,
Եվ մենք ուս-ուսի ընկած ճանապարհ,
Քայլում ենք ահա երեսուն տարի:

Միշտ նույնն է եղել մեր շար թշնամին
- Եվ նույնն է այսօր բարեկամն անխափ,
Մեծ եղբայրության վիթխարի ոգին —
Ռուս ժողովուրդը, որի զորությանմբ,

Մենք հզորացանք, դարձանք իմաստուն,
Մենք ոտքը մթնից լույս ճամփան դրինք
Եվ բարձրացրինք նոր աշխարհ, նոր տուն,
Որ չի սասանի ոչ մի փոթորիկ:

Եվ երբ որ նորից եկավ թշնամին
Բռնազդով իր բիրտ ու կործանարար,
Մենք, հավատարիմ մեր նոր երդումին,
Կրկին ձուլեցինք մեր կրծքերն իրար:

Եվ մեր արյունը հայրենաթաթավ
Ինչպես Արաքսը, Քուռը կամ Ազրին,
Մարտի դաշտերում թափվեց, միացավ
Ռուս ժողովրդի արյան գետերին:

Մենք տուն ենք շինել սիրով միասին,
Եվ միասին ենք պաշտպանել նրան,
Եվ լույս է տալիս այսօր աշխարհին
Եղբայրությունը մեր ստալինյան:

Այդ եղբայրության բորբ արևի տակ
Ծաղկեց, զորացավ Հայաստանը մեր,
Որք էինք, անտուն, մենք հայրեր դարձանք,
Անպաշտպան էինք, դարձանք պաշտպաններ:

Եվ կոմունիզմի տունն ենք կառուցում,
Մի նոր, վարդագույն, շքեղ Հայաստան,
Մեր եղբայրության անառ ամրոցում
Դրոշը բռնած մեծ խաղաղության:

Եվ տարեդարձի այս վեհ բարձունքին
Այս համազգային հպարտ հանդեսում
Հայ ժողովուրդը հոգով հրճվագին
Սուրբ եղբայրության իր խոսքն է ասում:

*Ձեզ, հավերժական մեր հարևաններ,
նոր Ադրբեջան, պայծա՛ռ Վրաստան,
Եվ ձեզ, մեծատուն ռեսպուբլիկաներ
Մեր Սովետական հզոր Միության:*

*Առանց հենվելու ձեր կուռ ուսերին
Մենք չէինք շտկի մեր մեջքը ծոված,
Մենք չէինք հասնի պայծառ օրերին
Այսքան կենդանի ու վերածնված:*

*Ուտի ձեր կենաց թող շողա այսօր
Մեր Ոսկեվազի բոցակեզ գինին,
Փա՛ռք ձեզ, եղբայրներ, մոտիկ, հեռավոր,
Փա՛ռք մեր արևին, մեր Ստա՛լինին:*

ԳԱԶԵԼ ԿԱՌՈՒՑՄԱՆ

*Ոսկեբազուկ իմ Հայաստա՛ն, դու կառուցում ես նորից,
Քո նոր ոճով վերածնության դու կառուցում ես նորից:*

*Քեզ կործանում էին անվերջ հազարամյա քո ճամփին,
Կործանողները մահացան, դու կառուցում ես նորից:*

*Ձեռնաց էիր նետում Հոռմին, Բյուզանդիոնին պերճաշուք,
Քո մրցորդներն անզորացան, դու կառուցում ես նորից:*

*Սովետական արևի տակ ծաղկեց կերտող քո ոգին,
Եվ կամարները նոր քո տան դու կառուցում ես նորից:*

*Կանգնած են լույս երկնքի մեջ սյունաշարերդ շքեղ,
Աշտարակներդ կառուցման, դու կառուցում ես նորից:*


*Նոր վանդալները կործանման անարգ զենքեր են նյութում,
Բայց դու՝ խաղաղ և անսասան, դու կառուցում ես նորից:*

1950, Երևան

ՊԵՄՆԵՐ



... Մի ծրարն ապույն աչնան երեկո
Փռվել էր դեմի լեռների վրա ...



ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ԱԼԵՔՍԱՆԸ ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ Է
ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՑ

Նա տուն էր գալիս Կարմիր Բանակից:
Թեթև էր, ինչպես լեռների պախրան,
Գրքերով լեցուն մի պարկ շալակին,
Կրծքին՝ մի կարմիր աստղաձև նշան:
Մի ծիրանագույն աշնան երեկո
Փռվել էր դեմի լեռների վրա:
Իվ Ալեքսանի սիրտը թև առած՝
Ուզում էր թռչել գնդակի հեքով
Ու տուն սըլանալ իրենից առաջ:
Նա քանի քայլում, մոտենում էր տանն
Ու անցնում ծանոթ արտերի մոտով,
Լցվում էր այնքան կիզող կարոտով
Ու սիրտն անհամբեր զարկում էր այնքան:
Կարմիր Բանակից նա գալիս էր տուն,
Հուզված, փոթորկված իր նոր մտքերով,
Սրտում երկու բոց, երկու սուրբ երդում,
Շուրջը՝ երեկո, լեռնապար և հով...
Երդումն առաջին նա անցյալ տարի
Տվեց Լաչինի սիրուն աղջկան
Ռուշանի կապույտ Քարափի քարին,
Երբ հանդում հովիվ ու շթվոր չկար:
— Արուս, — թոթովեց, — չգնաս մարդու,
Իսկա՞մ, հենց որ տարին լրանա... —
Ու ջերմ խոստումի կրակը սրտում՝
Սիրահար տղին վերցրին բանակ:
Նա երկրորդ անգամ երդվել է երեկ:

մ'անակում հանդես ու միտինգ արին.
 — Իս խոսք եմ տալիս կյանքս նվիրել
 Լ'նկեր Լենինի մեծ ճանապարհին:—
 Իմ նրա քարե արձանի առաջ,
 Լենինյան կարմիր դրոշներն առած,
 Նրանք երգվեցին պայքարել համառ՝
 Սոցիալիստական նոր գյուղի համար:
 Ու ողջուն տալով ընկեր-ծանոթի՝
 Հին ճանապարհով իջնում էր նա ձոր,
 Ուր գյուղը փոված դետափին մոտիկ,
 Իմ նույնն էր թվում, և թվում էր նոր:
 Նույնն է ժամի մոտ, ընկուզենու տակ,
 Դերդի դարավոր պարիսպի սովերում,
 Չաթնանց Սանթրոսի տունը լայնաբակ
 Բերդի պես քարե թանձր պատերով:
 ✓ Նույնն է Լաչինի խարխուլ արարան,
 Աթարի ամրոցն ու մարագը հին,
 Բրդե քրքրված փափախի նման
 Խոտի դեզն է նույն կտուրի գլխին:
 Իմ գյուղի ծայրին ցածրիկ ու բարակ
 Դրենց հողաշեն հյուղն է երևում,
 Որ ոչ բակ ունի, ոչ լիքը մարագ,
 Ոչ էլ խոտի դեզ կտրան վերևում...
 Նույնն է. բայց կարծես նա նոր է տեսնում
 Այդ խառնափնթոր խրճիթների մեջ
 Դասակարգային մի սուր բաժանում,
 Անանցանելի խորխորատ մի մեծ:
 «Այս հին, ծուռ ու մուռ գյուղը դեն նետել
 Ու նոր լուսավոր մի շեն կառուցել
 Քաղաքի նման լայն փողոցներով,
 Ու լինել այդ մեծ պայքարում հերոս,—
 Ահա թե երեկ ինչ երգվեցիր դու,
 Առաջդ դիր ինչ մեծ նպատակ...»
 Այս մեծ մտքերի կրակը սրտում՝
 Լ'նկեր Ալեքսանն իրենց գյուղ մտավ:

— Բարև, այա, բարև, ա՛ հեր,
 Վերջացրի, եկա տուն:

Ո՞նց եք իրար շահել, պահել,
 Ո՞նց եք ապրում, աշխատում:
 — Վա՛յ,— վեր թռան հեր ու նանի,
 Մեկ-մեկի փեշ ձիգ տալով,
 Մեջտեղ առան Այեքսանին
 Համբուրելով ու լալով:
 Մայրը հետո թաղիք փռեց
 Հողե խոնավ թոնրատանն
 Ու կեղտակուր բարձր դրեց
 Ազիզ հյուրի մեջքի տակ:
 — Ա՛յ մարդ, ձեն տուր, գա խնամին.
 Էս ձվածեղ, շայ շինեմ:—
 Կտուր ելավ Հովաս ամին.
 — Դուրս եկ, կա՛շին, կա՛շին, է՛յ...—
 Ազգ, հարևան, ընկեր, ծանոթ
 Իրար աշխույժ ձեն տվին:
 Հավաքվեցին,— բարի գալուստ
 Զորացրված մեր տղին:
 Հավաքվեցին հետզհետե.
 Ով կար մոտիկ, սիրելի.
 Բայց եկվորի աչքերը թեժ
 Դուռն մեխված են էլի:
 Ա՛խ, մեկը կա, նա չի գալիս.
 Ա՛խ, հին ադաթ դու հիմար.
 Նա էլ գուցե կարոտալից
 Լալիս է տանը հիմա:
 — Բախտդ բերեց, Հովա՛ս քեռի..
 — Թելո՛ւմ քիքիր, աչքդ լիս,
 Տղեդ եկավ գիրը ձեռին
 Արտդ գրչով կցելի:
 — Էսպես խոսել, բա՛ն հասկանալ,
 Էսքան կարդալ, սովորե՛լ...
 Զուր չեն ասել Կարմիր Բանակ,
 Սովետական նոր օրենք:—
 Հարցեր տվին հեռվից հեռու.
 Պատասխանեց նա ձեռաց.
 — Ի՞նչ կա արդյոք քաղաքներում,
 Խաղաղությո՛ւն, պատերա՞զմ...

— Վախենում են մեր բանակից,
 Չեն կարա գալ մեզ վրա.—
 Շողաց աչքում հաղթանակի
 Հերոսական մի կրակ.—
 Իսկ դու, հայրի՛կ, մինչև հիմա
 Չես է՛լ մտել կոլեկտիվ:
 Իս գրել եմ քսան նամակ,
 Իս գրել եմ, թե մտիր:
 Էսպես է ճարն, էս է ճամփան
 Դուրս գալու նեղ վիճակից:
 Էսպես է մեր իշխանություն՝
 Դիժն ու կամքը գիտակից:
 Ի՞նչ ես ասում, լաշին ամի,
 Ի՞նչ եք ասում, հեր ու մեր:
 Կոլեկտիվ է խալխը հիմի,
 Վախտը մերն է, հերթը մեր:—
 Չեոքը տարան ծոծրակներին,
 Տիրեց խորին լռություն:
 Մեջքը քորեց Հովաս քեռին
 Ու ետ դառավ իր որդուն:
 — Հաստատ կենա իշխանությունն,
 Լավ ես ասում, բալա ջան,
 Մեզ համար է նա աշխատում,
 Հո չե՞նք լինի դավաճան:
 Վարկ էլ տվավ անցյալ տարի,
 Ես էլ առա մի արջառ,
 Դու էլ եկար՝ գալդ բարի,
 Դու էլ, կարաս, մի հատ առ...
 Էգուց, էլօր գարնան վարին
 Չու՞թ կլծեմ սեփական:
 Դու ուրիշ մարդ, կարաս, ճարի,
 Ես չքավոր, ես հա կամ:
 Մանկությունից հոտաղ, մշակ,
 Տկլոր, անտուն ու անտեր.
 Իշխանության արևը շատ,
 Ինձ դարձրեց եզան տեր:
 Ո՞նց եմ շահել, ո՞նց եմ պահել,
 Քորփա, ջահել էդ դանեն.

Իսկ դու էսօր վեր ես կալել,
 Թե կոլեկտիվ կտանեմ:
 Թույլ տուր, որդի, պարզաբանեմ,
 Համաձայն չեմ էդ բանին:
 Ես չլծած եզս տանեմ,
 Խալխը քշի, սպանի՞:
 Թույլ տուր ախար, ինքս լծեմ,
 Մուրազս առնեմ մի տարի:
 Ինքս էլ հետո չեմ լինի դեմ,
 Լեռ, տար ու տուր օտարին:—
 Վերջացրեց Հովաս քեռին
 Մեջքը կրկին քորելով,
 Հետո նայեց ներկաներին
 Տարակուսած ու մոլոր:
 — Ի՞նչ եք ասում, հարևաններ,
 Ի՞նչ ես ասում, ա լաչին...—
 Լաչինը լուռ գլուխն առել
 Միտք է անում առանձին:
 Խոսքը առավ Թելում բաջին,
 Քիթը սրբեց գոգնոցով:
 Ու աչքերում շողշողացին
 Իրկու կաթիլ, երկու ծով:
 — Ալեքսանիս ազիդ խաթեր
 Դեմ մի գնա, այ Հովաս:
 Խալխի դռան շատ ես դատել
 Ու մնացել հա սոված:
 Կգամ, բալա, ընչի՞ չգամ,
 Ի՞նչս պիտի կորցնեմ,
 Հարստությո՞ւն, լծկա՞ն, կթա՞ն,
 Բարիքով լի նոր տնե՞ր:
 — Չէ, ա՛յ քիթիւր,— ծիծաղելով
 Գարսևանը ձեն տվավ:—
 Ունեցողն էլ կոխող գալով
 Չի կորցնի ոչ մի հավ:
 Կոլեկտիվը չի մնացել
 Հովաս քեռու արջառին:
 Բայց մի արջառ, թեկուզ մի եզ,
 Արտդ մենակ չի վարի:

Միայն մի բան, թելում քիթի,
 Կկորցնես կոխոզում,
 Էդ վիճակդ տաժանակիր,
 Էդ կարիքներդ լազում,
 Էլ ուրիշ բան չես կորցնի,
 Այլ կգտնես ճանապարհ՝
 Դուրս գալու այս մկան բնից
 Դեպի նոր կյանք, նոր աշխարհ:
 — Էդ եմ ասում ես էլ, բալա,
 Խի՞, աչքերս քո՞ւ կուզեն:—
 Թելում բաշին խոսքը առավ
 Ու շուռ տվավ դեպի դեն:—
 Խի՞ չեմ ուզում մարդավարի
 Կպրեմ, մաքրեմ ու հագնեմ,
 Բաղաք գնամ ամեն տարի,
 Չուզողները տրաքվեն:
 ✓ Իս էլ մեր եմ, որդու տեր եմ,
 Մուրազ ունեմ իմ սրտում:
 Լեսի՝ թառվան հարսըս բերեմ,
 Հղիս անեմ տեղ ու տուն:
 Հարսըս բերեմ հարսանիքով,
 Փառք ու պատիվ տեղ լինի:
 Պաղով, ծախսով, թաղարիքով,
 Շաղ տամ արաղ ու գինի...—
 Համ ասում է, համ շողոթորթ
 Լեչքով անում լաշինին.
 Լաշինը լուռ միտք է անում,
 Չի իմանում՝ ինչ անի:
 — Չէ, այա ջան, էդ կներես,—
 Լեսեց որդին կարմրած,
 Շողշողացին աչք ու երես,
 Սիրտը թաքուն թրթռաց:—
 Չէ, այա ջան, խելքից հանիր
 Հին սովորույթ, հին կենցաղ.
 Ինչի՞ս է պետք մեծ հարսանիք,
 Արաղ, գինի, ծախս ու ծաղ:
 Սիր ունենամ լի ծիծաղով,
 Սերն է արաղ ու գինի,

Սերը չեղավ, ծախսով, ծաղով
Ուրախություն չի լինի:
Քեֆ չեմ անի ջեբս դարդակ,
Վեր չեմ առնի եզ ու կով:
Տարիս կառնեմ, կոլլսոզ կերթամ
Կարմիր, կարմիր պսակով:
Կոլեկտիվում կապրենք սիրով
Ու կաշիատենք միասին:
Ոռտ է, ալա, կուլակի խոսք,
Մաղ ու արաղ մի ասի:—
Մարդ ու կնիկ տարակուսած
Մտիկ տվին խնամուն:
Խնամացուն ծանր հազաց
Եվ ասավ.

— Չեմ իմանում:

Հավանել եմ Ալեքսանին,
Խելոք, հալալ կաթնակեր:
Կսպասենք մի երկու ամիս,
Մինչև մի քիչ մտածեմ:—
Ու վեր կացավ ծմրտալով,
Հայն ու երկար հորանջեց,
Նտվերն անցավ պատի վրայով,
Հսկայական ամպի պես:
Դուրս գնացին ընկերները
Ալեքսանին սիրտ տալով:
Նրանք իրենց, մենք էլ մերը,
Տեսնենք՝ ո՞վ է հաղթելու:

ԵՐԿՐՈՐԿ ԳԼՈՒԽ

Ա Ռ Ա Ջ Ի Ն Բ Ե Ր Ք Ը

Փրմիական մատիտ ու բլոկնոտ ձեռքին,
Դեմը մի խարխուլ, կեղտակուր սեղան,
Դպրոցում նստած հաշվում է կրկին

Կոլխոզի նախագահ ընկեր Փարսեանն:
 Քսանինը թվի գարնանացանին
 Նա ինն ընտանիք հավաքեց իրար,
 Կոլեկտիվ հիմնեց, հետո շրջանից
 Ստացավ գութան ու լծկանավարկ:
 Եվ կոմբիի իբրև քարտուղար
 Բջիջի ուժերն այդ կողմը տարավ,
 Գյուղփոկի ֆոնդից կոլխոզի համար
 Ամենաընտիր հողերն էլ առավ:
 Համառ համոզեց տատանվողներին,
 Կովեց սեփական ծնողների դեմ,
 Շրջկոմը հասավ նեղ բուսկներին
 Ու խնդիրները դժվարին՝ հարթեց:
 Ու վարեց, ցանեց կոլեկտիվ ուժով,
 Աշնանն էլ հաջող բերք հավաքեցին:
 Ինն ընտանիք արդեն ապահով,
 Էլ կարիք չունեն կուլակի հացին:
 Բայց ասես՝ չկա, չի երևում այդ,
 Աչքի չի գարկում դրսից նայողին,
 Առաջվա նման անջատ ու ցրված,
 Զուլված են, ասես, էլի հին գյուղին,
 Ամեն մեկի եզն էլի իր գոմում,
 Ամեն կտուրին անջատ խոտի դեզ.
 Զկա մի մարագ, մի գոմ ընդհանուր,
 Որ ողջն հավաքես ու մի տեղ կիտես,
 Որ այն ժամանակ երևա որոշ,
 Կոնկրետ, գրավիչ, իսկը քո ասած,
 Որ պարզես վրան մի կարմիր դրոշ,
 Ու տեսնողն ասի.— «Կոլեկտիվն է սա».
 Կտեսնեն մարդիկ, որ գործես արել,
 Որ ուժ ունես դու գինված ու կուտակ,
 Այլ ոչ թե դատարկ հեքիաթ հնարել,
 Պատմում ես նրանց ամեն պատի տակ:
 Ա՛յ, էն ժամանակ քեզ կհավատան, '
 Կմտնեն կոլխոզ, կոլխոզը կաճի,
 Կդիմես կենտրոն, տրակտոր կտան,
 Կփոխվեն արագ գյուղն ու գյուղացին:
 Այո, պետք է մեզ որոշակի դեմք,

Խնդիրը պարզ է և շատ հասարակ:
 Պետք է կառուցել մի ընդհանուր շենք,
 Առաջին հերթին մի գոմ կամ մարադ:
 Մասնա խայթված սեփական դյուտից՝
 Գարսեանն արագ վեր ելավ ու շտապ
 Մալեց, վերցրեց բլոկնոտ ու մատիտ՝
 Զգալով սրտում նոր կորով ու թափ,
 Գնաց գեղամեջ, գտավ Սողոյին:
 Կոռպորատիվում կանգնած էր Սողոն:
 Մարդիկ նրա շուրջը խոնվել էին
 Սովորական վեճ աղմուկ ու բողոք:
 — Վերջացրու, Սողո, դուրս եկ մի բոսի,
 Խոսելիք ունեմ քեզ հետ առանձին: —
 Ահից Սողոյի սիրտը տրոփեց.
 «Արդոք էլի նոր մի հրահանգ չի...»:
 Պատմեց Գարսեանն իր նոր ծրագիրն:
 Ու Սողոն լսեց, լռեց մի վայրկյան,
 Հետո մտազբաղ ու անհամակիր
 Ասավ.
 — Զի լինի, բնկեր Գարսեան:
 — Լսիր է՛, Սողո, ամեն մի շնչին
 Հասնում է ուղիղ քսան փութ ցորեն:
 Էդքան մի տարում ուտելու բան չի.
 Պիտի մասնավոր շուկա դուրս բերեն:
 Գալոն կտանի արաղի կտա,
 Վաղոյի մերն էլ պատարագ կանի:
 Իսկ մենք կշինենք մի գոմ աժդահա,
 Որ կոխողի ողջ տավարը տանի:
 — Ես համաձայն չեմ, — տատանվեց Սողոն, —
 Գոմ ես կառուցում, ուզում ես մարագ,
 Էգուց կկանչես կոխողի ժողով,
 Հարցը կքննես ժողովի առաջ:
 — Առանց քննելու հարցը բջիջում
 Չենք կարող դնել կոխողի նիստին:
 Կհամաձայնվեն, դու գուր ես վիճում,
 Լավ է դու պնդիր ինձ հետ միասին:
 — Ես համաձայն չեմ: Վարկն էնտեղ թողած
 Դու աչք ես դրել կոխողի հացին:

Թե ինչ է՝ ունենք մի ճանկ ավել հաց...
 Տո՛ւ, տղամարդ ես, դու վարկ ստացիր:
 — Վարկ ստացել եմ, էլի կստանամ,
 Բայց ինչո՞ւ դիմեմ, երբ կոլխոզն ունի:
 Վարկն էլ հո սարում ձրի չի՞ ցանած.
 Զե՛՛ որ պոկում ես քո պետությունից:
 — Ես համաձայն չեմ,— համառեց Սողոն,—
 Մեր պետությունն է, ուրեմն կտա:
 Իսա ո՞ւր ենք մարդկանց գլուխը եղում,
 Կոլխոզ գրավում, երբ օգուտ չկա:
 — Կոմունիստ մարդուն, Սողո, չի սազում
 Ուտել ու հաշիվ չտալ ինքն իրեն:
 Քո կոլտ Գալոն, թեկուզ երազում,
 Տեսե՞լ էր շնչին քսան փուլ ցորեն:
 -- «Քսան փուլ ցորեն», «քսան փուլ ցորեն»
 Իսկ խլում ես է՛, չես թողնում ուտի:
 — Սողո, չենք խլում, զուր ես պղտորվել,
 Կոմ ենք կառուցում մենք նրա օգտին:
 Ասում ես, վարկով: Վարկ չես ստանա.
 Կոլխոզ ես հիմնել և ոչ թե Սորես,
 Որ կուտակելու ախորժակ բանա:
 Ու պետությունից անընդհատ պոկես:—
 Տիրեց լռություն: Նվ անհամակիր
 Սառնությունը Սողոն ուսերը շարժեց.
 — Լավ, որ պնդում ես՝ ժողով հավաքիր.
 Բայց իմացիր հա՛, ես համաձայն չեմ:

Բոլոր անդամներն ինն ընտանիքի
 Հավաքվել էին Սողոյենց հողան.
 Նստել էին լուռ և ծալապատիկ
 Ու սպասում էին, որ նիստը բանան:
 Ամենից վերև, բուխարիկի մոտ
 Հերն էր Սողոյի՝ գուռնաչի Զաքին
 Գլխին ահագին մի ոչխարի մորթ.,
 Իրդե, տնագործ արխալուղ հագին:
 Իսկ նրա դիմաց Գարսևանի հեր
 Քեռի Բարդոն էր հենվել կռպալին,
 Նայում էր որդուն ու հարսին ջահել,

Վտքում ինքն իրեն երանի տալիս:
 Բարդոյի կողքին Շիրինն էր շտապ
 ձմռում գոմշենի իր տրեխացուն,
 Բեղերի միջից խոսում էր անկապ
 մե մեկ-մեկ թքով տրեխր թացում:
 Շիրինի դիմաց նստել էր Գալոն,
 Կոճդի նման հաստ ու կարճ գլուղացի.
 Որ խժոռում էր արագ կուլ տալով
 Զեռքի ահագին դուռումը հացի:
 Հետո Աղասին, սափրված, մաքուր.
 Ուսին՝ քսան թվից բերած մի շինել.
 Աշխատել է նա երկար քաղաքում
 Ու դյուղում սիրուն սենյակ է շինել:
 Աղասու կողքին, փոքրիկ ու լղար,
 «Պուճուր» Վաղոն էր քամակը քորում.
 Ոնց որ տասներկու տարեկան տղա,
 Որ ունի սակայն և բեղ, և մորուք:
 Վաղոյի դիմաց, մոր հետ միասին,
 Նստել էր Արտոն, շալվարը պատռած.
 Բատրակ էր Արտոն. նրան գլուղացիք
 Անվանում էին «Ծրամի բատրակ»:
 Հոգի կենտրոնում՝ փոքրիկ մի սեղան,
 Վրան՝ մի մատյան կոտրված կողով:
 Նստել էր Վանոն որպես քարտուղար,
 Իբրև նախագահ նստել էր Սողոն:
 Զրույց էր անում հոռաքույր Եառան,
 Ներկա չէր նրա Սարիրեկ որդին.
 Կոմդպրոց էին գործուղել նրան:
 Իսկ հոգի փայտե խարխուլ ճաղերին
 Կոթնել էին երեսեք, կանայք,
 Ու փսփսալով սպասում էին,
 Որ կոլեկտիվի ժողովը բանան:
 Վեր կացավ Սողոն գլխին հին կասկա,
 Շինելից կարած պինջակը հագին,
 Կախած գալիֆե շալվարի վրա
 Կաշեկար պատյանն ատրճանակի:
 — Մեր օրակարգում մի հարց կա այսօր,—
 Ու ձեռքը Սողոն խփեց սեղանին:—

Մի հարց, ընկերներ, բայց խիստ կարևոր,
 Ես տալիս եմ խոսքն ընկեր Սեանին:—
 Գարսեանն ելավ, ժպտաց խորամանկ,
 Հանեց գրպանից բլոկնոտ ու մատիտ,
 Հետո թանաքոտ մի մեծ թաշկինակ,
 Ու սրբեց քրտինքն այրված ճակատից:
 Հեռվից սկսեց: Ու զգուշ, մանեման,
 Սոտենում է նա վտանգավոր տեղին:
 Մանոթ էր ամեն մեկի թուլությանն
 Ու գիտեր, թե հարցն ով՝ ուր կշեղի:
 — Ուրեմն, ընկերներ, ինչպես որ ասի,
 Կոլխոզը տարավ խոշոր հաղթանակ.
 Ինչքան թշնամին ոռնա, տրաքի,
 Մենք հաղթանակով առաջ կընթանանք:
 Դիմել են արդեն մեր կոլեկտիվին
 Տասը չքավոր ու յոթը միջակ:
 Մեզ հետ է արդեն միջակ գյուղացին՝
 Մաղաքանց Մուքոն ու Գարաս բիձան:
 Բայց կոլեկտիվում մի քանի կանայք
 Սիրում են էլի ուտել, ուրանալ,
 Շրջում են տներ, գանդատվում, խոսում,
 Թե ական-թալան, սով է կոլխոզում:
 — Էդ ո՞ւմն ես ասում ուտող, ուրացող—
 Ճշաց Սոդոյի մայրը անկյունից:—
 Ո՞վ է էդպիսի խոսքեր տարածող,
 Էդ խի՞ ես էդպես մտիկ անում ինձ:
 — Դու ես տարածում, Փառանձեմ քիֆիր.
 Ժամում, կիրակի, Մուքոյի կնկան
 Ասել ես՝ իբրեւ տունդ քանդեցիր,
 Խորհուրդ ես տվել, որ նրանք չգան:
 Հետո, ընկերներ, պետք է ընդգծել,
 Որ մենք շունենք դեռ կոլեկտիվ հոգի:
 Կոլխոզի լծկանն անխնամ գցել,
 Զրույց ենք անում պատերի տակին:
 Նոր Վասակն ու ես գոմերը մտանք,
 Եվ ինչե՞ր տեսանք... ինչի էր նման.
 Վաղոյի գոմում լծկանների տակ
 Խառնվել էին աղբ, խոտ ու դարման:

Իսկ ի՞նչ էր արել Գալոն (ահա ձեզ
 Մի փաստ, որ պետք է խփել հիմնովին):
 Եղան առջևից խոտը հավաքել
 Ու տվել էր իր սեփական կովին:
 Էս ճանապարհով հեռու շենք գնա:
 Որպեսզի էսպես շանենք իմ ու քոն
 Ու էս բացերը արագ վերանան,
 Պետք է կառուցել մի ընդհանուր գոմ:—
 Ու Գարսեանը երկար ծավալեց
 Իներքի բաժանման ծրագիրն իր նոր:
 Երբ, վերջացնելով բլոկնոտը ծալեց,
 Մարդիկ միտք արին մի պահ գլխակոր:
 Կոկորդը մաքրեց զուռնաչի Զաքին
 Եվ ընկավ խորունկ մտածմունքի մեջ:
 — Ո՞վ է համաձայն էս առաջարկին,—
 Սողոն հարցական ժողովին դիմեց:—
 Ոչ ոք չի՞ խոսում: Թեք ու դեմ չկա՞...—
 Դեմ արտահայտվել հենց ինքն էր ուզում,
 Սակայն բջիջի որոշումը կար
 Եվ կապում էր այդ Սողոյի լեզուն:
 — Ընկերներ՛ր, Սեանն իրավ է ասում:—
 Վեր ելավ տեղից կոմսոմոլ Վասոն:—
 Ամեն մի շնչին քսան փուլթ ցորեն:
 Պարզ է, որ պիտի շուկա դուրս բերեն,
 Ծախեն շուկայում կուլակի գնով,
 Կամ տան կուլակին, որ նա ամբարի:
 Կենտկոմը խնդիրն էղպես չի դնում,
 Հացի պրոբլեմ կա մեր դեմ այս տարի:
 Կամ մենք կուլակից կխլենք շուկան,
 Կամ նա կխլի ու մեզ կհաղթի:
 Եթե մենք շօղնենք մեր իշխանությանը,
 Ո՞վ պիտի օգնի առաջին հերթին:
 Օգնել է նա մեզ վարկով, լծկանով,
 Ուրեմն էլ ինչո՞ւ նորից վարկ ուզենք:
 Ես հարցն, ընկերներ՛ր, այսպես եմ դնում,
 Մեր միջոցներով գոմը կառուցենք:—
 Կոկորդը մաքրեց զուռնաչի Զաքին:
 — Էդ ո՞նց կլի է, ի՞նչ է դուրս տալիս:

Ես համաձայն չեմ ընկեր Վասակին,
Իմ փայլըս տվեք, ես դուրս եմ գալիս:

— Դուրս ես գալի՞ս... հարթաթ կդաս,-
Գոռաց Շիրինը տեղից:

Ու նետելով տրեխը թաց՝
Ելավ, կանգնեց կատաղի:

— Դուրս է գալիս ուստա Զաքին,
Ոչ դատել է, ոչ բանել:

Լամրողջ ամառ դեղի տակին

Իր բոստանն է պահպանել:

Հիմի մեզ հետ, մեզ հավասար,

Բերքը պիտի բաժանի:

Նա էլ շնչից շատ է, ախար,

Բերքի կեսը կտանի:

Իսկ ես, իմ կինն ու տղեն

Տրորվել ենք ողջ ամառ.

Էս դատաստան չի, ընկերներ,

Մենք աշխատենք նրա համար:

— Աղա, տկլոր,— գոռաց Զաքին՝

Խեղդվելով հապալուց,—

Որ ճառում ես, դու կոլխոզին

Ի՞նչ ես տվել, ե՞զ, թե՛ լուծ:

— Տո, տկլոր եմ, չքավոր եմ,

Չունեմ, որ տամ լուծ ու եզ,

Հո քեզ տալիք չե՞մ մնացել:

Այ, թե ինչ եմ տվել ես:—

Ու Շիրինը թափահարեց

Երկու ձեռքերը օդում:—

Էս ձեռքերով ցանք եմ արել,

Խոտ եմ հարել օրնիրուն:

Համաձայն եմ Գարսևանին,

Կոլեկտիվին գում շինենք:

Մնացածն էլ հերիք կանի,

Մնացածը բաժանենք:—

Ջուռնաչի Զաքին սաստիկ վրդովված՝

Խճըճվեց նորից մռայլ մտքերում:

Հացի խնդիրը մի կողմը թողած՝

Նա համաձայն չէր գոմ կառուցելուն:
 «Կոմունիստ որդու հարգը» շրլնե՛ր,
 Իհարկե, կոլխոզ չէր մտնի Զաքին,
 Մտնելիս էլ նա թաքուն հույս ունե՛ր,
 Որ գործը շուտով ներսից կճաքի:
 Բայց արի, դու տես, թարսը պատահեց.
 Մարդիկ ցանք արին առանց կռվելու.
 Նատանի կամքով բերքն էլ կատաղեց.
 Հաց էր որ բերին, դիզեցին կալում:
 Եվ հաշտվեց մի կերպ զուտնաչի Զաքին,
 Նա մինչև անգամ ուրախ էր սրտում:
 Աշնանն էլ գուցե տղին պսակի,
 Լիբրուն, նամուսով մի հարս բերի տուն:
 Այսպես որ գնար, լավ էր կոլխոզում:
 Քչվոր, ինն տուն, ալդքան վարկ ու հող...
 Բայց Սեանն ուրիշ հեքիաթ է ասում՝
 Կոլխոզ գրավել ժողովուրդը ողջ:
 Դրել է մտքում կառուցել նոր գոմ:
 Ասել է, կանի, գլուխ կբերի:
 Ուրեմն՝ կորար գլխով ու ոտքով,
 Զկա վերադարձ այս ճանապարհից...
 Դե, մարալ եզներդ գոմից դուրս հան,
 Ինքդ տար, կապիր «ընդհանուր» գոմում...
 Զոռ մի տար խելքիդ, չէ, ընկեր Սեան,
 Զաքին ջրի հետ խելքը չի խմում:
 — Ես համաձայն չեմ,— կրկնեց նա էլի,—
 Իմ փայս տվեք, ես դուրս եմ գալի.
 Կապրեմ ինձ համար, Սողոյից բաժան.
 Ես հնի սովոր, նա՝ պարտիական...

— Դու սուս կաց, ա հեր, քո խոսքովը չի,—
 Սաստիկ ջղային բղավեց Սողոն,—
 Քո դուրս գալը դու մեջտեղ մի դցի,
 Հարցը կվճռի ընդհանուր ժողովը:
 Քվեարկում եմ. ո՞վ է համաձայն
 Պարտֆրակցիայի էս առաջարկին.
 «Երեքհարյուր փութ հանձնել պետություն
 Ու գոմ կառուցել առանց նոր վարկի»:
 —

Ի՞նչ պարտիական ձեռնարկից բացի
Ձեռ բարձրացրին շորս հոգի միայն,
Կանայք մեծ մասով շեղոք մնացին:
Աչքով են անում իրար լեռլայան:
— Ո՞վ է դեմ,— կանչեց Սողոմ
բարձրաձայն,—
Շնկեր Սեանի էս առաջարկին:—
Սակայն ոչ մի մատ վեր չբարձրացավ:
Նայում են լարված տղամարդ ու կին:
— Ո՞վ է ձեռնպահ,— բղավեց Սողոմ:—
էլի ոչ մի ձեռք ու ծպտուն չկա:
— Էսպես էլ պասսի՞վ. եկել են ժողով,
Ոչ թեր են, ոչ դեմ և ոչ ձեռնպահ:—
Սակայն Գարսեանն արդեն հասկացավ,
Որ խաղն այս անգամ տարել էր Սողոմ,
Որ տարել էր նա որոշ «աշխատանք»,
Ահ էր սերմանել իր մոր բերանով:
Իսկ ինքը լավ չէր նախապատրաստվել:
Հարցը ինքնահոս բաղդին էր թողած:
«Բայց պայքարը մեր դեռ չի ավարտվել...»
Այս միտքը նրա գլխում շողշողաց:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԳՅՈՒՂՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՍՈՂՈՆ

Նորից անձրև: Աշուն: Քամի:
Ձանգուն իր հին ճառն է ասում:
— Ժողով է, հե՛յ, լաշին ամի,—
Ձայն է տալիս կատարածուն:
Ու տնեբրում, ժողովնեբրում,
Փողոցնեբրում, պատերի տակ
Կյանքն է գլոտլի հուզվում, եռում
Ու շուռ գալիս հիմնահատակ:

Տնքում է խոր ընկեր Սողոմ՝
 նախագահը գյուղսովետի:
 «Էսպիսի տեմպ, էսքան ժողով,
 Հրահանգնե՛ր էսքան խրթին:
 Հուպ են տալիս վերից, վարից՝
 Իշխանություն ու ժողովուրդ:
 Արի՛, Սողո՛, կառավարի,
 Տար ուղիղ գիծ էս ժողովում
 Ոչ քուն ունես և ոչ հանգիստ,
 Ոչ էլ կարգին աշխատավարձ:
 Ձեռ ես քաշել տանից, կյանքից,
 Գործ ես անում մերկ ու սոված:
 Գոնե տեսնեն, գնահատեն
 Ու խոնարհվեն քո առաջին»,
 Ու մի սև ամպ դեմքը պատեց.
 «Ախ, Լաչինի շինար աղջիկ:
 Ախ դու սիրուն, դու լիրբ Արուս,
 Ի՞նչ պատահեց, էս ի՞նչ արիր...
 Հերդ ասավ՝ երկու տարուց,
 Դու Ռուշանանց տղի՞ն առիր:
 Եվ ես լինեմ Չաթնանց Սողոմ,
 էսքան տարվա պարտիական,
 Ու էս գյուղի մասշտաբով
 Համ փեսացու, համ նախագահ, °
 Դու ինձ մերժե՞ս, խայտառակե՞ս,
 Խոսք տաս քոսոտ Ալեքսանի՞ն...
 Տո, աննամուս, ես առա՞քեզ,
 Քո թա՞յն եմ, ես քո արժանի՞ն...
 Լավ, սպասի՛ր, օրիորդ Արուս,
 Չոփուտ Լաչին, չես մարսի դուս:
 Միտք է անում ընկեր Սողոմ
 Դեռ չհասած ժողովատուն,
 Չափազանց բարդ, աղմկալի
 Հարց է դրված էդ ժողովում:
 Սողոմ հուզված զանգ է տալիս,
 Սաստում, գոռում ու վրդովվում:

— Ա՛յ քեզ բջիշ, ա՛յ քեզ ժողով,
 Սուս արա է՛, ընկեր Վասակ։—
 Երբ լռեցին, ընկեր Սողոն
 Շարունակեց խոսքը կիսատ,
 — Բեզոյան լաշին, ունևոր միջակ,
 Բատրակ է պահել, կիսու ցանք արել,
 Գյուղսովետն ունի արդար առաջարկ՝
 Ընկեր լաշինին կուլակ համարել,
 Գանձել նրանից հարյուր փութ ցորեն,
 Որպես պարտադիր հացամթերում,
 Նրան միջակի ցուցակից հանել
 Ու հարցը՝ դնել ձայնագրկելու։
 — էդ շատ գնացիր, ընկեր նախագահ,—
 Կանչեց ձայնով Վասոն բարեխոս,—
 Մեր մարդն է լաշինն, արևս վրկա,
 էգուց մյուս օր կմտնի կոլխոզ։—
 Բայց ընկեր Սողոն հուպ տվեց նրան
 «Դասակարգային անարատ գծով»,
 Անվանեց «հակա», «կուլակի բերան»
 Ու կոմսոմոլի անունը գցող։
 — Այդ չի կարելի, սխալ է Սողո՛,—
 Գոռաց Զարուհին, կինը Սևանի,—
 Դու դեն ես վանում լաշինին զոռով,
 Զէ՞ որ մերն է նա, միջակ գյուղացի։—

Գոմի գործերով մեկնել էր Սևանն,
 Ուշանում էր նա դեռ Երևանում,
 Եվ Սողոն նրա բացակայությունը
 Նաև բջիջի գործերն էր վարում։
 Ժողովում կային երեք կոմունիստ՝
 Զարիկն, Աղասին ու ինքը՝ Սողոն.
 Սակայն Աղասին ձեռնապահ էր միշտ՝
 Իր պարտիական աղաթին սովոր։
 Մասնակցում էին ժողովին նաև
 Երեք թեկնածու, տաս կոմսոմոլիստ։
 Նրանց էլ, սակայն, Սողոն հրամայեց
 «Դասակարգային գծի» անունից։

Ո՞վ դասակարգին ընդդեմ կգնար:
Նրանք մի մասով չեզոք մնացին
Քվեարկելիս (ինչ «խելոք» հնար...):
Ու Սողոն հասավ սրտի ուզածին:
Քվեարկեցին տասնմեկ հոգի.
Վեցը կողմնակից, հինգը հակառակ,
էսպես մի մատով հարցը, վճռեցին,
Դրին գյուղսովետ, ժողովի առաջ:

— Տո, չեմ կարող, է՛, այ գլխիդ մատաղ,—
Գոռաց հոռահատ լաշինը տեղից,—
Հարյուր փութ ցորեն ես ո՞նց տամ, ախար
Ո՞ւր եք ինձ, ախար, ճնշում անտեղի:
Ես ի՞նչ եմ խոսել իշխանության դեմ,
Որ զրկում եք ինձ ձայնից, խոսելուց:
էս իշխանության շնորհիվը չէ՞ր,
Որ ես ձեռք բերի եզներ երկու լուծ:—
Ալեքսանն ելավ, որ հակաճառի,
Բայց Սողոն սաստիկ հուպ տվեց նրան:
— Կարմիր Բանակում դու երկու տարի
էդ ես սովորել, ընկեր Ալեքսան,
Որ կո՞ղմը բռնես դու քո աներոջ.
Եվ ինքդ լռի՛ր, թող մասսան ասի:—
Ու ձգձգվում էր հարցը ժամերով.
Սաստում էր Սողոն քեռի Հովասին:
— Տո, թո՛ւյլ տուր, թո՛ւյլ տուր, ես պարզաբանեմ,—
Ծռում է Հովասն ու չի դադարում.—
Ախար, ես դրա տան հարևանն եմ,
Հովիվ ենք եղել մեկտեղ, մի սարում...
— Տո, թույլ տո՛ւր, թույլ տո՛ւր...— Ու ժողովն էլի
Հուզվեց, աղմկեց լաշինի համար.
Բայց Սողոն մնաց պինդ անդդովելի
Ու շարունակեց իր գործը համառ:

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՉԱԹՆԱՆՅ ՍԱՆԹՐՈՍԸ ԵՎ ՆՐԱ ՀՈԴԱՆ

Վ Եվ գյուղսովետից կոտրված սրտով
Լաչինը ելավ հայացքով մթին.
Քեֆ արա, Լաչի՛ն, սրանից հետո
Կուլակ է գրված քո տան ճակատին:
Գնա՛, ա՛ Լաչին, եզներդ ծախի՛ր,
Ցանքդ կրճատի՛ր, լողորթյո՛ւն արա,
Աշխատածդ տո՛ւր գինու, արաղի՛,
Հարբի՛ր ու պառկի՛ր ճամփեքի վրա...
Այ, էն ժամանակ կըլես չքավոր,
Մոտիկ հարազատ Չաթնանց Սողոյին:
Թե չէ բանելուց ի՛նչ օգուտ կա որ...
էսպես էլ կրա՛կ... էսպես էլ օյի՛ն...
Այ օ՛ձ, անօրեն, ես ի՛նչ եմ արել:
Աղջիկ էր շուգեց, աչք էր, շմտավ.
Դուք եք էսպիսի օրենք հնարել,
Ես կարո՞ղ էի զոռով աղջիկ տալ...»

Լաչինը մռայլ ուրվականի պես
Ներս մտավ Չաթնանց Սանթրոսի հոդան:
— Այ հազար բարո՞ւ... արի՛, արի՛ դես,
Նստիր, մի՛ քաշվիր, տերն ես դու էս տան:
էս ո՞նց պատահեց, սանահներ Լաչին...
Բաս «միջակ» էիր, նրանց «հարազատ»:
Հարյուր փութ ցորեն... դե հարստացի՛ր,
Չայնագուրկ Լաչին... հա՛, հա՛, հա՛,— հազացի—
Իսկ «հընկեր» փեսադ ինչո՞ւ տալ արավ:
Քեզ չէ՛ր ճանաչում, թե՛ լեզու շուներ:
Թողնես ճառ ասի երկար ու բարակ.
«Կոլխոզ, հա կոլխոզ, աներ, հեր ու մեր...»:
էլ ի՛նչ դարդ ունես, սանահներ Լաչին,
«Հընկեր» փեսադ քեզ կոլխոզ կտանի,
Ու էդ երջանիկ կոլխոզի միջին
Կապրեք ոնց մի տուն ու մի ընտանիք...

Հարյուր մետրանոց յորդանի տակին...
 Ա՛յ քեզ թամաշա... հա հա հա՛... հի-հի՛...
 Կպառկեցընեն տղամարդ ու կին...
 Էհ, նամուսն էլ հո շոր չի որ մաշվի:
 Էլ ի՞նչ իմ ու քոն, սեփականութուն,
 Ինչքան կարող ես զոռ տուր վաստակի:
 Երեխաներին կժողովեն մի տուն
 «Մանկական մսուր»... կամ թե ուղղակի
 Կուղարկեն Մոսկով և... Ամերիկա:
 Որ Ամերիկան սրանց ճանաչի:
 Համ էլ հին պարտքեր ունեն, պիտի տան...
 Հա՛, հա՛, հա՛... ասա, խոսիր է՛, Լաչին:—
 Լաչին ամպամած գիշերվա նման
 Կծկվել է լուռ բովսարիկի մոտ,
 Եարունակում է Սանթրոսը համառ
 Հյուսել նրա շուրջ իր ցանցը թունոտ:
 — Ե՛րբ կպսակեք, սանահներ Լաչին...
 Ասում են փեսադ պսակ չի ուզում:
 Որոշել է՝ գա, աղջկադ կանչի,
 Ու ձեռքից բռնած քաշ տա, տանի տուն:
 Ա՛յ լավ հարսանի՛ք... իսկական պատիվ...
 Պատվավոր փեսա, պատվավոր աներ...
 Ո՞վ էր էդ գրել աղջքադ ճակատին,
 Էդպիսի օրենք ո՞վ է սահմանել:
 — Օ՛ֆ, Սանթրոս ապեր, սիրտս մի դադի,—
 Մոլտաց Լաչինն անհույս տրտմությամբ:
 Ու լռեց: Հետո ֆշշաց կատաղի.
 — Ես աղջիկ չունեմ, որ շներին տամ:—

Գիշեր էր: Լցվեց Սանթրոսի հոդան
 Իր ամենօրյա հաճախորդներով:
 Սկսվեց զրույց ու վեճ անվախճան,
 Նոր հարցերի շուրջ ու նոր հոգսերով:
 Նույնն են սարերը՝ հսկա ու հերոս:
 Ժայռ ու ապառաժ կախված են օդում:
 Նվ անդնդախոր մթին ձորերով
 Նույն Զանգուն է հին երգը որոտում:
 Նույն խրճիթներն են ցրիվ մակաղել

Ձորում, ծերպերում,¹ քարափի ծայրին:
Ահա մի մատուտ՝ որպես նետ-աղեղ,
Մեռած զորություն մեռած սրբերի:
Բերդը կիսաքանդ «Աշոտ երկաթի»,
Վանքը կառուցված յոթերորդ դարում:
Եվ քանդակազարդ քարեր բազմաթիվ
Եվ ընդհատակյա անցքեր ու առու:
Նույն գիշերն է մութ և համատարած
Անտառում, ձորում, պատի ճեղքերում:
Ու նավթի լամպի լույսն է անճարակ
Այդ ամենակուլ խավարը քերում...

✓ Բայց աթարածուխ բուխարիկի մոտ,
էն հին, «հայրենի օջախի առաջ»
Նախկին օրերի մանուկ հուզումով
Հիմա չեն պատմում երկար, ու բարակ
Հտպիտ շարքերի և արնածարավ
Վիշապի մասին՝ երեք գլխանի:
Բոլորը սարից ավելից ու տարավ
Մի աշխարհացունց երկաթե քամի:
էլ շարք ու հեքիաթ չկա սարերում
Ու կիսակործան մատուռների մեջ:
Աճում է այնտեղ անահ մի սերունդ,
Որ պայքարներում, կռվումն է սնվել:
Աճում է այնտեղ անաստվածների,
Բուլշեիկների մի կայտառ բանակ:
Նոր լույսով վառվող նրանց աչքերից
Փախչում են ահով մութն ու քահանան:
Կռվում են նրանք այս սարերի դեմ,
Եվ այս գետերի ընթացքը փոխում:
Քանդում են արագ ապառաժ, գմբեթ
Եվ կառուցում են դպրոց ու ակումբ.
Եվ փոփոխելով սարեր ու ձորեր՝
Փոխվում են իրենք վայրկյան առ վայրկյան,
Լցվում են նրանց մտքերը զորեղ
Մարքսի, Լենինի խոր իմաստությամբ:
✓ էլ շարք ու հեքիաթ չկա սարերում
Ու ոչ էլ խավար մսուրում կովի:
Եվ հիմա այնտեղ էլ չի վախենում,

= Ձի խելաճարվում և ոչ մի հովիվ:
 Ձէ՞ որ մտերիմ աչքերի նման
 Հեռվից կայծկլտում ու սիրտ են տալիս
 էլեկտրական լույսերը նրան
 Թե՛ Երևանից, թե՛ Քանաքեռից:
 Ձէ՞ որ նա գիտե խանդավառ սրտով,
 Թերթում կապելով, կարդացել է նա,
 Որ այդ լույս աչքերն անվրեպ հերթով
 Նրա անտառին էլ կմոտենան:
 Կելնեն ֆշշալով Քանաքեռգէսից
 Ու Գյումուշգէսից հաղթական, անդարձ
 Կելնեն և խավար գիշերվա կեսին
 Հեղեղի նման կմտնեն անտառ:
 Կվառվեն անհաս այլ ժայռի ծայրին,
 Ազնիվ մարմարի հարուստ հանքերում:
 Գայլը չի դիպչի էլ շար այծերին,
 Ինչքան էլ նրանք արածեն հեռվում:
 Գիտե նա, որ տեմպ ու թափ կբերեն
 Այդ լույսերը իր հայրենի գյուղին.
 Ու վաղն այստեղից գիշեր ու ցերեկ
 Ծշալով կանցնի նոր երկաթուղին:
 ✓ էլ շարք ու հեքիաթ չկա սարերում:
 Եվ աթարածուխ բուխարու առաջ
 Ուրիշ հարցեր են հիմա քրքրում
 Մտքերը նոր թափ ու նոր թև առած:
 Հարցերը այսօրվա և ապագայի,
 Նոր, հարվածային, երկաթե հարցեր,
 Հարցեր, որ երեկ, մյուս օր չկային,
 Այսօր մտքերի հեսան են դարձել:

Լցվում է հողան ծխով, աղմուկով
 Ու նավթի լամպի մշուշով դեղին:
 Կուկեկտիվ մտած Մաղաքանց Մուքոն
 Համոզում է դեռ քավոր Մուշեղին,
 Որ սա իր էշի ընթացքը շեղի,
 Մտնի կոլեկտիվ, միասին գնան,
 Դառնան օրինակ՝ ընդհանուր գեղին.
 Այլ ոչ թե վերջում ամոթով մնան:

Մուշեղը փափկում, կակղում է կարծես.
— Զգրվենք, լաշին, հա՛... ընկեր Հովաս...—
Լաշինը գլուխը ձեռներին բարձել,
Դեռ միտք է անում լուռ ու վրդովված.
Եվ կուեկտիվի բերքը հաղթական
Դարձել է հուզված մտքերի սունին.
— Ախպեր, ցանեցին, լավ էլ ստացան,
էլ սրանց թոփի գյուլլա չի բռնի:
— Հալբաթ կստանանք,— պարծեցավ Վասոն,—
Ցանեցինք զտած, արինք շարքացան,
Վախտին, գիտություն, գյուղատնտեսով.
Շրջանն էլ տվեց երկաթե գութան,
Իսկ էկող տարի տրակտոր էլ կտան:
— էդպես որ լինի, մամա էլ կցանի,—
Ասավ հեգնությամբ Թորոյենց Գարուն:—
Գործերը թողած ամբողջ գարնանից
Բջիջ, կոմսոմոլ, գյուղսովետ ու Փոկ
Հենց կուեկտիվի շվանն են մանում:
— Բաս ո՞ւմ չվանը պիտի մանեին.
Պարզ է մեզ համար: Նո՞ր ես իմանում:
Զէին օգնելու հո կուլակներին:—
Ու սիրտ է տալիս Մուֆոն բոլորին,
— Եկ, ուստա Ֆարհատ, քավոր Անաստաս,
Մեր պետությունը մեզ չի մոլորի,
Այլ ցույց է տալիս հաստատ ճանապարհ:—
Տեսնում է Սանթրոսն անզոր շարությանը
Որ նոր վճիռ են մտորում մարդիկ,
Ու փլշում է հողն իր ոտքերի տակ,
Որ նրանց համար ճանապարհ հարթի:
— Թերթն ի՞նչ է գրում, սանահներ Աբել,—
Հարց է տալիս նա «անմեղ» ժպիտով:
— Ինգլիզ ու Ֆրանգ պայման են կապել,
Կոխվ կլինի, ասում են, շուտով:—
Ու ձեռքը դրած ոլորուն բեղին՝
Հայտնում է Աբելն իր կասկածը մութ.
— Վայն է մեր գլխին, վայ մեր երեսին,
Բարդ է դրությունն ու շատ էլ խախուռ:
— Ուզում ես ասել՝ կոլխոզ չգրվե՞նք,

Երբ պատերազմի վտանգ կա էսօր,—
 Ճիշտ գուշակելով նրա միտքը նենգ՝
 Նետում է տեղից կոմսոմոլ Վասոն:
 — Կոլխոզ կգրվե՛նք, դու մի զկուտա,
 էդ չեն հարցնի ինձնից ու քեզնից:
 Ես վախենում եմ, որ Ինգլիզը գա
 Ու գրվողի հետ խիստ հաշիվ տեսնի:—
 Եվ կարկըտաբեր ամպի պես մռայլ
 Նստում է հոգսը մարդկանց աչքերին:
 Մուշեղն ու Մուքոն նայում են իրար,
 Հոգոց է հանում Սանթրոսը խորին:
 Այդ «անմեղ» հոգոցն ավելի ազդու,
 Ավելի խորն է շփոթում մարդկանց:
 Վասոն մի վայրկյան հոնքերը բարդում,
 Փնտրում է մտքում ուղիղ պատասխան:
 — Մեռա՛ծ ենք էլի, ձեռներս կապած,
 Մենք ո՛չ թոփ ունենք ու ո՛չ էլ բանակ,
 Որ Ինգլիզը գա, հասնի Ալափարս,
 Ու դու էլ քո հին դուքանը բանաս:
 — Տո՛ւ, նրանք շատ են, ուժով են, հարուստ,
 Վաղն Ամերիկան նրանց կմիանա,
 Օրական հազար բան են հնարում,
 Իսկ դու ասում ես հա՛՛ «Կարմիր Բանակ»:
 — Մենք չե՛նք հնարում: Մեզանից բացի
 Մենք բանակ չունե՛նք նրանց աշխարհում:
 Նրանց մոտ չկա՛ բանվոր, գյուղացի:
 Հենց գիտես՝ մենակ մե՛նք ենք պայքարում:
 Մի թող սկսեն, թող փորձեն հապա՛,
 Կտեսնենք՝ թե հյուր կերթա՞ր ով ում տուն:
 Քո անգլիացի՞ն կգա՝ Ալափարս,
 Թե՛ մենք կգնանք նրանց մոտ Լոնդոն:—
 Սկսեցին ոմանք ուրախ ծիծաղել:
 — Նեղ լծեց Վասոն, կապեց Աբելին...
 — Կանաչե՛ս, Վասակ, էդպես ասա է՛...—
 Կանչում է Մուքոն՝ սիրտ առած էլի:
 Ու քաջալերված իր հաղթանակից՝
 Շարունակում է Վասակը նորից.
 — Բա՛ս... Իսկ դու խելքիդ շատ զոռ մի
անի:

Ընկեր Ստալինն ասել է ճառում.

«Մեր սովետական իշխանությունից

Ավելի պինդը չկա աշխարհում»:

— Ես չեմ հավատում թերթի գրածին. —

Պատասխանում է Աբելն անճարակ:

— Դու հակամտքեր շատ մի տարածի.

Կուլակի դուդուկ, իսկական կուլակ:

— Կուլակն էլ դո՛ւ ես, «հական» էլ, լակո՛տ

Որ հալածում ես ինձ պես միջակին:

— Միջակ ես դառել մարդկանց քամակով,

Նրանց դիմակն էլ մի օր կճաքի: —

✓ Ու խռպոտում են ձայները քիչ-քիչ

Հողի գարշահոտ, գաղջ մթնուլորտում,

Իսկ դրսում, ձորում գետն իր անհանգիստ,

Իր հավերժական ճառն է որոտում:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԿԾԻԿՆԵՐԸ ԽՃՃՎՈՒՄ ԵՆ

Դինամիտը անտառում առավոտյան որոտաց,
Սանթրոսի տան քարաշեն պատերն ահով դողացին,
Տանձենու տակ թափառող արջը փախավ շորեթթաթ,
«էլ ահա չկա» մուտաց փայտ հավաքող գյուղացին,
Ու վեր թռան մարմարի մանր-սպիտակ կտորներ,
Օդում թափով պարեցին ու շաղ եկան չորս բուր: —
Արձագանքը դղրդաց ու սլացավ սարն ի վեր
Անտառում իր հաղթական արշավանքը երգելով:
Արձագանքը դղրդաց ու սլացավ սարեսար,
Հասավ խոժոռ ձորերին, քարափներին արևոտ,
Ու մոտակա գյուղերին երգի նման խանդավառ
Հաղորդեց նոր մի կյանքի աղմկալից առավոտ:
Եվ գյուղացիք, որ անգործ պատերի տակ պալզած,
Քաշում էին դուլլասար ու ծուլաբար հորանջում,
Ոտքի ելան փնջալով՝ թողած հորանջը կիսատ

Ու դեպ անտառ նայեցին արտասովոր եռանդով:
Վեռչինարդն է՝ ասացին ու գնացին բանելու:
Սակավարյուն գյուղերում բաբախեց նոր մի երակ:
Կալ ու կուտից վերջացած՝ վերցրին լում ու քլունգ:
Ամբարված ուժը գտավ նոր հուն, նոր ելք ու եռաց:
Դեպի անտառ գնացին սայլակները շարեշար
Ու ետ եկան՝ մարմարի ձյունանման բեռներով,
Դեպի քաղաք քշեցին՝ վերցրած խոտ ու պաշար,
Ճամփին իրենց բեռների ծանրությունը երգելով:
Ծանապարհին երևաց երիտասարդ ինժեներ,
Նա կաթանները չափեց տեխնիկական խստությամբ:
Թոփերի պես կտավի նորակառույց շոսսենք
Քաղաքներից ձգվեցին ու անտառները մտան:

Ու դինամիտն անտառում էլի ուժգին որոտաց:
Սանթրոսն ահով ցնցվեց, կաղնիները դողացին:
Կոմսոմոլիստ Վասույի խոսքը հնչեց հաղթական,
Ու մարմարի հանքերում բանվոր դառավ գյուղացին:
Ծվ նրանք, որ փախել զատ, պահվել էին փոսերում,
Դուրս վազեցին, դիրքերից գրոհ տվող զորքի պես:
Աշխատանքը հռնդաց, ու հանքերից քիչ հեռու,
Մոտիկ ձորում զըրնգաց աղջիկների երգը թեժ:
Սերն է նրանց երգերում ու շողշողուն ապագան,
Սերը ջահել բանվորի, որ աշխատում է հանքում,
Ծրգում են այն սիրահար կոլխոզավոր աղջկան:
Ու երգելով՝ վայրի տանձն ու խնձոր են հավաքում:
Ժողովում են տանձ ու խնձոր, վայրի մասուրը ձորի՝
Գյուղում բացված մրգի նոր չորանոցը տանելու:
Իվ երբ ձմռան ձորերում բուքն իր պոչը ոլորի,—
Քաղաք կերթան կոնսերվի գործարանում բանելու:

Խանդավառվեց Ալեքսանն ու իր քլունգը վերցրեց,
Ֆոկեց տեղից մարմարի հսկայական մի կտոր,
Հսկայի պես հեալով մինչև սայլերը հասցրեց,
Հետո սրբեց լայն ճակատն ու երեսը քրտնաթոր:
Հաշին էլ իր սայլակով եկավ մարմար կրելու,
Ալեքսանը բարեկեց, բայց բարևը նա չառավ,
Օտարի պես էր նայում՝ մռայլ թախիծն աչքերում,

Ու երեսը շուռ տվեց Ալեքսանին հակառակ:
 Ալեքսանը գունատվեց, բայց չիտսեց, հեռացավ,
 նստեց հեռու ծառի տակ ու մտքերում շվարեց,
 Սրտում կասկածն ահավոր օձի նման ծառացավ,
 Ու մի սև ամպ ծրարեց անտառ, երկինք ու արև:
 Ժամանակն անց է կենում դինամիտի որոտով:
 Նա չի տեսնում սիրածին: Չի երևում: Չի գալիս:
 Տուն է դառնում ամեն օր լեռնակուտակ կարոտով,
 Բայց նա չկա հայաթում... հերն էլ բարև չի տալիս:
 Մեկն անտառում ծիծաղեց... ո՞ւմն էր արդյոք ձայն տվին:
 Նա՞ էր արդյոք, թե քամին... Ժեկը կանչեց՝ — Ալեքսան:
 Ասես անձրև հրեղեն զարկեց սիրող այն տղին,
 Եվ նա տեղից թռչելով դեպի ներքև սլացավ:
 ✓ Քրքացին աղջիկներն ու շաղ եկան ծերպերում,
 Տանձենու մութ ստվերում սպասում էր միայն նա,
 Ալեքսանին էր նայում որպես երկշոտ եղջերու,
 Ու որսորդի դեմ կարծես կովելու էր միայնակ:

— Հերդ էսօր բարև չառավ...
 Սիրտս չարն է գուշակում:
 Մի թաքցընի, ոտքիս առաջ
 Փորած փոս կա մի թաքուն:
 Նոր փեսա է ճարել հերդ:
 Մի՛ թաքցնի, մի խաբի:
 Մոռացել ես երդումներդ
 Դու Ռուշանի Քարափի:
 Ես եմ միայն հավատարիմ,
 Անդավաճան սիրո տեր:
 Ես եմ միայն երկու տարի
 Քեզ բանակում կարոտել:
 Ես եմ հիշել ամեն գիշեր
 Պահակության ժամերին,
 Հրամանատարն ինձ չի տեսել
 Պոստի վրա քնելիս:
 Լա՛ց մի լինի, չեմ հավատում
 ^ Ես կեղծավոր քո լացին:
 Լավ է՝ գնա կուլակի տուն,
 Իմ թշնամուն միացիր:

Եթե իրոք ինձ ես սիրում,
Արի՛, գնաք կոլեկտիվ,
Արի մեզ մոտ, մեր շարքերում,
Մեզ հետ կռվի՛ր, աշխատի՛ր:
— Ի՞նչ ես ուզում ինձանից,
Ո՞վ քեզ կանչեց, որ եկար:
Օ՛ֆ, կփախչեմ ես տանից,
Տա՛մ գլուխս քարեքար:
Թո՛ղ ինձ, գնա քո բանին,
Ի՛նձ կոլեկտիվ մի տանի,
Ես անկիրթ եմ, անուսում,
Հերն ու մերս չեն ուզում:
Ի՞նչ եմ անում կոլխոզում,
Հազար բերան ու լեզու,
Հազար մարդու ձեռքերին,
Հազար մարդու լուռ գերին:
Ես սիրում եմ միայն քեզ,
Եթե սերս կհարգես,
Ինձ կոլեկտիվ մի տանի,
Ուրիշի կին մի անի...

— Եթե աղջիկ ես ուզում, կոլեկտիվ մի տանի:
Եթե գնում ես, գնա, աղջիկ չունեմ տալու—
Պատասխանեց վերջնական լաչինն Ալեքսանին,
Թախտի վրա ծալապատիկ՝ ծանր ծմրտալուվ:

Ալեքսանը վեր կացավ, տխուր էր, տուն գնաց,
Կրկին հորը համոզեց.
— Ի՞նչ ես ասում, ա հեր...:
Միևնույնն է, դու չգաս, ես կգնամ մենակ:—
Հովասն էլի իր նախկին պատասխանն էր պահել:
— Էս մի տարի թող մնա, էն արջառս լծեմ,
Էն վերի հանդը վարեմ իմ սեփական շթով,
Հարսանիքիդ էլ մի փարշ անուշ արուղ գցեմ,
Էս ավերակն էլ քանդեմ, շինեմ երկու կտոր,
Նոր գալ տարի կգրվենք ամբողջ տնով, տեղով:
Կոլեկտիվն էլ կտեսնենք՝ ոնց է իսկականում:
Խալխը մտիկ է անում... տատանվում է Սողոմ,

Ախար, ջրին չհասած՝ ես ո՞ւր եմ մերկանում:
— Դու չե՞ս ուզում մերկանալ... իսկ ես կմերկանամ:
Քո քեֆը չեմ հարցնի, քեզ նման հեր չունեմ:
Մեր պետություն միջոցով առել ես մի դանա,
Ուր կուլակի հե՛տ գնաս, որ մեզ դավաճանե՞ս:
— Ձենդ կտրի՛, շան լակոտ...— գոռաց Հովաս քեռին,
Բարձրացրեց կատաղած բահի կոթը ձեռի:
Ալեքսանը սառնասիրտ ելավ, կանգնեց ոտի:
Մայրը ճշաց ու թռավ՝ իրեն մեջտեղ նետի:
Բայց բահի կոթը սառեց օդում մի ակնթարթ:
Սպառնազին նայեցին նրանք իրար երես:
Հայրը հետո մեղմացավ ու հանցավոր ժպտաց,
Ու վերևում քարացած հարվածը վար բերեց:

Խիստ վրդովվեց Ալեքսանն ու դուրս ելավ տանից,
Նա հանդիպեց փողոցում ընկեր Գարսևանին,
Գարսևանի հանդեպ նա հարգանք ուներ շատ մեծ
Ու պատմությունը նրան մանրամասն պատմեց.
— Հերս ինձ հետ չի գալիս,
Սեան, ես ի՞նչ անեմ:
Արուսին էլ չեն տալիս,
Եթե կոլխոզ տանեմ:
Հորըս մոտից ես սիրով
Կրաժանվեմ, կգամ:
Բայց չեմ ուզում, չեմ կարող
Թողնել էդ աղջկան:
Խոսք են տվել Բեյբութին,
Կնշանեն շուտով:
Նա կտանի, կմարսի,
Ուշ կլինի հետո:
Կցնորվեմ անպատճառ,
Եթե մի բան չանեմ:
Ցույց տուր ինձ մի ճանապարհ,
Սեան, ես ի՞նչ անեմ:—
Ու Գարսևանը կրկին բացատրեց նրան
Կոլխոզական պայքարի հեռանկարը մեծ:
— Միայն նա կցնորվի մի աղջկա համար,
Ով որ շունի քաջություն նետվել պայքարի մեջ:

Նա է հերոսն իսկական, ով որ չի կարկամի
 Դասակարգային թշնամուն հարվածելու ժամին,
 Ով իր վիշտը կուլ տալով կայաքարի համառ
 Ոչ թե իրեն, այլ ամբողջ ժողովրդի համար:
 Թո՛ղ Հաշինի աղջկան, մենակ արի կոլխոզ,
 Անհաջող սերն անցել է շատ շատերի գլխով:
 Ընկեր չի նա քեզ արժան, կմոռանաս նրան,
 Կծիծաղես դու մի օր քո թշնամու վրա:
 Դու անցել ես բանակից, դու մերվել ես մերոնց,
 Դու պարտավոր ես դառնալ առաջավոր հերոս:—
 Իվ Ալեքսանն ամոթով նայեց գետին: Հանկարծ
 Զայրացավ ինքն իրեն դեմ, Արուսի դեմ, հոր դեմ:
 Նրա սրտում բռնկվեց հպարտությունը հանգած
 Եւ՛ արյունը եռանդով երակներում հորդեց:

ՎԵՑԵՐՈՐԻ ԳԼՈՒԽ

ԿՈԼԽՈՉԱԿԱՆ ԵՐԿՈՒՆՔԻ ԵՌՈՒՋԵՌԸ

Հետզհետե սպստկացավ, հետզհետե աճեց
 Կոլխոզական՝ երկունքի եռուզեռը գյուղում.
 Քաղաքը իր երկաթե բազուկները պարզեց,
 Գծադրեց գյուղի դեմ գալիքը շողշողուն:
 Քաղաքներից սնհամար բրիգադներ եկան,
 Նրանք եկան Կենտկոմից, գործարանից, հանքից,
 Նրանք բերին իրենց հետ գիտություն ու երկաթ
 Ու ձեռ զարկին պատմական բեկման աշխատանքին:
 Նրանք եկան, երկաթի մի անընդհատ հոսանք
 Քաղաքներից շարժեցին դեպ գյուղերը բոլոր,
 Սերմագտիչ մեքենան Չիրուխլուին հասավ,
 Տրակտորները եկան ճամփեքը նախշելով:
 Ու կուտակված, լեռնացած, հարվածային ոգով
 Նրանք գյուղերը մտան, մտան գոմ ու խրճիթ,
 Ուր կապված էր մի արջառ, որոճում էր մի կով,
 Ուր գոմը չէր տաքանում նրա բարակ շնչով:

Եւ նրանց կոչը վառման, նրանց կոչը մի նոր,
Պլանավոր, լուսավոր, բարձր կյանքի մասին
Ընդունում էր գյուղացին սիրով, տատանումով
Ու անձնատուր էր լինում պայծառ այդ երազին:
Այն, ինչ կաթիլ քու կաթիլ սրսկված էր գյուղին,
Կուտակվել էր աննկուն, անդուլ աշխատանքով,
Այսօր բացել էր իր լայն գալարավոր ուղին
Ու հուժկու մի շարժում էր դառել գյուղի կյանքում:
Շարժումն աճեց, վարարեց ու գյուղից գյուղ անցավ
Որպես անդարձ մի ալիք, կազմակերպված հեղեղ,
Արմատախիլ շուռ եկավ մի դարավոր անտառ,
Հազար տարվա կյանքը իր ճանապարհը շեղեց:

Եւ սկսվեց անընդհատ ժողով, ժողով, ժողով,
Միտինգ, զուռնա, նաղարա, միտինգ, ճառ, երգ, պարեր:
Յուրաքանչյուր խրճիթում, յուրաքանչյուր Պողոս
Ընտանեկան համառ ագիտատոր էր դառել:
Եւ զուռնայով, նաղարով, երգով ու ծիծաղով
Մրցականչի գնացին գյուղերն իրար վրա:
Զեռքը զարկեց սեղանին պարտթեկնածու Վաղոն
Ու որոշեց մինչև լույս դառնալ համատարած:
Գյուղսովետի ժողովում հաստատ նա երդվեց,
Որ մինչև լույս Քարաշամբ գյուղը հեղաշրջի
Եւ ստեղծի այնպիսի տոկոսային թվեր, ●
Որ: զրնգան շրջանի ու գավառի միջին:
Նա Շառոյի Մուշեղի դռնից անցավ ձիով
Բերդի վրա արշավող զորավարի նման.
— Քեռի Մուշեղ, հասկացա՞ր, տալիս եմ քեզ մի օր,
Կամ կգրվես կոլեկտիվ, կամ կըջեմ Սևան:—
Իսկ Մուշեղը խոստացավ, առավոտյան դրվա:
Վաղոն նորից պատվիրեց ու արշավեց առաջ,
Ոնց որ անհաղթ զորավար, որ գնում է կովի,
Ճանապարհին քաղաքներ և ամրոցներ առած:
Երեկոյան նա՝ սիրով կնոջը համբուրեց.
— Ել, ձվածեղ բեր, ուտեմ, Անաստասի աղջիկ:
Էսօր գրել եմ տվել դիմում երեսուն վեց.
Բաս... Վաղարշակ կասեն ինձ, ո՞վ կարա ետ փախչի:—
Կինը չանչեց կատաղի.

— Ախորժակդ պահի:

Մի գրվանքա եղ ունեմ, թող երեխին մնա:
Քա՛ր ես կրել ինձ համար, ո՛տ ես տվել բահի,
Թե կով ունես ու ոչխար փարախումըդ ծնած:

— Տո՛, շաշ կնիկ, հասկացի՛ր,— գոռաց «պուճուր» Վաղոն,—
Համատարած է հիմա, սոցիալիզմ է եկել:

Հո չե՛ս մնա չքավոր, մի գրվանքա եղով:
Բոլոր կովերը գեղի քոնն են այսուհետև:—
Կինը շանչեց.

— Չեմ ուզում խալիսի ոչխարն ու կով...
Տեսնես ո՛նց են անիծում, ո՛նց են ուշուճց տալիս:—
«Պուճուր» Վաղոն ծիծաղեց ուրախ և ինքնագոհ:
— Շաշ, վերջապես շիմացար, թե ինչ է սոցիալիզմ:—

Իսկ ոմանք էլ ինքնագոհ նժույգների նման
Պատրաստ էին սլանալ քրտնակալած, անդուլ,
Դրա համար անցնելով հաճախ շափ ու սահման՝
Դիպչում էին քարերին, ճանապարհը քանդում:
Ճանապարհի վրա գալարվում է թշնամին:
Թույն է թափում կատաղի ու թույն է ամբարում,
Փչում է բամբասանքի խելագարված քամին
Քարաշամբից մինչ Հոռոմ և ամբողջ աշխարհում
Պրովոկացիան՝ մի անտես, մի անմարմին սողուն,
Որ խայթում է, պղտորում, թունավորում արագ:
Վարակվում է մինչև իսկ կոմսոմոլիստ Գևոր
Ու հաճախ միտք է անում մոլոր ու անճարակ:
Սակայն որպես կոմերիտ անհարմար է զգում,
Ամաչում է իր մոտիկ ընկերներին դիմել:
Ու զնում է գիշերով Չաթնանց Սանթրոսի տուն,
«Ընդա կոմսոմոլին» կրկնելով իր մտքի մեջ:
— Էս մեր մեջ էլ կմնա, դու հանգիստ կաց, որդի:
Էլ ո՛ր օրվա ազգական, որ քեզանից պահեմ:
Մնացել է մի շաբաթ, ի՛նչ գործ, ի՛նչ կոլեկտիվ...
Անգլիացին է գալու... կապրենք մարդավայել:
Ձի եք ուզում ամեն օր, որ «հընկերը» հեծնի:
Բաս որ առավ ու փախա՛վ: Էլ ո՛րտեղից ճարեմ:
Նա իմ ոտով փախչելու պատրաստություն տեսի՛:
Այ, ցորեն են հավաքում, քաղաքում, ամբարեն:

Դպրդ սկի մի վախի: Տեղդ հանգիստ մնա:
 Եկողները մերոնք չե՞ն... կասեմ կոմիտեին:
 Դու մեզ ի՞նչ ես արել որ... այ, մեզ վառել է նա՛,
 է՛: Ունանք Մանասի, թե մասսային, թե ինձ:
 Էն Ռուշանի Քարափիս աչք են տնկել դրրանք,
 Լետամները սրել են, աքսորել են ուզում:
 Պապենական մուլք է դա: Կյանք եմ դրել վրան:
 Այլունքով եմ ձեռք բերել... ներողություն:
 Ախար, կյանք եմ մաշել է՛: Այ, ձեռներիս մտիկ:
 Ես իմ դռան հոտաղից պակա՞ս եմ աշխատել:
 Ունեցածիցս ավել եմ խեղճին, ժողովրդին
 Եվ օրումբս չեմ դիպել մեծավորի խաթեր:
 Ես աշխատեմ, ես դատեմ, հարստություն դիզեմ,
 Տամ անամոթ ծուլների՞ն, հարբեցողների՞ն:
 Մի տուն լիքը ընտանիք, կարիք ունեմ ես էլ,
 Բող ես ապրեմ ինձ համար, քեզ էլ տամ ձրի:
 Զեռքերըս մի կապի է՛: Թույլ տուր, հարստանամ:
 Բող շատ ցանեմ, շատ հնձեմ, բաժինըդ վերցրու:
 Բող ունենամ, որ տամ է՛: Տար, կե՛ր, որ կշտանաս:
 Ի՞նչ ես ուզում, էլ ի՞նչ ես փետուրներըս ցրում:
 Ոչ նամուս է մնացել, ոչ ահ և ոչ պատիվ:
 Է՛: չե՞ս կարող քո դռան շորանի հետ խոսել:
 «Համաձայն չես, ասում է, ես չեմ էլ աշխատի,
 Բաւորակկոմ եմ, ասում է, քո մալին էլ, քեզ էլ...»
 Էդ էլ կուզ տամ, այ ախպեր, պայմանագիր կապեմ:
 Հիմի էլ թե՛ վարձս տուր, պիտի կոխող գնամ:
 Վեհ՝ առնեմ ոտի տակ, մի տրորեմ, թակեմ...
 Բա ոչխարս, շանորդի, սարում անտե՛ր մնա:
 Ձրի մածնի ու կաթի հո՞ւ ես առել, լակոտ,
 Գեռն բերի կով, ոչխար, դու հավասար լափե՞ս:
 Էսպես էլ լիքը դատաստա՞ն, էսպես զուլո՞ւմ, տրաքոց...
 Բա խանչալը չխրե՞ս փորնումորը թափե՞ս:—

Սանթրոսն այնպես է խոսում, որ կարծես թե Գեռն
 Նրան մոտիկ, դաշնակից, դավադիր է արդեն,
 Որի դեմ ինքն իր սրտի գաղտնիքները զեղում
 Ու քննում է նրա հետ ընտանեկան հարցեր:

«Կոմսոմոլիստն» անճարակ, անօգնական լռում
Ու տալիս է աչքերով հավանության նշան,
Փվ բարձրացնում է միայն թասը գինով լեցուն
Հանուն սիրո, հաշտության ու միության...

ՅՈՒԹԵՐՈՐԻ ԳԼՈՒԽ

ՋՐԵՐԸ ՊՂՏՈՐՎՈՒՄ ԵՆ

Սարգր հյուսել է անկյունում ոստայն,
Իսկ ինքը չկա, սպասում է թաքուն:
Գյուղսովետ: Նստել է ընկեր Գարսեանն
Ու դեմը սեղան, հսկա թղթակույտ:
Դիմումներ են բոլոր նրա առաջին.
Ուրեմն դառել է համատարած:
Ո՛ւր է, չեն դիմել Հովասն ու Լաչինը
Ու էլի երկու, երեք ավարա:
Ջաթնանց Սանթրո՞ւր, նա էլ է դիմել...
Էս ո՞ւմ ձեռագիրն է... գրել է Գևոր:
Ու հայհոյում է Սեանը մտքի մեջ.
«Գետինը մտնի քեզ պես կոմսոմոլ...»:
Սարգր ծածկել է փոշոտ ապակին,
Իսկ ինքը չկա, սպասում է անտես:
Ժպտում է Սեանն արդյոք չմաքրի՞,
Արժե էդ սարգի ծրագիրը քանդել:
Էս ո՞նց՝ փախչում են Լաչինն ու Հովասը,
Կուլակն ուզում է մտնել կոլեկտիվ.
Կարծես թե ջրերը մի քիչ պղտորված են,
Այս ի՞նչ երևույթ է, այս ի՞նչ բարդ հաշիվ...
Սանթրոսը դիմել է... ուրեմն առաջուց
Կոլխոզ է ճամփել նա իր թայֆային,
Այսինքն հին ցեցը ներկա է ներսում,
Ներսից նա կուտի և կը քայքայի:
Իսկ մենք փոխանակ արթուն հսկելու՝
Ջոռում, ստիպում, սպառնում ենք մարդկանց...

Շրջանն էլ կարծես կորցրեց գլուխն
Ու հայտարարեց համատարած:

Մըտածում է դեռ ընկեր Գարսեանը.
Երեք հարյուր երեսուն ընտանիք.
Կարո՞ղ է արդյոք նա տալ պատասխանը,
Ինչպե՞ս նա այս մեծ աշխատանքը տանի:
Սողոն կօգնի՞ որ. նա՝ չի՞ խափանի,
Ինչպես որ արավ զտման ժամանակ:
«Փաստերը» հնարեց ընդդեմ Սեանի
Ու լարեց հազար տեսակ մեքենա:
Մի անգամ խմել է՝ ասին «միշտ է հարբում»,
«Բեղերը խուզել է, որ գեղը քանդի»,
«Եին է համբուրել կոլխոզի արտում»,
«Ետտ է գողացել... մարագի՞ց, հանդի՞ց»:
Հանցա՞նքը: Այո, բեղերը խուզել էր.
Պաշտպանել էր խուզ Բադալին: Այո,
Շրջկոմի նիստում նրան պաշտպանել էր
Ընկեր Սողոյի գլխի վրայով:
Բայց թշվառ Բադալն ախար կուլակ չէր,
Ծնշում էր Սողոն նրան անտեղի
Ու պաշտպանում էր գործկոմի առջև
Իսկական կուլակ հորեղբոր տղին:
Համառ է Սեանն՝ աշխարհ ման եկած:
Պարտաշարքերն անցավ քսան թվին Բաքվում:
Չունի նա գյուղում թայֆա, ազգական:
Իսկ Սողոն թայֆան հեշտ է հավաքում:
Սրան սանահներ է, նրան՝ քավոր,
Մեկին՝ աներձագ, մյուսին՝ փեսացու:
Իսկ շերտավորման գրքում՝ չքավոր.
Ուրեմն պետք է անհաշտ մերկացում:

Թյթերի կուլտ է սեղանի վրա:
Սարդը հյուսել է ոստայն ու չկա:
Մտնում է Սողոն քիթը կարմրած:
Այո, խմել է նա «մեկ ստաքան»:
— Օֆ, մեռանք, Սեան, քնից զարթնեինք,
Տեսնեինք՝ արդեն սոցիալիզմ է գյուղում:

Նստեինք հողեն, մի լավ խմեինք,
 է՛: ոչ աշխատանք ու ոչ էլ ժողով:
 Դասակարգային պայքարն սպանեց մեզ.
 էս կուլակները չեն էլ վերանում:
 Թույլ տան, բոլորին կոլխոզ ընդունես,
 Հարցր միանգամից փակես դրանով:
 Հենց գյուղսովետն էլ իզուր ենք պահում:
 Պետք է, ես կասեմ, ցրել էս տարի:
 Համատարած է, էլ ի՞նչ գյուղսովետ,
 Թող կալեկտիվը գործերը վարի:
 — Շատ ես շտապում դու, ընկեր Սողո,—
 Աւա՛յ! Գարսեանն անշափ հեգնական:—
 Լավ է հրավիրիր ընդհանուր ժողով,
 Շուտով շրջանից ընկերներ կգան:

ՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Գ Լ Խ Ա Պ Տ ՈՒ Յ Տ Ը

Կամրջի մոտ մի անգամ կանչեց կատարածուն.
 — Կենտրոնից մարդ է եկել, ժողով է, հե՛յ, ժողով...—
 Բավական էր՝ և ահա շարժում, իրարանցում,
 Դեպի դպրոցն են հոսում՝ ձյունը կոխրտելով:
 Շտապում են, աղմբկում, ձայն են տալիս իրար,
 Զլունաթաթախ տրեխներն ամուր խփում գետնին,
 Ներս են լցվում, ճխտրվում, ճզմում փոր ու իրան,
 Քիչ է մնում, որ Մուքոն հարեանին հեծնի:

Ու շրջանից գործուղված Սամսոն Սաղաթելյանն
 Իր ղեկուցումն սկսեց տագնապալից խանդով:
 Է՛յ ղեկուցումն էր արդյոք, թե խոսքերի սելավ,
 Հազարամյա լեռների հիմքերը խոր՝ քանդող:
 Բայց հա ձա՛յնն ինչ է անում, խոսում է նա կրկին,
 Խոսում է նա քրտնաթոր, գլխով ու աչքերով,
 Արագաշարժ գծերով իր ձեռքերի, դեմքի:

Վերջին երեք օրվա մեջ նա տասը գյուղ անցել,
Տասը ժողով հրավիրել, ասել է տասը ճառ
Ու գրպանում տասական ցուցակ ու բանաձև,
Նա պիտի վաղ առավոտ վերադառնա շրջան:
Այնպես է նա կրակվում՝ ուզում է նա, կարծես,
Այրել իր թեժ խոսքերով՝ ինչ «հին է ու քարթիւ»,
Բոլոր հարցերը խրթին մի վայրկյանում պարզել
Ու կոմունիզմ կառուցել երկու ականթարթում:
Զեկուցողի մոտ նստած շողում է լուռ Սողոն
Ու ժողովին է նայում հպարտ, աքլորավիզ,
Կարծես թե ինքն է խոսում ալդբան սահուն, ուղորկ,
Ինքն է կարծես խոսողին գիծ, ուղղություն տալիս:
Մի խոր կնճիռ ճակատին, զանգը ջլուտ ձեռքում՝
Խորհրդածում է Սեանն իր մեջ խորասուզված:
Նա քիմիական մատիտով քիթն է կրկին ներկում
Ու դիմումները թերթում՝ անասելի հուզված:
Քեռի Մուքոն կենդանի լսողություն է ուշ,
Զեկուցողին է նայում առաջ թեքված մի քիչ՝
Բերանը լայն բաց արած, որպես ժայռի խոռոչ,
Բեղ-միրուքի անթափանց մացառների միջից:
Իսկ Շառոյան Մուշեղը, սրտում երկու խլուզդ,
Երկու դիմում ունի նա երկու գրպաններում՝
Մեկը կոլխոպ մտնելու, մյուսը՝ դուրս գալու:
Լսում է նա և առայժմ նայում ու համբերում:

Ու վերջացավ ղեկուցումն անդուլ ծափերի տակ,
«Պուճուր» Վաղոն հաղթական՝ քրտինքն ահա սրբեց,
Խաչոն քնից վեր թռավ, ու բռնկվեց ծիծաղ,
Հետո հարցեր թափվեցին վարար կարկտի պես:

Քննության հերթը հասավ ընկեր Ալեքսանին.

— Իմ հերը չի համաձայնվում, — ասավ շառագունած: —

Ես դիմեցի գյուղսովետ, բաժանվեցի տնից,

Գալիս եմ ես, ընկերներ, անկեղծ ու սրտաբաց:

— Թույլ տուր, ընկեր նախագահ, — վեր է ցատկում Սողոն: —

Մի շան գլուխ կա էստեղ, շատ խորամանկ հաշիվ...

Մենք կոլեկտիվ ենք մտել ամբողջ տնով, տեղով

Ու շենք կիսվել, շենք դառել երկու-երեք բաժին:

էդ ո՞նց, ընկեր Ալեքսան, հորդ տանն ես պահում,
Ինքըդ մենա՞կ ես գալիս, շեղավ, ընկեր... հայ հո՛ւ...
Ի՞նչ, դու ուզում ես, ներսի՞ց կոլխոզը մեր քանդես.
Ձի կարելի, ընկերներ, պետք է կամ դեն, կամ դես:
Կամ թող իր հորն էլ բերի, կամ ինքն էլ թող չգա:
Սուտ է, նրանց մեջ կռիվ, բաժանություն չկա:
Գյուղսովետը չի քնած, Սողոն խոտ չի ուտում:
Ձի հաստատվի էդպիսի սարքած բաժան...թյուն:—

Հարցր լուրջ էր չափազանց ու խորամանկ դրված:
Այո, պետք չէր ընդունել կեղծ բաժանվողներին:
Սողոն մեջտեղ էր բերել անհաղթ մի պատրվակ:
Ու ոչ ոք սիրտ չէր անում, ելնի, հակաճառի:
Այո: Ոչ ոք չի ուզում, որ ոչ մի հարեան
Կիսատ մտնի կոռեկտիվ, կամուրջ թողնի ետև:
Լավ է իրար նայելով և միասին գնան,
Մինչև ճամփան հարթըվի, բացվի հետզհետե:
Շատ կան, այո, որ մտել ու մտնում են հիմա
Կոլխոզական հոսանքի ջրապտույտի մեջ,
Հարեանին են նայում, եթե գնում է նա,
Իրենք էլ են սկսում դեպի առաջ դիմել:
Իսկ թե նա տատանվում ու նայում է հետև,
Եւ դառնալու նշաններ թողնում ճամփի վրա,
Նրանք արդեն շտապում են իրենց ափ նետել
Ու ետ դառնալ մի վայրկյան հարեանից առաջ:
Բայց կան մարդիկ, որ անշեղ առաջ են ընթանում՝
Պայծառ աչքերը հառած ազատարար ափին:
Նրանք գնում են ընդդեմ ալիքների, քամու,
Ոչ մի արգելք չի կարող նրանց զինաթափել:
Նրանք են ջուրը ճեղքում, բացում են ճանապարհ
Ու նավն առաջ են տանում համառ ու անզիշող.
Նրանք են այդ մաքառում, քայլում հերոսարար
Թշնամական կատաղի ոռնոցների միջով:

Այն, որ Սողոն առարկեց Ալեքսանի մասին,
Շատ շատերին պղտորեց.

— Ճիշտ է ասում,— ասին:

— Իսկ հորն ինչո՞ւ չի բերում, ինքն է մենակ դիմել...

— Ի՞նչ իմանանք, ինչ անհայտ խորհուրդ կա սրտի մեջ...
 — Երկու մսուր է ուզում հոր խելացի որդին...
 — Որ իր հոր տանն աշխատի, կոլեկտիվում ուտի...
 — Որ էդպես է լինելու, դիմումս ետ տվեք...
 — Ըստ էության...
 — Մի գոռա...
 — Միք աղմուկի, տղերք...
 — Թույլ տուր, թույլ տուր,— տաքացավ տեղից Հովաս քեֆին
 Ու զոռ տվավ սրտմտած՝ լեզվին ու ձեռքերին...—
 Չեք ընդունում իմ տղին... Ի՞նչ ուր եք անպատվում,
 էսպես են, հա՞, ընկերներ, կեղծն ու անկեղծը զատվում,
 Իմ տղին միք ընդունի, առեք ձեր Սանթրոսին,
 Թող կուպակները մտնեն, Սողոն բարեխոսի...
 Ո՞վ է էստեղ հարազատ, ե՞ս, թե Չաթնանց Սողոն,
 Ախար, դեմ է կոլխոզին նա իր ամբողջ ցեղով...—
 Հանկարծ էլի բռնկվեց թայֆայական ոգին,
 էլ ոչ ոքի չի խնայում, չի նայում ոչ ոքի:
 Ու վեր կացավ Գարսեանն, ուժգին զանգահարեց,
 Զանգը խփեց սեղանին ու ջղային գոռաց:
 Տիրեց կրկին լռություն, նա խորը շունչ քաշեց,
 Եվ սկսեց սև աչքերն Ալեքսանին հառած:
 — Ընկեր Սողոն, ընկերներ, ուղիղ է այս հարցում:
 Այո, մենք չենք ընդունի կիսատ եկող մարդուն:
 Միտքը նրա ճիշտ է: Բայց ընկեր Սողոն հետո
 Կոպիտ սխալ կատարեց... ուղիղ տեսակետով.
 Ուզում է նա շարտել այս երիտասարդին
 Դեպի ուղին հետադեմ, դեպի աշխարհը հին:
 Հերը նրա չի գալիս, ծերուկ է նա համառ.
 Աշխարհը չի կործանվի մի ծերունու համար:
 Բայց մենք ունե՞նք իրավունք Ալեքսանին վանել,
 Բախտը կապել պառավին, հին աշխարհին գամել,
 Իս բնավ չեմ կասկածում Ալեքսանի վրա:
 Հայտնի է մեզ, խռովել ու բաժանվել է նա:
 Եվ կոլխոզի շարքերում մեր հետ կապաբարի:
 Չի հեռանա, չի փախչի կիսաճանապարհից:
 Իկել է նա բանակից, մերվել է նա մերոնց
 Իմ նա կարող է դառնալ առաջավոր հերոս:
 Իր հորն էլ նա կրերի առժամանակ հետո:

Քեռի Հովասն էլ կգա անդամաճան սրտով:
Ընկեր Սողոն թող իզուր առարկություն չանի՛,
Մենք կոլեկտիվ կընունենք ընկեր Ալեքսանին:—
Ինչպես ամպոտ երկնքի կախարդական ժաղից
Արևախաշ արտերին առատ անձրև մաղի,
Այնպես ազդեց Գարսեանն ուղեղների վրա,
Փափկացրեց չոր կողերն ու համոզեց նրանց:
Միայն Սողոն չզիջեց, մնաց անդրդվելի
Եվ գիծը իր հաստատուն՝ շարունակեց էլի:
Իսկ ժողովուրդը հուզված՝ անցավ Սեանի կողմն,
Ու Ալեքսանն ընդունվեց ծափով ու աղմուկով:

Երբ աղմուկը դադարեց, կրքերը մեղմացան,
Զրպաններից հանեցին ղուլլասարի թուփուն,
Նիստի վերջին շարքերից Աբելը վեր կացավ:
— Կարելի՞ է երկու խոսք, ընկեր... ներողություն:
Ես իմ կողմից, ընկերներ, պետք է ասեմ անկեղծ,
Որ ընկերը լավ խոսե՛ց, կարգին էլ հասկացանք:
Դեռ չէր անցել մեր գյուղով էսքան գիտուն ընկեր,
Որ մասսայի մեջ տաներ կարգին մի աշխատանք:
Պարզ է ուրեմն, ընկերներ, որ մեր իշխանություն
Ուղում է, որ լա՛վ ապրենք, էրթանք ուղիղ ճամփով:
Մեր միջի մարդն է է՛լի ժողովրդին զցում
Ու գործերը չի վարում իշխանության կամքով:
Այ, կոլեկտիվ հիմնեցինք... Բայց մեր գյուղում կա մարդ.
Որին հրում ենք հեռու՝ «կուլակ է, ձայնազուրկ»:
Բայց, ընկերներ, թույլ տվեք, օրինակի համար,
Մեր տանը տոն է այսօր, կուլակի տանը՝ սուդ:
Ախպեր, ախար ի՞նչ կուլակ... դիմում է նա դրել,
Ող կոլեկտիվ ընդունես, էլ ո՞ւր ես թաքցընում:
Թե չէ՝ ուզում ես հանել թայֆայական վրեժ,
Մարդու վրեն կուլակի անուն ես փակցնում:
— Էդ ո՞ւմ մասին ես այդպես բարեխոսում, Աբել,—
Վրա տվին տեղերից մի քանի ձայն միասին:
— Ինչո՞ւ պիտի չխոսեմ, բերանս չեն կապել...
Խոսում եմ ես հալածված մեր Սանթրոսի մասին:—
Էլի ժողովն աղմկեց: Էլի Հովաս քեռին
Ծրկու ձեռքերը պարզած «թույլ տուր, թույլ տուր» բղավեց:

էլի սաստիկ սաստելով կոմսոմոլիստներին՝
 Ընկեր Սողոն հարցական զեկուցողին նայեց:
 Գարսևանը վեր կացավ, զանգահարեց էլի.
 — Հասկանո՞ւմ եք, ընկերներ, առաջարկում է նա,
 Ուր կոլեկտիվ ընդունենք մորթը փոխած գելին,
 Ուր թունավոր որդն էլի մեր աղիքում մնա:
 «Մեր տանը տոն է այսօր, կուլակի տանը՝ սուգ»...
 Լավ է ասում... Իսկ արդյոք մեզ մոտ սուգ չի՞ եղել,
 եւ կուլակը մեզ համար թափե՞լ է արտասուք,
 Թե՞ մեր սգովն է նա իր հարսանիքը յուղել:
 Իսկ ով խղճում է Չաթնանց, խղճում է կուլակին,
 Հիմար է, կամ դավաճան. կորած ոտով-գլխով:
 Մեր պարտիան, ընկերներ, ունի լուղունգ հակիրճ.
 «Այժին բոստան մի թողնի և կուլակին՝ կոլխոգ»:
 Մենք հասկանում ենք նրանց լեզուն քաղցրավայել,
 Նրանց ստոր տակտիկան, նրանց հաշիվը բարդ:
 Նրանք ներսից են հիմա ուզում մեզ քայքայել:
 Սա դիմում չի, ընկերներ, այլ խորամանկ թակարդ:
 — Դե որ էդպես եք խոսում, դիմումս ետ տվեք,—
 Գռռաց Աբելը մոլի ու տեղից վեր ելավ:—
 Մենք էսպիսի կոլեկտիվ չենք ցանկանում... տղերք,
 Սրանք էզուց բոլորիս կղարձենն կուլակ:
 Կամ գեղովի կոլեկտիվ, կամ ոչ մի կոլեկտիվ,
 Ով որ էսպես է ուզում, թող հետևի նա մեզ:—
 Այսպիսի կոչ ուղղելով հուզված ժողովրդին՝
 Իր համախոհ մարդկանց հետ նա դեպի դուրս դիմեց:
 Վերջին կանգնած շարքերից հետևեցին նրան,
 Նախ առանձին-առանձին, հետո մասսայորեն:
 Անասելի զայրույթով շիկնեց Սաղաթելյանն,
 Ու Սողոն, խիստ շփոթված, ծոծրակը իր քորեց:
 Մուշեղ ամին հնամաշ արխալուղի ջեբից
 Կոլեկտիվից դուրս գալու դիմումը դուրս հանել,
 Վախճանին էր սպասում այս նոր միջադեպի
 եւ նախում էր դեպի դուրս անվճռական, անել:
 Քեռի Մուրօն վեր կացավ սաստիկ տարակուսած
 եւ սկսեց ետ կանչել դուրս զնացողներին:
 — Էս ի՞նչ քամի է մտել սրանց փորերն... — ասաց
 Ու ձեռն ամուր թափ տալով՝ տեղը նստեց նորից:

Մուշեղն էլ իր դուրս գալու թուղթը դրավ գրպան:
 Նա էլ նստեց ու հետո բոլորը նստեցին,
 Դոան մոտից էլ ոմանք տեղերը վերադարձան,
 Ու դրսից էլ մինչև իսկ վերադարձան կրկին:
 Գարսեանը տաղնապով շուրթերն ամուր սեղմած՝
 Դրությունը փրկելու փնտրում էր լուռ մի ելք:
 «Պուճուր» վաղոն Սամսոնին ասում էր խիստ կամաց.
 — Կհավատան նրանք Ձեզ, պետք է հայտարարեք...—
 Եվ Սամսոնը, որ վերջին երկու-երեք օրում
 Չէր հանդիպել այսպիսի ծանր ձախորդության
 Ու իր մասին հաճելի այն միտքն էր գործուրում,
 Թե իր համար արգելքներ և ամրոցներ չկան,—
 Հանկարծակի էր եկել, շշմել էր երկյուղից
 Թշնամու այդ առաջին հարձակումի դիմաց:
 Ուստի պատրաստ էր բռնել յուրաքանչյուր շյուղից,
 Ոնց որ ծովում ալեկոծ՝ խորասուզվող մի մարդ:
 Վերադառնալ պարտված, կոլխոզն արդեն տված...
 Պարտությունը շրջկումի նիստում խոստովանել...
 Ո՛չ. այս միտքը Սամսոնին սարսափելի թվաց:
 Ավելի շուտ ինքն իրեն սիրով նա կսպաներ:
 Նա այդ ինդրում ինքնուրույն այն տեսակետն ուներ,
 Թե գյուղացին ինքնակամ կոլխոզը չի մտնի:
 Պետք է հուպ տալ մի տեղից, մի կերպ վախեցնել,
 Որպեսզի նա իր շիտակ ճանապարհը գտնի:
 Իսկ Գարսեանն ինքն իրեն միտք էր անում արդեն,
 Թե Աբելի հետեից ով հիմա դուրս գնաց,
 Օգնեց միայն կոլխոզին, օդը մաքրեց կարծես,
 Եվ ժողովում իսկական կոլեկտիվը մնաց:
 Դրա համար զայրույթով շրթունքը նա ծամեց,
 Երբ որ Սամսոնն սկսեց պաշտոնական դիրքով,
 Թե ով գնաց կոլխոզից, նա թշնամի է մեզ,
 Թե կզրկենք հողերից ամբողջ ընտանիքով...

Ժամր տասին գիշերվա ժողովն հավիվ փակվեց:
 Ու Գարսեանը խնդրեց, կոմունիստները մնան:
 Դուրս հոսեցին հազալով: Դասարանը պարավեց,
 Եվ սկսվեց դռնփակ ժողովն այն ժամանակ:
 — Զի կարելի, ընկերներ, գործել այս ձևով,—

Հուսթյունը խզելով խոսեց Սեանը թունդ,—
Կամբջիջի գծի դեմ դուրս է գալիս Սողոն:
Մազ մնաց, որ տապալեր մեզ հարազատ մարդուն,
Իսկ երբ որ պետք էր խոսել Չաթնանց Աբելի դեմ,
Ընկեր Սողոն սուս արավ...

— Ի՞նչ է, ընկեր Սեան,—
Գուռաց Սողոն կատաղի,— ես միտքդ լավ գիտեմ,
Մարդկանց կուլակ ես հանում, գովում ես քո թայֆան,
Եվ ինքդ էլ շա՛տ լավ արիր, նպատակիդ հասար...
Կուլեկտիվից քեցիր խելոք միջակներին...

— Գուցե Սանթրոսը Չաթնանց միջակ է քեզ համար,
Դու պատրաստ ես ընդունել դուցե և տերտերի՞ն...
Հարկավոր չեն, ընդհանր, մեզ այնպիսի մարդիկ,
Որոնց Աբելն էր բերել, Աբելն էլ ետ տարավ:
Հարկավոր չէ, որ Վաղոն մարդկանց ահաբեկի,
Բերի զոռով դիմումներ, զոռով համատարած...
Ընկեր Սամսոնը նույնպես արավ կոպիտ սխալ
Հայտարարեց թշնամի այն տատանվողներին...
Չի կարելի, ընկերներ, խոսքով այսպիսի խաղալ,
Թշնամի՞ է միթե մեզ, ասենք, Հովաս քեռին:—
Սաղաթելյանը սաստիկ բարկանալուց շիկնեց.
Ո՞նց թե սխալ կատարեց... ո՞վ է քննադատում...
Նա լուկ սիրում էր լե՞ել գովասանքի շշուկներ՝
«Ո՞նց է խոսում...», «նա հալում, ականջդ է կաթում»:
Դրա համար գրպանի բլոկնոտն արագ հանեց,
Ինչ-որ գրեց բլոկնոտում շինծու համբերովյամբ,
Ծանր լռեց մի րոպե ու խիստ պատասխանեց.
— Ինքդ, ընկեր Գարսեան, առաջ բեր/իր խուճապ,
Համատարածը տալու վտանգ առաջ բերիր,
Սխալըդ դու մոռացար, մե՞զ ես վարկաբեկում,
Բամբասո՞ւմ ես շրջանից եկած ընկերներին:
Հասկանո՞ւմ ես, որ դրան ասում են աջ թեքում:
— Թե ով է աջ, ով է «ձախ», այդ կտեսնենք հետո,
Մենք վաղը դեռ կխոսենք այս բոլորի մասին,—
Պատասխանեց Գարսեանը կոտրված սրտով,—
Աչն էլ, «ձախն» էլ միատեղ այսօր պարզվեցին:

ԻՆՆԵՐՈՐԳ ԳԼՈՒԽ

ՌՈՒՇԱՆԻ ՔԱՐԱՓԸ

Զաթնանց գերդաստանն անհուշ օրերից
Եղել է գյուղում անվանի հարուստ,
Զավթել է նա միշտ լավը հոյերից,
Ցորենն է փթել Զաթնանց ամբարում:
Աճել է ժամի ամպհովանու տակ
Որպես հաստաբուն մի ընկուզենի,
Փռելով գյուղում արմատներն անտառ,
Ծծել է նրա հյութը վայրենի,
Ծծել է արյունն ու կամքը նրա
Եվ աճել փարթամ, կանաչել է միշտ:
Հետո տարածել խեղճ գյուղի վրա
Իր շուքը մուսլի, որպես «հովանի»,
Իշխել է գյուղում որպես տանուտեր,
Որպես մի վայրի կառավարություն:
Արորն է խոնարհ նրան սնուցել
Բաժնական դաժան կարգերի մոժում:
Եվ կուշ է եկել թշվառ գյուղացին
Զաթնանց դարավոր ընկուզենու տակ՝
Աչքերը հառած ավելցուկ հացին,
Իր ողորմելի բախտին անգիտակ:
Ու երբ որ մի օր մի Զաթնանց խաթուն
Նրա քրտինքով լցված ամբարից
Նրան աչ ձեռքով, ձախ ձեռից թաքուն
Տվել է մի բուռ բորբոսնած գարի,
Վերցրել է նա ու հազար բերան
Սրհնել է նրա բարիքներն անանց:
Ու ողջ գավառում հնչել անսասան,
Զընգացել է զիլ անունը Զաթնանց:
Ու «Մայր աթոռին» հայտնի է եղել
Անունը Զաթնանց, հարկը հյուրընկալ:
«Վեհափառն» «անմահ կոնդակ» է հղել,
Օրհնել է Զաթնանց վարուցանքն ու կալ:
Եվ կաթողիկոսն այն «երանելի»

Ուրախ շոյելով միրուքն սպիտակ
Հանգիստ է առել Սեան գնալիս
Չաթնանց անվանի ընկուզենու տակ:
Գյուղական համեստ սրպաս է կերել
Այդ կեղծ ուսմկասերն էջմիածնական
Ու Չաթնանց բազում մեղքերը ներել,
Փառավոր խղճով անցել է Սեան:
Իսկ Չաթնանց Սանթրոսն օրհնված բահով
Ընդհեղ է զլուին աղբատ Ռուշանի
Ու հափշտակել պապական մի հող՝
Սովի մատնելով մի խեղճ լնտանիք:
Մեռել է Ռուշանն այդ վերքից հետո,
Ու ման է եկել Սանթրոսն անպատիժ:
Դատարան մըտած հիսուն մանեթով
Դարձել է չհաս, չենթակա դատի:
Գյուղը վրդովվել, հուզվել է սաստիկ,
Անզոր զայրույթով բռունցքը սեղմել,
Հաշտվել է հետո արյունոտ փաստին
Իվ իր անճարակ զայրույթը մեղմել:
Հետո մոռացել են հեգ Ռուշանին,
Եվ իրենց հոգու փրկության սիրուն
Հաց են ուղարկել «ազիզ օրերին»
Ռուշանի թշվառ, մուրացող այրուն:
Ջավթել են այդպես ու կերել-մարսել
Չաթնանք Ռուշանի հողը բերքառատ:
Բայց հին անունն է վրան մնացել,
Գյուղում ասում են՝ «Ռուշանի Քարափ»:

Գյուղից քիչ հեռու, Ջանգվի եզերքին,
Մի ցից, վիթխարի ապառաժի տակ,
Կար մի գեղեցիկ, մի փարթամ այգի,
Այգու մեջ մի տուն՝ պատերն սպիտակ:
Ռուշանի Քարափն էր այդ անվանի,
Չաթնանց Սանթրոսի ամրոցն անսասան:
Իվ կոխոտելով սավանը ձյունի՝
Նրանք եզերքով կամուրջն անցկացան:
Գամփուր, կատաղի, նրանց դեմ վազեց,
Ջգալով կարծես ահավոր վտանգ,

2

Փայտի հարվածից ոռնաց, դազազեց,
Բայց էլի համառ պայքարի մտավ:
Սանթրոսն ու որդին ելան պատշգամբ:
Ալեքսանն ասես ուզեց բարեկել,
Բայց զսպեց իրեն ու սուր հեզնությամբ,
Գունատված, նայեց պատշգամբն ի վեր:
— Ի՞նչ եք կամենում,— հարցրեց Սանթրոսն,—
Ահից աղճատված ժպիտն երեսին:
— Եկե՛լ ենք մի խիստ կարևոր խնդրով,
Նախ՝ շունդ կապի՛ր,— ասավ Աղասին:—
Հետո հավաքվիր, քսանչորս ժամից
Սուա ու փուա, հանգիստ, գնա Ռուշանից:
Ռուշանի Քարափն այլևս քոնը չի,
Դու ոչինչ չունես Քարափի միջին:
Ու Սանթրոսն ահից իր գույնը նետեց:
— Աքսորո՞ւմ եք մեզ,— մոլունաց որդին:
Նա մոլի բնազդով բահը վերցրեց
Ու անզոր ոխով շարտեց գետին:
— Բահդ քեզ պահիր,— Ալեքը ֆշշաց,—
Վախեցող չկա կուլակի բահից:
Շուտով կհասնի աքսորելու ժամն,
Ու էդ էլ կանենք, շատ միք շտապի:
— Չէ՞ որ ես դիմում տվի կոլխոզին,—
Մրմնջաց Սանթրոսն,— ո՞ւր գնամ, ասա,
էս սառնամանիք ձմեռվա կեռին,
Ո՞ւր եք աքսորում, ընկեր Ալեքսան:
Տո, գալիս եմ է՛, սանահեր Մուքո,
Ինձ էլ ընդունեք, միանամ, եղբայր:
Տամ տասներկու եզ, երեք ձի, ութ կով,
Երկու հարյուր ու երեսուն ոչխար:
Ջաղացն էլ արդեն Փոկն է գրավել.
էլ ի՞նչ եք ուզում սրանից ավել:
Ախար, ո՞ւր գնամ սեփական տանից,
Դե մորթեք, էլի, թաղեք կենդանի:
Ես տուն եմ շինել փափագով բարի,
Այգի եմ տնկել, հասցրել բարի,
Կյանք եմ մաշել է՛, քրտինք եմ թափել,
էդ ո՞նց եք ուզում քրտինքս լափել...—

Պոռթկաց Ալեքսանն անհատակ ոխով
 Ու պատասխանեց դառն ծիծաղով.
 — էյ, Սանթրոս աղա, էդ ո՞նց ես ճառում,
 Ո՞ւմ քրտինքն է ծով՝ լցրել քո առուն,
 Ո՞ւմ պապն է այստեղ քո բահով ընկել,
 Ո՞ւմ հերն է քո այս ծառերը տնկել,
 Ո՞վ է տանջըվել շոգին ու ցրտին:
 Ի՛մ պապը, ի՛մ հերը, ես՝ նրանց որդին:
 Մեզնից ես խլել, ետ տուր էլի մեզ,
 Իսկ դու էլ գնա, աշխատանք ճարի,
 Թող քո էս սիրուն սենյակների մեջ
 Կոլեկտիվը իր գործերը վարի:—
 Ալեքսանն անզուսպ ոխով էր խոսում,
 Խայթում Սանթրոսին և նրա տղին:
 Բեյրութը հուզված կծում էր լեզուն
 Եվ նրանց լսում լուռ ու կատաղի:
 Դիվական ուժով զսպում էր իրեն,
 Որ չվերցնի բահը շարտած,
 Որ անբարտավան Ռուշանանց տղեն
 Իր պապի տեղում չընկնի, թպրտա...
 Եվ զգում էր նա, թողը Ռուշանի,
 Նրա աչքերի թունավոր լեզուն:
 Ու ցույց էր տալիս նրան սուր ժանիք
 Եվ ավելի սուր ու խորն էր խոցում:
 Չար ծղրտոցով դուրս թռավ տանից
 Կինը Սանթրոսի՝ Հոռոմսիմ զալոն,
 Հայհոյեց, թքեց նա Ալեքսանին,
 «Կերած աղն ու հացն» երեսին տալով:
 Ու հետըզհետե խառնվեցին վեճին
 Սանթրոսի հարսներն անգամ չխոսկան,
 Երեխաները շունն արձակեցին
 Ու հայհոյելով, լալով մեջ ընկան:
 Սանթրոսը սաստեց ճայթող պառավին,
 Լեզվանի հարսին ուղարկեց վերև,
 Կապեց շունն էլի ծիրանի ծառին,
 Երեխաներին կարգի հրավիրեց
 Ու հետո խոսեց խռպոտ հուզմունքով.
 — Ընկեր Ալեքսան, Աղասի, Մուրթ,

Երեխաներիս վիզը միք զարկի,
Միք զրկի աշնան ծառերի բերքից:
Ինձ էլ ընդունեք, ապրեմ կոլխոզում.
Սրանից ավել էլ ի՞նչ եք ուզում...
— Ուրիշ ոչ մի խոսք. պապիս Քարափից
Դուք կհեռանաք մինչ վաղ երեկո,—
Կրկնեց Ալեքսանն անզիջող ու բիրտ,
Ու վերադարձան նրանք երեքով:

— Շանսատակ կանեմ ես էս լակոտին,—
Ձշշաց մուկդին Բեյբուլթն ու հնաց:—
Երեկվա գյադեն, տկլորն, անոթին
էս ի՞նչ է դառել, աստված, իմ աստված:
Չաթնանց տան վրա բերան է ծովում,
Վռնդում են մեզ հողից պապական,
Ու ոչ ոքի դին գետին չի փռվում,
Մտիկ ենք տալիս՝ ռեխներին փականք:
էս ո՛ւր ենք հասել, ա՛յ հեր, ա՛յ նանի,
Վայ մեր նամուսին ու գերդաստանին:
էլ համբերելու ուժ ու սիրտ չկա:
Ե՛րբ, ե՛րբ, վերջապես, մեր հերթն էլ կգա,
Քանդենք էս աշխարհն ու կարգը, որտեղ
Մարդը բատրակին «ընկեր» է ասում:
Բատրակ է, պիտի տրորես, մորթես,
Ծիպոտ տաս մոթին օրը քառասուն...

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԴԼՈՒՆ

ԲՈՒՔԸ, ՄԱՐԴԸ, ՄԵՔԵՆԱՆ

Բուքն է պարում օձագալար,
Քամին իր պաղ փողն է ածում,
Ու բքի հետ, բքահալած,
Չայն է տալիս կատարածուն.
— Սե՛րմը բերե՛ք, սե՛րմը զտե՛ք,

Միացրեք մի ամբարճում,
Ամբարդ բա՛ց, քավոր Մուշե՛ղ,
Հորըդ հանի՛, ուստա Հարո՛ւթ...
— Վա՛յ քու անխիղճ Գարսեանին.
Ո՞վ էս բքին հոր կհանի,—
Պատասխանեց ուստա Հարոն
Ու ներս մտավ սրթսրթալով:
— Լա՛վ, սերմացուս, ասենք, բերի՛,—
Պատասխանեց Մուշեղ բիձան,—
Ո՞վ կաշխատի էս ցրտերին,
Դրսումը՝ դառ բուբ ու բորան:
Հրեն Գևոն ու Աղասին
Սերմը նորից ետ բերին տուն,
Սարսափելի ցուրտ է, ասին,
Տրիերն էսօր չի աշխատում:
Համ՝ հարցրի, ասին, Սեանն
Ու Սողոն սերմը չեն զտել:
Տես, եթե կա էդպիսի բան,
Ես չեմ զտի ոչ մի հատ էլ:
Իրենք նստած իրենց բանին՝
Խեղճին են հենց առաջ գցում:
Մինչև Սողոն հոր չհանի,
Ես չեմ հանի... ներողութ՛յո՛ւն:

Սերմազտման կամպանիայի
Ժամկետն արագ անց է կենում,
Մինչ ոռնոցով գազանային
Առանց մի ժամ ընդհատվելու,
Բուքն է գլուղի ճամփեք լիզում,
Ծածկում, ծեփում դուռ ու տանիք:
Ու բամբասանքն հազարլեզու
Թե է առնում բուբ բորանից:
Ու ոչ մի մարդ մոտ չի գալիս,
Սերմազտիչն՝ անգործ կանգնել,
Մինչդեռ գալիս են շրջանից
Տագնապալից հրահանգներ:

Սեանը լուռ կանգնած բակում
Նայում է պաղ մեքենային,
Ամպ է կապել նրա հոգում,
Մի տխրութիւն գերմարդկային:
Անիվներով ձյան մեջ խրված,
Բորանի դեմ հպարտ, մենակ,
Ասես գլուղից վիրավորված,
Միտք է անում այդ մեքենան:
Զգում է նա մեքենայի
Մտքերը սառն ու իմաստուն,
Այդ սեփական մտքերն էին
Տարերքի դեմ կռվող մարդու:

Վերադարձավ կատարածուն՝
Բեղից կախված սառցի լուսան:
— Ախպեր, ոչ ով հոր չի բացում,
Բղավելով հոգիս էլավ:—
Ու հավաքվեց տրիերի մոտ
Բրիգադը լուռ ու հոգնատանջ:
Նրանք մեռան որոնելով,
Ոչ մի հարմար տեղ չգտան:
— Մնաց միայն մի դուռ, մի ելք,—
Ասավ տխուր քեռի Մուքոն,—
Մի ընտանիք տանից հանենք,
Զուլ-փալասով ուղարկենք գոմ,
Կամ թե հողան հարեանի,
Էլ ճար չկա է՛, ինչ անենք,
Սերմազտիչն այնտեղ տանենք,
Գիշեր-ցերեկ թող հա բանի:—
— Ա՛յ, լավ ասավ քեռի Մուքոն,—
Վրա տվին ժիր աղմուկով:
— Լավ եմ ասում, գլխիդ մատաղ,
Բայց ո՞վ հիմի մեզ տուն կտա:—
— Քեռի Մուքոն, քեռի Մուքոն...
— Իր խելացի համոզմունքով:
— Ձեռք միք առնի, շուն, շան որդիք,
Խորհուրդ տվի, խաթա ընկա:
Ա՛յ, Սողոյի տունը մոտիկ,

Ինքն էլ, Սողոն պարտիական:—
Ու Սողոյին դարձան շտապ:
Ջղայնացավ Սողոն սաստիկ,
Հետո ճնշող հանգստությամբ
Ասաց՝ հերն համաձայն չի:
Իսկ Ալեքսանը մի վայրկյան
Պիտի ասեր՝ մեր տուն բերեք,
Նետի նման գլխով անցավ,
Նա բաժանվեց տանից երեկ:
Ձյունը փայտով փորփրելով
Դեռ տատանվում էր Աղասին:
Նա ստիպում էր իրեն զոռով,
Որ խոսք մանա իր տան մասին:

— Հարկավոր չէ ուրիշի տուն,—
Ասաց Ղևոնդ արհամարհոտ.—
Տեղի համար զուր եք վիճում,
Ես տուն գիտեմ հարմար և մոտ:
— Ո՞ւմ տունն է այդ,— դեղնեց Սողոն,
— Իմ սեփական,— պատասխանեց:—
Դե՛, ընկերներ, ի՞նչ եք դողում...
Շուտ մեքենան փողոց հանեք:—
Վրա ընկան տղերք բոլոր
Ու մեքենան փողոց բերին:
Քեռի Մուքոն կարմրելով՝
Ձեռքը դրեց տրիերին.
— Ընկեր Սևան... ներողություն,
Սխալվեցի ես խայտառակ...
Թող մեքենան բերեն մեր տուն,
Ինձ են ասել նախ և առաջ:—
— Վնաս չկա, քեռի՛ Մուքո,—
Ժպտաց Սևանը սիրալիր:—
Դարդ մի անի, լավ է դու քո
Ամբա՛րը բաց, սերմը զտիր:—
— Գնամ, բերեմ, գլխիդ մատաղ,
Ջուրն էլ կընկնեմ քո հետևից:—
Ու ոտքերով ձյունաթաթախ
Վազեց Մուքոն՝ փայտը թևին:

Կեսը հողում, կես հարկանի,
Մի կոնաձև երգիկ ուսին,
Թոնրի վրա հնուց քուրսին՝
էսպես է տունը Սեանի:
Սակայն եթե մի քիչ մնա,
Ու աչքերիդ դեմ լուսանա,
Դու կտեսնես հին քուրսու քով
Հայանտառից գնած վարկով
Մի գեղեցիկ գրասեղան՝
Մոմաշորե սփռոց վրան:
Հետո լենին՝ երկու հատոր,
Վիեննական մի թիկնաթոռ:
Մնում է դեռ մրոտ պատին
Հին հիշատակ մի պլակատի:
Հետո կրկին և՛ պլակատներ,
Ե՛վ նկարներ մեծ դեմքերի,
Որոնք դեղնել են, գունատվել
Հնադարյան թոնրի մրից:
Ու խայտարղետ պլակատներից
Վար, անլյուծում, պատի տակին
Կան կճուճներ հազարամյա,
Տարբեր ձևի ու հասակի:
Եվ նրանց մոտ, որպես տեսիլ
Դեռ չհայտնված մի թշնամու,
Որպես օտար քաղաքացի,
Պազած ահա մի սև պրիմուս:
Թիկն են տվել գոմի դռան
Երկու սաժեն տաշած քարի,
Ու հացենու տասը գերան՝
Գնված էլի Հայանտառից:
Այդ Գարսեանն անցյալ տարի
Դեռ ցանկացավ շինել նոր տուն,
Դուրս գալ խավար գետնափորից,
Ապրել առողջ, մաքուր օդում:
Սակայն, երբ որ մեջտեղ եկավ
Կոխողացման հարցը գյուղի,
Նա թողեց տունը սեփական,
Գերեց նրան այլ մի ուղի:

Ո՛չ թե շինել փոքրիկ մի հյուղ
Խառնափնթոր կույտերում այն,
Այլ կառուցել նոր տիպի գյուղ՝
Պլանավոր, լուսավոր, լայն:

Այդ կիսահարկ խրճիթի մեջ
Ապրում են, կան մեկ-երկու խառն,
Իրար ձուլված, իրարամերժ
Երկու սերունդ, երկու աշխարհ:
Ու նստոտած հին քուրսու քով
Քեռի Բարդոն, Թեգուշ բաջին
Իրենց կրտսեր որդիներով
Սպասում են Գարսեանին:
Գարսեանի կինը, Զարեն,
Քուրսուց հեռու՝ սեղանի մոտ
Նոր կենցաղի ոգուն վայել
Գիրք է կարդում մի անժանոթ:
Մըլավում է բուքը դրսում
Կատվի նման զարհուրելի,
Հուպ են տալիս նրանք քուրսուն,
Եվ պատմում է Բարդոն էլի
Իր հովվական արկածների,
Գայլաբնակ սարի մասին,
Ու խեթ նայում սուտ տեղերին
Չհավատացող ջահել հարսին:
Վեց գայլ արդեն նա սպանել,
Մոտ էր արդեն յոթերորդին,
Երբ Նովրուզի, Ալեքի հետ
Խրճիթ մտավ ավագ որդին.
— Դե՛հ, վեր կացեք քուրսու տակից,
Ինչ կա-չկա՝ տարեք հողան:
Ա՛հեր, դու էլ նաղլդ փակիր
Ու ժանգոտած ուրագդ առ,
Բակի սյունը մի քիչ տաշիր,
Դեմ է առել մեքենային:
Զարի՛կ, դու տունը դատարկի՛ր,
Թող լենիկին մայրս պահի:

Ծերուկ Բարդոն ուրազն առավ,
Պապի տնկած սյունը տաշեց,
Հին էր արդեն, տեղից թռավ,
Քեռի Բարդոն խոր ա՛խ քաշեց։
Ու ներս մտավ այդ մեքենան
Ոնց որ մի սև հսկա մողես։
Մի կարասի ուշքը գնաց,
Հողե թմբից վար գլորվեց,
Կարասի մոտ կանգնած թզուկ
Այն պրիմուսն ուրախ խնդաց,
Նայեց մտնող մեքենային,
Որպես հերոս մի սուրհանդակ։
Հնադարյան թոնրի շրթին
Կանգնեց հտպիտ այդ մեքենան։
Ու կով տալով կումը վշտի,
Պառավը խեթ նայեց նրան։
— Ոտքդ կոտրե՞ր, չգայիր,
Զդիպչեիր կարասիս։
Ա՛խ, իմ կարասը կարմիր,
Վախ իմ կարասն էր ազիզ։
Տեսա՝ գիշեր երազում
Կարասս խաղ էր ասում։
Չար երազ էր, կատարվեց,
Տես, կարասըս կոտրվեց։
Սեան, որդի, դուրս արի
էդ գործերից էս տարի։
Ծա վախում եմ, ես դողում,
Դուշման ունես դու գյուղում։
Սողոյին չեն բամբասում,
Քո մասին են բան ասում։
Ասում են նա է արել,
Նա է կոլխոզ հնարել։
Փսփսում են ամեն տեղ,
Թե կփախչե՞ք էս գիշեր։
Դու էլ գիշեր չես գալիս,
Ծա նստում եմ ու լալիս։
— Նախ և առաջ ես կգտեմ,—
Ասավ Ալեքն,— իմ սերմացուն։—

Ու մեքենան գործի դրին
Որոտմունքով ամենացունց:
Դղրդացին օճորք ու դուռ,
Ու մուր թափվեց առաստաղից:
Եվ որպես նոր մի կյանքի լուր՝
Ջայնը հասավ հեռու թաղին:
Արդեն գյուղում, այստեղ, այնտեղ
Սկսեցին հորեր բանալ:
Շալակներով կամ սելերով
Սերմ են բերում, մարդիկ, կանայք,
Սերմ են բերում, պիտի զտեն
Ու միացնեն մի ամբարում:
Այդ առաջին քարն է արդեն
Մի նոր աշխարհ կառուցելու:

Հորն է հանում քեռի Մուքոն՝
Բեղից կախված սառցի լուլան:
Խորախորհուրդ մտածմունքով
Շունչ է առնում քուլա-քուլա:
Ինքն էլ գիտեր, որ բուքը չէր
Պատճառ, որ նա հոր չէր հանում:
Ինչքան էլ բուքն ուժեղ փչեր,
Կար մի ուրի՛շ, խո՛ր տատանում:
Նա պարզապես սիրտ չէր անում
Սերմը զտել ու միացնել:
Կարծես թե նա մի անանուն
Մազե կամուրջ պիտի անցներ:
Հեշտ էր գրվել թղթի վրա,
Բայց հերթը երբ հասավ գործին,
Մարդիկ նայում էին իրար
Եվ սպասում մեկի փորձին:

Եվ երբ Մուքոն իր սերմացուն
Ջտեց, ապա ամբար տարավ
Ու դատարկեց պարկը լեցուն
Համայնական շեղջի վրա,
Ասես պոկվեց կրծքից մի բան
Ու խառնվեց ցորենի հետ,

Ասես ընկավ մի ճանապարհ,
Որ չի տանի էլ դեպի հաս:
Եվ նա երկա՛ր, երկա՛ր նայեց
Իր ցորենի հատիկներին,
Մինչև հասավ ուրիշի հերթ,
Եվ ուրիշի սերմը բերին,
Լցրին վրան... էլի, էլի...
Ու ծածկեցին հետզհետե...
Կարծես ճամփորդ մի սիրելի
Անհետացավ սարի հտև:

Գործում է դեռ շափշափելով
Սերմազտիչ այն մեքենան,
Ու հավաքված նրա բոլոր՝
Ձայն են տալիս ջահել կանայք:
— Նովրուզ, դու էլ կոլխոզ մտար...
Նովրուզ, էլ ո՞վ աղջիկ կտա
Մոլլի համար հարամ հային,
Տերտերի մոտ՝ թյուրք տղային:
— Նովրուզ, աղջիկ ունենայի,
Աստված վկա, քեզ կտայի.
— Նովրուզ, գիշերն երազ տեսա,
Դու կդառնաս հայի փեսա:—
Ժպտում է լուռ Նովրուզը քնջ
Ու պտտեցնում կոթը շարխի.
Տեսնում է նա աչքի առաջ
Դեմքն աղջրկա տրտմաթախիծ:
Ա՛խ, անիծված մոլլան խառնեց,
Թե չէ Ասլին նրան կառներ.
Ասավ՝ ով որ կոլխոզ մտնի,
Հայի աղջիկ պիտի գտնի:

Դրսում դեռ բուքն է վրնջում,
Բքի երգով գյուղն է քնած,
Բայց շափշափում է դեռ անդու,
Սերմազտիչ այդ մեքենան:
Աշխատում են նրանք հերթով՝
Շրկու սիրող երիտասարդ,

Երկու ազգով, բայց մի սրտով
Ու միևնույն գործով հպարտ:
Առավոտյան դադարեցին,
Սերմազտիչն էլի կանգնեց,
Չնայած պարզ եղանակին՝
Սերմը չէին բերում այլևս:

— Ընկեր Սողո, սերմդ բեր է՝,
Պարապ կանգնած է մեքենան:
Չէ՞ որ պիտի գիշեր-ցերեկ
Բանի, որ ~~մենք~~ հո շմանք:
Կեսը գյուղի նայում է քեզ,
Պրովոկացիա կա քո մասին:
Ինքդ պիտի գործով հերքես,
Որ թշնամին չբամբասի:
— Ի՞նչ են ասում, ընկեր Սեան:
— Ի՞նչ են ասո՞ւմ... Ի՞նչ չեն ասում:
Այ, ասում են այսպիսի բան,
Իբրև թե դու քո սերմացուն
Չես ուզում տալ կոլեկտիվին,
Վախենում ես անգլիացուց,
Որ իբրև թե ասել ես դու,
Թե՛ կոլխոզը կքանդվի:
— Ընկեր Սեան, սուտ են ասում,
Կուպակային ասեկոս է:
— Սուտ են ասում... դու սերմացուն
Միացրու, որ շխոսեն:
— Ծիշտ է,— ասավ գործարանից
Գյուղ գործուղված ընկեր Կարոն,—
Ցուրաքանչյուր մի կոմունիստ
Պետք է լինի ղեկավարող:
Բայց ո՞նց պիտի ղեկավարես,
Քո անձնական օրինակով:
Թե չէ ինչքան խելոք ճառես,
Չի հավատա ճառիդ ոչ ով:
— Հերը նրա համաձայն չի,—
Հեգնեց մի կոմերիտական:—
Սերմի համար հորը կանչիր,

Սա իրավունք չունի այնքան:—
Նայեց Սողոն խորը դաղված՝
Ամբարտավան էդ լակոտին,
Բայց բան չասավ, միտքը շաղված
Ու գլխիկոր ելավ ոտքի:
Ու դուրս եկավ ընկեր Կարոն,
Որ ստուգի, անձամբ նայի
Ջտած ցորենը ամբարում,
Վիճակը նոր մեքենայի:

ՏԱՄՆՄԵԿԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Պ Ր Ո Վ Ո Կ Ա Ց Ի Ա Ն

Մեծ բազմություն է հավաքվիլ գյուղամիջում.
Մեկը լալիս է սրտաճաք և անիծում:
Տղերքն արագ դուրս վազեցին գյուղսովետից
Դեպի այն կողմն, ուր ամբոխն էր ժողովրդի:
Տեսան՝ Սանթրոսն իր ծղրտան պառավն առած,
Իր մեծ հարսի, երկու փոքրիկ թոռների հետ
Գյուղամիջով անց է կենում լալահառաչ,
Պատառոտուն ու կեղտակուր շորերի մեջ:
Հաց են լինում մայր ու մանուկ սրտապատառ,
Լալիս են ձեն-ձենի տված հարս ու կեսուր,
Ձների մեջ, ժողովրդով շրջապատված,
Վեր են կալել անասելի մի վայնասուն:
— Այ, գեղացիք, հարևաններ,
Ունե՞ք, յարաբ, խիղճ ու հոգի.
Ձեն հանեք է՛, ի՞նչ եք կանգնել.
Այ, ուղտս ձեր դռան շոքի:—

Շշմեց Կարոն էս խաժամուժ տեսարանից
Ու հարցական նայեց ընկեր Գարսևանին:
Գարսևանի սրտով ցասման սարսուռ անցավ,
Ուզեց խոսի, սակայն Սանթրոսը մոտեցավ:

— Դու, քաղաքից եկած ընկեր,
 Գլխիս վրա տեղ ունես դու.
 Զարըդ տանեմ, ոտքդ՝ ընկնեմ,
 Ման եմ գալիս քեզ պես մարդու
 Բան չթողին, գլխիդ մատաղ,
 Ոչ հաց, ոչ շոր, ոչ կարկատան:
 Երեք հոգով տունս մտան,
 Լիրբ, անզգամ խոսքեր ասին,
 Զահել հարսի պատվին դիպան
 էն Ալեքսանն ու Աղասին:
 — Սուտ ես ասում, այ հալւոր,—
 Բացագանչեց քեռի Մուքոն:—
 Ես նրանց հետ էի չէ՞ որ...
 Շատ խելացի արարմունքով
 Քեզ մասսայի վճիռն ասին:
 Զեռ շտվին ոչ քո հարսին,
 Ոչ ասացին ավելորդ խոսք,
 Ոչ էլ առին տանից մի շոփ...
 էհ, Ռուշանի Քարափն էլ հո
 Ապուպապիդ սահմանը չէ՞ր:
 Մենք վեր կալանք գեղի կամքով,
 Գեղի մասսան էր որոշել:—
 Աղմըկեցին ամեն կողմից, իրար անցան,
 Զարթնեց էլի թայֆայական քնած ոգին,
 Կապը կտրեց հազարլեզու պրովոկացիան,
 Ու հին ու նոր վեճերն իրար խառնըվեցին:
 — Լավ են արել, աչքը հանել...
 — Սովոր էր նա մարդ սպանել...
 — Պրովոկացիա է ուղղակի...
 — Քշել գյուղից լիրբ կուլակին...
 — Ո՞վ է կուլակ... կուլակ գտար...
 — Կովդ կերար... կոլխոզ մտար...
 — Ո՞վ թույլ տվեց Ալեքսանին...
 — Մարդ աքսորի ու թալանի...
 — Սոցիալի՞զմ է կառուցում...
 — Պապի վրեժն է լուծում...
 — Լաչինն աղջիկ շտվեց...
 — Խելավով է խեղճ տղեն...

Ով պաշտպանում էր, հավատում Ալեքսանին,
Արդեն զտել ու միացրել էր սերմացուն:
Ով չէր հանել ոչ մի հատիկ իրա տանից,
Նա Սանթրոսին էր պաշտպանում, հավատ տածում:
— Ես կը քննեմ հարցը սրա,— ասավ Կարոն:—
Իսկ մինչև այդ, այս գեղեցիկ արև օրով,
Երբ կատաղած բուքը հագիվ է հանդարտվել:
Պետք է շտապ հորեր բանալ, սերմը զտել:

— Ի՞նչ եք զոռում մասսային...
— Հեռագիր կա Մոսկվայից...
— Որ կոնկրետիվը ցրեն...
— Կոմբիջին էլ վրեն...
— Խաբում եք, մեզ թալանում...
— Սերմն ու տավարը տանում...
— Եթե Սողոն չի ստում,
— Ինչո՞ւ ինքը չի զտում...
— Սողոն զտում է հրես...
— Չես հավատում, գնա՝ տես...

Աղմկելով գնացին դեպի Սեանենց տուն,
Ուր անդադար սերմագտիչն էր աշխատում:
Սողոն, իրոք, իր սերմացուն զտել, հեղտ
լցրել հատուկ իր ջվալները սեփական,
Դարսել էր ջոկ ու քիմիական հաստ մատիտով
Բուրդի վրա գրել՝ «Սողո Աբրահամյան»:
— Իմ անունս էլ գրեք վրեն,—
Բացագանչեց Մուշեղ ամին,—
Որ էդպես է, սերմս բերեմ,—
Ու դուրս թռավ ոնց որ քամի:
— Եթե անուն կար գրելո՞ւ...
Բաս էդ ոնց եք իմս խառնել:—
Խաչոն հուզված շարժեց գլուխն:
— Է՛... էս չէլավ, բարեկամներ...

Ու Գարսեանը հոգնած ու տրտում
Ուշ երեկոյան տուն վերադարձավ:
Դեռ զնգում է զիլ այրվող գլխում
Աղմուկը կանանց որպես սուր մի ցավ...

Նիստը խառնեցին մի ականթարթում
Ու հարձակվեցին գոմերի վրա:
Ոնց էին իրար մազերը փետտում,
Ոնց էին գոռում, գզգզում իրար...
Աբելի կինն էր՝ ամենից առաջ
Եզնեռն արձակեց, քշեց դեպի տուն:
Այդ նա էր, նա էր բարձրաձայն գոռաց.
«Կորչի կոլեկտիվ, խաբեբայություն»:
Ներս մտան հուզված Նովրուզն, Ալեքսանն,
Մուքոն, Աղասին, Վասոն ու Շիրինը:
— Է՛հ, ընկե՛ր Կարոն զուր գնաց շրջան,
Նա կհամոզեր կատաղածներին:
— Ո՞նց կհամոզեր, ընկե՛ր Աղասի,—
Ինքներս ենք անում,—հեզնեց Գարուհանը,—
Ես հազար անգամ Վաղոյին ասի,
Ախպեր, մոռացի Սիրիր ու Սևանը,
Իսկ նա թուրին՝ «Սիրիր կքշեմ»,
«Կամ կոլխոզի հետ, կամ կուլակների»:
Իսկ կատարածուն՝ էն կակազ Նշեն
Տներն էր մտնում՝ շամփուրը ձեռին
Եվ խուզարկել էր նա մի քանի տուն.
«Թթթաքցրել եք, հհհհհհհ սերմացուն»:
Նաչոյի կինն էլ տվել էր գլխին
Ու դուրս էր արել կակազ երեխին:
— Ո՞վ է թույլ տվել,— ասում եմ,— Նշե՛,
Որ դու շամփուրով տուն ես խուզարկում:
«Բըբ... բրիգադն է էդպես որոշել:—
Ալեքսանը թե՛ «ոչ մի որոշում»:
«Ես որոշեցի,— ասում է Նշեն.—
Բա՛ հերիք չէլա՞վ կուլակին լսեն»:
էսպես է ահա մեր դիսցիպլինան:
էսպես, ընկերներ, հեռու չենք գնա:
Կուլակն էլ հիմա հենց այդ է ուզում,
Որ մասսաները մեր դեմ գրգռի.
Հենց այդ էր այսօր կանանց ժողովում
Մտքեր խմորեց, բորբոքեց կռիվ:
— Հապա Սողոյի ջվալները կե՞ղծ...
Դարձել են գյուղում մատի փաթաթան,—

Պոռթկաց Ալեքը.— Եվ ինքն էլ ճղեց,
 Երբ ծղրտալով կանայք գոմ մտան:
 Եվ եթե Զարեն վրա չըհասներ,
 «Պուճուր» վաղոյին կբրբրեին:
 Ոնց էին ճշում... Վա՛յ անիծվածնե՛ր...
 Բայց լավ են լսում ընկեր Զարեին:—
 Մութոն բորբոքվեց.
 — Ինչքան էլ ճշան՝
 Մենք մեր կոլեկտիվն առաջ կտանենք:
 Աբելի կինն էր էն փուշ կշկշան,
 Կանանց գրգռել ու խելքից հանել:
 Բայց եթե ինքը՝ տղամարդն ուզի,
 Իհարկե նա իր կնկան կհամոզի:
 Բաց ո՞նց է, իմ կինն աղմուկ չի հանում,
 Շատ էլ տանր հա չեմ-չում է անում:
 — Ախր, Աբելին ո՞վ հանեց միջակ,—
 Մղկըտաց Շիրինն ու կանգնեց ոտի:—
 Ոսկի ունի նա թաղած, մսրի տակ,
 Զարչին է հերվա, ախար, շանորդին:
 Հիմի թաքցրել, միջակ է գրվել
 Ու կոլեկտիվի աղիքը խրվել,
 Որ թունավորի, քանդի, քայքայի,
 Բերի, դուրս հանի իր հին թայֆային:
 Բա՛ արաղ ծախող ժամհարի Սամսոն,
 Բա՛ մուֆթա-խորակ զուռնաչի Զաքին,
 Բա՛ Զաթնանց Գեոն, էն էլ կոմսոմոլ,
 Այ, թե ովքեր են խորթ ու խառնակիչ:—
 — Զէ, պետք է, Սեան, կատարել զտում,—
 Պնդեց Վասակն իր տեսակետն էլի:—
 Ավելի լավ է՝ մնա հարյուր տուն,
 Բայց իրար կպած ու անգրգվելի:
 Եվ նստած անքուն մինչև լուսաբաց՝
 Քննում են զտման թեկնածուներին:
 Բորանն է դրսում ոռնում դազազած՝
 Զարկվելով փայտե խարխուլ դռներին:

ՊԵՏԱԳՏՈՒՅՏԻՅ ՀԵՏՈ

«Ափսո՛ս, էս ինչ գրեցիր... ընկեր Ստալին...—
Սաղաթելյանը մտքում կրկնում է վշտահար,—
Դե արի, ետ նահանջիր և այս դժվար պահին
խոստովանիր ամեն տեղ սխալ, սխալ, սխալ...»
Ու լրագրի ճակատից նայում են խստադեմ
Այն անողոք հողվածի տառերը վիթխարի:
Եվ ի՞նչ վիրավորական վերնագիր է գտել՝
«Գլխապտույտ (հասկացա՞ր) հաջողություններից»:
Եվ տեսակետն է հայտնում նա շրջկոմի նիստին:
Պետք է, այո, նահանջել բոլոր կոլխոզներում,
Իսկ Կենտկոմի ցույց տված սխալների մասին:
— Պետք է ասել, որ դրանք մեզ չեն վերաբերում:
Չենք կատարել այնպիսի քաղաքական սխալ,
Որ բանաձև ընդունենք, բարձր խոստովանենք.
Չի կարելի ընկերներ, սխալի հետ խաղալ,
Մարդկանց անունը գցել ու ոտնակոխ անել:
Սակայն չունեն Սամսոնի կարծիքը շանցկացավ,
Իր սխալները բոլոր շրջկոմը այսպանց,
Եվ ակտիվի ժողովում կարդացին բարձրաձայն՝
Ազգանունը Սամսոնի հոլովելով անվերջ:
Ու Կենտկոմը ետ տարավ նաև քարտուղարին՝
Նրա մի շարք կոպտագույն սխալների համար,
Նա հրահանգ էր տվել գյուղեր մեկնողներին՝
«Քսանչորս ժամվա ընթացքում... համատարած»:
Ու հեռագիր էր տվել ընկեր Ստալինին,
Իսկ պատճենն էլ ուղարկել Հայաստանի Կենտկոմ,
Թե հասել ենք ու անցել Վոլգյան շրջաններին
Ալափարսի չքավոր միջակների կամքով...

Ու գյուղերում, ժողովներում,
Փողոցներում, թերթերի մեջ
Կոլխոզական կյանքն է եռում
Հոսանքներով իրարամերժ:

Նոր է ծնվել ընկեր Սողոն,
 Ու դեկն առել գյուղսովետի.
 — Ես էն գլխից էի գոռում,
 Զոռ մի անեք ժողովրդին:
 Քոնն է հիմա քավոր Մուշեղ,
 Տար ու կթիր կովդ ծնած:
 Ընկեր Ստալինն է որոշել՝
 Ուզես, կոլխոզ էլ չես գնա:
 — Հա, քեզ մատաղ, ընկեր Սողո,—
 Գոչեց Մուշեղն ուրախ-ուրախ:—
 Հենց շրջանում ունեմ բողոք
 էդ Մանասի տղի վրա:
 Նա էր, ախպեր, ոտքի հանել,
 Ո՞վ էր թե չէ կոլխոզ եկող:
 Մի գիր գրիր, գործկոմ տանեմ,
 Նախագահին աւամ իմ ձեռքով:
 Գարսեանն է, ասեմ պիտի,
 Գլխապետույտ ու քյալլագյոզ:
 Իսկ մեր Սողոն ժողովրդին
 Զի էլ ասել՝ արի կոլխոզ:
 Պիտի ասեմ՝ Գարսեանին
 Գյուղից քշեք, որ դինջանանք:
 Հերիք զոռով կոլխոզ տանի,
 Խելքից հանի խալխի կանանց:

Եվ անհանգիստ գյուղի վրա
 Գիշերը սև նստել է թուխս:
 Վիճում են դեռ քնահարամ
 Ամեն գյուղում, թե խրճիթում:
 — Աչք ես տնկել հա՞, սրիկա,
 Մանասի շոռ Գարսեանին:—
 Տեղաշորում կնկա վրա
 Ֆշշում է դեռ Մուշեղ ամին:—
 Կանայք էն օր ասլան դառած
 Իրենց տավարը ետ բերին.
 Իսկ դու, սարսաղ, տանդ սառած,
 Աչք ես տնկել խալխի ձեռին:
 — Ի՞նչ ես ուզում, մարդ, ինձանից,—

Աղաղակեց կինն անհամբեր:—
Իս կոլխոզից դուրս չեմ գալիս:
Քո տավարն է, դու գնա, բեր:—
Մուշեղ ամին խիստ վրդովված՝
Տվեց քացով կնկա կողին.
— Հարամ լինի էսպիսի հաց,
էսպիսի կին ու անկողին:
Վեր կրկենամ, կաղնի փետով
Վողնումողդ կտրորեմ:
Խնքս բերեմ հա՛, որ հետո
Կուլակ ասեն ու աքսորեն...
էգուց կերթաս և, հասկացա՞ր,
Ծղնեբոս ետ կպահանջես:
Կասես, մարդս շատ է հոժար,
Խնքս, կասես, համաձայն չեմ...

Գոմի հողում, ամբողջ գիշեր,
Բուխարիկի կրակի մոտ,
Քեռի Մուքոն խոսում է դեռ,
Ու համոզում համառ կնոջ:
— Լսի՛ր, ա՛ գիժ, դարդ մի անի,
Թող բացատրի ընկեր Կարոն.
Իս քեզ ախար հո չե՛մ տանի
Կորստաբեր ճանապարհով:
Խաբե՛լ եմ քեզ երբևիցե,
Կամ ցանկացե՛լ եմ վատը քո.
Խնքս ախար մի բան գիտեմ,
Գործ եմ անում համոզմունքով:
Այ, է՛ս մարդուն հանել բանից,
Ուղարկել են մեզ օգնելու:
Լսի՛ր, թող նա պարզաբանի,
Թե կոլեկտիվն ինչ է բերում:—
Ու փալասի վրա նստած
Մուքոյի պես ծալապատիկ
Ընկեր Կարոն ուրախ ժպտաց,
Պատմեց հետո հատիկ-հատիկ:
Պատմում է նա մաշի՛նի մեծ,
Աղատարար ուժի մասին,

Բանվորը երբ նրան տիրեց,
 Ու կոխողնիկ նոր գյուղացին:
 Պատմում է նա միասնական
 Աշխատանքի ուժի մասին,
 Որ գետերին նոր հուն կտա,
 Ձև ու իմաստ ապառաժին:
 Մինչ ուշ գիշեր պատում է նա:
 Ու հարևան երկու կանայք
 Համառ նստած լսում են դեռ՝
 Տալով կրկին ծանոթ հարցեր.
 — Ասա, ախպեր, չի՞ կարելի
 Տրակտոր, մաշին էլի բերեն,
 Տան չքավոր-միջակներին
 Ու կոլեկտիվ էլ չգրեն:
 — Ձէ, այ քույրիկ, մի տրակտոր
 Գեղի կեսին հերիք կանի:
 Էլ ո՞նց կարա մի չքավոր,
 Թեկուզ միջակ, գլուխ հանի:
 Նա կամ անգործ պիտի գցի,
 Ու ժանգոտի պատերի տակ,
 Կամ թե մարդկանց շահագործի
 Ու մի տարում դառնա կուլակ:
 Էդ հո չէլավ. ընդհակառակ
 Մենք վերացնում ենք կուլակին,
 Որ մեր ազատ հողի վրա
 Մարդը մարդուն չպլուկի:
 Ձէ, մեքենան մեծ, միացյալ
 Տնտեսություն է պահանջում,
 Հող է ուղում լայնածավալ,
 Որ մեջ ընկած բանի անդու:
 — Էհ, ձեր լեզվին չենք դիմանա,
 Մարդիկ եք դուք ուսումնավոր:—
 Ու հարևան երկու կանայք
 Դուրս են գնում ծիծաղելով:
 — Ձէ,— կրկնեց Մազթաղ ազին,—
 Ես կոլեկտիվ չեմ գա, ասի:
 Ձեմ բաժանվի իմ կթանից,
 Կբաժանվեմ ես քեզանից:—

Ու վեր կացավ շորորալով,
Տեղաշորեր բերեց տնից,
Փռեց վառվող բուխարու քով,
Որ բեզարած հյուրը քնի:
Ու դիմացի թախտի վրա
Փռեց ուրիշ մի անկողին:
Փչեց ուժգին նավթի ճրագն
Ու մեկնվեց մարդի կողքին:
— Ասում ես բա, կրածանվե՞մ,—
Հանաք արավ Մուքոն մթնում:—
Ահ ես տալիս ցերեկն անվերջ,
Գիշերն էլի տեղըս մտնում:—
Կռպերը պինդ փակեց Կարոն,
Որպեսզի շուտ քունը տանի:
Բայց ցնորում է խավարում
Դղիժը խուլ՝ գործարանի...

Կողն է քերում Հովաս քեռին,
Շուռ-մուռ գալիս տեղաշորում,
Բայց չի գալիս քուն աչքերին,
Ջար մտքեր են գլուխը փորում:
Դրսում շներն աղմկալից
Մարդահաչ են տալիս անվերջ:
Ո՞վ է գյուղում գնում, գալիս
էս ցուրտ ու մուժ գիշերվա մեջ:
Ջարագուշակ է մարդահաչն
Ուշ գիշերվա՝ էդ շների:
Հիշում է՝ տաս տարի առաջ
էսպես էին հաշում էլի,
էսպես էին էլի հաշում
Ու կատաղած վրա տալիս:
Ամբողջ գիշեր գեղամիջում
Մարդիկ էին դնում, գալիս,
Երբ մութուլուս առավոտյան
Գյուղը հանկարծ գրավեցին
Ու կատաղած տներ մտան
Երկու Արամն Արզաքյանդցի:
Տներ մտան, ումը գտան,

Հայհոյելով դուրսը բերին,
 Ձեռքը զոռով տվին հրացան
 Ու գոռացին.
 — Հայդա, կոի՛վ...
 — Ո՛ւմ դեմ, ախար, ա՛յ ձեզ մատաղ,—
 Հարց էր տալիս Հովաս քեռին .
 Ու երերում քնաթաթախ՝
 Անդիական զենքը ձեռին:
 — Գնա՛ կռվի՛ր, ու կիմանաս,—
 Ֆշշաց Աբելն ու կատաղի
 Ձին մտրակեց, առաջ գնաց,
 Մարդ հավաքի վերի թաղից:
 Ու Դդմաշեն դեռ չհասած,
 Դեռ չկռված, ընկան դերի:
 — Այստե՛ղ բերեք,— էն մեկն ասաց,—
 էդ խմբապետ դաշնակներին:—
 Լաւ՝ որ Սեանն այնտեղ էր դեռ
 Քուլշեիկյան էդ բանակում:
 — Թողե՛ք, դնան,—ասավ,—ախպե՛ր,
 Ես սրանց լավ եմ ճանաչում:—
 Ու բռնեցին միայն մի ոռւս
 Օֆիցերի և Աբելին:
 Իսկ Արամներն արդեն վազուց
 Իրենց խմբով ճղել էին:
 Իսկ Ժողովուրդը մոլորված
 Անվնաս տուն դարձավ նորից:
 Ազատ շնչեց քեռի Հովասն
 Ու կարծես նոր ծնվեց մորից:
 Նույն մարդիկ են էլի այսօր
 Ուշ գիշերով գնում, գալիս:
 Ինչ-որ մի շար, խորհրդալուր
 Լուր է դրսում շրջում էլի:
 Ջաթնանց Բեյրութն ու շիլ-Մանուկն
 Էս մի շաբաթ չլուղում չկան:
 Ասում են՝ կապ են պահպանում
 «Կենտրոնի» հետ դաշնակցական:
 Նախկին զոռքեք փրփրակալած
 Ման են գալիս շրջաններում:

Ամբողջ գիշեր շնահալած
Գնում, գալիս, զենք են բերում...
Կոլխոզի դեմ են կատաղել,
Մի օր հանկարծ վրա կտան...
Հովաս քեռին փշաքաղվեց՝
Նախագգալով մի մութ վտանգ:
Ծթե վտանգ էր սպառնում
Սովետական իշխանության...
Միակ որդին կոլեկտիվում...
Խնքը ակտիվ Փոկի անդամ...
Ծթե հանկարծ էն ատելի
Հայկ-Արամները գան, տիրե՞ն...
Կը զոոբանան Չաթնանք էլի,
Քարափն էլի ետ կը խլեն:
Գուցե իրեն և իր որդուն
Հենց քարափում տան, սպանեն,
Վարկով առած եզը թոսուն
Դեռ չծլած՝ գոմից հանեն:
Սև տեսիլ էր... ու շների
Մարդահաշը սիրտ է քերում:
Վեր է կենում Հովաս քեռին,
Նստում էլի տեղաշորում...

Ցուրտ է, ցուրտ գիշեր: Մութ համատարած,
Ու ժայռերը ցից, մոտիկ ու հեռու,
Առնում են հաճախ մարդու կերպարանք,
Որ մոտենում է կարծես խավարում:
Ու գյուղի ծայրին՝ ամուր փաթաթված
Ոչխարի մաշված մուշտակների մեջ,
Ճամփի եզերքի փոսերը մտած,
Սպասում են մի խումբ կոմսոմոլիստներ,
Հայացքները սուր բևեռած մթին,
Հրացաններն ամուր սեղմած ձեռներում,
Սպասում են նրանք Չաթնանց Բեյբութին,
Որ սողոսկում է մթին լեռներում:
Գնացել է նա, որ զենք ձեռք բերի,
Այդ մասին գյուղում բոլորը գիտեն,
Պիտի զենք ունի, որ կուլակներին

Զինի արշավող սոցիալիզմի դեմ:
Պահել է, գիտեն, երեսուն հրացան,
Զեն կարող, սակայն, հաստատել վրան:
Ուրեմն պետք է բերելիս բռնել,
Հենց դրա համար նրա մոլթ ճամփան
Բռնել են մի խումբ կոմսոմոլիստներ:
Բայց չի երևում մթնում դեռ ոչ ոք,
Ցից, մարդանման ժայռերից բացի:
Քամին է միայն սառցահար պոչով
Սարից արշավում որպես վայրի ձի:

Իսկ այդ ժամանակ Քարսևանն արթուն,
Համպի լույսի տակ, լարված ու լռին,
Երկրորդ երկաթե հոգվածն է կարդում՝

«ՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԿԵՐ ԿՈՂՈՋՆԻՆՆԵՐԻՆ»:

Քուրսու շորս բոլոր ճառագայթաձև
Փռած շորերը հողե հատակին,
Հաստ վերմակներում ամուր փաթաթվել,
Քնել են վաղուց երեսա ու կին:
Օրորոցի մոտ քնել է Զարեն,
Բայց նա չի ուզում խանգարել նրան,
Զարուհին այսօր շատ է բեզարել
Կանանց ժողովում հուզված, փրփրած:
Ու ծերուկ Բարդոն խոմփում է բամփ,
Մեկ-մեկ քնի մեջ քամակը քորում:
Կարդում է Սևանն անդուլ տքնոթյամբ,
Հետն էլ ձախ ոտով մանկանն օրորում:
Կարդում է համառ, և նրա մտքում
Նորից է բացվում պայծառ առավոտ,
Սև ամպի նման կասկածը ցնդում,
Ժպտում է ուղին կրկին արևոտ:
Կարծես Քարաշամբ գյուղումն է գրել
Արթուն առաջնորդն այդ տողերը կուռ,
Կարծես Սևանի մտքերն է սրել,
Դարձրել ավելի հստակ ու մաքուր:
Ո՛վ է դուրս գնում, իրավ, կոխոզից.
Ամենից առաջ, մեռած հոգիներ՝
Զուռնաչի Զաքին, հայտնի պարագիտ,

Ի՞նչ նրա նման մի շարք Զաքիներ:
 Ի՞նչ ո՞ւմ «կորցրեց» կոլեկտիվն էլի,
 Խորթ, թշնամական մի քանի մարդու,
 Թաքնըված կուլակ Չաթնանց Աբելին,
 Որ կուլակների ճամփան էր հարթում:
 Այո, գնացին Մուշեղն ու Գարասն,
 Անաստաս բիձան ու Վարդան ամին:
 Ի՞նչ չի կարելի անվանել սրանց
 Ոչ մեռած հոգի, ոչ էլ թշնամի:
 Նրանց հեռանալն, այո, կոլխոդի
 Կորուստն էր ծանր, բայց ոչ մշտական:
 Մենք նրանց այսօր դեռ չենք համոզել,
 Վաղը կհամոզենք, և նրանք կդան:
 Այո, այս մաղումը չէր լուկ շարիք,
 Այլև բարերար, կազդուրիչ մաղում:
 Սպասի՛ր, Սողո, նա՛ կծիծաղի,
 Ով որ ամենից վերջն է ծիծաղում:
 Ու Սևանն արթուն լամպի լույսի տակ
 Հափում է թերթի սյունակները նեղ,
 Ի՞նչ նրա գլխում դառնում է հստակ,
 Վառվում են որոշ՝ մտքեր ուղիներ:
 Վաղը նա կելնի ու գինված արի՝
 Մեծ առաջնորդի պայծառ մտքերով
 Շարժումն անսասան կղեկավարի,
 Կկազմակերպի վճռական գրոհ...
 Ու հետզհետե քունը ծանրաթև
 Գոցում է կապտած կոպերը նրա:
 Ու Գարսեանը քնում է արդեն՝
 Գլուխը դրած հողվածի վրա:
 Ի՞նչ այդպես հիմա ամեն խրճիթում,
 Ամեն ժողովում լարված ու լուին
 Այդ հռչակավոր հողվածն են կարդում՝
 «ՊԱՏԱՍԽԱՆ ԸՆԿԵՐ ԿՈԼԽՈՋՆԻԿՆԵՐԻՆ»,
 Ամեն մի բանվոր, ամեն կոլխոզնիկ,
 Ամեն կոմունիստ, կոմերիտական
 Կրում է այն իր գրպանում հիմի,
 Որպես գրոհի կանոն ու պատգամ:

Այդ ժողովրդի փորձն է հարաճուն
Կենսոկոմի հզոր ձեռքում կուտակվել,
Այդ մեր լենինյան հանճարն է հնչում
Ընկեր Ստալինի ձայնում պողպատե:
Այդ ժողովրդի հանճարն է հստակ,
Որ որպես հսկա, պայծառ լուսարձակ
Լուսավորում է պայքարի ուղին,
Հավատ ներշնչում պայքարողներին:

ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԲՈՌՆՅՔՆԵՐԸ ՍԵՂՄՎՈՒՄ ԵՆ

Գիշեր է մութ, համատարած:
Փռվել է գյուղը ցիր ու ցան
Բերդի ետև, բերդի առաջ,
Գետի ամբողջ երկարությամբ:
Այդ մութ ու խուլ գյուղում հիմի
Չափում են լուռ միաժամանակ
Իրենց ուժերը՝ թշնամի
Երկու աշխարհ, երկու բանակ:
Ու հավաքված Արեւի մոտ
Տերերը հին՝ Քարաշամբի
Դեռ սպասում են լուռ, թունոտ,
Սուրկեցի տեր-Արշակին:
Կլանչում է շունը մթնում,
Դուրս է վազում Արեւն արագ,
Տերտերն ահա ներս է մտնում՝
Ձեռքին լեցուն ատրճաճակ:
Միրուք չունի, նոր է սափրել
Ու բաց նամակ հղել թերթին,
Թե չի ուզում էլի խաբել
Աշխատավոր ժողովրդին:
Պահել է մութ սրտում, սակայն,
Ատելու թունը թունալի,

Ու գայլի պես հալածական՝
 Նա գյուղից-գյուղ ման է գալի՝
 Շրջում է նա այժմ թաքուն,
 Որպես դաշնակ քարոզախոս,
 Իրենց ուժերն է հավաքում
 Տերտերական իրա ոխով՝
 Այն աշխարհի դեմ, ուր շորանն
 Ու տավարածը գրիչ առել,
 Ու երեկվա հեգ ու անբան
 Ոչխարն ահա գայլ է դառել...
 Նա հառաչեց վշտով խորին,
 Լոեց կրկին շարագուշակ,
 Հետո նայեց ներկաներին
 Դավադրական զգուշությամբ.
 — Բարդ է, աօի, անհուսալի՝
 Կենտրոնից նոր լուրեր չկան:
 Խաբում են մեզ ու շեն գալիս
 Բանակները եվրոպական:
 Հիմա ամեն տեղ էլ անվերջ
 Խառնակություն է, ճգնաժամ.
 Այդ նզովյալ բուլշևիկներն
 Ահ են լցրել ամեն աշխարհ...
 Հայ հո՛ւ... մինչև նա իր տան մեջ
 Մահ ու երկյուղ, տա իր ցեցին,
 Մինչև հասնի և օգնի մեզ
 Մեր խաչապաշտ եվրոպացին,
 Սրանք իրենց այս նզովյալ
 Կոխոզն արդեն կամրացրենն,
 Կառնեն մեզնից տավար ու մալ
 Ու մեզ գյուղից կթոցընեն:
 Հետո էլ ոչ մի տերություն
 Սրանց ուժին չի դիմանա,
 Թեկուզ հանեն Մոսկովի դեմ
 Ինչքան կուզեն զենք ու բանակ:
 Վայ մեր օրին, վայ աշխարհին,
 Վայ հավատին, եկեղեցուն,
 Եթե սրանք ամրացրին
 Համառարած կոխողացում:

Ոչ, եղբայրներ, կյանքի, մահի
Օրհասական ժամն է հասել:
Հավատացյալ Ծվրոպային
Մենք շատ իզուր ենք սպասել:
Նա կհասնի այն ժամանակ,
Եթե մերոնք ապստամբեն:
Ելքը այսօր այս է միակ,
Էհնտրոնն է այս հրահանգել:

Շունն է հաշում դրսում էլի,
Լըռում է նա փշաքաղված:
Արեւն զգուշ դուրս է գալիս
Մարդ է կարծես մթնում պահված:
— Է՛յ, հեռացիր, ի՞նչ ես անում,
Ո՛ւր ես եկել ուշ գիշերին,
Ինչո՞ւ ես շան հերսը հանում...
Վա՛հ, դո՞ւ ես էդ, Հովաս քեռի,
Վախեցրրիր, այ հալեոր,
Ես էլ ասի, զող է եկել:
Ինքս էլ վաղուց քնած եմ խոր...
Էս շո՞ւնն ինչու չեմ արձակել:
— Ծս ես, Աբել, մի վախենա,—
Պատասխանեց Հովաս քեռին...
Ու բնազդաբար հտ-հտ գնաց՝
Պինդ սեղմելով փայտը ձեռի:—
Շները փիս հաշում էին,
Չէի կարող հանգիստ քնել:
Ասի՝ չլինի՞ ուշ գիշերին
Գող է նորից մտնում տրներ...
Դե, ես գնամ, գիշեր բարի,
Գուցե մի կերպ լուսացրնեմ:
Գիշեր չէլավ, էլավ տարի,
Այ անիծված, անքո՛ւն շրներ...—

Իսկ այդ ժամանակ գյուղի դպրոցում
Գյուղկոմբջիջի և կոմսոմոլի
Խառն դռնփակ ժողովն է ծեծում
Մարտական հարցերն էլի ու էլի:

Բոլորն են ներկա՝ Սողոմոնից բացի:
«Հիվանդ եմ» ասավ ու ելավ դնաց:
Ու կոմսոմոլից Գեո'ն ներկա չի,
Չնայած նրա հարցն էլ է դրված:
Եվ ընկեր Կարոն խոսում է, կարդում,
Պարզում պատասխանն ընկեր Ստալինի՝
«ՍԵՐ և կռիվի Վիջն հաշտութուն
Ձի եղել երբեք և չի էլ լինի»:
— Ընկերներ՝,— ասավ Սեանը կրկին,—
Կոլեկտիվն է այն հայելին հստակ,
Որ ցույց է տալիս երեսն ու հոգին
Ամեն մի մարդու թե կեղծ, թե շիտակ:
Հարցը Սողոմոնի վաղուց է հասել,
Կոլխոզո'ւմն է նա, թե կոլխոզում չի:
Դրսում, մասսային, մի բան է ասել,
Այլ բան է երգում ներսում բշիշին:
Բայց փաստ է համառ. նա իր սերմացուն
Դեռ մինչև այսօր պահում է իր տանն,
Իսկ հայրը գյուղում սուտ է տարածում,
Թե Ռուսաստանում կոլխոզներ չկան:—
Եվ ընկեր Կարոն ամփոփումն արավ.
— Վաղը երեկոյան, դռնբաց նիստում
Միջակ-չքավոր մասսայի առաջ
Անարգ, խայտառակ, նրանց քշել դուրս
Կոմպարտշարքերից ու կոմսոմոլից:
Ճիշտ է, ընկերներ...

— Ճիշտ է... — Շողացին

Աչքերը լույսի մշուշում դեղին,
Ու պատի վրա հզոր դողացին
Ձիգ բազուկների շվաքները խիտ:
Մի ստվեր երերաց պատուհանի մոտ,
Հետո անվստահ դուռը թակեցին:
Տիրեց ժողովում լուռթյուն, շփոթ,
Մեկը ձեռ տարավ ատրճանակին:

— Ես եմ, տղերք, դուռը բացեք,
Գաղտնիք ունեմ կարևոր:—
Ու ներս մտավ Հովաս բիձեն՝

Գույնը թռած, հեալով:—
 Աբելի մոտ ժողով արին
 Ողջ կուակներն էս գիշեր:
 Ախր, ես մեր սովետական
 Իշխանության դեմը չեմ:
 Դեզի տակին տափ եմ գալիս,
 Շնչակտուր աչք ածում,
 Տեսնեմ, մեկ-մեկ դուրս են գալիս
 Ու ծլկվում տնետուն:
 Ինքս տեսա, իմ աչքով,
 Հայկարամենց Երամին,
 Հետո անցավ Չոփուռ Սերոն,
 Վազ էր տալիս ոնց քամին:
 Իմ աչքով տեսա Չաթնանց
 Բեյբութի հետ տերտերին,
 Մեկն էլ դեպի Սուլակ գնաց
 Ու հրացան կար ձեռին:
 Երեկ գյուղում ասում էին...
 «Սարեկներ կան սարերում...»
 Նրանք իրենց լանդիտներին
 Հենց «Սարեկներ» են ասում:
 Իսկ Բեյբութին տերտերն ասավ.
 «Սարեկների մոտ գնա,
 Հենց որ ցանքի վախտը հասավ,
 Վրա տվեք անխնա...»—
 Որ լսեցի, սիրտս թռավ,
 Մազերս բիզ կանգնեցին,
 Ու վազ տվի ոնց որ կրակ՝
 Մերոնց ասեմ էդ մասին:—
 Վերջացրեց Հովաս քեռին,
 Ու լռեցին մի վայրկյան:
 Ռեուլերի կոթը ձեռին՝
 Կանգնեց Կարոն հաղթական:
 —Կեցցես,— ասավ,— ընկեր Հովաս,
 Կատարեցիր պարտքդ դու:
 Քուն չենք մտել դիրքը թողած,
 Մի վախենա, գնա տուն:
 Ասում ես, թե կուլակային

Սարեկներ կան սարերում...
Հավ... Մենք էլ մեր բազեններին
Սար կուղարկենք բերելու:
Մի վախենա, Հովա՛ս քեռի,
Կուխո՛ղ արի, հաշտվիր:
Շուտ կորսա սարեկներին
Անվախ բազեն բուշեիկ...

Եվ Հայկարամենց Երամը կուլակ,
Հենց որ տուն եկավ գաղտնի ժողովից,
Ցորենը թաղեց գոմում, ձսրի տակ
Ու խաշ հանելով մտավ անկողին:
Երբ լսեց մոտիկ շների կլանշ,
Սիրտը թռթռաց ահից մի րոպե:—
Ու Ֆշշաց մթնում.— «հաց չեմ տա նրանց.
Կվառեմ թաքուն, Զանգուն կթափեմ...»:
Ժողովից հետո Աբելը մի պահ
Կանգնած մութ բակում՝ նայեց դեռ ու դեն:
Ավտոյի սուլոցն ականջին դիպավ,
Նա շունն արձակեց, ներս մտավ հոդեն:
Ճմլվող սրտով լսեց... ահա նա —
Մոտեցավ աղմուկն ավտոմոբիլի:
Որոշեց փախչել, գյուղից հեռանալ:
Բայց շունը բակում ոռնաց սոսկալի...
Էլ ուշ էր արդեն... դուռը թակեցին,
Նա դուռը բացեց խելագար դողով:
Ահավոր մի լույս դիպավ աչքերին:
Մեկը մոտեցավ նազանի փողով:
— Այստեղ այս գիշեր եղե՛լ է ժողով...
— Սուտ է... ինձ վրա հնարել են շառ...
— Սո՛ւտ է... կտեսնենք,— ասավ նա ոխով,
Իսկ այժմ նստի՛ր, ընկնենք ճանապարհ...—
Ու ավտոն կաշուն ցեխերի միջով
Դուրս ելավ գյուղից արագ, մանեման.
Հույսերը մթնում վառ շողացնելով
Երկու ահագին սրերի նման:

ՏԱՍՆԶՈՐՍԵՐՈՐԴ ԳԼՈՒՆ

ԽԱՓԱՆՎԱԾ ՀԱՐՍԱՆԻՔ ՈՒ ԽԱՓԱՆՎԱԾ ԶՈՒԹ

— Հա-հա-հա-հա... համատարած կոլեկտիվ...

— Հի-հի-հի-հի... քամատարած կոլեկտիվ...

Սանթրոսի տան կա հարսանիք էս գիշեր.

Շրրիկացին իրար թասեր ու շշեր...

— Համատարած կոլխոզը ոնց քանդվեց...

— Երեքհարյուր երեսունից... ութսունվեց...

— Քավո՛ր Մուշեղ, դու էլ հասնես մուրազիդ,

լավ դուրս եկար կոլխոզական երազից:

— Խնամի՛ Լաչին, արա՞ղ ածեմ, թե գինի,—

Ջայն է տալիս Սանթրոսը՝ լուռ Լաչինին,—

Խմեն՛ք, ախպե՛ր, Մայր Աթոռի սուրբ կենաց,

Կարճ է ճամփեն, շատ գնաց, քիչ մնաց,

Խնամի՛ Լաչին, խմելուց ետ մի՛ մնա,

Կուլակ ես, դե՛, կուլակի հետ էլ գնա՛...

Շատ եմ խնդրում մեր «կոմսոմոլ» Գևոյին,

Որ մի երգով խնամու թասը գովի:

Գևոն կարմիր գինու թասը դատարկեց,

Բարձր հազաց, բուկը մաքրեց ու երգեց.

— Դու կուլա՞կ ես — ոտի տակ ես,

— Դու միջա՞կ ես — հրեշտակ ես:

— Չքավո՞ր ես — թագավոր ես,

— Կոմսոմո՞լ ես — դատավոր ես,

— Կոմբջի՞ջ ես — ամեն ինչ ես,

— Թղթակի՞ց ես — գիտակից ես...

Հարբած ուստան զարկեց ուժով նաղարին...

— Ո՞ւր է հարսը...

— Հա՛րսը...

— Հա՛րսը...

— Թող պարի՛:

— Հա՛րսը... չկա՛...

Հարսը գնաց...???

— Լիկկայա՛ն...

— Ի՞նչ...

— Լիկկայա՞ն...

— Սուա...

— Փեսացուն չիմանա...

Ու ներս մտավ, գույնը թուած, փեսացուն,
Սրտից արյուն, դեմքիցը թույն է կաթում.
Սարսուռ անցավ հարսանիքի սեղանով,
Միսը մնաց տերտերի բաց բերանում:
— Դուք քե՛ֆ եք անում, կենաց եք ճառում...
Բայց մեզ քե՛ֆ, պատի՛վ, կյա՞նք է մնացել.
էլ ինչո՞ւ համար ապրենք աշխարհում,
Շուռ տվեք գինին, ելեք, գնացե՛ք...
Երեկ խլեցին Ռուշանի Քարափն,
էսօր էլ տարան լիրբ նշանածիս,
Չաթնանց Բելքութին արին խայտառակ,
Կշանքս ու պատիվս առան, գնացին:
Վաղը կխնդա Ռուշանանց գյադեն,
Կոլխոզում «կարմիր հարսանիք» կանի.
էս ի՞նչ էր՝ արիք, ա՛յ հեր, ա՛յ ադե...
Վա՛յ մեր նամուսին ու գերդաստանին...

Հյուրերն անշարժ՝ ձայն ու ծպտուն չեն հանում,
Միսն է սառել տեր Գալուստի բերանում,
Միայն պառավ մերն է մոռում ու լալիս
Ու խորտակված որդուն ահով սիրտ տալիս.
— Գնաց լիկկայան, կդառնա, բալա,
Գնաց վարժուհուն հարսանիք կանչի,
Շորն էլ պսակի չի հագել հալա,
Գնա ետեից, խնամի լալին:
Ես էն վարժուհու ազիզը թաղեմ,
էդ նա է հարսիս արել խելքահան:
Սպասիր տեսնե՛մ, մի տեղ պատահե՛մ...
Ես ցույց կտամ էդ լրբին լիկկայան:

Ռուշանանց Հովասը տրտում նստել է դռանը,
Մտածում է լուռ իր անել վիճակի վրա:
Արջառը հրեն խամացել, ընկել է գոմում,
Անցնում են օրերը, իսկ արտը խոպան չորանում:

«Ի՞նչ չու՞թ լծող ես, Հովաս, դու ով ես, հերգ՝ ազ-
 Կմեռնեսս, Հովաս, սեփական չթի կարոտով.
 Դու ի՞նչ ես ուզում էդ մենակ, մատղաշ արջաոխից:
 Կարո՞ղ էր արջառն ահագին եզան հետ վարի:
 Անխիղճ Աթաբեկ, սրտիդ մուրազին հասար,
 Դաւար արջառին քշեցիր եզիդ հավասար:
 Արջառիս գլուխը կերար, ու հրեն գոմում
 Պառկած է անշարժ, ոչ խոտ է ուտում, ոչ խմում:
 Հովաս, էն արջառն է՛լ քեզ եզություն չի անի,
 Ինչո՞ւ չմտար կոլխոզ, ընկար մի կողի:
 Ե՛րբ էիր կյանքում սեփական չու՞թ հանել տանից,
 Դու ինչո՞ւ զրկվեցիր որդուց ու հարեանից...»:
 Ռուշանանց Հովասը տրտում նստել է դռանն,
 Ու միտք է անում, վարանում իր խելքի վրա:
 Շուրջը գարուն է: Հողի մեջ արյուն է եռում:
 Կոլխոզն աշխատում է գյուղի մոտիկ արտերում:
 Տասներկու գութան վարում են հրեն թև թևի,
 Արագ սեանում են արտերն իրար ետևից:
 Դաշտը լցված է նրբանց ուրախ աղմուկով,
 Հըրեն հորովել է երգում Մաղաքանց Մուգոն:
 Ռուշանանց Հովասը տրտում նստել է դռանն
 Ու միտք է անում իր մենակ վիճակի վրա:
 Երկինքը կապույտ: Շողշողուն կեսօր է գարնան:
 Գյուղում հարսանիք է: Ուրախ զլզլում է զուռնան:
 Լաչինի աղջիկն են տանում Չաթնանց Բեյբութին:
 Քո հարսն էր, Հովաս, ո՞նց, ախար, քեզնից խլեցին:
 Այսօր առավոտ քո որդին լալով հանդ գնաց:
 Քո խեղճ պառավի մուրազն իր սրտում մնաց:
 Էս ի՞նչ էր բերի արեհս, հե՛յ, նամարդ Լաչին,
 Որդուս մորթեցիր, աղջիկդ տվիր կուլակին:
 Պահանջում էիր, որ որդիս կոլխոզ չգնար,
 Գիտակից որդին նոր կյանքի հոգին չիմանար:
 Աղբյուրից գալիս ես տեսա չինար Արուսին,
 Սիրուն էր որպես քարափի բոլորած լուսին:
 Նայեց երեսիս, արտասուք շողաց աչքերում,
 Այդպես են թերթերը վարդի՝ շաղով շողշողում:
 Է՛խ, Չաթնանց Սանթրոս, հորիցըս Քարափն առար,
 Ինձնից էլ հարսիս խլեցիր ու որդուդ տարար:

Կոլխոզը Քանափրդ խլե՛ց, հալալ վայելի,
Քո օրն էլ հասել է, Սանթրոս, վերջն է քո ելի:
Ծս էլ կգնամ կոլխոզ, Սանթրոս, տրաքի,
Նս էլ եղ կածեմ քո սիրտը վառող կրակին:
Կմտնեմ կոլխոզ, թող որդիս մենակ չամաշի,
Սարի պես կերթամ, կ'կանգնեմ որդու քամակին...»
Ռուշանանց Հովասը մենակ նստել է դռան
Ու միտք է անում, շարանում թշնամու վրա:

— Ընկեր Աստղիկ, ընկեր Աստղիկ, դուռը բաց...—

Ու ներս մտավ Արուսն ասես ցնորված:—

— Ընկեր Աստղիկ, սիրտըս թրով են կիսել...

Մի նեղանա... քեզ մոտ մնամ էս գիշեր:—

Ուսուցչուհին շուտ հասկացավ աղջկան,

Դուռը փակեց, հրավիրեց նստելու:

Պատուհանից նայեց, տեսավ՝ մարդ չկա,

Ու շողշողաց ուրախ հուզմունքն աչքերում:

— Լա՛վ արիր, Արուս, իմ հերոսուհի,

Դե լաց մի լինի, մի՛ վախենա:

Ծս գիշեր-ցերեկ քեզ ասում էի՝

Ծղիր համարձակ, անկախ, անահ:

Դու իզուր թողիր ուսումըդ կիսատ,

Դու իզուր թողիր Ալեքսանից:

Դու իզուր դառար կուլակի տան զարդ,

Թանդ հասցրիր մինչ հարսանիք:

— Ա՛խ, ընկեր Աստղիկ, դու չգիտե՞ս, որ

Գեղջուկ աղջկա վիճակն է շար:

Դու ի՞նչ կանեիր, եթե ամեն օր

Մերըդ անիծեր, հերդ փնշար:

Ասում էին՝ քեզ կոլխոզ կտանի

Ու բաց կթողնի մի օր հետո,

Կոլխոզում չկա սեր ու ընտանիք,

Բոլորն իրար հետ կապրեն հերթով:

Չէի հավատում սուտ-սուտ խոսքերին,

Որոշում էի փախչել տանից:

Բայց մեկ էլ, կարծես, հավատում էի

Ու փախչում էի Ալեքսանից:

Ես միշտ եմ ասել Չաթնանց Բեյբուֆին,

Աչքերը չռած էդ դախ հզան:
Նա շարժե նրա մատի ճկույթին.
Քառասուն Բեյբութ՝ մեկ Ալեքսան:
Իմ հասակակից աղջրկերք բոլոր
Մտան կոմսոմոլ, դպրոց մտան:
Իսկ ես կմնամ կորած ու մոլոր,
Զխոսկան մի հարս կուլակի տան:
Ծա չէի գնում, ինձ զոռով տարան:
Անցնելիս տեսա Ալեքսանին,
Կանգնած էր մենակ դպրոցի դռանն
Ու ձեռքին մի թերթ՝ նայում էր ինձ:
Նայեցի թաքուն քողի արանքից,
Միծաղ կար ասես սև աչքերում:
Ա՛խ, էդ րոպեից կորցրած հանգիստ,
Նրան եմ անվերջ մտաբերում:
Շուտով կատաղած կզան, կտանեն...
Զեմ ուզում գնալ Չաթնանց տղին...
Ես թույն կխմեմ... ես ինձ կսպանեմ...
Օգնի՛ր ինձ, օգնի՛ր, Աստղիկ:—

Կիտած նոթերն ամպոտ մթին ձորի պես
Հաշինը լուռ, մռայլագեմ մտավ ներս:
Թշվառ աղջիկն ահից գրկեց վարժուհուն,
Նայում է հոր ահեղ դեմքին ու դողում:
— Էս ո՞ւր ես եկել, աննամուս աղջիկ,
Ի՞նչ կարկուտ բերիր ծեր գլխիս վրա:
Հարսը պսակի սեղանից փախչի՞
Ու հորը շինի գեղում մասխարա՞...
Դե՛, առաջ ընկիր գնանք, սևերես,
Ասա՝ գնացիր վարժուհուն բերես:
Թե չէ ձենը, հա՛, գեղում զրնգաց,
Այ դու, դժոխքի դեից վեր ընկած:
— Զեմ ուզում, հայրիկ, չեմ գնա մարդու,
Խշո՞ւ ես զոռում, ինչո՞ւ ես մորթում:
— Զենըդ, անզգամ, էդ ո՞նց չես ուզում:
Ո՞վ է քեզ տվել էդպիսի ուսում:
— Է՛յ, հաշին ամի, ձեռըդ քեզ քաշի,
Էս քու իմացած ժամանակը չի:

Չէ՛: Կարող զոռով աղջիկ տալ մարդու
Թ'նչ իրավունքով տունս մտար դու:
— Ինչ իրավունքով... այ լիրբ անզգամ,
Դու ես խելքահան արել աղջըկան,
Ասում ես հալա «ինչ իրավունքով»...
Լեզուդ կկտրեմ... մազերդ... հումմ... քու...
— Ձեռդ քեզ քաշի, ասում եմ, ծերուկ,
Իս չեմ վախենում քո փնչոցներից:
Մեր սովետական ազատ կարգերում
Դու կի՛ն ես թակում, փնչո՛ւմ ես նորից:
Հասկանո՞ւմ ես, որ քեզ թանկ կնստի,
Հենց որ ցանկանամ դիմել դատարան:
Հո կարիք չունե՛ս երկար հանգստի
էս գարնան օրով, դեռ ցանքըդ չարած:
Տղին չի սիրում, չի ուզում գնալ,
Ու ոչ հեր, ոչ մեր, ոչ իշխանութուն
Չեն կարող նրա կամքին բռնանալ,
Զոռով տալ նրան չսիրած մարդուն:
Մեկ դո՛ւ, շուգեցիր՝ չմտար կոլխոզ,
Ո՞վ քեզ ստիպեց, փնչաց, սպանեց:
Ինչո՞ւ ես ուզում աղջկադ գլխով,
Աղջկադ սիրով առևտուր անել:
Եվ չե՛ս ամաշում, մատաղ աղջըկադ
Տալիս ես տարիքն առած այդ մարդուն:
Ավելի լավ չէ՞, որ թեկուզ աղքատ,
Բայց երիտասարդ լինի փեսացուն:
— Ես աղջիկ չունեմ, որ տամ շներին,
Տանեն արուրից ու պատվից հանեն,
Տանջեն օրական յոթ մարդու ձեռին,
Իսկ հորը ճնշեն, ձայնագուրկ անեն:
— Ո՛չ, Լաչին ամի, իզուր ես խոսում,
Բամբասանք է զուտ ստից դուրս ընկած:
Դու ե՞րբ ես տեսել՝ մեկը կոլխոզում
Ծուռ աչքով նայի ընկերոջ կնկան:

Լաչին ամին սիրտը լեղի, անհամբեր,
Ուռուցչուհուն լսեց, լսեց ու ամպեց:
Ու մի կաթիլ ամպերից վար գլորվեց՝

Քեզ-միրուքի թա՛վ անտառում մոլորվեցի:
Նախ նայելով լուռ արտասովոր աղջկան՝
Խոպ մուրլտաց.

— Այսօրվանից տուն չգաս:—
Հսեց նրա հեկեկանքը կցկրտուր,
Նորից փնշաց ու շուտ եկավ դեպի դուռ:
Այն ժամանակ լսվեց մի սուր ճղավոց,
Ու սենյակի դուռը դիպավ պատեպատ:
Ներս սլացավ Չաթնանց պառավն ահավոր,
Անիծելով ու թքելով անընդհատ:

— Տղիս գլխին էս ի՞նչ բերիր,
Մազդ կտրած անամոթ:
Վարժուհի՞ ես, թե լրբերի
Հովանավոր, խնամող:
Թո՛ւք քո պատվին, ո՞ւր ես խաբել,
Տունդ բերել աղջկան,
Որ դարձնես քեզնից ավել
Հազար մարդու սիրեկա՞ն...
Էսենց հարսի սիրտը խորեմ,
Այ խայտառակ, անաբուռ...—
Եվ Արուսի մազն ուրբել՝
Քարշ է տալիս դեպի դուռ:
— Թո՛ղ երեխին, ցնդա՛ծ պառավ,—
Ճշաց Աստղիկը մոլի
Ու վագրի պես վրա թռավ,
Որ աղջկան ետ խլի:
Չաթնանց պառավն իսկույն թողեց Արուսի
Հյուսիսը հաստ ու մի վայրկյան կարմրեց,
Հետո թռավ ուսուցչուհու երեսին,
Ոնց որ փքված հսկայական թխսամբր:
Եվ այս անգամ բռնած նրա մազերից՝
Էլի սկսեց քաշել, թակել, ծղրտալ:
— Ա՛ռ, սրտամեռ, Չաթնանց Հոռոմ կասեն ինձ,
Հա՛րս ես տանում, խելքից հանում... ա՛ռ հա, տար...—
Բայց այդ ժամին մեկը հասավ ետևից,
Բռնեց թևից ու շարտեց դեպի դուռ:
Պոկվեց պառավն ուսուցչուհու մազերից,

Աչքին արյուն, բերանին՝ թուք ու փրփուր,
Դիպավ դռանն ու ետ փովեց հատակին:
— Ամա՛ն, հասեք, այ գեղական,
Սպանեցին, մորթեցին...
— Շառ մի գըցի, ջադու պառավ,
Վեր կաց, կորի, գնա՛ տուն:
Ինքդ էիր ուրուր դառած
Աղջիկներին ծվատում:
Մեռած հո չե՞մ, սառած հո չե՞մ,
Որ դու թակես վարժուհուն:
էս Զարին է կանգնած քո դեմ,
Ի՛նչ ես աչքերդ ճղում:
Հա՛րս ես ուզում զոռով տանել,
Քո ուզած հարսն էլ չկա:
Ես եմ հիմա համ քույր, համ մեր
Մեր կուխոզի աղջկան:—
Հետզհետե հավաքվեցին գյուղացիք,
Շարժվելու էլ հնար չկա սենյակում:
Ոտքի ելավ պառավն էլի ջղածիգ,
էլի գոռում է, անիծում ու թքում:
— Տո՛ւր, աննամուս, տո՛ւր սեասիրտ,
Տուր Բեյբութիս մատանին:
Ոնց իմ արևը սևացրիր,
Մերդ սև նաշդ տանի:
— Առ, ազատվեմ,— շիկնեց Արուան
Ու շարտեց մատանին:
— Հան շորերըս, հա՛ն, աննամուս:
— Շոր չեմ բերել քո տանից:
— Շոր չես բերե՞լ... բաս սա շոր չի՞,
Հորըդ շենի՞ց ես բերել:
Ո՞ւմ շորն է սա, գողի աղջիկ...
Գո՛ղ, տկլոր մե՛րդ է կարել:
— Թո՛ղ,— ձիգ տվեց Արուան ուժգին
Աչքում ազահ մի կրակ,—
Ինձ էս դեյրան նվեր բերին
Նըշանդրեթի ժամանակ...
— Արո՛ւ, իսկույն շորերը տուր,—
Ասավ Զարեն հորդորով,—

Հո չե՞ս ծախել պատիվդ դու
 Երեք արշին կտորով:
 Տուր, թող տանի, իրեն հարմար
 Ուրիշ հարսի հագցընի:
 Լավը կառնեմ ես քեզ համար,
 Դու խելքըդ մի կորցընի:—
 Կախեց գլուխն Արուսը լուռ, սրտմըտած:
 Հետո արագ հանեց դեյրան վրայից:
 Լաչին ամու սիրտը ցավից մղկտաց.
 Նայում էր նա, կանգնած մռայլ, սըրահից:
 — Ո՞վ է յանի գողի աղջիկ, ո՞վ է գող...—
 Ու բազմությունը ճեղքելով ներս եկավ,—
 Չե՞ս ամաչում խալխի առաջ, ցերեկով,
 Մերկացրիր երիտասարդ աղջկան:
 — Բարո՞վ,— ճշաց պառավը խիստ,—
 «Սիպտակերես խնամի»...
 — Շան խնամին... խեղճ երեխիս
 Շանը տվի միամիտ:—
 Ու դուրս եկավ Չաթնանց ադեն կատաղած,
 «Հարսից» խլած չթե դեյրան թևի տակ:
 — Զարմանալի հարսանիք է...
 հա՛-հա՛-հա՛...—
 Ու հետևից վազում է ծաղր ու կատա՛կ:

ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Տ Ր Ա Կ Տ Ո Ր Ը

Վերջին տագնապոտ օրերն են գարնանացանի,
 Հազիվ են շարժվում ակոսում եզներն ուժասպառ:
 Դեռ հիսուն տոկոսն է հասել ցանքի պլանի,
 Գիտե՞ս այդ մասին կոլխոզնիկ ամեն մի ունչպար:
 Դեռ հիսուն տոկոսը: Այդ թիվ չէ լոկ շոր ու ցամաք.
 Գրված միմիայն հնգօրյա տեղեկագրում,
 Այլ նրանց սոցա տարածված խոնավ հողամաս,

Որ ամենա վայրկյան շորանում ու սերմ է գոռում։
 Լսում է կարծես հողի ձայնը խորին հուզմունքով
 Դաշտավարական սեկցիայի նախագահ Մուքոն,
 Եվ անդու, անհանգիստ անցնում գութանից գութան,
 Կանչում, հորդորում է՝ քշեն, եզներին ուժ տան։
 Ու խլում է մաճը Մուքոն հոգնած մաճկալից,
 Շարժում է հուժկու փնչոցով, եռանդի գալիս,
 Օդում պտտվում են ուժով ճիպոտ, խարազան,
 Շաշում են ուժգին ու դիպչում ուժասպառ եզան։
 Տնքում են եզները, պրկում մկանները նորից,
 Աչքերը ուռչում են, թռչում են ասես կոպերից։
 Նայում է Հովասն իր ձգված, վտիտ արջառին,
 Մորթին չպայթի՞, դուրս չտա՞ և փոր և աղիք...
 Իսկ Մուքոն հարբած սև հողի խոստումով շռայլ,
 Ավելի ուժով է ընկնում գութանի վրա։
 Գնում է գութանն ու հողը շերտում թումբ առ թումբ,
 Գնում է գութանը կարծես Մուքոյի սրտում։
 Բայց խոփը թփին դեմ առավ, ակռկեց նորից,
 Ու ետ շարտեց թափով՝ լարված եզներին։
 — Կուպակն է, տղերք, հուպ տվեք, արեք քոթահան։
 Կրկին շաչեցին օդում ճիպոտ, խարազան։
 Ու հորիկ քշողն ահագին ճիպոտն ոլորեց,
 Թափով հարվածեց Հովասի եզան ոսկորին։
 — Ո՛ւ՛՛ֆ,— տնքաց Հովասն իր նիհար եզան փոխարեն
 Ու ներքև թռավ, բարկության կրակն աչքերին։—
 Տո՛, թույլ տուր, լակո՛տ, ինչո՞ւ ես թակում,
 Արջառիս վրե՛ն քո զոռը գնաց։
 Դու հորըդ եզան մաժում ես կակուղ,
 Իմի՛ն ես քշում, սատանի ծնած։—
 Տարավ, բերեց խարազանը Հովաս քեռին
 Ու պինդ փաթաթեց Տիկոյի տկլոր ծնկներին։
 Պատանին ցավից կաղկանձեց։
 — Ամոթ է, Հովաս...—
 Ձայն տվին գութանավորները՝ սաստիկ վրդովված։
 Եվ մյուս գութանի մոտից ֆշշալով հասավ
 Գալոն կայծակն աչքերում, ձեռքին խարազան։
 — Ինչո՞ւ ես թակում տղիս, դավաճան,—
 Մռնաց Գալոն ցուլ գոմեշի պես։—

Կոլխոզ ես բերել սատկած մի արջառ
 Ու մի արջառով մեզ պիտի ուտե՞ս,
 Ինձ Գալուստ կասեն... որձ եմ ես, տո թո՛ղ...
 Հովասն ո՞վ է, որ դիպչի իմ տղին:
 Ստոր մտքերով մտել է կոլխոզ,
 Որ կռիվ գցի ու գործը շեղի՞...
 — Տո, թույլ տուր, դրա դիմակը սլատոեմ,—
 Գոռում է Հովասն, ու բաց չեն թողնում,—
 Տո՞, ինքդ չէի՞ր, մաուզերը վրեդ,
 Դաշնակի օրով հավեր գողանո՞ւմ...
 Հիմի լավ է, հա՛... կոլխոզ ես մտել,
 Կոլխոզում անտեր արջառ ես գտել,
 Որ տղեդ թակի ու սատկացընի՞,
 Ախար թանկ է սա երեխիդ գնից:
 — Ամո՞թ է, Հովաս...

— Ամո՞թ է, Գալու...

— Ծրկուադ էլ ակտիվ կոլխոզի անդա՞մ...—
 Հանդիմանում են մարդիկ մոտ գալով:—
 — Ձեզ չի վայելի կովել անզգամ:
 — Եզը չսատկեց, տղեն չմեռավ:
 — Ինչ եք գողգողում իրար հակառակ...
 — Հիմա որ լսեն գյուղում, ի՞նչ կասեն...
 — Հսպե՞ս էր...
 — Է՞ս էր...
 — Միություն ու սեր:

Կեսօր էր արդեն: Եվ ընկեր Մուքոն հրամայեց
 Եզներն արձակել, ուղարկել ներքև ջրելու:
 Իսկ ճաշից հետո սեկցիայի ժողով գումարեց՝
 Կովոզ կողմերի հարցը տեղնուտեղը քննելու:
 Հովասն ու Գալոն նստեցին իրարից հեռու,
 Քամակ քամակի ու թթված, մռայլ դեմքերով
 Ու շրջանաձև, ծալապատիկ, բոլորը նստան:
 Վեր կացավ Մուքոն ու խոսեց խոհուն ու
 հստակ.

— Ընկերներ, կուեկտիվն էսպես
 Զի կտրի ճամփան:
 Փյուղում ի՞նչ կասեն հիմա մեզ

Բարեկամ, շարկամ:
 Փթում է այնտեղ սերմացուն
 Ամբարում անշարժ,
 Իսկ սրանք հին սանդն են ծեծում,
 Հին կոիվ ու շառ:
 Բրիգադում բանում են բոլորը
 Խիստ հարվածային,
 Իսկ ընկեր Հովասն ու Գալոն
 Սարքում են օյին:
 Տարել էր բրիգադը վարի
 Սոցմրցման դրոշ,
 Իսկ սրանք խայտառակ արին
 Մեզ իրանց կովով:
 Ո՞վ է մեղավոր ավելի.
 Ես կասեմ՝ Գալոն:
 Հովասը դիպավ Տիկոյին
 Մի խարազանով,
 Հոր տեղ էր, տվեց մի անգամ,
 Իրավունք ուներ:
 Էլ Գալոն ինչո՞ւ մեջ ընկավ...
 Պարզ է, ընկերներ:
 Երկուսին էլ չենք ազատում
 Արժանի պատժից:
 Հովասին, նկատողութուն,
 Գալուստին՝ շատ խիստ:
 — Ո՛չ, դեմ եմ, — հուզվեց Ալեքսանն, —
 էդ որոշումին:
 «Շատ խստին» իմ հերն է արժան,
 Այլ ոչ թե ամին:
 Քինդ խփեց արջառին Տիկոն,
 Պետք չէր իհարկե.
 Բայց իմ հերն ի՞նչ իրավունքով
 Երեխին զարկեց:
 Կոլխոզի եզն էր, կոլխոզն էր
 Պատասխան տալիս:
 Իսկ հերս ձեռ չի վեր կալել
 Դեռ հին անցյալից:
 Առաջարկ՝ իմ հորը շատ խիստ

Նկատողութիւն,
Գալուստին և նրա տղին՝
Առաջժմ՝ ի ցույց,
— «Ի ցույց» դու ես,—

Կատաղի

Մոնչաց Գալուն։—
էդ ո՞ւմն ես այդպէս ցույց տալի՝
Լեզվիդ զոռ տալով։
Չաթնանց Բեյբուլի՞ն ես տեսել,
Որ խլեա կնոջ։
Կարծում ես՝ կուլակ եմ ե՞ս էլ,
Կամ կին փախցնո՞ղ...
— Տո՛, թույլ տուր, թույլ տուր,—
Վեր թռավ

Հովասը տեղից.—
Տեսնո՞ւմ եք՝ ոնց է խայտառակն
Անպատվում տղիս...—
Հակառակորդները կրկին իրար դեմ եկան,
Մի վայրկյան նորից բռնկվեց ոխը պապական։
Կարող էր կրկին կամ գլուխ կամ թև կոտրվել,
Կամ, ինչպէս տասնեկին թվին, մեկի դին փռվել։
Բայց տղերքն ամուր բռնեցին ծեր աքլորներին
Եվ ուժով, ամոթանք տալով տեղները բերին։

Նորից նստեցին վրդովված Հովասն ու Գալուն
Ետև ետևի, իրարից հեռու, փնջալուով։
Բայց հանկարծ ուրիշ մի փնջոց լսվեց այդ ժամին,
Ու հեռվից նալթահոտ բերեց սրընթաց քամին։
Դադարեց աղմուկն։ Այն կողմ նայեցին մի վայրկյան,
Ու թռավ մի խենթ աղաղակ.

— Տրակտորն եկա՞ւ...

Տրակտոր քշողներ՝ Գարսեանն ու ընկեր Կարոն
Գլխարկներն ուրախ վերցրին, կանչեցին.

— Բարով...

— Այ, հազար բարով,— ձեն տվին բոլորը միասին
Ու խորին, անհուն հարգանքով գլուխները բացին։
Եվ շրջապատված կոլխոզնիկների բազմութամբ՝
Տրակտորն առաջ շարժվեց՝ նախշելով ճամփան,

Հասավ ու կանգնեց կիսավարտ հերկի եզերքին:
 Շուրջը կիտվեցին՝ նայելու կրկին ու կրկին:
 Նայելիս դիպան մեկմեկի Հովասն ու Գալոն,
 Բայց ձեն չտվին, շուտ եկան՝ թաքուն ժպտալով:
 — Նու, սկսում ենք,— ասաց տրակտորիստը խրոխտ
 Ու դեկը բռնեց երկաթե ոսկրոտ ձեռքերով:
 — Մաքրեցեք ճամփան,— հրամայեց նախագահ Մուքոն,
 Ու գործի անցան նրանք խանդավառ աղմուկով,
 Ուժ տվին խմբով, փնչացին լարված, կատաղի,
 Քուլի մեջ փռված գութանը հանեցին տեղից:
 Տրակտորն ակոսում շարժվեց, հասավ այդ քոլին,
 Խոփը խոր խրեց, հոնդաց ու փնչաց մոլի:
 — Քաշի հա՛, քաշի՛... մոտորիդ մատաղ, տրակտոր:—
 Ու ձեն են տալիս, ուժ անում ձեռքով, ճիպտտով:
 Երկաթե եզը մի ըռպե դանդաղեց, տնքաց,
 Հզոր պճեղները խրեց փխրուն հողի մեջ,
 Լսվեց մի խրթին հոնդյուն, ֆշշոց... ու հանկարծ
 Շուտ տալով հողի մի լայն շերտ, առաջ շարժվեց...
 — Էս ի՛նչ էր, տղե՛րք...

Ու տիրեց զարմանք ու սարսափ:
 Քուլի արմատի հետ, արմատից էլ հաստ, մի սև օձ
 Կիսված էր միջից և գլուխն ու պոչը զատ-զատ
 Գալարվում էին, թռչկոտում, շաշում ահավոր:
 Մի ըռպե փախան խուճապով, հետո ետ դարձան,
 Զախչախեց Վասոն մահամերձ թունավոր օձին:
 — Զգույշ կաց, Վասո,— ձեն տվավ Հովասսափ քիճան,—
 Ընկերներ կունենա, քեզանից վրեժ կլուծի...
 — Ընկեր կունենա՞... էհ, ես էլ ունեմ ընկերներ...
 Ալեքսանի պես, էնպես չի՞, հորողքեր Գալո:
 — Ա՛յ, էդպես, սիրով մնացեք, ձեր հոգուն մեռնեմ,—
 Կանչեց աշխուժով Մուքոն, եռանդի գալով:

Արդեն երեկո էր: Արևը թիկնել էր սարին,
 Հերկերը ներկել էր լույսի իր ոսկե մշուշով:
 — Միայն մի ակոս էլ, միայն մի ակոս էլ վարիր,
 Հերիք է, կանգնիր, հոգնեցիր ,տրակտոր քշող:
 Քշիր դեպի տուն, անցիր կամուրջի մոտով,
 Հասիր գեղամեջ, փնչալով գնա, ձեն հանի:

Ասա, որ եկար ու հասար, շթողիւր ամոթով,—
Խոսում էր Մուքոն,— թող ձենըդ լսի թշնամին։—
Շրջանը կանչել է, ափսոս, ընկեր Կարողին։
Մի գնա, Կարո, կաց մեզ մոտ, կաց մեզ ղեկավար,
Տրակտորը չէր գա, եթե դու մեզ հետ չլինեիր,
Դու շատ բան արիր, շատ աշխատեցիր մեզ համար։
Մենք թուղթ կգրենք, կուղարկենք այնտեղ, գործարան,
Որ քեզ նվիրի կոլխոզին, որ մնաս մեզ մոտ։
Առանց բանվորի օգնութեան չէինք դիմանա,
Մենք այսօր հաղթանակ տարանք քո շնորհիվ, քեզնով։—
Ու ժպտաց Կարոն հաղթողի հպարտ հուզմունքով։
— Ո՛չ, ընկեր Մուքո, դուք պինդ եք, ամուր եք արդեն,
Դուք ունեք Սեան, Ալեքսան, Վասակ ու Մուքո,
Կարող եք առանց օգնութեան ճանապարհ հարթել։
Իսկ ինձ շրջանն ուղարկում է ուրիշ կոլեկտիվ,
Ուր գործը դժվար է գնում, և ուժեր չկան։
Իսկ եթե կանգնի ձեր դիմաց դժվար մի խնդիր,
Իս կգամ, քաղաքից ուրիշներ կգան։—

Ու երբ բոլորած երկաթե թանկագին հյուրին՝
Պատրաստվում էին աղմուկով շարժվել դեպի տուն,
— Ընկերնե՛ր,— ձայն տվեց Գալոն հուզմունքով խորին,—
— Ընկերնե՛ր, մի խնդիրք ունեմ ես... Ներողութուն։
Էսօր ես ընդդեմ գնացի մեր դիսցիպլինին,
Ընկերոջս սիրտը կոտրեցի փուչ բանի խաթեր։
Հովասն իմ մոտիկ հարևանն, ընկերն է հնից,
Ալեքն էլ իմ զավակն է, Տիգրանից էլ շատ առավել...
Սրանից հետո թե մեկ էլ մի ծուռ բան ասեմ,
Երեսիս թքեք, ինձ կոլեկտիվից վճնդեք։
Միայն մի խնդիրք ունեմ... էս կովի մասին
Թերթում մի՛ գրեք... էդ անտեր «ի ցույցը»... շնչեք։

ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴԻ ԳԼՈՒԽ

ՀԱՂԹԱԿԱՆ ԱՐՅՈՒՆԸ

Երեք օրից տրակտորն ուրիշ կոլխոզ գնաց,
Մնաց Մուքոն իր նիհար, հոգնած եզների հետ:
Բայց անիվի նախը յայն ճանապարհին մնաց,
Ու նոր, անշեղ մի հուանդ մնաց սրտերի մեջ:
Եվ չնայած որ Գալոն բոլոր ժողովներում
Աղմկում էր, բողոքում, թե չենք կարող ցանել,
Հովաս քեռու նիհար եզն ապացույց էր բերում
Եվ առաջարկ էր անում, որ սերմը բաժանեն,
Սակայն հաղթում էին միշտ Սեանը և Մուքոն,
Առավոտյան կոլեկտիվն էլի գնում էր հանդ,
Աշխատում էր հրատապ հարվածային հոգով
Ու հորովել էր երգում Հովասն էլի սրտանց:

Երբ որ արևը հոգնած թիկնեց դարձյալ սարին
Ու նարնջե քրտինքով ներկեց երկինք ու հերկ,
Երբ որ վերջին ակոսից գութանը դուրս բերին
Որպես ծանր, տանջալից հաղթանակի մի երգ,
Մուքոն նայեց դեպի ետ և հուզումով զգաց
Հողի երկունքը բեղուն, ճալթումը սերմերի:
Կարծես ոչ թե արտը, այլ նրա սիրտն էր հերկված,
Նրա սրտում էր ցանված իր սերմացուն լրիվ:
— Մնաց երեք օրվա գործ, երեք օրվա լարում,—
Ու Գարսեանը սրբեց ճակատը քրտնաթոր,—
Զուր են Գալոն, Աղասին սրտները պղտորում
Եվ ամեն ժամ լեղաճաք աղաղակում «տրակտոր»:
Տրակտորը մենք ենք բերում, տրակտորն ուժ է հսկա:
Ու որպեսզի նա լինի, որ գա նա գալ տարի,
Մեզ հարկավոր է լարում, մեզ հարկավոր է կամք
Ու միացյալ աշխատանք չթի ու եզների:—
Եվ չնայած, որ ոմանք հոգնել էին սաստիկ,
Էլ ոչ խոտ էր մնացել և ոչ ուտելու հաց,
Բայց երբ խնդիրն իրիկվան դնում էին նիստին,
Հաղթում էր կոմբիշի գիծը կազմակերպված:

Զգում էին, որ առանց լարման ու տանջանքի
Հազար տարվա ծոված կյանքը չես կարող ուղղել:
«Ցանեի, ցանեի մինչև վերջ, քարն էլ թեկուզ ճաքի...»
Այս վճիռն էր որոճում յուրաքանչյուր ուղեղ:

Փովեց բարակ մթնաշաղ: Եզներն արձակեցին:
Ո՞վ կպահի այս գիշեր... ո՞վ կմնա սարում...
Չաթնանց Բեյբութը փախել, դառել է շար բանդիտ,
Նա լծկաններ է քշում, խոտի դեզեր վառում...
Նա սպառնալիք է տվել, որ իր «սարեկներով»
Կհարձակվի մի գիշեր Քարաշամբի վրա:
Եվ իբր թե Սողոյին նամակ է միշտ գրում,
Որ սա գյուղից հեռանա, շխանգարի նրան...
Ու պտտվում է գյուղում այդ մութ ասեկոսեն
Հետզհետե ավելի ու ավելի համառ:
Նամանավանդ, որ Սողոն սիրում է շատ խոսել,
Թե գնալու է քաղաք բժշկվելու համար:
Երկյուղալի է սաստիկ սարում մնալ գիշեր...
Այդ մասին են մտածում, չնայած չեն խոսում,
Քեռի Մուրոն ճակատին կիտում է կնճիռներ,
Բայց առաջարկ անելու չի պտտվում լեզուն:
— Ես կգնամ, կմնամ գիշերն եզների մոտ,—
Բացազանչեց Ալեքսանն ու հրացանն առավ:—
Ի՞նչ, մեզ սարսափ է տալիս մի կուլակի լակոտ:
Եվ մենք պիտի տո՞ւն գնանք պլան չկատարած:—
Հովաս քեռին կախ ընկավ որդու հրացանից.
— Թույլ տուր, թույլ տուր՝ ես գնամ:—

Բայց շթողին նրան:

Նովրուզն իսկույն միացավ յուրաշ Ալեքսանին,
Ու երկուսով միասին լծկանը սար տարան:

Մութ: Մութ: Անտառ: Զխոսկան համր հարսների պես
Ծառերն ահա մութ հագած՝ կանգնած են լուռ ոտի
Մի վիթխարի, ահավոր, անհայտ կեսուրի դեմ,
Որ որոճում է մտքում զարհուրելի ոճիր:
Սկսեցին արածել եզները խիստ սոված,
Գիշերային անտառում, ստվերների ներքո:
Նովրուզի սիրտը խոնավ երանությամբ դողաց

Լձկանների լիաթոք փնչոցների երգով:
 Այդ կանաչը հյուսված, ժամերը լուռ, հանգիստ,
 Որ վայելում են հիմա անասուններն ուժատ,
 Վաղն առավոտ կփոխվի լարված աշխատանքի,
 Վաղը կհերկեն, կցանեն նրանք ավելի շատ:
 Իսկ Ալեքսանը, հայացքը խավարին գամած,
 Ու հրացանը սեղմած ոսկրոտ իր ձեռքերում,
 Իր ընկերոջ ականջին ասում է խիստ կամաց
 Կարկաչահոս պատմությունն իր երջանիկ սիրո:
 Լեռնանում են Նովրուզի երիտասարդ սրտում
 Անպատմելի մի կարոտ, անհաղթելի ծարավ:
 Նա էլ ուներ սիրային այրող մի պատմություն,
 Բայց նա տխուր վերջացավ... նրա Ասլուն տարան:
 — Իսկ քո սիրածն, Ալեքսան, վերադարձավ կրկին,
 Քեզ սպասում է հիմի... Գուցե դեռ չի քնած,
 Մտածում է քո մասին թաշկինակը ձեռքին...
 Իս եզները կպահեմ, դու ել ու տուն գնա:
 — Ոչ, ոչ, Նովրուզ, չեմ գնա: Քեզ չեմ թողնի մենակ
 Զարհուրելի անտառում, Զաթնանց Բեյրութի դեմ:
 Նա կերևա այս գիշեր... Նա հանգիստ չի մնա:
 Նա վրեժ է որոճում հիմա, ես լավ գիտեմ:
 Սուա... Դու շուկ լսեցի՞ր... Ես լսեցի կարծես...
 Խշրտոց էր, թե շուկ... մարդ կա տանձենու տակ...
 Է՛յ, դուրս արի, մոտեցիր, ո՞վ ես... ո՞վ կա այդտեղ...
 Պատասխանը որոտաց.
 — Թրա՛խք... Թրախք... Թրախք...

Ու թռչում է տնետուն կայծակնահար այդ լուրն
 Այդ ահավոր արյունոտ կարմիր առավոտի:
 Հետզհետե հավաքվում ու կուտակվում են լուռ,
 Գյուղն արթնացել գիշերով, կանգնել է՝ քար, ոտի:
 — Արի, Լաչին, մոտ արի, էլ մի մնա խռով,
 Արի փեսիդ համբուրի, ասա՝ «գնաս բարով»...
 Թեևում այսան մղկտում, լալիս է բարձրաձայն,
 Ու մոտենում է Լաչինն ինչպես քարե արձան:
 Գյուղսովետի դռան մոտ, կանաչ խոտի վրա
 Դրված է նա՝ հերոսի արնաշաղախ դին,
 Վերքը ողորկ ճակատին որպես կարմիր կրակ

Ցավ ու մորմոք է տալիս հուզված ժողովրդին:
— Թույլ տուր, թույլ տուր, ես պառկեմ կանաչ խոտերի մեջ,—
Թփրտում էր Հովասափն, ու շեն թողնում նրան...
— Գլխի վերքը ետ առեք, իմ գլխի մեջ դրեք,
Թող իմ արյունը թափվի ճանապարհի վրա:—
Իսկ Արուսի երեսին վիշտը թուխպ էր դրել,
Այդպես երկինքն է մթնում արհավիրքից առաջ:
Ոչ միայն խոր Վիշտ է այդ, այլ քանդակված վրեժ,
Աղաղակող լուսթյուն ու քարացած թառանչ:
Հասկի նման կոտրված, հենված ուսուցչուհուն,
Արտասուքները սառած թարթիչների ծերին,
Նա լայնացած աչքերով վերքին է դեռ նայում
Ու մրմնջում ինքն իրեն ներսում, անլսելի:

— Վեր կաց, վեր կաց, Ալեքսան...

Ջե՞ս իմանում... շե՞ս լսում...

Ջե՞ որ ես էլ հիմա կամ...

Միասին ենք կոլխոզում...

Վեր կաց... գնա ժողովի...

Մոռացել ես դու մի՞թե...

Նիստ է էսօր ակտիվի...

Կանչել է քեզ կոմիտեն...

Ու ողբազին անեծքի, վայնասունի միջից
Հանկարծ հնչում է հուժկու ձայնը Գարսևանի.
— Այս արյունը, այս զոհը նրան մենք չենք գիշի,
Ձի խուսափի վրեժից անարգ մեր թշնամին:
Չաթնանց Բեյբուլթն այս գիշեր իր անելիքն արավ,
Խլից նա մեր շարքերից մեր ամենալավին:
Բայց մենք ետ չենք նահանջի, մենք կգնանք առաջ,
Չենք վախենա գնդակից ու չենք էլ տատանվի:
Կամենում են արյունով մեր նոր ուղին փակնլ,
Որ մենք տնից դուրս չգանք, ցանքը մնա կիսատ,
Որ սովը մեզ կռացնի, կոլխոզը խորտակեն,
Որ ճիւղտի մեզ էլի կուլակային մի թաթ:
Հարվածում են նրանք մեզ աշխատանքի ժամին,
Կամենում են ջլատել ուժերը մեր համառ...

Քայց, դեպի դաշտ, ընկերներ, զոհված Ալեքսանի,
Մեր թանկագին հերոսի հիշատակի համար:
Մինչև ցանքը չավարտենք, չենք հեռանա հանդից,
Այս է վրեժն արժանի, հարվածը մեր հատուկ—
Տարերային ցասումով ծառս են լինում մարդիկ,
Խրիտասարդ. զոհի դին նորից շրջապատում:

Շրջանային կենտրոնից եկավ նվագախումբ
Ու կատարեց հերոսին հանդիսավոր թաղում:
Իսկ լաչինի աչքից հոսեց աղի առուն
Ու մոլորվեց միրուքի վայրի մացառներում:
— Գնաս բարով, Ալեքսան,—ասավ Մուրոն հուզված,—
Դու բրիգադի սյունն էիր, աշխատանքի հերոս:
Բո՞ք քրտինքով են ազնիվ արտերը մեր բուսած
Ու կհասնեն քո արյան վառման կաթիլներով:
Հարվածային աշխատեց, հերոսի պես զոհվեց
Բռլշեիկյան առաջին մեր գարնանացանին:
Մեր բրիգադի անունից առաջարկում եմ ես
Տա՛լ հերոսի մականուն ընկեր Ալեքսանին:

Առավոտյան մութ-լուսին լաչինը լուռ դարձնեց,
Գոմից եզներն արձակեց ժլատ արտասովելով,
Քչեց դեպի կուլեկտիվն ու տխրությամբ հայտնեց.
— Ինձ էլ գրեք, ընկերներ. եկա ձեզ օգնելու...—

Սողոն քաղաք էր փախել: Նա քաղաքից չեկավ,
Մինչև Չաթնանց Բեյբուքին ձերբակալեց Չեկան:
Նա գյուղ մտավ գիշերով, գաղտագողի, լռին,
Վախենում էր հանդիպել նախկին ընկերներին,
Այդ օր մինչև երեկո նա դուրս չեկավ տնից.
Ի՞նչ հնարով օրերի անիվը դարձնի:
Երեկոյան, երբ մի դառն ու չար նախազգացում
Սրտի խորքում ճնշելով միտք էր անում Սողոն,
Կամրջի մոտ շարագույժ կանչեց կատարածուն.
— Նոր գյուղսովետ ենք ընտրում...
Ժողով է, հե՛յ...
Ժողով...
,

«Տեսնես՝ ո՞ւմն են ընտրելու...», — միտք էր անում տխուր
 Ու իր սրտի թուլնի պես դառը թութուն ծխում,
 Նա սովորել էր գյուղում մենակ ղեկավարել
 Որպես «կարմիր» տանուտեր՝ հին թայֆային հենված,
 Մանթրոսի տանն արադի թասը ձեռքին ճառել
 Նախ բջիջի և հետո «մայր աթոռի» կենաց:
 Իսկ երբ հանկարծ զորացան ծիլերը նոր գյուղի,
 Երբ որ տակին երերաց պապենական թայֆան,
 «Ընկեր» Սողոն հասկացավ, զգաց գաղտագողի,
 Ու չի կարող նա թողնել կենցաղն իր հնավանդ:
 Դրա համար բնագրով նա որոշեց կռվել
 Ընդդեմ այդ նոր, անսովոր, կորստաբեր շարժման:
 Բայց պարտվեց: Եվ ահա աստղը նրա ծովել,
 Անդարձ սուրում է դեպի անդունդը կորստյան:
 Այո, նա չէր հավատում, թե գյուղը, ծանրաքայլ,
 Ընդունակ էր փոխվելու այդքան արագ թափով:
 Թե կարող էր կոլեկտիվն ուժեղ հոսանք դառնալ
 Ու տանել իր ետևից տները դետնափոր:
 Նա կարծում էր, թե միայն ճառերն են տաք, ստից,
 Փոթորիկներ են միայն ժամանակավոր:
 Հովաս քեռին չի կարող հրաժարվել չթից,
 Ջեն փոխվելու աշխարհի հիմքերը դարավոր:
 Նա կարծում էր, կպարտվի կոմպարտիան ահա,
 Էլի գյուղում կշաչի մտրակը Արամների:
 Արտոն հոտաղ կմնա, Սանթրոսն՝ էլի աղա,
 Ռուսաստանում էլ գուցե անգլիացին տիրի:
 Այդ էր պատճառը, որ նա կռվում էր միշտ համառ
 Կոլեկտիվի, Սեանի քայլերի դեմ բոլոր:
 Ու որպեսզի տեղ անի սև օրերի համար,
 Ջաթնանց հողան էր դնում հաճախ գիշերով...
 Բայց սխալվել էր Սողոն: Սեանն արդեն տարավ:
 Հաղթանակեց կոմպարտիան: Ցանքը կատարեցին:
 Դառնալու է վաղ թե ուշ գյուղը համատարած:
 Գարսևանի հետևից գնում է գյուղացին...
 Իսկ նա իր հոր հետևից կոլխոզից դուրս եկավ
 Եվ իր դիրքը զորավոր գիջեց Գարսևանին:
 Այժմ գյուղում անարգված և անպարտիական
 Պիտի մի կերպ խոնարհված գլուխը պահպանի:

Ի՞նչ է մնում Սողոյին... Ի՞նչ կա, որ ինչ անի՝
Հուլիսի ոչ մի ճառագայթ, ոչ մի հեռանկար:
Պետք է ուրեմն զղջա, պետք է խոստովանի...
Չեն հավատա... ոչ մի ելք ու փրկություն չկա:

Նա ջարդված վեր կացավ ու վաղուց տուն բերած
Գյուղսովետի մատյանից պոկեց մաքուր մի թերթ
Ու քիմիական մատիտով գրեց թղթի վրա
«Ալափարսի շրջկոմին...» և սկսեց դիտել,
Դուռն ահավոր թակեցին: Նա վեր թռավ գողով:
Մութոյի հետ ներս մտան երկու միլիցիոներ.
— Ձերբակալված եք,— ասավ,— քաղաքացի Սողո,
Պետք է հենց էս րոպեիս Ձեզ Ալափարս տանել...
— Ի՞նչ...— ծղրտաց մայրը սուր,— քա, ի՞նչ իրավունքով:
Դու ով ես որ, ընչացո՞ւ... ո՞ւր ես տանում տղիս...
— Ե՛ս՝ Սովետի նախագահ,— սառը կտրեց Մութոն:
Սողոն սաստիկ սփրթնեց ու պոկ եկավ տեղից...

Գարնանացանն ավարտվեց... վերջին հատիկն ընկավ,
Թաղվեց խոնավ հողի տակ, որպես հերոս արի:
Վաղը կճայթի նա այնտեղ, կծլի հաղթական
Ու կյանք կտա իր մահով ուրիշ հատիկներին...

1931— 1938, Մոսկվա—Երևան

Վ Ե Պ Ի Հ Ե Ր Ո Ս Ն Ե Ր Ը

Ամեն ինչ կարգին է: Սենյակը: Սեղանը:
Թանաքը կապույտ է: Գրիչը՝ ոսկի:
Սյդ վեպ է գրքում ձեր ծանոթ վիպասանը,
Հայտնի հետախույզը հույզի և խոսքի:

Ահա գործարանը: Ծրխանը ծխում է:
Հրնոցն սկսում է հուզվել ու հեալ:
Բանվորը բանում է: Ուրախ է, տրխուր է,
Մրոտ է, հերոս է, հսկա է և այլն:
Սակայն մենակ չի նա: Աղջիկը կողքին է:
Աղջիկն էլ մրոտ է, ջլուտ է, պարթև:
Այսպես, ընթերցող, դու տեսար երկուսին էլ.
Նրանք թե բանում, թե սիրում են վարդեր:
Սիրում են իրար այս վեպի հերոսները:
Անտառ է, գիշեր է, շրվաթ ու շշուկ:
Աղջիկն սպասում է: Սիրուց նա շիկնել է:
Զեփյուռն օրոքում է սաղարթը շրշուն:
Ահա մոտեցավ վերջապես սիրահարը:
Աղջիկն սկսում է հուզվել, տրրոփել:
Տբդան էլ հուզված է, անգամ խելագար է:
Նստում է կողքին ու լռում մի րոպե:
Հետո նա խոսում է, խոսում է, խոսում է,
Երեք էջ խոսում է սիրո հույզերից:
Իր թանկ ժամանակն ընթերցողն ավսոսում է,
Սակայն սիրահարը խոսում է նորից:
— Ինչքան ձանձրալի՜ ես,— ասում է աղջիկը,—
Սա՛ ինձ, ինչո՞ւ դու տափակ ես այդքան:
Ազնիվ խոսք, իզուր ես այդքան սիրեցի քեզ:
Զկա աչքերումդ՝սիրո գեթ մի կայծ:
Այս ի՞նչ է, ասես, իսկական դու մեռել ես,
Ինչո՞ւ ես այդպես դու դժգույն ու շվար:

Եվ ո՞ւր է քո կյանքը, քո սիրտը, քո սերը:
Դու բուժ անեկդոտ ես, այլ ոչ սիրահար:

— Ես չեմ մեղավորը,— ժպտաց սիրահարը,—
Ես ինքըս դժգոհ եմ սաստիկ ինձանից:
Անհամ, անիմաստ է այս սերն ինձ համար էլ,
Վեպի հեղինակն ինձ այսպես հորինեց:
Այս ես չեմ քո դեմը, այլ իմ խրտվիլակն է,
Իսկ ինքս կյանքում իսկական եմ ու մարդ:
Կըրում եմ սիրո փոթորիկն էլ, կըրակն էլ,
Ունեմ ես խոհեր ու հույզեր բոցավառ:
Նա շի ճանաչում ինձ, այդ բուժ վիպասանը,
Միայն մի անգամ է տեսել նա հեռվից.
Հետո նա նստել է անհոգ իրա տանը
Ու վեպ է գրել ու հիշել է և ինձ:
Իսկ դու, որ դժգոհ ես ու հանդիմանում ես...
Կարծում ես ունե՞ս դու կյանքի մի նշան:
Դու էլ այս վեպում անկենդան մի անուն ես,
Ապրում ես մարմնի և հոգու ճգնաժամ:
Դու էլ ձանձրալի ես, դժգույն ես, տափակ ես,
Զուներս աչքերումդ կրակը կյանքի:

— Հապա քո խոսքե՞րը,— ճըշում է աղջիկը:—
Ուրեմըն խաբո՞ւմ էիր դու, սրիկա':
Չասի՞ր, քիչ առաջ էր, թե ես գեղեցիկ եմ.
Թե դու ինձ սիրում ես, ասողերը վրկա:
— Ինչքա՞ն միամիտ ես,— ժպտաց սիրահարը:—
Հո ե՞ս չէի սերըս հայտնում ինքնակամ:
Օ՛, ո՛չ, վիպասանն էր ասում այդ իր ճառը,
Որ վեպը դառնար քիչ երկար, հուզական:
«Գնա՛, — նա ասավ ինձ, — աղջիկն սպասում է»:
«Ճ, ո՛չ, ուրիշին եմ սիրում,— ասացի,
Ախար այդ աղջիկը բնավ չի սազում ինձ,
Գտի՛ր նրա զույգը և ինձ ազատի՛ր»:
«Գնա՛, — հրամայեց, — ուրիշ ելք չկա՝ քեզ,
Դու պետք է սիրես իմ ընտրած աղջկան.

Այդպես պահանջում է վեպի կառուցվածքը՝
եվ քեզ սիրեցի ես, ուրիշ ելք չկար:

—Վեպի կառուցվածքը,—աղջիկը ժպտաց,—
Այդ ի՞նչ կառուցվածք է, թքով է թխված:

— Այո՛, — հառաչում է տխուր սիրահարը, —
նրկուսս էլ զոհեր ենք նրա — այլանդակ:
Ի՛նչ կեղծ է մեր սերը, թղթից է անտառը,
թղթից է այս ծառը և մենք նրա տակ:

Աղջիկը վշտից անշշուկ նըվաղել է:
Բայց հեգ սիրահարը խոսում է կամաց.
— Կարծում ես, ապրո՞ւմ են մյուս հերոսները,
Բոլորն էլ մեզ պես են, թղթից մոգոնած,
Միակ զգացմունքը, որ կա այս վեպում,
Այդ անբավ ձանձրությունն է շոգի պես շոքած:
Իրանգը միակ՝ տառերի՝ սևությունն է,
Իսկ ինքը, ոգին, գաղափարը — չկա:
Եվ ի՛նչ, դու կարծում ես, միա՞կն է այս վեպը,
Այնքան ռոմաններ կան այսպես անհեթեթի:
Վարպետ վիպասանը կյանքում հազվադեպ է:
Նրրա հերոսները ապրում են հավետ:
Նրրա հերոսներն ավելի կենդանի են,
Քան մարդն իրական, քան անտառն արթուն,
Հարուստ է նրանց հուզաշխարհն ու մարմինը,
Նրանք խուլթափ են սիրում և ատում:
Նրանցից ամեն մեկն ամբողջ դասակարգ է,
Ու ողջ մարդկություն է կրում իր կրծքում:
Նրանցն է կյանքում հաղթանակը և փառքը:
Իսկ մեզ վիճակված է միայն մոռացում:
Սիրում է նրանց խանդավառ ընթերցողը,
Ինչպես սիրահարը սիրած աղջրկան:
Ապրում է նրանց անունով ու գործով
Ու նրանց հետ մեկտեղ է կերտում ապագան:
Նրանց հետ նստում է գիշեր մինչև լույսը,
Նրանց հետ նավում է անափ ծովերում,
Զգում է նրանց փոթորիկն ու մոլուցքը,
Եվ ինքն էլ նրանց հետ հուզվում է, եռում:

— Ախ, ի՞նչ հիասքանչ է,— կանչում է աղջիկը,
Ապրեի ու գործել այդպիսի վեպերում...
Եվ մի՞թե չկա բաժանման բանալի՝ մեզ...
Ինչո՞ւ այս մթնում ենք անել դեգերում:

— Կյանքում լինեիրք, բաժանվելը դյուրին էր,—
ժպտաց սիրահարը հուսահատորեն,—
Սակայն այս վեպի մեջ այդ անհրեարին է,—
Մեզ չի օգնի ոչ մի կանոն կամ օրենք:
Եվ մահն չմիակ մեր ստույգ փրկությունը:
Բայց դեռ վիպասանը պաշտոն ունի մեծ.
Դեռ կա քննադատ. որ այս վեպը գովում է,
նրավ ընթերցող էլ, կարդաց ու հուզվեց:

— Հիմա՛ր ընթերցող է,— ճշում է աղջիկը,—
Հիմա՛ր ընթերցող ու քծնող քննադա՛տ:
Կորի՛ թող ներանց արտասուքն ու կարծիքը:
Ես մահ եմ ուզում այս վեպում անապատ:

Եվ նա ելավ վեր ու բռնեց արահետը.
Հասավ քարափին թևերով տարածուն:
Կրկին գունատվեց ու նետվեց այն հին զետը,
Ուրին անվանում են մարդիկ՝ Մոռացում:

Եվ գորշ Մոռացման քարափին սիրահարը
Կանգնած դեռ դողում էր դժգույն ու թերի:
Հեռվից մոտենում էր, դաժան, անաչառ էր,
Խելոք ընթերցողը հիմար նյութերի:
Եվ նա իր գրիչը խրեց ներա կողը:
Հնկավ սիրահարն էլ. Մեռավ անճարակ:
Կանգնած զարմանում էր խիզախ ընթերցողը.
Կողից արյունի տեղ հոսում էր թանաք:

Ամեն ինչ կարգին է. սենյակը, սեղանը,
Պրսակը գլխին է, գրրիչը ձեռին:
Նոր վեպ է գրում ձեզ հայտնի վիպասանը,
«Խոշոր» հեղինակը չնչին գործերի:

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Դանդաղ ճամբում էր ծովափին երգի արքան իմաստուն,
Հոգին լեցուն երազներով. միտքը՝ պայծառ և արթուն:
Գիտեր ամեն հավքի լեզուն ու զազանի սիրտը փակ.
Չկար գաղտնիք նրան անհայտ՝ երկրի վրա, ծովի տակ:
Նա մի ճընճղուկ տեսավ ափին, զարմանալի մի թըռչուն.
Մրտնում է ծով ու դուրս գալով ավազի վրա թըփըրտում:
— Այ դու ճընճղո՞ւկ, ի՞նչ ես անում. — խոսեց արքան ժպտալով. —
Դու կհոգնե՞ս՝ քո թևիկներն այդքան արագ թափ տալով:
— Ուզում եմ ծովն այս կողմ բերել. — հրնչեց հեգնոտ
պատասխան. —

Տեսնեմ՝ ինչե՞ր կան հատակին, որ չէ տեսել դեռ արքան:
— Ինչքան անմի՛տ ես, ա՛յ թըռչնիկ, — խնդաց պոետն
իմաստուն. —

Ամեն անգամ քո թևերին երկու կաթիլ է նըստում.
Ինչպե՞ս պիտի տեղափոխես դու այս օվկիանն անհատակ:
Խելացընոր բաղձա՞նք է դա, թե՛ սրբամիտ մի կատակ:
— Անմիտը դո՛ւ ես, ո՞վ պոետ, և սընապարծ անսահման,
Որ քեզ թըվում է, թե գիտես ամեն գաղտնիքը բընության:
Անհուն մի ծո՞վ է տիեզերքն ու քո հոգին՝ մի թըռչուն,
Որ ինձ նըման մըտնում է ծով, իր թևիկներն է թըրջում:
Քանի՞ գլուխ ունես ուսիդ, որ գիտենաս ամեն բան,
Որ ըսպառես... և կըսպառվի՞. արդյոք, անտակ մի օվկիան: —
Ասավ թըռչունը և թըռավ, անէացա՞վ անըստվեր,
Ինչպես մի քար թըռած Դավթի պարսատիկից դեպի վեր:
Ծրգիչը լուռ մընաց ափին, հոգին մըռայլ ու խըռով,
Իսկ դեմը ծովն է շառաչում հավերժական խոհերով:

Ահա կանգնած է հողմածուփ օվկիանի մոտ իմ հոգին,
Բանաստեղծի նըման խիզախ, սթափ՝ նըման ճընճղուկին:

Նայում եմ ես քո վեհ կյանքին, քո գործերի պատմություն
Ու ինձ թրվում է, թե իմ դեմ ծրվում է գոռ մի օվկիան:
Կանգնած եմ ես ծովեզերքին՝ սրբալուստ դող ու կորով:
Քանի՞ կաթիլ կառնեմ, արդյոք, ես իմ երգի թևերով:
Ես ո՞նց անցնեմ կաղնիների կախարդական մի անտառ,
Ինչպե՞ս, արդյոք, ես բարձրանամ Հիմալայի նրման սար...
Ես երջանիկ եմ, որ ապրում եմ, Առաջնորդ, քո դարում,
Ու լենինյան քո պատգամներն եմ երգելով կատարում,
Թրուիքների քո մեծ դարում. երբ ամեն ժամ ու վայրկյան
Հասնում են մեր սավառակներն անհավասար բարձրության,
Ճախրում խիզախ ու բևեռի բերդերն անառ՝ նրվաճում,
Երբ հրեմվանքի միշտլորինյան այգեստաններն են աճում
Մեր լայնարձակ հայրենիքում, ուր իղձերով անեզեր
Թրուիք ու փառք է երազում ամեն մանուկ, ամեն ծեր:
Եվ ես ահա նստած երգի անձեռագործ ինքնաթիռ՝
Ուզում եմ խոլ հեռուն թռչեմ՝ մըրրիկներին դիմադիր:

Հյուսել անմահ քո էպոպեն... դժվար է շատ, ուժից վե՛ր:
Պետք է լինել կամ Ֆիրդուսի, կամ նոր, կախարդ մի Հոմեր:
Ահա հասակըդ մանկական... քո արծվաբույնը, Գորին,
Ուր լուսացայտ աշիկներով դո՛ւ նայեցիր աշխարհին.
Տեսար՝ անհաս լեռան վրա արծիվն է սեզ սավառնում,
Իսկ ներքևում հեռում է մարդը բեռան տակ ու մեռնում:
Ժողովրդի դարավոր վիշտը, զայրագին, ոնց որ ծով,
Օրրեց օրոցքդ և սրնեց քեզ դառնահամ իր կաթով:
Թողիր անհոգ պատանություն, կանաչ հովիտ ու անտառ
Եվ շոգ դաշտում հանգրստացող հրնձվորներին մոտեցար.
Տեսար՝ հերոսն աշխատանքի՝ ծամում է չոր ցամաք հաց,
Եվ լեռներում քո հայրենի՝ ցասման ամպրոպ որոտաց:
Դու երգվեցիր՝ սրբալուստ լի դյուցազնական մի կորով,
Փոխել աշխարհն իր անարդար, գազանային կարգերով,
Եվ ըստեղծել այնպիսի կարգ այս աշխարհում շեն ու լայն,
Որ քաջ մըշակը վայելե արդյունքն իր վեհ տրօնության:
Ահա դպրոց դիմեցիր դու՝ հոգիդ կանաչ մի տերև
Գիտություն մեջ որոնելու կենսատու լույս ու արև,
Որոնեցիր ազնիվ հոգի քո տենչերին կարեկից.
Քո դեմ կանգնած է քահանան ինչպես կյանքում մի սև բիծ:
Նա իր գրած մատյաններում կարդում է քեզ լոկ մի բան.

«Հավետ անշարժ են աշխարհի կարգերն ամեն, անսասան»:

— Ո՛չ,— որոտաց քո բաց հոգին,— շարժվում է կյանքն
անդադար,—

Եվ սեզ մազերդդ վեր տալով, ըմբոստ, ամբիոն բարձրացար,
Ու դիմեցիր ընկերներիդ քեզ պես կայտառ, կենդանի.

— Մեզ ուրիշ գի՛րք է հարկավոր՝ կյանքի համար պիտանի:

Ձեռք մեկնեցիր դու լենինին, ինչպես հրսկան հրակաշին

Ու նրա հետ մրտար օվկիանը տառապող՝ մարդկային:

Ահա Թիֆլիսըդ հայրենի. ահա Բաթումը, Բաքուն,

Ուր դու ցասման ամպրոպահույզ ամպեր էիր կուտակում,

Վեճերդ քոց՝ բանվորական ժողովներում բորբոքած,

Ուր պողպատե քո մատներով բռնում էիր դու նրանց,

Ակնոցավոր այն օձերին՝ շապիկներով դեմոկրատ,

Ու թափ տալիս, թունազրկում ու ջախջախում անընդհատ:

Բո լենինյան տիտանական պարսատիկի քարերից

Մենշևիզմի կուռքերը գոռ ընկնում էին գահերից:

Ահա քո դեմ հուդաների, դահիճների մի բանակ,

Որ քեզ որսում էր անդադար՝ թակարդներով իր անարգ,

Ահա նրստած ես դու Բաքվի Բաշիլովյան բռնատանն

Ինչպես մի նոր Պրոմեթեոս, սրտոտըդ հուր սըրբազան,

Ծրր շառաշում էին դրսում, ամբողջ երկրում շղթաներ.

Աքսորական հերոսների գունդն էր քայլում անվեհեր՝

Շըրջապատված ժանդարմների շընաթարո ոհմակով,

Մհա բանտի պատուհանից հընչեց հըզոր ձայնը քո.

— Գընաք բարո՛վ: Պահպանեցե՛ք ձեր շղթաները. նրանք

Մեզ պե՛տք կըզան ցարի համար... — Ու որպես վառ մի կըրակ,

Ընկերների հոգին այդ հույսն էր միշտ անմար փայփայում

Տառապանքի տարիներին, սիրիական տալգայում:

Ահա շղթան աքսորներիդ և փախուստներդ խիզախ,

Երբ քո հետքերն էին փընտրում ցարի շըներն աջ ու ձախ:

Անցնում էիր նրանց մոտով, ինչպես անտես մի ոգի,

Ու հավաքում ցըրիվ եկած գընդերը մեծ բանակի:

Եվ Հոկտեմբերը... Պիտերի փողոցներից արյունոտ

Արյունաքամ երկրի վըրա ծագեց մի նոր առավոտ,

Մեծ լենինի և քո խոսքերն, իբրև թըրեր, շողացին,

Իշխանության գըլուփ անցան բանվորը և գյուղացին:

Երբ տըրաքվեց հազարամյա կեղևը հին պատմության

Ու դուրս եկավ մի նոր աշխարհ, ինչպես մորից երեխան:

Ահա քաղաքացիական կրօնիկների էպոպեն,
 Երբ որ հըղի էր վըտանգով կյանքիդ ամեն մի րոպեն.
 Սովետների երկիրը՝ ժանտ ոսոխների օղակում,
 Խըռովություն, տեռոր ու դավ և սով ամեն քաղաքում,
 Շողում էիր դու, որպես շանթ հորիզոնից հորիզոն,
 Մոսկվայից Դոն, Դոնից Պիտեր, և Ուրալից էլի Դոն,
 Շամփրում բոլոր ոսոխներին: Գեներալներն ըսպիտակ
 Փախում էին խուճապավազ քո պողպատե զարկի տակ:
 Մերկացրիր դու անխընա ծրագիրը նենգ պարտություն,
 Որ պատրաստել էր Հոկտեմբերը վաճառող այն Հուդան,
 Դու կարմիր զորքը հաղթության անխաբ ուղին հանեցիր,
 Եվ Դենիկինը կործանվեց բանակներով ցանուցիր:
 Դու Մոսկվային, Պետերբուրգին ու ողջ երկրին տըվիր հաց,
 Ապրեց մանուկը հաղթության և հայր լենինը ժըպտա՛ց:
 Հյուսել անմահ քո էպոպեն — դըժվա՛ր է շատ, ուժից վե՛ր,
 Պետք է ծնվի մեր Ֆիրդուսին կամ նոր, կախարդ մի Հոմեր:
 Դըժվարության հազար լեռներ դու հարթեցիր անդադար,
 Կյանքըդ դարձավ դյուցազնական դըրվագների լեռնապար:
 Քո գործերի ամեն դըվագ, ամեն կատար անսասան
 Կվայելեր մի հերոսի որպես փառքի հուշարձան:
 Եվ բազմացե՛ղ այս աշխարհում, պարտեղներում այս դալար,
 Քեզ է երգում ամե՛ն բազուկ, ամե՛ն հոգի, ամե՛ն լար,
 Քեզ են երգում ժողովուրդներն իրենց անմահ երգերով
 Եվ քո անունն ամեն սըրտում դառնում է ույժ ու կորով:
 Բայց ոչ մի երգ դեռ չի հասել քո անառիկ բարձրության:
 Դեռ չի սպառել... և կըսպառվի՞, արդյոք, անտակ մի օվկիան:
 Կա քո մասին շարահյուսված քեզ արժանի մի պոեմ.
 Սովետական երկիր՝ է այդ: Կանգնած է նա որպես վեմ,
 Որպես ամրոց հողմագալար մըրրիկների կենտրոնում
 Ու վարդամատ արշալույսի դըրոշն է վառ ծածանում:
 Եվ դու, արծիվ այդ ամրոցի երկնակարկառ կատարին,
 Հեռաթափանց քո հայացքով նայում ես ողջ աշխարհին,
 Տեսնում անցյալը, և ներկան, և հեռավոր ապագան
 Եվ օջախները շարիքի և մեծ ուղին փրկություն:
 Արծիվ ես դու բարձրագընա և մարդ ես, մարդ իսկական,
 Քո սրտի մեջ կա մարդկային վեհ հույզերի մի օվկիան.
 Գըրկում ես դու մանուկներին, դու ծաղիկներ ես սիրում,
 Հիշում ես հին ընկերներին քեզ հետ ապրած աքսորում,

Չի մոռանում քո ջերմ խոսքերն ու քո ժրպիտը բարի
Քեզ հյուր եկած բանվորուհին մեր լեռնական աշխարհի:
Հըրճվում ես դու քո երջանիկ ժողովրդի հըրճվանքով,
Քեզ հարազատ են և լենին՝ն, և Բեթհովեն՝ն, և Չեխով:
Երբ գիշերվա ուշ պահերին, ծրխամորճից անբաժան,
Դու մագիստրալն ես որոշում մեր մարդկային պատմության,—
Հիշում ես քո Սվետլա՝նային, ու որպես հայր ըզգայուն,
Թերթում նըրա դասագըրքերն ու տետրակները նայում:
Չափել սահմանը քո սրբոյ՝ դժվար է շատ, ուժից վե՛ր.
Պետք է լինել մի Ֆիրդուսի, կամ նոր կախարդ մի Հոմեր:
Դու արգելքները պատմության խորտակեցիր մեծաբար.
Կյանքըդ դարձավ դյուցազնական դըրվազների լեռնապար:
Ահա կանգնած է իմ առաջ, որպես Մասիս բարձրաբերձ,
Ցարիցիյան քո էպոպեն և ես, անխոնջ բանաստեղծ,
Դեպի կատարն եմ մագըլցում՝ սըրտումըս դող ու կտրով՝
Մեր հայկական վիպերգության բազմադարյան ոտքերով:

ԴՐՎԱԳ ԱՌԱՋԻՆ

Կրեմլի անքուն սըրահներում տագնապ է, տոթ, եռուզեռ:
Հեռախոսները գիլ զանգում են անդադար ողջ գիշեր:
Քարտեզի դեմ կանգնած է նա, Իլլիչը, լո՛ւ ու լարված,
Հեռագրական համբավներով ու հարցերով պաշարված:
Հաղթության ելք է նա փընտրում, այրվում անխոնջ, անըսպա՛ռ՝
Շողացնելով ճակատն ինչպես հազարամյան մի լամպար:
Հուարձակներն իր հանճարի նետելով մոտ ու հեռուն՝
Պըտըտեցնում է դեպքերի քառսային գիշերում:
Անվերջ գըծում է քառսում հազար ուղի, հազար գիծ,
Լենինը ելք է որոնում օրհասական օղակից:
Արևմուտքում — այնտեղ, չըքնաղ Ուկրաինայի դաշտերում
Կալգերական սովալըլուկ երկաթե զայլն է ոռնում,
Հողոտելով քաղաք ու գյուղ՝ անցնում է նա անողոք
Մինչև հանքերը Դոնբասի, մինչև խաղաղ Տափասրոգ:
Արյունակըզակ լիզում է նա երկրի հյութերն—անընդհատ,
Դուրս է տանում վագոններով ցորեն ու ճարպ ու երկաթ:
Խըզված է լայնարձակ Սիբիրը Մոսկվայից, Պիտերից,

Իր հացառատ ավաններով, արոտներով հյութալից,
 Իսկ հարավում, խաղաղ Դոնի տափաստանում անսահման
 Կազակներին է գրըգրուում Կրասնովը՝ նենգ առաման,
 Զինում նրանց օտարերկրյա խոստումներով արնախում,
 Ստերլինգներով ու դոլլարով նա Ռուսաստանն է ծախում:
 Գիշատիչներն են լող տալիս Հյուսիսային օվկիանոս,
 Մովահենի գլրահանավն այնտեղ դեսանտ է հանում:—
 Եվ հյուսիսից, արևմուտքից, արևելքից, հարավից
 Նրանք խուժում են՝ ոռնալով արյան, ոսկու ծարավից:
 Ամենուրեք ռազմաճակատ, ինչպես հրե մի օղակ,
 Երկինք հասնող հրդեհներում խեղդվում են գլուղ ու քաղաք:
 Անդուլ սեղմում է թըշնամին և նոր ուժեր հավաքում,
 Եվ մըտածում է Առաջնորդըն այդ մահվան օղակում.
 «Նորից մրտել ենք պատերազմ՝ հոգնած և մերկ և անհաց,
 Եվ բախտը ռեուլուցիայի նըրա ելքից է կախված...»:
 Լենինը ելք է որոնում, հաղթանակի ճանապարհ՝
 Շողացնելով ճակատն ինչպես հազարամյան մի լամպար:
 Անդուլ սեղմում է թըշնամին օղակը ժանտ: Իսկ ներսից՝
 Մենշևիկները, էսերները, թըշնամուն դաշնակից,
 Մախված ոհմակը «ձախեր»-ի, և նա, մատնիչը, Հուդան,
 Դավ են նյութում, վիհեր փորում անիվի տակ պատմության:
 Նըրանք ճըշում են ջրղազար ժողովներում, փողոցում,
 Հանուն Մարքսի, հայրենիքի՝ ականջ և օդ սըղոցում,
 Բայց այցելում են գիշերով օտարերկրյա դեսպանին:
 Ու վաճառում իրենց երկիրն, իրենց պատիվն ու հոգին:
 Նըրանք նըվում են կեղծ, լալիս են, սաբոտաժ են անում՝
 Դարան մըտած՝ հայրենասեր հերոսներին ըսպանում,
 Եվ Մոսկվայում, Սամարայում, Սարատովում, Ռիբինսկում,
 Երկրի բոլոր կենտրոններում, երկրի սըրտում ու կրծքում
 Խըռովարար իրենց ուժերն են կուտակում տենդագին՝
 Զեռք մեկնելով դահիճներին—Կրասնովին, Կոլչակին:
 Դըրսից—ոսոխ, ներսից—ոսոխ, դավադրություն ու ոճիր,
 Ճակատներից ամեն վայրկյան գուժում է նոր հեռագիր,
 Գեպք է գալիս դեպքի վըրա, վըտանգի հետ՝ նոր վըտանգ,
 Դըղըրդում են դեպքերն ահեղ, կործանարար որպես տանկ,
 Նա մերթ նայում է քարտեզին, հեռախոսին մոտենում,
 Ու մերթ քայլում է ժպտալով՝ ձեռքը պահած գըրպանում,
 Ըստորագրում է դեկրետներ, գըրություններ ընթացիկ,

Բայց ներա կամքը՝ վիթխարի մի աղեղի նըման ձիգ՝
 Լարված է նույն նըպատակին, նույն թիրախին է նայում.
 Փընտրում է վըճռական օղակը պատմության շըղթայում,
 Այն օղակը, որից բռնած որպես կամքի մի տիտան՝
 Փոխեց նա սև ճակատագիրը բաղմատանջ մարդկության:
 Խնչպես այն գետը հորդաջուր դեպի օվկիան հոսելիս,—
 Երբ որ հանկարծ երկրաշարժից լեռները փուլ են գալիս
 Եվ ներա հուըն խանդարում,— ուռչում է բուռն, անդադար,
 Եվ լեռան կուրծքը պատռելով բացում է նոր ճանապարհ,—
 Այդպես Լենինն է կուտակվել, ահագնացել, վարարել,
 Ներա համար չըկա վիճակ անհուսալի և անել:
 Միտքը փորում է անդադար մի նոր ընթացք, ուղեգիծ.
 Լենինը ելք է որոնում օրհասական օղակից:
 Բայց ի՛նչ են իմպերիալիզմի տանկերը գոռ, համարձակ,
 Եվ ցարական գեներալները՝ Կորնիլով ու Կոլչակ,
 Մենշևիկյան, էսերական դավերը նենգ, այլանդակ,
 Որ մըկների նըման փորում են վիթխարի լեռան տակ,—
 Ի՛նչ է նըրանց մահվան գալարքը մոլեգին և շըփերթ,
 Երբ նըրանց դեմ կանգնած է իները—պատմությունն իբրև բերդ,
 Երբ նըրանց դեմ կանգնած է իները—ժողովուրդ մի հըզոր,
 Լեռների պես անընկճելի, պատնեշներով բյուրավոր:
 Ձէ՛ որ ներա շա՛րքերի մեջ, միշտ ներա հետ, միշտ առաջ,
 Բուլշևիկներն են արշավում արժիվների նըման քաջ,
 Որոնք սովոր են սըրաթև դեպի արև սավառնել,
 Ու հայրենի հողի համար կռվել, հաղթել ու մեռնել:
 Արդեն ռազմի ճակատներում Կարմիր գընդերը խիզախ
 Հաղթանակի, փառքի համբավ են տարածում աջ ու ձախ,
 Վորոշիլովը դոնբասյան բանվորների բըռուցքով
 Կալգերական բանակների երկաթե քիթն է փըշըրում,
 Շչորսն է նետվում դեպի ոսոխ աքիլլեսյան մոլուցքով
 Գումարտակները կոփելով մըշտաբորբոք մարտերում,
 Այդ Շահումյանն է ծածանում Բաքվի վըրա համարձակ
 Սովետների իշխանության բոսորափայլ դըրոշակ,
 Այդ Ջապակն է սըլանում հողմի նըման մարտից մարտ,
 ✓ Վազում է փառքն իր առչևից իբրև ահեղ ավանգարդ,
 Այդ ժողովուրդն է տնրսպառ, հավերժական, որպես հող,
 Թևավորված կոմունիզմի պատգամներով լուսաշող,
 Ի՛նչ են ներա հորձանքի դեմ գընդերը սև, ըսպիտակ.
 Ժողովուրդը կըպահպանի իր հայրենիքն անխորտակ:

Բայց կա ուրիշ մի թըշնամի՝ տանկից, դավից էլ ահեղ,
 Հրետանային թընդուններից ու հըրդեհից խեղահեղ,
 Բըռնում է նա հերոսներին իր ժանտ, ոսկրոտ մատներով,
 Նըրա շընշից խամրում են կամք, խիզախություն, ու կորով,
 Հըսկան ընկնում է ուժասպառ, հանճարի լույսը հանգում,
 Մայլը սիրած մանկան համար դառնում է գալլ արնախում, .
 Նըրա շընշից թռչում է սեր, ալտերի վարդ, ու կըրակ,
 Մաղկափըթիթ գեղեցկուհին դառնում է գեշ մի կըմախք, —
 Հոգին դառնում է անապատ, խամրում են իղձ ու երազ,
 Կյանքի ծառից մարդիկ ընկնում են՝ շըծաղկած դեռահաս...—
 Այդ սովն է, սովը սոսկալի — նա մոտեցել է արդեն,
 Կանգնած է նա Հոկտեմբերյան ժողովըրդին դեմ առ դեմ,
 Ոսկրոտ իր ձեռքը կարկառած քաղաքների կոկորդին՝
 Քայլում է նա և շողացնում իր ահավոր գերանդին:
 Քայլում է նա և իրեն հետ մոլուցք ու կիրք է բերում,
 Կըրճըտացնում է ատամներն անհուսալի հերթերում,
 Կըրճըտացնում է ատամներն ու կատաղի նըվում. «Հա՛ց»...
 Իսկ հացն այնտեղ, կուլակային ամբարներում է թաղված:
 Փըտում է հացն ամբարներում, կամ երկրից դուրս է հոսում,
 Որ դառնա փող, ու թնդանոթ շուկաների քառսում:
 (Դըրսից՝ ոսոխ, ներսից՝ ոսոխ, սովը՝ նըրանց դաշնակից.
 Լենինը ելք է որոնում այդ եռատակ օղակից:
 «Հացն է օղակը հիմնական,— վըճռում է նա համարձակ,—
 Հացի համար կազմակերպել խաշակըրաց արշավանք»:
 (Մերկացըրած սըրի նըման միտքը շողում է գըլխում,
 Նա առյուծի մի ոստյունով դեպի գըրիշն է նետվում:
 «Իրասնովն ուզում է Ռուսիայից անջատել Դոնն ու Կուբանն
 Ու այդ մարզերը հացառատ հանձնել օտար պետություն,
 Զըրկել հացից սովալըլուկ մեր բանվորին, գյուղացուն:
 Ժողկոմսովետը ժողովըրդին դեպի պայքար է կոչում!
 Կոչում է ձեզ դեպի պայքար՝ հանուն հացի ու կյանքի.
 Պետք է խըլենք մեր հացն ու կյանքը՝ պարագիտ կուլակի,
 Սպեկուլանտի ճիրաններից՝ զենքի ուժով անխնա՝
 Ոչ միայն հող ու գործարան, այլ հացն էլ պետք է դառնա
 Համայնական: Պետք է մաքրել երկաթուղու ամեն գիծ
 Կոլչակային խուժաններից, կրասնովական ոճմակից:
 Պետք է ստեղծել աշխատանքի հանգըստավետ մըթնոլորտ,
 Որ բարիքով լըցվի, աճի երկիրը մեր կենսահողդ:

Թող բյուրավոր պրոլետարները, Մոսկվայի, Պիտերի, Կազմեն հացի գումարտակներ, գընան խորքերը երկրի, նո խըլեն հացը թըշնամու կըպչուն ու կարծրը ձեռքից. Ոչ հողը, ոչ իշխանությունը, ոչ էլ հացը փըրկիչ՝ Մենք շենք զիջի ժողովրդի դահիճներին արնախում: Կրասովն ու սովը ձեռք-ձեռքի են մոլեգնած հարձակվում: Մա՛հ երկուսին: Ի զե՛ն — Պիտե՛ր, ի զե՛ն — Կուբա՛ն, Դո՛ն — ի զե՛ն» —

Ջանգահարում է Ստալինին: Կոչը պատրաստ է արդեն:

Գալիս է նա սահուն, հանգիստ ու համաչափ քայլերով, նույն ծըխամորճը շուրթերին. կարծես անհոգ, անխըռով: Իլիչն ուրախ և սիրալիր դիմավորում է նրան, նվ ըսկըսում անմիջապես.

— Սովը կանգնած է դռանը:

Նվ մոտ է շատ, չափազանց մոտ է փըլուզումն ահռելի. Ահավոր ծանրը մայիսից հետո կըգան ավելի Քան ծանրագույն, հունիս, հուլիս և օգոստոս: Անկասկած, երկրի վիճակը ծայրահեղ իրեն լարման է հասած... Նվ գուցե սա է ճըգնաժամն ամենասուր և շատ բարդ: Գալիս են դառըն փորձություն ըազմաթիվ օր ու շաբաթ, եթե այսօր փըշըրենք նրանց դիմադրությունը դըժնի Նվ մեզ հացով ապահովենք, մինչև որ հունձը հասնի, Արդեն անհաղթ ենք... —

Շեշտակի նա ժողկոմին է նայում:

Մի պահ տիրում է լռություն Կրեմլի կըլոր սըրահում: Մուխն է ելնում ծըխամորճից բազմադալար խոհի պես, Մըխի միջից երկու հայացք, երկու արծիվ սըրատես, Իրար դիտում են, թափանցում ու կըռահում են խիզախ, Չափում ամեն մի խորություն, ցըրում ամեն մըթընշաղ: Ու բարձրանում է սիրտը ջերմ, ինչպես ալիքն օվկիանոս: Մըտերիմ ցա՛վ է այդ, արդյոք, թե՛ հիացմունք է անհուն. Իլիչը շատ է գունատվել, կարծես հոգնած է, հիվանդ... Սակայն ոգին փըթթում, ծաղկում է ինչպես հողն արգավանդ: Ինչպես հըստա՛կ է նա տեսնում հորիզոնները, հեռո՛ւն, Ինչպես խիզախ է նա ճախրում ամենակուլ բոցիբում, Ինչպես տեսնում է պայքարի ամեն կեռման ելևէջ. Կըշռում է նա դասակարգերն՝ ասես առած ափի մեջ:

Բայց ժամը չէ... և թող լրոհեն կարեկցություն, հիացում:
 Եվ Ստալինը մեղմ, դանդաղ իր կարծիքն է հայտնում.
 — Ջրկան: անել դրություններ. հիանալի է ասված:
 Հացն է օղակը հիմնական, և կունենանք նաև հաց:
 Դրա համար մենք ուժ կըտանք Հարավային ճակատին:
 Պետք է հրզոր հավատարիմ ձեռք ուղարկել Ցարիցի'ն:
 Ցարիցի'նը գորավելով ներանք Դոնից մինչ Ուրալ
 Կըմիանան ու կըստեղծեն մեր դեմ ճակատ միացյալ,
 Կառնեն Հարավ ու Կասպ — անբավ այդ ամբարները հացի,
 Կըպաշարեն և զորքը մեր Հյուսիսային Կովկասի,
 Հետո, Դոնից մինչև Ուրալ, մեկ ճակատով, միաձուլ
 Կըհարձակվեն Մոսկվայի վրա: Ոչ, մենք անխոնջ և անդու
 Պիտի կանգնենք Ցարիցի'նի պաշտպանության դիրքերում:
 Հաղթանակի բախտը հիմա այնտեղ է լուկ վըճըրվում:
 Ցարիցի'նը չըտալ, մեռնել, բայց պահպանել Ցարիցի'ն —
 Այս կլինի մեր պայքարի նըշանաբանը մեկին:
 — Իրավացի՞ եք... աշխուժով Իլլիչը վեր է կենում,
 Քայլում արագ՝ բըթամատերը բաճկոնի թևերում:
 (Կարծես մեկ սիրտ է փոթորկվում երկու հզոր կրծքի տակ,
 Երկու գըլխով է լույս տալիս մեկ միաձուլ արեգակ:
 Ինչպես որ Մարքսը և էնգելսը, դեռ իրար անծանոթ,
 Որոնելով մարդկային ցեղը փը'րկելու ճանապարհ,
 Պայծառատես մըտքի թևով հայտնըվեցին իրար մոտ,—
 Այդպես Իլլիչն ու Նա հոգով հաճախ կանխում են իրար:

Ու մայիսի քըսանինին ժողկոմների Խորհըրդում
 Լենինն արդեն այն պատմական վըկայականն է կարդում.
 «Ժողկոմ ընկեր Ստալինը,— շեշտում է նա ամեն տառ,—
 Հաստատվում է Հարավային Ռուսաստանի դեկավար՝
 Երկրին պարեն հայթայթելու: Եվ նա ունի անսահման
 Իրավունքներ: Ժողկոմիորհները, մարզային, տեղական
 Զոկատների պետերն ամեն և շտաբները նըրանց,
 Երկաթուղու կոմիտեներն ու վարչական ամեն անձ,
 Մոլի, գետի առևտրական նավատորմները բոլոր,
 Հեռագրական ու փոստային ամեն հիմնարկ, լիազոր—
 Եվ պարենի կոմիտեները — պարտավոր են, անշեղ
 Նըրա ամեն կարգադրություը կատարել ամեն տեղ»:

ԴՐՎԱԳԻ ԵՐԿՐՈՐԴ

Անցավ գիշերն իր խոհերով երազներով անքննին։
Աշտարակները վերամբարձ՝ դեռ լուռ հսկում են Կրեմլին։
Կլերիկն բացվեց մի առավոտ, վառողաբույր ու մրուսյլ,
Քաղցի վագրերը հերթերում ըսկրսեցին մըմըռալ,
Խոժոռ ճակատը երկնքի ճեղքեց կայծակն իր թըրով,
Դեպի հարավ նահանջեցին ամպերը գորշ գնդերով։
Եվ ռազմիկները, որ կանգնած են մարտական շարքերում,
Ու հայացքները սովատանջ հույսով հառել են հեռուն,
Այդ ռազմիկները պանծալի՝ հոգով ուրախ են, հըպարտ.
Գիտեն, որ նա կառաջնորդի նըրանց այսօր դեպի մարտ.

Նա—Լենինի ամենամոտ ընկեր ժողովոմ Ստալինն,
Ազնիվ որդին ժողովրդի ու սլարտիայի սիրելին։
Ահա Սպասյան դարպասի մոտ նրա ժըպիտն է շողում։
Նա մոտենում է, բարեւում՝ զըվարթաձայն ու խոհուն։
Փայլատակում են սըվիններ, օդում թընդում է ուռան,
Ելնում է նա զըրահապատ, ու մարտիկները նըրան
Ագահ դիտում են... Ջինվորի անշուք շինելը հագին,
Հարազատ աստղը մահուդյա սաղավարտի ճակատին,
Դիմում է նա գումարտակին։

Խոսքերը ջերմ են, հըստակ։

Եվ բարախում է սիրտն ազնիվ ամեն մեկի կըրծքի տակ։
— Սովյալ երկրին հասցընել հաց... Խնդիրը ծանր է, հըսկա։
Եվ պատմական է, պատվավոր։ Ամեն ռազմիկ թող ըզգա։
Պետք է պատռել հազար շըղթա, անցնել հազար ծուղակից,
Պետք է մաքրել երկաթուղին՝ ամեն կայան, ամեն գիծ...

Մոտորների որոտը գոռ բըռնել է օդ ու գետին.

Այս Կոմիսարն է Լենինյան զընում Կարմիր Ցարիցի'ն։

Նա վագոնում խաղաղ նըստած՝ իր ժըխամորձն է ծըխում,

✓ Եվ խոհն ինչպես Թուր-Կայծակին փայլատակում է Կըլխում.

«Տրոցկին խարդախ է, խորամանկ, և խորթ է նա Իլյիչին։

Իլյիչն արծիվ է լեռնային, իսկ նա՝ մըժեղ մի չընչին։

Երկչոտ աղվես՝ հոկտեմբերյան առյուծի մորթի հագած։

Նա Բըրեստում ժողովըրդին դավաճանեց՝ անկասկած։

Ինչպե՞ս նա դեմքը չար ծըռեց, աչքերը նե՛նգ շողացին.

Երբ որ Իլիչն առաջարկեց մարդ ուղարկել Ցարիցին,
Ուրեմըն դավ կըլարի նա կըխանգարի՝ աջ ու ձախ՝
Կըրասնովյան խավարամուլ ոհմակներին աջակից:
Պետք է ջարդել նաև նըրա դիմադրությունը խարդախ,
Որ հաց հասնի Կարմիր Մոսկվա վանդեական հարավից»:

Լեցվում է օգը հաղթական մոտորների որոտով:
Տափաստանում կապույտ մըշուշն է ծավալվում Խրբե ծով:
Նա վազոնում նըստած հանդարտ՝ բեխերն է խիտ՝ ոլորում
Եվ խոհն ինչպես հուժկու կայծակ՝ լուսավորում է հեռուն:
«Տրոցկին ոսոխն է Իլիչի... Մեղքեր ունի նա անթիվ:
Բայց մի չընչին մըժեղ է նա, Իլիչը սեղ մի արծիվ:
Որ սավառնում է՝ հեզնելով ամեն մըրրիկ ամեն բուք:
Լողում է նա օվկիանոսի ալիքներում ինչպես ձուկ»:
Եվ ինքնիրեն նա վերհիշում է այն օրերն ահավոր,
Երբ միլիոնները մարդկային — ռամիկ, ռազմիկ ու բանվոր —
Պատերազմի արյունահորդ ամպրոպներում գաղաղած՝
Տենչում էին՝ խաղաղություն, ազատություն հող ու հաց,
Մինչ «պատերա՛զմ» էին ճըշում «մինչև վախճան հաղթական» —
Գեներալներն արյունկըզակ ամեն նեխվածք ու տականք,
Իրբ «Նապոլեոնը» հացկատակ, այդ՝ պատմության ծաղրածուն,
Բուլշևիկյան մեծ պարտիւլի ուժը հատակ էր քըշում,
Երբ գավթամուլ դիվիզիաները, դեռ հըզոր ու դըժխեմ,
Կանգնած էին մեր հոգնաբեկ, հուսալըքվող զորքի դեմ,
Երբ ոսկեզոծ Արևմուտքի «սոցիալիստները» ծախված
Եղբայրասպան բանակներին՝ առնում էին, իբրև վարձ,
Թնդանոթի մագնատներից մինիստրական պորտֆելներ, —
Խառնիճաղանջ այդ օրերին պարզեց Իլիչն անվեհեր
Սովետական հեղաշրջման աշխարհացունց դըրոշակ:
Այդ մի թրոխք ռհավոր, սուզումն էր այդ՝ մինչև տակ:
Սակայն Իլիչը պարզ տեսնում էր ամեն ելք, ամեն գիծ,
Դըրա համար նա չէր սարսում ոչ մի խիզախ թրոխքից:
Պայծառ հոգով տեսնում էր նա պայքարի մոտն ու հեռուն,
Տեսնում էր՝
Մոտ է հաղթանակն օրհասական մարտերում,
Ռուսաստանում հեղաշրջումը վերջ կըտար ըսպանդին,
Եվ կըշողար Արևմուտքում նըրա կարմիր գերանդին:
Հեղաշրջումը կատարվեց... Բայց Դոխտոնինը խարդախ

Չէր ենթարկվում բուշեիկյան ժողկոմխորհին. անհապաղ
Չէր կամենում զինադադար հայտարարել ճակատում:
Շարունակում էր պատերազմը, կործանիչ, արնախում:
Հիշում է պարզ... կանգնած էին հեռագրական արկղի դեմ՝
Տագնապահույզ Իլյիչն ու ինքը: Ծանր էր ժամը, դժվար:
Խրոշմարար գեներալի ձեռքումն էր ուժն այդ պահին:
Տասնևերկու միլիոնանոց բանակի ուժն ահագին:
Եվ ըսպաներ ու յունկերներ,

ամեն կարիճ ու զեռուն

Ապրստամբում էին արդեն տագնապալից Պիտերում
Սովետական կարգերի դեմ: Այն շիկացած օրերին,
Երբ Կերենսկու վարձու բանակն էր մոտենում Պիտերին...—
Ահեղ էր ժամը... Եվ Իլյիչը լուռ կանգնած ինքնասույզ,
Հետո, հանկարծ, նրա դեմքին փայլատակեց ինչ որ լույս.
Արդեն վրճոեւ էր: Եվ ասավ.

— Գրնանք՝ առանց հապաղման,

Ռադիոն մարդուն երբեքցե պետք չէր եղել դեռ այսքան:
Եվ նա ստահակ Դուխոնինին հանեց ռադիո հրամանով
Եվ կոչ արավ զինվորներին նրա գլխի վրայով՝
Շրջապատել ըսպաներին, վերջ տալ կրավին շարադետ,
Եղբայրանալ գերմանական բազմաշարչար զորքի հետ,
Ու հաստատել խաղաղությունը ձեռքերով սեփական:
Այդ մի թռիչք էր դեպ անհայտը... Բայց Իլյիչն անսասան
Նետվում էր ծովը դեպքերին: Նա հասկանում էր հրստակ
Փոթորկի ուժը և լեզուն ալիքներից մինչև տակ:

Թընդում է օդը մարտական մոտորների որոտով:
Երկաթե երթը ժողկոմի արդեն հասնում է Կոզլով:
Նա արծվային իր աչքերով ագահ դիտում է ուղին,
Հարցեր տալիս, ուշիմ լըսում ամեն անցնող-դարձողին:
Ճակատներից իրեն հասնող հեռագիրները հատու,
Պատասխանները կըցկըտուր Դոնից փախած գյուղացու,
Նըրան հերիք են, որ տեսնի դեպքերի հունը շրջթան,
Ընտրի հարվածը և բռնեն անտարակույս հաղթության:
Լուսամուտից նա միգասքող տափաստանին է նայում
Եվ բոցկըլտում է խոհն, ինչպես հալոցքը թեժ դոմնայում.
Սովյալ երկրին հասցընել հաց... Խընդիրը ծանր է, դժվար.

Պետք է անցնել դավի, մահւան կախարդական մի աշխարհ,
 Պետք է հաղթել կրրասնովյան յոթգլխանի դեերին,
 Պետք է գըտնել ամեն դըռան, ամեն հոգու բանալին:
 Բայց որքան մեծ են վըտանգներն ու հաղթանակը հեռու,
 Այնքան աճում է նըրա կամքը և ոգին՝ հաղթելու:
 «Մոսկվա, Կըրեմլը, Ժողկոմխորհ,— տալիս է նա Իլյիչին
 Իր ծըրագիրը նախնական, իր հեռագիրն առաջին,—
 Հասա Կոզլով: Շարունակում եմ ճանապարհը հաջող:
 Ուղարկեցեք ինժեներներն ու բանվորներն հասկացող:
 Պետք է արագ նորոգել գիծը Խասավ-Յուրդ ու Պետրովսկ
 Ու կառուցել՝ Կըջլար—Բըյանսկ երկաթուղին: Այդ է լոկ
 Հացն անվըրեպ ցանկալի տեղ հասցընելու ճանապարհ:
 Ցարիցինի երկաթուղին չի դիմանա շատ երկար:
 Բաքու նամակ եմ ուղարկում: Հաղորդեցեք նորույթները:
 Ու ծըխամորճը շուրթերին՝ նըստած է նա ողջ գիշեր:
 Դեռ նոր էր շողն արեգական ցողի վըրա փայլվըում,
 Նըրա գնացքը կանգ առավ Ցարիցինյան կայանում:
 Վաստակաբեկ հըսկայի պես լոկոմոտիվը հեաց
 ✓ Ու Վոլգա-մայըը շառագույն իր ժըպիտով երևաց:
 Փըռված ափի երկարությամբ, իր դարուփոս թաղերով,
 Խուլ դըղըրդում էր Ցարիցինը: Սուլիչները խըռով
 Անգլիական թընդանոթի գործարանից կանչեցին:
 Շոգենավերը լի հացով կանգնած էին եզերքին:
 Այս Ցարիցինն է: Ուղիներն այստեղ իրար են գալիս,
 Այստեղ ինչպես երկու քույրեր ծունկը ծընկի են տալիս
 Վոլգան ու Դոնը խաժաչյա: Եվ քարածուխը Դոնի
 Հյուսիսային անտառն առատ, ազնիվ մետաղն Ուրալի,
 Ու Բաքվի նավթը, հարավի ցորենը հորդ ինչպես ծով —
 Գալիս անցնում են անդադար ցարիցինյան հանգույցով:
 Այստեղ իրար են հանդիպում երկաթուղու երեք գիծ,
 Որոնք գալիս են Մոսկվայից, խաղաղ Դոնից, Կուբանից,
 Ու Վոլգայով անթիվ նավեր գընում են Կասպ ու հեռուն:
 Ցարիցինի փառքը գընգում է հեռավոր ափերում:
 Գործատերերը Փարիզի, վերակացուն լորդական
 Այստեղ թողին մետաղաձուլ զործարաններն ու փախան,
 Այստեղ անտառ են մըշակում քառասունվեց գործարան:

Պրոլետարիատն այստեղ հըզոր է իր ոգով լենինյան:
Հենց դրանից է, որ բացել է իր երախն ահաբեկ
Թեակցիայի կատաղած գայլը Հարավից-Արևելք,
Ձրգտում է կուլ տալ Յարիցինը, որ շարժվի հաղթական
Դեպի Մոսկվա, դեպի երկրի գլուխն ու սիրտը: Սակայն
Ամուր խրված է Յարիցինը, ոնց որ սեպ անխորտակ.
Գայլի կոկորդը և գազանը չի կարող այլանդակ
Իր ծընոտներն իրար բերել... Եվ Կոմիսարը դարձյալ
Մըտքում կրկնեց. «Այո, մեռնել, բայց Յարիցինը չըտալ»:

Կայարանի սյետն հորանջում և արթնանում է քընից:
Նըրան կանչել է մի Ժողկոմ հենց նոր եկած կենտրոնից.
Գընում է նա դեպի վագոն և մըտածում ծուլաբար.
«Գալիս անցնում են իմ գըլխով օրը քսան կոմիսար»:
Ահա և սա. բեխերը թավ, մազերը սև, արծվաքիթ:
Ոտքի ելավ, առաջ եկավ, թեթևաքայլ ու հանգիստ.
— Ասե՛ք, ընկեր, ինչո՞ւ ձեզ մոտ այսքան վագոն է կանգնած:
Որքա՞ն ունեք շոգեքարշեր: Քանի՞սն են ողջ: Վտանգվա՞ծ:
Եվ տխրած պետը կանդ առավ: Չունեն որոշ պատասխան:
— Ասե՛ք, խընդրեմ. պարենով չի կառախըմբեր ձեզ մոտ կա՞ն:
Օրը քանի՞սն եք ուղարկում դեպի Մոսկվա ու Պիտեր...
Լոնց պետն ու կանդ առավ կաթվածահար: Չըգիտեր:
— Ասե՛ք, ինչպե՞ս են բուրժուաները ձեր անհոգ աշխարհում
Եվ օրական ինչքա՞ն են հաց և այլ պարեն ըսպառում:
— Ինչքան ուզեն. Յարիցինում առատ է հացն ինչպես ծով,—
Պատասխանեց վագզալի պետը տեղական պարծանքով:
— Իսկ դուք լըսե՞լ եք... Բանվորները Պիտերում, Մոսկվայում
Թեփով թըխած ութերորդ ֆունտ հացի հերթեր են պահում...
Սակայն պետը դուրս սողոսկեց քննությունից այդ ահեղ
Ճակընդեղի պես կարմըրած, լարված ոնց որ նետադեղ:
Նա ինքնիրեն խոսում էր. «Սա... ուրիշ նյութից է թըխված:
Սա ճառ չասավ, չըբարկացավ, բանտարկելով չըսպառնաց:
Միայն ծըխում էր ծըխամորճ ու մեղմ հարցեր էր տալիս,
Բայց այնպիսի կըրակ հարցեր, որ սիրտըդ եռ է գալիս,
Որ դու պատրաստ ես խորտակել ամեն արգելք, ամեն թումբ,
Ինքըդ դառնալ հացի պաշար, հացի վագոն, կառախումբ...»:
Յարիցինի կայարանում տագնապ է, տենդ, եռուզեռ:

Շոգեքարշերը զիլ սուլում են ամբողջ օր ու գիշեր:
 Պատրաստ կանգնած են գրնացքները լի ձկնով ու հացով:
 Ապրանքատար վագոնների երկար ու ձիգ փողոցով
 ժողկոմն անցնում է համրաքայլ, հաշվում ամեն մի վագոն
 նվ ըստուգում շոգեքարշերը հարցերով իր ըզգոն:
 Նկավ կրկին կայրանապետը ժրպտալով հևասպառ,
 Ջինվորական բարե տըվեց, կանգնեց ուղիղ ինչպես ծառ:
 — Ընկեր ժողկոմ,— հընչեց նրա ձայնը խորոխտ, հրգեցիկ.—
 Այսօր հացի երեք հարյուր վագոն Մոսկվա ճամփեցինք:
 Բանակայինն է մոտենում, պատվի բռնում ուշադիր.
 — Ընկեր ժողկոմ, ընդունեցեք ժողկոմխորհից հեռագիր:
 Նա հեռագիրն առնում է շտապ: Տիրում է խոր լըռություն:
 Նա մոտենում է լապտերին և հեռագիրը կարդում.
 «Շտապ. ժողկոմ Ստալինին: Հունիսի յոթ: Ցարիցին:
 Այսօր ցերեկ մի ձախ էսեր ումբով խրփեց Միրբախին:
 Այդ Անտանտին կամ ցարամոլ սև ուժերին է օգնում:
 էսերները մարդասպանին հանձնել չէին կամենում:
 Ձերբակալել են Լացիսին, Ձերժինսկուն ու մեր դեմ
 Ապրստամբել: Հենց այս գիշեր մերոնք անահ կըճընշեն:
 Եվ մենք կասենք ժողովրդին, առանց գաղտնիք պահելու,—
 Պրովոկացիոն պատերազմից մեկ մազաչափ ենք հեռու:
 Ամենուրեք պետք է ճընշել, անողոք զենքը ձեռին,
 Այդ հիստերիկ, ողորմելի, արկածամոլ ցեցերին:
 Գրեք Բաբու Շահումյանին, թե գործն ինչպես է գընում.
 Գերմանացիք խոսք են տըվել մեր դեսպանին Բեռլինում,
 Որ թույլ չըտան տաճիկներին Բաքվի վըրա հարձակվել:
 Դըրա համար նավթ են ուզում: Իհարկե, պետք է զիջել:
 Այսպես է: Ձախ էսերների հանդեպ եղեք անխընայ:
 Հաճախակի հաղորդեցեք: Լենին»: Կարդում է լուռ նա,
 Ցասման ալիքը բարձրանում, ալեկոծում է հոգին,
 Ու փըշըրվում է՝ դիպչելով կամքի ամուր քարափին:
 Նա շտապ գընում է իր վագոն, թեթևաքայլ, շանթալից,
 Ջինակիցները վազելով հազիվ հասան ետեից:
 Ու հեռագրով է անհապաղ. «Մոսկվա, ընկեր Լենինին:
 Այսօր հենց՝ մարդ կերթա Բաբու նամակի հետ միասին:
 Իսկ հիստերիկների հանդեպ մեր ձեռքը չի կարկամի:
 Ուժ կունենանք թըշնամու հետ վարվել իբրև թըշնամի»:

ԳՐՎԱԳ ԵՐՐՈՐԿ

Նա դուրս ելավ Ժողկոմխորհից՝ հոգով թունոտ ու մրուայլ։
Ինչպես մարտում օրհասական տանուլ տըված գեներալ։
Կարինետում նըստած է այժմ՝ ձեռքը շոգ ճակատին,
Փայլում է պազ, ոնց որ դաշույն ակնոցների ապակին։
Ծակատներից ամեն վայրկյան գալիս է նոր հեռագիր,
Պարեն ու զենք են պահանջում զորամասերը կարմիր,
Հեռախոսները խռպուտում են, ողջ գիշեր առանց քուն՝
Կոմիսարներ են ըսպասում կարինետի միջանցքում,
Եվ հայհոյում են. «Ո՞վ է դա, առանց հերթի մըտած ներս,
Որ ժամերով Զինժողկոմին ըզբաղեցնում է այդպես»։

Կարինետում ճարտարագետ Ալեքսենն է նըստած։
Եվ Զինժողկոմը նըրա հետ խոսում է ջերմ, սըրտաբաց։
Ուղիղ նայում է նա նըրան՝ մերկացնելով իր հոգին,
Շողացնելով դեմքին ժըպիտ և ակնոցի ապակին։
Մի պահ կարծես կասկածելով, կարծես վախից այլայլված,
Ճարտարագետ Ալեքսենը շեշտակի տըվավ հարց,
Նա կամեցավ նըրա հոգին մինչև հատակը բանալ։
— Ասեք, խնդրեմ, ընկեր Ժողկոմ, ինչպե՞ս, արդյոք, հասկա՞նալ
Ձեր հըրահանգը... — Հասկացե՛ք այնպես, ինչպես ես տըվի։
Եվ որպեսզի ավելի պարզ, աներկիմաստ հասկացվի,—
Հաղորդեցեք Սավինկովին, որ նա գործի անվարան,
Որ լենինի վերաբերյալ մենք համաձայն ենք նըրան,
Որ իրազեկ ու համաձայն են լիզերներն աջերի
Ու ձախերի խըմբակը... Պա՞րզ է։ Աներկմի՞տ։ Անթերի՞...
Ճարտարագետ Ալեքսենը հուզմունքից գունատվեց։
Ոտքի ելավ. — Ամեն ինչ պարզ է։ Որոշված է։ Այդպե՛ս...
Գընդակ ու սով կըգան Մոսկվա Դոնից՝ հացի փոխարեն։
Ոչ ես Մոսկվա կբերեմ նավթ, ոչ Ստալինը՝ պարեն։

Նըվազախումբը զիլ թընդում է բազմամարդ բովվարում։
Պաշտոնաթող օֆիցերները մազուրկա են պարում՝
Փախըստական տիկիներին նազուկ իրանը զըրկած։
Վիտրիններում ինչքան ասես՝ օղի՛, երշի՛կ, ճերմակ հա՛ց։
Ի՛նչ երջանի՛կ է ծարիցինը, ինչ առա՛տ, հյուրասե՛ր։

Երկրի բոլոր կենտրոններից այստեղ փախած բուրժուաներ
Ազատ շրջում են Վոլգայի տեռասավոր եզերքին՝
Շողացնելով մատնիքների ազնիվ քարերն ու ոսկին:
Ազատ շրջում են փողոցում և ըսպասում անխրոով,
Մինչև քաղաք մըտնի Կրասնովն իր ըսպիտակ զորքերով:
Մինչդեռ այնտեղ, գետեզերյա բանվորական թաղերում,
Մարդկանց արյունն ուրիշ կյանքի երազներով է եռում:
Այնտեղ հընչում են լենինյան բոցաբարբառ պատգամներ,
Ծըխնելույզները վիթխարի այնտեղ պահակ են կանգնել:
Այնտեղ վիճում են մոլեգին, բանում, զինվում օրն ի բուն,
Հընոցապան Իվան Կովաչը բարձրանում է տրիբուն
Ո՛հ ծանրախոհ ծեծում, կըռում, բոցավառում է հոգին.
Բարձրացնելով բրուկնցքը վեր մուրճի նըման ահագին:
Հանգչում է լուռ արևն արնոտ բլուրների ետևում:
Ամպերը վառ բոսորագույն աֆիշաներ են թըվում
Եվ կամ կախված հորիզոնից ոսկենըկար մի քարտեզ,
Որ կըռահում է մարդկության ոսկյա գալուցը կարծես:

Ալեքսեևն ու որդիները, խիստ լարված, մըտախոհ,
Թափառեցին Ցարիցինում առավոտից երեկո:
Չափը փեցին երկարութունն ու լայնքն ամեն փողոցի,
Մըտան շտաբը ռազմական Հյուսիսային Կովկասի:
Ծարտարագետը պահակին տըվեց երեք անցագիր:
Ու Սվետոզարը խիստ խոժոռ պատասխանեց. — Սպասի՛ր:
Բայց գեներալ Նոսովիչի քարտուղարները նըրան
Զինվորական ողջույն տըվին ու կաբինետը տարան:
Նա գեներալ Նոսովիչին պաշտոնապես ծանոթ չէր,
Սակայն նըրա կյանքի՝ գաղտինքն ու պատմությունը գիտեր:
Այդ գեներալը քաջ հայտնի էր իբրը թունդ մոնարխիստ,
Բուշևիզմի անհաշտ ոսոխ: Սակայն Կարմիր Բանակից
Պոկ չի գալիս, թեկուզ նրանց աչքին «հին գայլ» է նա սոսկ:
Երբ Տրոցկին ուղևորվում էր այս գարնան Բրեստ-Լիտովսկ,
Բանակցություն ըսկըսելու գերմանական զորքի հետ,
Նոսովիչը գընաց Կիև իբրև ռազմի մասնագետ:
Բուշևիկներն այնտեղ նըրա դավադրությունը բացին:
Նա կալանքից փախավ Մոսկվա: Բայց Մոսկվայում այդ մասին
Արդեն տեղյակ էին վաղուց: Կայարանից տարան բանտ:
Նա Չեկայի նկուղներում պառկեց անհույս և հիվանդ.

Մինչև Տրոցկին վերադարձավ, բանտից հանեց վերըստին, Զինվորական նախկին վարքով ճամփեց նրան Յարիցին Ու ողջ շտաբը ռազմական Հարավային ճակատի Հանձնեց նրան... Շտաբի պետն արագ ելնում է ոտի և՛ բարեկամ է հյուրերին զինվորական սառնությունմբ՝ Մի պահ տիրում է լրուսթյուն։ Մըռայլ է նա որպես ամպ։ Մըսոտ գըլուխը դեղնավուն, ոնց որ կեղևը սեխի, Ուռչում, իջնում են անդադար ռունդները լայն, ամենհի, Խիտ, ալևխառն հոնքերն իջել են աչքերին, ինչպես մեզ։ — Գուցե հոգնած է գեներալը...

— Ո՛չ, խնդրե՛մ, նըստեցե՛ք։

Հաղորդեցեք հըրահանգները, ես պատրաստ եմ լըսել։—

Ճարտարագետն առաջ թեքվում և ըսկըսում է խոսել։

— Եղա այնտեղ, Տրոցկուն տեսա։ Նա մերն է այժմ ու հավետ։

Նա համաձայն է Լենինի վերաբերյալ — մերոնց հետ։

Դա ամեն ինչ է։ Մոսկվայի ընդհատակյա կոմիտեն

Մահափորձ է կազմակերպում բոլշևիկյան շեֆի դեմ։

Խընդիրը պարզ է և ամեն բացատրություն՝ ավելորդ։

Պետք է ստեղծել մահափորձի նըպաստավոր մըթնոլորտ։

Մոսկվան սեղմված է չորս կողմից մահվան կարմիր օղակում.

Ամեն գյուղում խըռովություն է, սով ամեն քաղաքում։

Նրբ որ սովի գունատ ասպետն իր ոսրկածույլ զրահով

Ահեղ կանցնի բոլշևիկյան քաղաքների վըրայով,

Երբ զավոդում Պուտիլովյան՝ մետաղագործն ուժասպառ

Հանքանյութի սովից հանգչող մարտենի մոտ կընկնի վար,

Երբ սովն իր ձեռքը հուպ կըտա բանվորների կոկորդին՝

Դուրս ճըզմեկով բոլշևիզմի վերջին կաթին ու ոգին,—

Այն ժամանակ մահափորձի գնդակն արդար կըլինի։

Եվ գլխատված է բոլշևիզմը, նա առանց Լենինի

Այլևս չի կարող պահել իշխանությունը ձեռքին։

Այն ժամանակ մեր բանակները Վոլգայի եզերքին

Կըմիանան, և կարշավեն դեպի Մոսկվան սովահեղձ։

— Խոսում եք դուք, պարոն, ինչպես մի իսկական բանաստեղծ,—

Մըռայլ կըտրում է գեներալն իր լավատես դավալցին

Ու թաշկինակը հանելով մաքրում է քիթն ահագին։

— Ո՛չ, գեներալ, ես չեմ խոսում Ձեզ հետ որպես բանաստեղծ.

Գործի ընթացքն ու ծըրագիրն եմ շարադրում ես այստեղ։

Եվ այն, ինչ որ Ձեզ հայտնեցի, զեղումը չէ մեկ հոգու,

Այլ՝ ծըրազիրն է Կենտրոնի, Սալինկովի ու Տրոցկու
 — Գիտե՛մ ես այդ պարոններին, ձեր այդ Տրոցկո՛ւն էլ գիտեմ,—
 եվ գեներալն իր պորտսիգարը կոպտաբար հըրեց դեն,—
 Կերհնակու պես, նըրանից վատ, մի անատամ գայլ է նա,
 Կարծում է՝ ինքն անմիջապես մի Բոնապարտ կըդառնա,
 Հենց որ Լենինն էլ չը լինի, ողորմելի՛ «Բոնապարտ»:
 Կարծում է նա միայն Լենինն է. էլ չըկա ուրիշ մարդ:
 — Ես, գեներալ, չեմ հասկանում պատճառը Ձեր ցասումի.
 ✓ Ո՛վ է այն մարդը, Լենինից վըտանգավոր թըշնամի...

✓ ՎՆՄ) Այն ժամանակ խուժում է ներս, աղմըկելով, հեասպառ
 Մի նըրբակազմ երիտասարդ. ճակատային կոմիսար:
 Կաշվե բաճկոնը քըրքըրված է, երեսները՝ ցեխոտ,
 Մազերն ինչպես բանակների ճամփի վըրա բուսած խոտ:
 Միայն աչքերն են վառ շուրճ. խոսում է նա ցասմալից.
 — Հենց նոր, ընկեր շտարի պետ, խրամատից եմ դալիս,
 Կաշալինից: Ձե՛ որ փամփուշտ ենք պահանջել մենք ըշտապ.
 Ինչո՞ւ մեզ չեն պատասխանում՝ ոչ կոմանդարմ, ոչ շտաբ:
 Ոչ ոք հրացան չէր կրակում, չէր ըսպառում մի գընդակ,
 Առանց նըշան ունենալու կազակներին ըսպիտակ,
 Բայց մեր փամփուշտը վերջացավ. պետք էր անցնել հարձակման:
 եվ մարտիկներն ուռաներով թըշնամու դեմ սըլացան:
 ✓ Գնդացրային հրե կարկուտն արնոտ իր հունձն էր անում.
 Մեր գընդի կեսն էր մընացել, երբ մենք հասանք թըշնամուն:
 Սըվինամարտը կատաղի էր: Զորամասը նըրանց
 Կանոնավոր էր մեզանից և քանակով գերազանց:
 Նրանք ուզում էին խըլել էշելոնները հացի՝
 Կաշալինում վաղուց կանգնած: Բայց գունդը մեր առնացի՝
 Բելոգ-վարդյան կազակներին ետ շըպըրտեց դեպի Դոն
 եվ ուղարկեց դեպի Մոսկվա հացի երեք էշելոն:
 Գընդի քառորդն է մընացել արյունահեղ մարտերում,
 Սպիտակները նոր հըզոր զորամասեր են բերում.
 Կըրկին գալու են մեզ վըրա՝ ոտից գըլուխ գինված, կուշտ:
 Իսկ մենք չունենք ոչ օժանդակ ուժեր, ոչ հաց, ոչ փամփուշտ,
 Ոչ մարտական հըրամաններ, ոչ կապ, ոչ լուր — տեղեկանք,
 Ունենք միայն բուլշեկիկյան ամուր ոգի, միայն կամք:—
 Այսպես խոսում էր կոմիսարը, բորբոքվում դառնագին՝
 Դուրս թափելով իր մարտական ազնիվ ցասումն ու հոգին:

Դավադիրները մեկ-մեկի աչքով արին նենգորեն:
 Շտաբի պետը «զայրացավ», ինչ որ խոսեց ինքնիրեն,
 Ինչ որ նայեց բլուկ-նոսոում, զանգահարեց ինչ որ տեղ,
 Ինչ որ մեկին հանդիմանեց սաստիկ հուզված ու սըրտենդ,
 Ու դառնալով կոմիսարին՝ ասաց, հուզված արտաքուստ.
 — Դու կըստանաս, այսօր եթ, ռազմամըթերք և հագուստ:
 Երբ կոմիսարը ձեռքն անհույս թափահարեց ու դրնաց,
 Ճարտարագետը վերըստին իր դավակցին տրվավ հարց.
 — Ես, գեներալ, չեմ հասկանում իմաստը Ձեր ցասումի:
 Ո՞վ է այն մարդը լենինից վըտանգավոր թըշնամի,—
 Հեռախոսը հրամայական շեշտով ուժգին զըրընգաց:
 Շտաբի պետը հեգ՛հանքով առավ կրկին. ու հանկարծ
 Ըզգաստացավ՝ ընդունելով հեզաբարո եղանակ:
 Քըրտենել էր նա այդ կարճատև խոսակցության ժամանակ:
 — Ով է այն մա՞րդը... Նա այստեղ է, նա գործում է արդեն:
 Զանգահարեց, որ անհապաղ օժանդակ ուժ ուղարկեմ
 Կաշալինը, դեռ նոր, երեկ է եկել Ցարիցին,
 Բայց իրազեկ է և արագ միջամըտում է գործին:
 Եկել է նա հացի համար: Բայց արդեն սլարդ է նըրան,
 Որ պաշարված է ամեն գիծ, յուրաքանչյուր կայարան:
 Նա այդ գիտե, բայց Ստալինն ուրիշ նյութից է ձուլված.
 Նըրա համար չըկա արգելք, անլուծելի չըկա հարց:
 Եկել է նա հացի համար. ուրեմըն հաց կըտանի,
 Թեկուզ Տըոցկին դառնա հազար, երկու հազար զըլխանի:
 Եվ ինչպես փիղն աղվեսներին, նա կը ճըղմի ոտքի տակ
 Ե՛վ Ձեր Տըոցկուն, և՛ աջերին, և՛ «ձախ»-երհն հաց-կատակ:
 — Ո՛չ — հիացել է գեներալն ինչպես... կարմիր քանաստեղծ,—
 Ինժեների կըրտսեր որդին չըդիմացավ ու խայթեց:—
 Ծեր գեներալը խեթ նայեց ամբարտավան լակոտին.
 — Ո՛չ, ես մի հին զինվորական եմ: Եվ իբրև այդպիսին,
 Գընահատում եմ թըշնամու արժեքն ու ուժն իրական:
 Ստալինը գործի հսկա է: Սոսկալի: Եվ չըկան
 Այդքան հըմուտ վարչագետներ մեր այսօրվա բանակում:
 Հընների մեջ տաղանդավոր շատ մարդ եմ ես ճանաչում,
 Բայց նըրանցից ոչ ոք չուներ այսքան եռանդ ու կորով:
 Բըռնում է սա իր գործն ամուր, պողպատածույլ մատներով,
 Ինչպես առյուծն իր որսը: Նա հացի համար է եկել,
 Բայց երբ տեսավ, որ չի կարող ըստանալ հացն անարգել,

Իսկույն հառեց նա իր հայացքը ռազմական ճակատին.
Նա գեներալ Սնեսարյովին արդեն սեղմել է պատին.
Նրրա տրված հրամանները հավաքում է, քննում
և՛ ամեն տեղ հակասություն ու նրման բան է գրտնում:
Նա թափանցում է ամեն տեղ, պեղում ամեն ուղղությամբ,
Ձգտում է նա վերականգնել ռազմաճակատը: Նա շտապ
Գիշեր-ցերեկ անքուն իր հողն է պատրաստում տենդալից:
Նա լենինին ամեն վայրկյան նոր հեռագիր է տալիս:
Փոխում է հին ամեն հիմունք, ամեն օրենք ու արգելք,
Ամեն փակից և ծուղակից գրտնում է նա հանկարծ ելք:
Ժըպտում եք դուք, երիտասարդ... Օ, ո՛չ, ես չեմ հիանում,
Այլ պարզ տեսնում եմ մեր գործի վրտանգավոր թըշնամուն:

Գեներալի խոսքից հետո տիրեց մի պահ լուծյուն:
Լոկ «ունտերվուդն» էր հեռավոր մի սենյակից կըտկըտում:
Ինժեների ավագ որդին նայեց անհույս, դալկահար:
Կարծես թե լույսը հանգցըրին, տիրեց մի ծանըր խավար:
Ինժեների ճաղատ ճակատը խոր կընճին ակոսեց,
Եվ կեղծ, անհույս վրտահուծյամբ, կերկեր ձայնով նա խոսեց.
— Բայց մոռանում է գեներալը, որ մեզ հետ են այսօր
Իվրոպական պետություններն ու բանակները հըզոր,
Որ դեսպանները՝ ֆրանսական, ամերիկյան, սերբական
Ցարիցինում մեզ հետ կապված են դաշինքով մարտական,
Խոթհուդներով ու ֆինանսով կօժանդակեն մեզ նըրանք:
Կաշառքը շաղ կըտանք: Ոսկին ինչպես հըզոր մի կըրակ,
Բարոյական ամեն պատենչ ու կաղապար կհալի,
Կըդարձընի մարդկանց հըլու, գործի համար ցանկալի:
Տեսեք, թընդում է դեռ օրկեստրը բազմամարդ բուվարում.
Այդ ցարական օֆիցերները մազուրկա են պարում՝
Փախըստական տիկիներին նազով իրանը գըրկած:
Այդ ժողովուրդը մերն է դեռ: Մեզ հետ կըգա անկասկած...

Նըլազախումբը դեռ թընդում է բազմամարդ բուլվարում:
 Կեռ դավադիր օֆիցերները մազուրկա են պարում:
 Անհոգ ցընծում է Ցարիցինը հյուրընկալ, սըրտագի՛ն.
 Արկերի ձայնը չի հասնում նըրա հարբած ականջին:
 Քաղաքային դուման նիստեր է գումարում դեռ հանգիստ,
 էսերական տեռորիստներ և դոկտորներ մոնարխիստ,
 Ակնոցավոր մունետիկներ սահմանադիր ժողովի,
 Փողոցներում ազատ շըրջում են և վիճում կատաղի:
 Շուկայի մուկն է շըվացնում՝ շեվիոտ կոստյումը հագին,
 Հոպունքաշող իր քըսակում կայտառ զընգում է ոսկին,
 Եվ կուլակները բեռներով ճըմակ հացի և օղու՝
 Շոգենավից արագ իջնում են և շուկան ողողում:
 Ռեստորանները լի թընդում են, փըրփըրում է գինին,
 Երկար արև են ցանկանում «քաղաքի հայր» Միլինին,
 Որ խընջույքի սեղանի շուրջ, ուրախ ժպիտն աչքերում,
 Գոհարաշող տիկնոջ թաթիկն է երկյուղած համբուրում:
 «Ա՛խ, չնայած որ բուլշևիկ, բայց նա հըրաշք է, հոգի՛...»:
 Եվ միլինյան «բուլշևիզմի» գովքն են անում ուղղակի
 Բաքվից փախած նավթատերերն ու շոգ հույսով տապակվում,
 Մինչև ընկնի Շահումյանի իշխանությունը Բաքվում:
 Մինչև Կրասնովն օտարերկրյա տանկերի գոռ դըղիրդով
 Մըտնի քաղաքը Ցարիցին:

Մոլեգնահույզ, իբրև ծով

Արդեն ճակատը մոտենում է քաղաքի դըռներին:
 Դոնի սպիտակ օձը ֆըշշում է, գալարվում մոլեգին՝
 Զըրահապատ երախներից ժայթքելով բոց ու զընդակ:
 Կարմիր գնդերը նահանջում են ահռելի ճնշման տակ
 Իլովիայում, Կաշալինում, Ելմաթայում ու Զիրում:
 Օձը սեղմում է Ցարիցինն, ամեն կողմից պաշարում:
 Կարմիր գընդերը դիմադրում են արնաքամ, առնացի.
 Մինչդեռ շտաբը ռազմական Հյուսիսային Կովկասի —
 Տըրոցկու դըրած մասնագետները, խըլուրդներ թունալից,
 Կարմիր ճակատը քայքայում են, հարվածում թիկունքից:
 Նըրանք անմիտ, հակասական հըրամաններ են տալիս,
 Զորքը հարավ են ուղարկում, զինամըթերքը՝ հյուսիս,

Թաքցընում են ոսոխների միտքը և ուժն իրական,
 ծուլց չեն տալիս նրանց այնտեղ, որտեղ նըրանք իրոք կան,
 նրանք ուղղում են մարտական հարվածը մեր արևմուտք,
 Այնինչ ոսոխն արևելքից է հարձակվում անաղմուկ:
 Դեմը՝ ոսոխ, հետևը՝ դավ, խարդավանանք ու լքում,
 Թրվում է՝ և՛ և՛ հարված, և Ցարիցինն աննըկուն՝
 Կրնկնի սպիտակ դեերի ձեռքը. Պետերբուրգն ու Մոսկվան
 Այլևս չեն ըստանա հաց գընացքներով անխափան,
 Պուտիլովյան գործարանում մետաղագործը քաղցած
 Հանքանյութի սովից հանգչող մարտենի մոտ կրնկնի ցած,
 Լենինի շտապ հեռագրերն էլ չեն հասնի Ցարիցին
 Եվ Մոսկվայի վերա կերթան Կուլշակ ու սով միասին:
 Բայց ի՛նչ է ուժը Կրասնովի, և ի՛նչ են դավ ու դարան,
 Երբ Ստալինն արդեն եկել է և հասել կայարան:
 Նրա վագոնն ահա կանգնած է զուգահեռ գրծերում
 Եվ նըրա շուրջը մարդկային մի մեծ զանգված է եռում,
 Գընդապետներ, պարտիզաններ՝ ճակատներից եկած նոր,
 Երկաթուղու կոմիսարներ, պարենային լիազոր,
 Պարտիական աշխատողներ, նավաստիներ կրծքաբաց,
 Ու բանվորներ՝ մետաղաձուլլ գործարանից ուղարկված —
 Ետ են գալիս նըրա մոտից, կամ ըշտապում են այնտեղ
 Ապրանքատար վագոնների փողոցներով ձիգ ու նեղ:
 Բոլոր նըրանք, որոնք պատրաստ են մաքառել անվըհատ,
 Բոլոր նըրանք, որոնք ունեն հաղթելու կամք ու հավատ,
 Որոնց իղձերը վեհ, ազնիվ են, խընդիրները խըրթին,
 Որոնք ծարավ են յենինյան անդամաճան խորհրդին. —
 Բոլոր նըրանք դեպի այնտեղ, դեպի Ստալինն են գընում
 Եվ ընդունում է բոլորին նա իր հատուկ վագոնում:
 Գրասեղանից վերև կախված է մեծադիր մի քարտեզ,
 Որին նայում է նա՝ ժայռից ամպին նայող արծվի պես:
 Սապոգներում սեղմած շալվարն ու սև կիտելը հագին,
 Վերև սանրած փարթամ ու սև մազերի դեզն ահագին,
 Պըղընձակուռ դեմքի վըրա բեղերը թավ իջած վար
 Եվ պիրկ շըրթունքը՝ հաստատում են կամքը մեծ և ունառ:
 Զախ ձեռքը միշտ իր ծխացող ծըխամորճից անբաժան՝
 Աչը մեկնում ու բարևում է ջերմությամբ հայրական:
 Եվ իր թավշյա խորունկ ձայնով խոսում է նա մարդկանց հետ,
 Որպես հոգու խիզախ թարգման, ու հանձարեղ սըրտագետ:

Մրտեմական հարցեր տալիս ու ծիծաղում կաթոգին,
Պարզ իմաստուն իր խոսքերով նա հրդեհում է հոգին:
✓ Մարդկանց աչքից ասես ընկնում է վարագույրը խավար,
Նըրանք աշխարհն արդեն տեսնում են նոր լույսով բոցավառ:
Դուրս են գալիս նըրա մոտից վերածնված ու հըպարտ
Եվ արշավում են խանդավառ դեպի դազգահ, դեպի մարտ:

Ցարիցինի ղեկավարները վագոնումն են արդեն:
Նըստած են լուռ, ոմանք մըռայլ, ոմանք ուրախ, ժպտադեմ:
Միայն աչքերն են պըսպըղում ծըխի թավիշ ամպի տակ
Եվ նա այսպես վերջացրեց իր ճառը կարճ ու հըստակ:
— Հեռագրված է Լենինին, որ մենք երկու շաբաթում
Կըտանք երկու միլիոն փութ հաց: Գործել համառ և արթուն
Եվ Իլյիչին տըված խոստումը կատարել անթերի:
Խընդիրը ծանր է, անկասկած, և արգելքներն՝ ահռելի:
Բայց աշխարհում չըկա արգելք, որ դիմանա անվախճան
Բանվոր դասի, բուլշևիզմի, հարձակումին անսասան:
Խոսեց Միլինը.

— Շատ բարի. Մոսկվային պետք է տալ հաց:
Բայց բարձրանում է հենց այստեղ քաղաքական մի նուրբ հարց.
Կարո՞ղ եմ ես առաջարկել իմ քաղաքի բանվորին,
Որ նա ապրի կես ֆունտ հացով, չպահանջի ավելին:
Նըրա՞ համար նա գըրավեց իշխանություն, գործարան,
Որ սեփական իշխանությունը կես ֆունտ հաց տա նըրան:
Ո՛չ, ընկերներ՝, Ցարիցինի բանվորն ըմբոստ է, հըպարտ:
Նա չի թույլ տա, որ կիրառվի իր քաղաքում հացի քարտ:
«Քաղաքի հայրը» իր կարծիքն էր վար ծորում ծանրությամբ:
Ու ժողկոմի ծըխամորճից ելնում էր ծուխն ինչպես ամպ:
Միլին... Գիտե՞ր նա այդ մարդուն: Բրեստ-Լիտովսկի ժամանակ,
Երբ վաճառեց երկրի շահերը Տրոցկին նենգ և անարգ,
Թըշնամական գեներալի գայլաբարո սալոնում,
Ակնոցավոր օձի խարդախ դիրքերն էր սա պաշտպանում:
Սա այն Միլինն է, որի դեմ Սերգոն գըրել է այնքան,
Սա է հուզում, հըրահըրում ճըղճիմ կըրքեր տեղական:
Ցարիցինի բուլշևիկներն այս աղվեսին են լըսում,
Դըրսից եկած ուժերի դեմ անմըտաբար ընդվզում:
Թույլ չըտալով միջամըտել իրենց «ներքին գործերին»:
«Ներքին գործեր» ունի այս մարդը, այս փայլուն գարշելին:

Ժողկոմը ծուկը ներս քաշեց ու շեշտակի տրվավ հարց.
— Իսկ եթե դուք Ցարիցինի բանվորներին ասեք պարզ,
Բե Մոսկվայի ու Պիտերի ձեր եղբայրներն այս պահին —
Սովից հյուծվում և ուժասպառ հենվում են պաղ դազգահին,
Բե բախտը մեր ուղուցիայի Ցարիցինից է կախված,
Եվ թե Լենինը հույս ունի, որ դո՛ւք միայն կըտաք հաց,
Եթե նրանց դուք պարզ ասեք ճշմարտությունը բոլոր,
Ի՞նչ եք կարծում, Ցարիցինում կըզբտնվի՞ մի բանվոր,
Որ ողջ հոգով չըցանկանա կիսել պատառն իր հացի,
Որ իր բազուկը սովատանջ հայրենիքին չըպարզի:—

Կարծես գրլխին ըստանալով շոգեմուրճի մի հարված՝
Լըոեց Միլինը: Լըոություն տիրեց խորին ու լարված:

Իվան Կովաչն ըզգաց խոնավ ու հարազատ մի կըսկիծ:
Ալեկոծված նա վեր ելավ ու ձայն խընդրեց Ժողկոմից.
Այսպես խոսեց.— Ես ծերունի եմ, վաթսուներեկ տարեկան:
Քառասունհինգ տարի ծամել եմ թեժ էրկաթ ու դեռ կամ:
Ես Դյումոյի գործարանից եմ: Հինգ հազար պրոլետար
Ինձ ուղարկել են այս վագոն քեզ մոտ, ընկեր կոմիսար:
Գիտեմ ես իմ բանվորների բոցեղեն սիրտն ու լեզուն:
Նըրանք էլ ինձ են ճանաչում, նըրանք էլ ինձ են լըսում:
Եկել եմ ես, որ իմանամ ճշմարտությունն իսկական:
Դու ասացիր ճշմարտությունը. Պետերբուրգն ու Մոսկվան,
Մեր եղբայրները հարազատ, Իլյիշը, մեր սիրելին,
Մեզանից հաց են պահանջում: Կըտանք, կըտանք ավելին:
Նայեց Ժողկոմը վիթխարի մետաղակուռ ծերուկին
Ու թափանցեց մինչև հատակ նըրա հայացքն ու հոգին:
Այդ պատասխանն էր իսկական ցարիցինյան բանվորի:
Թող թըշնամին ինչքան կուզե դավեր նյութի, գալարվի,
Քանի որ կա Իվան Կովաչ, այսպիսի նյութ մարդկային,
Ցարիցինի պրոլետարիատը հաց կըտա Մոսկվային:
Ժամը երկուսն էր գիշերվա և Ստալինը հոգնած:
«Մոսկվա, Կրեմլ, Լենինին» — նոր հեռագիր գնաց —
«Դեռ գիծը չենք վերականգնել Ցարիցինից Կուրմոյար:
Ես, ում որ հարկն է հայհոյում եմ, խըթանում անդադար,
Եվ հույս ունեմ, որ շուտով երկաթուղին կըբանանք:
Հավատացած եղեք, որ մենք չենք խընայի ոչ մի ջանք,

Որ չենք խըղճա և ոչ ոքի, ոչ ուրիշին և ոչ մեզ,
Բայց հաց կըտանք ժամանակին»:

Եվ քունը ծանր ու անտես
Ջաղացքարի նըման կախվում է ժողովմի կոպերից:
Թեթև նիրհում է և բացում իսկույն աչքերը նորից,
Ջանգահարում է. — Ջայցեին ձերբակալել այս գիշեր.
Իրեն օգտին նա վաճառում է պետական ապրանքներ,
Նայեկույանտ է նա, այլ ոչ առևտրական լիազորո—
Ու թընդանոթն է որոտում ըստեպներում հեռավոր...

Չորս օր հետո Իլիչն ի լուր ազդարարեց աշխարհին.
«Խրոտվարար գեներալները նենգորեն վերցրին
Մեր սիրիոյան երկաթուղու մի շարք խոշոր կենտրոններ,
Այդ կընեղի սովյալ երկրին, կըբարդացնի գործը մեր:
Բայց մեր ամբողջ չեն վերցնի սովի կամքով խելագար
Իմպերիալիստ գեներալները ցարական և օտար:
Հարավային մարզերը մեր մեզ օգնության են գալիս.
Ստալինն այնտեղ, Ցարիցինումն է: Նա մեզ հույս է տալիս,
Որ մոտակա շաբաթներում հաց կուղարկի անպատճառ:
Նա կուղարկի Մոսկվա հացի պատկառելի մի պաշար»:

ԴՐՎԱԳ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Բացվեց գարունն ուկրաինական մետաքսաշող դաշտերում:
Քամին հեռվից բեղմնավորված հողի բուրմունքն է բերում:
Կրկին վարի, ցանքսի համար ըստեպ ելավ գյուղացին:
Սնահողում խոնարհ քայլում է մենավոր նըրա ձին:
Կապույտ, անամպ երկընթի տակ, բարդիների պուրակում
Թընդում է երգը հայրենի, գարմոնն անուշ նըվազում:
Երիտասարդ աղջիկ, տըղա շապիկներով ծաղկավառ
Բոլորվեցին գարմոնի շուրջ և ըսկըսվեց մենապար:
Կաղնեբազուկ Տարասն է այդ, բանվորը քաջ՝ Լուգանի,
Եկել է գյուղ, որ Լյուբալից կարոտն առնի ու տանի,
Որ համբուրի ձեռքերը սուրբ իր ծերացած հորն ու մոր,

Վերադառնա նորից Լուգան, մըտնի մըթին հանքահոր:
Պարում է նա սիրատուշոր, ինչպես մըրրիկն ըստեպի,
Ով կըխլի իր Լյուբային, ով բաժանվել կըստիպի:

Մի հայր ունեմ ես ալեհեր,
Մայրըս՝ բարի մի պահավ.
Եկ, սեաչյա, անուշ իմ սեր,
Իմ սիրտը քեզ է ծարավ:

Խըրճիթ ունեմ առվի ափին,
Շըվաք ունեմ, պարտեզում.
Ե՛կ, սեաչյա, իմ թանկագին,
Դու ես միայն պակասում:

Նըթույգ ունեմ արագավաղ,
Ոսկեդաստակ թուր ունեմ.
Ե՛կ, սեաչյա, կյանքիս երազ,
Քեզ նոր աշխարհ թըոցընեմ:

Կովում ընկնեմ հերոսի պես
Թող շունենամ գերեզման.
Միայն թե դու լաս ու հիշես,
Թող քո՝ սըրտում ես մընամ:

—Ջա՛ն, գարմոնիստ, քո երգն անուշ իմ սրտի երգն է կարծես:—
Կըրծքին խըփեց Տարասը խենթ ու կանգ առավ կաղնու պես:
Եվ Լյուբայի ձեռքից բըռնած՝ տարավ ըստվերը ծառի,
Որ սիրտն ինչպես հարբած բազե՝ թըպըրտալուց դադարի:
— Լյուբա, նայի՛ր, երկինքն ինչ լա՛յն ու ինչ կապո՛ւյտ է այսօր,
Դաշտերն ինչպես կանա՛չ են, տե՛ս, ծառերն՝ ինչպես մեղմօրո՛ր,
Ո՛ւր է երկինք այդ աշքերից ավելի լույս ու պայծառ..
Քեզնից դալար և սըլացիկ՝ ո՛ւր է բարդի, ո՛ւր է ծառ:
Ջըկա մի սուրբ ավելի սուրբ քո համբույրից բոցակեղ.
Սիրո՞ւմ ես ինձ, Լյուբով, ասա՛, խոսի՛ր... միայն՝ չըխաբե՛ս...—
Սիրահարի աշքին աշխարհը վարդագույն է ներկված:
— Տարաս, կուզես աշխա՛րհն ինձ տուր, կուզես, միայն
ցամաք հա՛ց,

Կուզես բոկոտն և անոթի գութան քաշեմ ձիու հետ.
Քոնն եմ, Տարաս, նորից ես քոնն եմ և՛ այսօր, և՛ հավետ:

Ջահել աղջիկն իր Տարասի գրկում ժրպտաց բախտավոր:
Բայց այդ պահին կանաչ մարգից թրռան ահով երկու լոր,
Արագիլներն ահաբեկված իրենց թևերը բացին:

Ուրիշ թռչունն էր սավառնում բարդիների գագաթին:
Այդ ոչ արծիվ էր, ոչ ուրուր, ոչ էլ մի այլ գիշատիչ:
Նա ավելի սարսափելի էր թևավոր վիշապից:
Պըտուլտ գործեց որոտալով... թընդաց երկինք ու գետին...
Փռուռ ամպով գարմոն ու թև երկինք ի վեր նետվեցին...

Խըրխընջալով սուրում է ձին հայրենական ըստեպում:
Այնտեղ, ուր քաջ Վորոշիլովն իր զորամասն է կոփում:
Եվ մորմոքում է իր հոգում Տարասը խենթ, վըշտաբեկ:
«Թըռի՛ր, իմ ձի, առա՛ջ, առա՛ջ, ետ մի՛ նայի՛ր դու երբեք:
Այնտեղ արյունն է սիրուհուս, սերն է այնտեղ գըլխատված:
Հիմա ես իմ հայրենիքում ոչ սեր ունեմ և ոչ հաց:
Մընաք բարո՛վ, իմ հայրենի կարկաչահոս առուներ,
Մընաք բարո՛վ, արև, երկի՛նք, իմ ծերունի հեր ու մե՛ր,
Մընաս բարո՛վ, առվի ափին նվիրական գերեզման,
Եթե մեռնեմ կըռվի դաշտում, թող չունենա՛մ գերեզման:
Թո՛ղ ինձ հիշեն միայն սիրո ուկրաինական երգերում,
Պատմեն բոլոր աղջիկներին, թե ո՛նց էի ես սիրում,
Պատմեն՝ ինչպես բարդու ստվերում գըրկել էի ես նըրան,
Երկինքն ինչ պա՛րզ էր ու կապո՛ւյտ, առուն՝ ինչ մե՛ղմ,
կըլկըլա՛ն:

Պատմեն, ինչպես գերմանական ուրուրն օդում կըռընջաց,
Եվ ինչպես մահն իր կըտուցից որոտալով իջավ ցած,
Ինչպես աղջիկն արնաշաղախ, անշունչ ընկավ իմ առաջ,
Ինչպես լյութան վերջին անգամ կանչեց անունըս — Տարա՛ս:
Պատմեն, ինչպես ես ձի հեծա և սըլացա կռվի դաշտ,
Ու թըշնամուն կոտորեցի վըրիժառու և անհաշտ,
Ինչպես նըրանց վըռընդեցի մեր դաշտերից աննըման,
Ինչպես ընկա կռվի դաշտում և չունեցա գերեզման»:

Այսպես խոսում է ինքնիրեն և ձին ամուր խըթանում,
Նըրա ուղին դեպի հերոս Վորոշիլովն է տանում:
Իսկ հետևից՝ դեռ մըռընչում է կոկորդովը կըրուպայան
Կալգերական արյունկըզակ մոնարխիզմի գոռ բուղան:
Պողպատակուտ պըճեղներով քանդելով դաշտ ու անտառ,
Սարսափ ու մահ տարածելով՝ քայլում է նա անդադար:

Մատղաշ խոտի ու մանկական դիակների վերայով
 Քայլում է նա՝ դեպի Դոնբաս, ու Տագանրոգ, ու Ռոսստով:
 «Ո՛ր է այն ուժը, որ կանգնի զավթիչների զորքի դեմ:
 Նրանց զենդեբը սանձարձակ, շարքերը կուռ են ու սեղմ...»:
 Տարասն այսպես մըտածելով՝ քըշում էր ձին ըստեպում,
 Այնտեղ, ուր քաջ Վորոշիլովն իր զորամասն է կոփում:
 — Այո՛, ընկեր Վորոշիլով, բանվոր եմ ես իռզանի:
 Տեսել եմ ձեզ այնտեղ, երբ դեռ ես խակ էի, պատանի:
 Հանքահորում բուշեիկյան ձեր խոսքը շատ եմ լրսել,
 Օգնել եմ ձեզ ինքնահոժար, թրոուցիկներ տարածել:
 Հետո երկա՛ր ծառայեցի ցարի հեծյալ զենդեբում:
 Ընդունի՛ր ինձ, իմ ձին ու թուրն էլ ես ինձ հետ եմ բերում:
 — Շա՛տ լավ,— ասաց Վորոշիլովն,— այսօր կըռիվ կըլինի,—
 Զավթիչներին պիտի խըփենք հանուն ընկեր Լենինի,
 Դու ցույց կըտաս քո թրի ուժն ու քաջությունը մարտում:
 Նայի՛ր, արդեն բըլրի վըրա ոսոխն է սև խըլըրտում:
 Այսպես խոսեց քաջ զորավարն ու որոտաց հըրաման.
 — Հեծնել ձիերն ականթարթում, վայրկյանն է մեր հարձակման,
 Առա՛ջ, առա՛ջ, իմ հետևի՛ց, հայրենիքի՛ զավակներ...—
 Եվ թուրն ահեղ մերկացըրած՝ նա սըլացավ դարն ի վեր:
 Հերոս ջոկատն առաջ անցավ, շրջան տալով ձախ թևից,
 Թըշնամական զորքերի դեմ: Նրանք իրար հետևից
 Գալիս էին՝ շարքերը խիտ, հըրացանները սեղմած,
 Առաջ քայլող պատերի պես, կարծես անսիրտ, անիմաց:
 Երես առած իրենց նախկին հաղթությունից թավալվոր՝
 Ըսպան քայլում էր առաջից՝ ինչպես փայլուն մի աքլոր:

Կանգնի՛ր այստեղ կայզերական գոռոզության դաժան ցույ:
 Ծարձատեցին զընդացիրները զայրագին և անդույ:
 Պատերը կանգ առան մի պահ, երերացին, փըլվեցին:
 — Գըլուխը բա՛րձր, արինե՛ր,— գոռաց ըսպան մուլեգին:—
 Բայց այդ պահին մեր զորավարն իր նըժուլգի փոթորկով
 Հասավ թևից և կեռ թրի դյուցազնական մի զարկով
 Ընկավ ըսպան զըլխապատառ. նըշանն էր այդ գըրոհի:
 Եվ հետևակը դուրս նետվեց ուռաներով մամհի:
 Օսնովի մոտ կանաչ հովտում իրար դիպան մուլեգին,
 Ձիերը ծառս եղան հուժկու, թըրերն իրար ձուլվեցին,
 Եվ փուլ եկան զորապետներն իրար վըրա կուտակված,
 Դարձան մըսի և մետաղի մըռընչացող մի զանգված:

Տընքոց ու ճիշ օրհասական, թըրի շառաշ, հըռընդյուն,
Ներքև թափված աղիքներով ձիերն են խուլ վըրընջում.
Ռուս հանքագործը հարվածում է սըվինով ու կոթով,
Տևտոնական «ասպետն» ընկնում է պարտասուն ճակատով:
Տարասն առաջ է մըխըրճվում թըշնամական զորքի մեջ,
Օդում իր թուրն է բոցկըլտում, սըրտում վըրեծն իր անշեջ,
Իր դեմ տեսնում է սարսափից ալլանդակված երեսներ.
— Ա՛ռ... ա՛ռ... կանգնի՛ր, ո՛ւր եք փախչում, ազնըվարյուն
հերոսնե՛ր,

Խիզախ եք դուք, երբ նահանջում են ձեր դիմաց, խուճապում,
Անմեղ մանկանց, աղջիկների՛, գըլխին կըրակ եք թափում...
Իսկ երբ ձեր դեմն է դոնբասյան բանվորի ձեռքը պողպատ,
Փախչում եք դուք... դե մի՛ փախչեք, առա՛ջ եկեք ոնց որ պատ:
Բայց խուճապում են հոֆմանյան գընդերն արդեն սոսկահար՝
Ինչպես տերևն աշնանային, ինչպես փոշին հողմավար:
Խուճապն իբրև անզուսպ հեղեղ միշտ աճելով մոլեգին,
Թափով դիպչում է նոր եկող դեռ անսասան պատերին
Ու խորտակում, քըշում, սրանում է սարսափի ոռնոցով՝
Թողած հետև ավար, գերի, դիակ ու թամբ իրար քով:
Ճակատամարտը վերջացավ: Ռազմի ավարն են տանում:
Հերոսական մի էջ գըրվեց մեր պատմո՞թյան մատյանում:
«Ահա՛ հազար իննը հարյուր տասնևութի ապրիլին
Վորոշիլովը, քաջ բանվոր ու Դոնբասի սիրելին,
Իր հանքափոր ընկերների մի փոքրաթիվ ջոկատով,
Խարկովի տակ, Օսնովի մոտ, անհավասար ճակատով,
Գերմանական դիվիզիայի պողպատ մըռութը ջարդեց:

✓ Առավ գերին հազարներով.
Թընդանոթներ առավ վեց,
Առավ անթիվ գընդացիներ,
Առավ փամփուշտ անքանակ,
Առավ բազում ավտոմոբիլ,
Առավ երկու սավառնակ:

Անցան օրերն ու ամիսներն անհավասար մարտերում:
Ջոկատն աճեց, դարձավ բանակ: Հասավ համբավը հեռում:
Սակայն ինչպե՞ս մեր թերակազմ գընդերը դեմ կառնեին
Գերմանական երեսունհինգ դիվիզիայի գըրոհին:
Նրանք ունեն թընդանոթներ, սավառնակներ ու տանկեր,

Մերոնք ունեն միայն սրվին ու միայն սիրտ անվահեր,
 Ներանք ունեն պահեստ, ամբար, և հագնելած են, և կուշտ,
 Մերոնք՝ միայն բոբիկ ոտքեր, շունեն ոչ հաց, ոչ հագուստ:
 Ներանք ունեն ըսպայակույտ՝ կոփված ռազմի հընոցում,
 Մերոնք դեռ նոր են մարտական փակադակները բացում:
 Ներանք առան մեր աղբյուրները երկաթի և հացի,
 Եվ կըտրեցին երկաթուղին Հյուսիսային Կովկասի:
 Ներանք ոտքի կանգնեցրին կազակներին ըսպիտակ:
 ✓ Տընքում է հողը կրասնովյան հորդանների ոտքի տակ:
 Նյրանք առան ամբողջ Դոնբասն ու դեռ գընում են համառ
 Մինչև ափերը ճոխ՝ Դոնի, մինչև հեռու—Վոլգա-մայր:
 — Ուրեմն պետք է պահպանել ուժերը մեր մարտական,
 Ու նահանջով հասնել այնտեղ, Ցարիցինին օգնության,—
 Այսպես խոսեց Վորոշիլովն իր ղորքերին հոգնաբեկ՝
 Ջեռքին պատրաստ պահած կեռ թուրը պարզելով արևելք,
 Եվ ըսկըսվեց այն մեծ նահանջը, հոգնատանջ այն ուղին
 Կոնոտոպից մինչև Լուգանսկը և մինչև Ցարիցին:

Շրջապատված գերմանական ու կրասնովյան գընդերով,
 Ներանց համառ հարձակումները ձախ և աջ նետելով,
 Ութսունհինգ էշելոնները քարշ տալով իրեն հետ,
 Քայլում էր գորբը համրընթաց ուղիներով շարադետ:
 Ամենուրեք թընդանոթներն էին ոռնում լըն ի բուն,
 Գընդացիներն էին անդուլ գիշեր, ցերեկ ճարճատում,
 Մըփում էր շուրջը մուկգին՝ Դոնի սպիտակ Վանդեյան:
 Զորքը կռվով էր նըվաճում յուրաքանչյուր կայարան:
 Ու Կոմանդարմը լ:սրժ նստած իր կսուռիղի աշխետ ձին
 Կայտառ վարգում էր թևից թև, քաջալերում ամենքին:
 Նըրա ձիու ականջի տակ հաճախ գընդակն էր շաշում,
 Նրա գրվիին արկերն էին մահասարսուռ շառաշում,
 Բայց նա թողնում էր կայարանը միայն այն ժամանակ,
 Երբ արդեն դուրս էին եկել վերջին ջոկատ ու գընացք:
 Տարասը ձին խաղացնելով ճանապարհին էր նայում
 Եվ անվահեր Կոմանդարմի տեսքով հուզվում, հմայվում:
 Նա Տարասի կողքով երեկ անցավ արագ, ինչպես հողմ:
 Եթե կանգներ գեթ մեկ վայրկյան, եթե նայեր նըրա կո՛ղմ...
 Տարասն ուրիշ երջանկություն այլևս չէր ցանկանա:
 Բայց ի՞նչ... արթո՞ւն ես, թե քընած... նայի՛ր, Տարաս, ահա նա...

Դր աշխետ ձին ամուր նըստած գալիս է նա դեմ առ դեմ.

Նա մոտենում է Տարասին, հավասարվում է արդեն.

— Օսնովի մոտ ես քեզ տեսա. քաջ ես, Տարաս, անձնահույս
Ինչի՞ կարիք ունես, ասա: Ծըխի՞ր: Ինչո՞ւ ես տըխուր:
Ու Կոմանդարմը շերմ ժպտում է՝ նայելով Տարասին,
եորացնելով պայծառ ակոսն արևախանձ երեսին,
ժըպտում է նա՝ ճակատն անբիծ, հոնքերը խիտ, անվեհեր:
Քաղցրաժըպիտ շըրթունքներին՝ խարտյաշ ու կարճ բեղիկներ:
Դողում է սիրտը Տարասի և նա խոսում է հանդարտ.

— Հիմա միայն ես մի խընդիր ունեմ, ընկեր Կոմանդարմ,
Ինձ թույլ տըվե՞ք՝ ոնց որ շըվաք լինեմ Ձեզնից անբաժան
Ու պահպանեմ Ձեր կյանքը մեծ իմ այս կրծքով սեփական:

Քայլում է զորքը համընթաց՝ թողած փոշին ետևում:
Կործանարար տափաստաններն անընկճելի են թըվում:
Ութսունհինգ էշելոնները մեկ-մեկի հետևից
Գիշեր-ցերեկ դանդաղ սողում են: Ծուրջը մութ, քինալից,
Դոնի սպիտակ վանդեական ճահիճն է դեռ խըլըրտում:
Նվ պայթեցնում են կամուրջները, ճամփաները քանդում:
Դիպչում է արևը պայթուցիկ նյութով լեցուն գընացքին.
Օրհասական դըղըրդոցով դողում են օդ ու գետին,
Խավարի մեջ փայլատակում է հըրդեհի շեկ լեզուն,
Վառվում է շենքը մարդկային աղաղակով լեփ-լեցուն:
էշելոններն անդուլ սողում են՝ ծանրաշարժ հեղուկ
Պայթեցըրած կամուրջների ու վիհերի վըրայով:

Նրիք ամիս անցնում է զորքը տանջալից իր ուղին.

Նրեք ամիս բելոգվարդյան Դոնն է ձըգտում մոլեգին
էշելոնները մեկ-մեկից սըվիններով բաժանել,
էշելոնները մեկ-մեկից անջատ-անջատ կըլանել:
Ֆիցխելաուր-մամոնտովյան կազակների ծովը մութ,
Ալեկոծված մինչև հատակ շընչելով շանթ ու կարկուտ,
Գընացքներին է մոտենում ալիքներով ահագին
Ու ոռնաձայն, հողմացրիվ, փոշիանում է կրկին:
Անցնում է զորքը համրաքայլ դեպի վըսեմ նըպատակ՝
Տառապանքի կարմիր օվկյանը, կիսելով մինչև տակ:
Ծրգում է մեկը թախծագին տափաստանի գիշերում
Ու մեծ հոգին Կոմանդարմի ցավից հուզվում է, եռում.

Դնեպրից այն կողմ կրակ ու բոց,
Դոնն էլ ծրխով է պատած,
Մեր սըրտերում կրակ ու բոց,
Ետ ենք նայում կարոտած:

Ետ ենք նայում, ետ ենք նայում,
Ու ախ քաշում տխրագին.
Այնտեղ թողել ենք տեղ ու տուն,
Ալեկոր մայր, ջահել կին:

Մեր շեն տըներն ամայացան,
Այրիացան մեր կանայք,
Մեր մանուկները որբացան.
Ախ, դու դաժան ժամանակ:

Անցնում է զորքն ինչպես փարոս, հեռվից նա լույս է տալիս,
Ու հեռավոր ըստեպներից դեպի այդ լույսն են գալիս
Բոլոր նըրանք, որ երազում են հայրենիք. իրավունք,
Որ դարերով կույ են տըվել միայն քըրտինք ու արցունք,
Որոնց Դոնի հարուստ կազակն «օտարական» անվանեց,
Ջըրկեց, քամեց և անպատվեց և անպատիժ ըսպանեց:
Այդ արտաքսված հարազատները մեծ հողի ոռոսական,
Որոնց աչքին արդեն բացվում է լուսաշող ապագան,
Կազմած բազում գումարտակներ, աղմուկներով ցընծալից,
Դեպի իրենց ազատարար Կարմիր Բանակն են գալիս:
Հոսում է զորքը համընթաց, ոլոր-մոլոր: ինչպես գետ,
Ճանապարհին ընդունելով և ձուլելով իրեն հետ,
Վըտակների նըման վարար, նոր ջոկատներ ու գընդեր,
Եվ մեծանում է անդադար: Աշխարհը չի տեսել դեռ,
Որ նահանջող զորամասերը բազմանան քանակով:
Քսենոֆոնյան բյուրից միայն կեսը հասավ մինչև ծով,
Բոնապարտի զորքը հեղեղ էր, երբ գալիս էր Մոսկվա,
Նահանջելիս նա բարակեց ինչպես առվակն ամառվա:
Բայց զորավար Վորոշիլովը բազմանում է անվերջ,
Նըրա բանակն անդուլ աճում է նահանջի փոշու մեջ:

Քայլում է զորքը, ետևում տափաստաններն են անծիր.
Առաջապահ զորամասերը կըռվելով հասան Զիր:

Դիմացը Դոնն է հարազատ:

— Ողջո՛ւյն, ողջո՛ւյն, վըսեմ մա՛յր, բա՛ց գիրկըդ լայն,
Տո՛ւր քո հերոս որդիներին ճանապարհ:

Բայց Դոնը համր է: Նա, մըռայլ գալարվելով իր հոնում՝
Մեծ կամուրջի վերջին գերանն ու տախտակներն է տանում:
Ափին պառկած մի պատանի իրողությունը գիտեր.

— Սպիտակներն այստեղ կամուրջը քանդեցին այս գիշեր:
Եվ Կոմանդարմը սըրտմըտած ասպատակեց աշխետ ձին,
Մոտիկներով շրջապատված՝ կանգնեց գետի եզերքին:

Դիմացը՝ Դոնն է կամուրջի մընացորդները տանում,
Իսկ հետևից՝ հոգնած լանակն է կուտակվել կայանում:

էշելոնները կանգ առան, ինչպես հոգնած կարավան,
Մինչ խըլըրտում է թըշնամին ըստեպներում հարևան:

Իրողությունն է այս, արդյոք, թե՛ զառանցանք է, անուրջ.

Ձէ՛ որ մի քայլ էր մընացել, վերջի՛ն մի քայլ, մի կամո՛ւրջ,

Եվ զորքն արդեն նվիրական նըստատակին կըհասներ:

Ինչպե՛ս հանկարծ աղոտացան այդքան պայծառ երազներ:

Որքան մոտիկ, այնքան անհաս է Ցարիցինը հիմա:

Առաջը գետն է անկամուրջ, հետեն՝ արյուն է ու մահ:

Եվ Կոմանդարմը հարց տրվեց՝ խոհի կընճիւր դեմքին.

— Խոսե՛ք, ընկեր մասնագետներ, պատասխանեք ինձ մեկի՛ն.

Քանի՞ օրում կը կառուցեք Դոնի վըրա նոր կամուրջ:—

Եվ պատասխանը հարվածեց գիտակցությունն ինչպես մուրճ.

— Մեզ մեկ և կես ամի՛ս է պետք այստեղ, ընկեր Կոմանդարմ:

Եվ նա խոսեց՝ զրսպած խըռովքն ու ժըպտալով հեգնախառն.

— Ի՞նչ... մեկ ու կես ամի՛ս. այդ շա՛տ է, չափազա՛նց. ինժեներ՛ր:

Տըվե՛ք ինձ ռեոլուցիոն ժամանակի նորմաներ:

Ես մեկ ու կես ամիս այստեղ բանակը չեմ կանգնեցնի.

Կքայքայվի զորքի ոգին, մարտական հուրը կանցնի՛,

Մեզ կըճըլմի ամեն կողմից նախահարձակ թըշնամին,

էշելոնները ռազմական մըթերքներով թանկագին՝

Կընկենն ազահ Կրասնովի ձեռքը: Ո՛չ. կրկի՛ն հաշվեցեք,

Մեզ, ավելի, քան կես ամիս, այստեղ մընալը, երբե՛ք:

Կորո՛ւտ է: Մա՛հ:

Եվ ըսկըսվեց հերոսական եռուզեռ,

Անթիվ սալներ ճըռընչացին քարով, փայտով ծանրաբեռ:

Հազարավոր մարդիկ բերում էին քարերն ու թափում,

Եվ Դոննն ահեղ, ինչպես վիշապ, անվերջ խըլում էր, լափում
 Հեռնակուտակ այդ կերակուրը և թըվում էր, թե նա
 Կուտե քարերը ողջ երկրի և երբեք չի հագենա:
 Եվ գետն էին ընկնում հաճախ արկերը թեժ պայթուցիկ՝
 Զրրի պըղտոր շատըրվաններ շըպրտելով դեպ երկինք:
 Մինչդեռ եռում էր աշխատանքն անընկճելի, տենդալից,
 Խարդախ ոսոխն ամեն կողմից հանդուգըն հուպ էր տալիս,
 Արևմուտքից՝ կայգերական գեներալներն արնախում,
 Ժանտ Մամոնտովն էր հարավից, Նիժնի-Չիրից հոխորտում,
 Շըրջապատված գիշեր-ցերեկ թըշնամական օղակում՝
 Զորքը բանում էր անդադար, երկաթ, գերան հավաքում
 Ու կառուցում Դոնի կամուրջը: Բարձրանում են ահա
 Քարե սյուները հաստատուն, որպես ոտքեր աժդահա,
 Երկաթեղեն թևերն ամուր ահա գըրկում են իրար,
 Ահա կամարը հաղթական, ահա ուղին փըրկարար:
 Ահա անցնում է ավանգարդը՝ երգելով հըրճվագին,
 Անցան ձիերը՝ կուռ պայտերը դոփելով տախտակին,
 Անցան խոժոռ թընդանոթները խոլական դըղիրդով,
 Անցավ հըզոր զըրահակիրը նորակերտ կամուրջով,
 Անցան բոլոր էշելոնները մեկ-մեկի հետևից,
 Անցավ հոգնած արիերգարդը, այրուձին ուղեկից:
 Եվ Կոմանդարմը լուռ նըստած իր փրփրաբաշ նժուլգին,
 Դյուցազնական խոհերով լի, կանգնած Դոնի եզերքին,
 Բազմաշարչար իր բանակի այդ մեծ անցումն էր դիտում,
 Մինչև ըստեպն ամայացավ, սուզվեց արևը միգում:
 Եվ երբ անցան վերջին վաշտերը, սայլակները վերջին,
 Վորոշիլովն ուրախացած նայեց հըսկա կամուրջին,
 Նայեց հեռու տափաստանին, ճանապարհին իր անցած,
 Եվ ահագին մի ապառաժ նըրա ուսից ընկավ ցած:
 Այստեղ նահանջը վերջացավ: Վաղն առավոտը ծեգին
 (Կը ողջունի մեզ Ցարիցինը Վուզայի եզերքին:
 Այս մեծ կըռվի ճակատագիրն հիմա այնտեղ է լուծվում:
 Այնտեղ կոփվում է նոր բըռունք, ինչպես չուգուն հընոցում,
 Ստալինն այնտեղ է, նա սպասում է հինգերորդ բանակին...
 Եվ Կոմանդարմը խանդավառ ասպանդակեց աշխետ ձին:

ԴՐՎԱԳ ՎԵՑԵՐՈՐԴ

Հերթափոխի երեկոյան երկինքն անամպ էր, անբիծ: •
Ու Սվետոզարը դուրս եկավ Զինվորական Շտաբից:
Իջավ գետափ, որ ըզբոսներ, առներ միքիչ մաքուր օդ,
Նոր զորանոց վերադառնար, քրներ մինչև առավոտ:
Հոգնած էր նա: Սակայն սրբտում ըզգում էր խոլ մի կորով:
Երիտասարդ հոգին լեցուն էր անորոշ հուլսերով:
Մի հոծ ամբոխ էր խըլրտում տեռասավոր եզերքին՝
Շողացնելով մատնիների զոհարեղենն ու ոսկին:
Հանգչում էր բորբ արևն այնտեղ, բըլուրների ետևում
Վոլգայի ջուրը համրահոս՝ հալած ոսկի էր թըվում:
Հետըզհետե գընաց ոսկին, մընաց դալուկն իրիկվա,
Հոսեց գիշերն, ամայացավ ըզբոսավայրն առափնյա:
Միայն զույգերը սիրահար չէին ուզում գընալ տուն:
Պատրաստ էին ամբողջ դիշեր շրջել անխոնջ և արթուն,
Ամբողջ գիշեր անվերջ խոսել, իրարով լի և կարոտ,
Կամ լո՛ւռ, անխո՛ս, գըլուկ գըլխի՛, նըստել մինչև առավոտ:
Եվ խավարում գետեզերյա մի բան հանկարծ խըշըրտաց:
Գե՛տն էր փարվեց իր ափերին, կարմիր կեռա՞սն ընկավ ցած,
Թե՛ երջանիկ սիրահարի համբույրն էր այդ առաջին,
Որ զեփյուռի թևով հասավ Սվետոզարի ականջին:
Նա վեր կացավ հենված տեղից, քայլեց դեպի զորանոց:
Սրտում այրվում էր անամոք սիրո կարոտն իբրև բոց.
Ա՛խ մեկի հետ մըտեմանա՛լ,
Գետափ իջնել թևանցով,
Նըրա գըրկում հոգին բանա՛լ,
Թափել գաղտնիք և արցունք...
Զահել տըղան այս հույզերով երկար քայլեց դեպի տուն,
Հետո գետափ վերադարձավ... նա տուն գընալ չէր ուզում:

Տեռասի մոտ նըրա առաջ ելավ հանկարծ մի աղջիկ.
— Բորի՛ս,— գոռաց սրտապատառ, ու կանգ առավ ջրղաձիգ:
Սվետոզարին նայեց երկար, ոնց որ սիրուց կախարդված,
Հետո հենվեց էլեկտրասյանն ու վըշտաբեկ հեծկտաց:
Երիտասարդ օտարականը քարացավ զարմանքից.
— Ասե՛ք, հոգյակ. ի՞նչ վիշտ ունեք, ում տեղն, արդյոք,
դըրիք ինձ:

Լաց մի՛ լինեք, խոսե՛ք. թերևս կարողանամ Ձեզ օգնել,
 Կուզենայի՞ք երկու վայրկյան այստեղ ինձ հետ ըզբոսնել:
 Աղջիկը շուտ եկավ մի պահ, նայեց նրա երեսին,
 Արտասուքներն էլեկտրական լույսերի տակ շողացին՝
 Կախված երկար թարթիչներից: Աչքերը խոր, թախծալի,
 Հասակը նուրբ էր, սրլացիկ, ինչպես նոճին անտառի:
 Սվետոզարի սրբտով անցավ երանական մի սարսուռ:
 Խոսեց աղջիկը մի ձայնով աղերսալի և տրխուր.
 — Ների՛ր, ընկեր օտարազգի, դու այս հիմար աղջկան...
 Բայց դու գիտե՞ս. ինչքան նրմա՛ն, ինչքան նրմա՛ն ես նրան.
 Հասակը նո՛ւյն, քայլվածքը նո՛ւյն և նո՛ւյն աչքերը խոհուն,
 Մինչև անգամ քո ձայնը նույն մըտեմոմոթյամբ է դողում:
 Դրրա համար սխալվեցի, հավատացի հրաշքին:
 Իսկ դու... ների՛ր... — և հեծկլտաց աղջիկն էլի դառնագին:
 — Դե, իմ հոգյակ, հանգստացե՛ք, ասե՛ք. ես ումն եմ նրման,
 Եվ կամ Ձեր վիշտն ամոքելու անզո՞ր եմ ես, անարժա՛ն:
 Խոսեց աղջիկն արտասովաթոր: — Ես ունեի մի եղբայր:
 Նա կոմունիստ էր. ջոկատի քաղաքական կոմիսար:
 Կուլակի դեմ պայքարելիս նա այս գարնանն ըսպանվեց:
 Կրծիկ դարձավ հայրըս վըշտից, մայրըս լալիս է անվերջ:
 Իսկ ես... Ես դեռ չեմ հաշտըվել կորուստի հետ իմ եղբոր:
 Թրվում է՝ թե նա չի սպանվել, թրվում է, թե նա մեկ օր,
 Ուրախ-զըվարթ և՛ անվընաս, ռազմի դաշտից կըգա տուն:
 Ես օրորվում եմ այս հույսով, այս հրաշքին հավատում:
 Նդբորըս տեղ գուցե ուրիշ մի կոմիսար է մեռել,
 Գուցե իզո՞ւր են մեզ նրա մահվան համբավը բերել,
 Գուցե զբաղված է մեր Բորիսը ռազմական ճակատում:
 Գուցե վայրկյան անգամ շունի, որ մի նամակ ճամփի տուն,
 Գուցե գերի են վերցրել, շղթայակա՛պ, նետել բանտ,
 Գուցե մի տեղ պառկած է նա՝ վիրավորված կամ հիվանդ,
 Գուցե շուտով կառողջանա, կըգա ինչպես նոր գարուն,
 Գուցե... ինչե՛ր չեն պատահի արկածալից աշխարհում:
 Դրրա համար, երբ քեզ տեսա, թրվաց, թե նա է գալիս.
 Այնքան նրման ես դու նրան, նամանավանդ՝ քայլելիս:

Քրրոջական վըշտի առաջ տըղան կանգնած էր հրլուս
 Նա կարմրել էր. ամոթիչ բան չէր գըտնում խոսելու
 Եվ կու՛վ տալով արտասուքները կարեկից կըմկըմաց.

— Ներե՛ք, որ Ձեր եղբոր փոխան ես եմ այստեղ Ձեր դիմաց...
Ես էլ եղբայր եմ, ի՞նչ արած, ես էլ ունեմ սիրած քույր,
Այսպես խարտյաշ, կապուտաշյա՛, ճակատն անրիժ ու մաքուր:
Հայրենիքում թողի նրան, թողի և մորըս պառավ,
Պատերազմի հողմը պոկեց ինձ արմատից ու բերավ:
Երեք տարի է՝ չեմ տեսել, չգիտեմ կա՞ն, թե չըկան,
Եվ աշխարհում հիշո՞ւմ է ինձ՝ գոնե մի սիրտ բարեկամ:
Լաց մի՛ լինիր, իմ աղավնյակ, մինակ դու չես այս կյանքում:
Ամեն հոգի մի վիշտ ունի, ամեն մի վիշտ՝ ամոքում:
Դե տո՛ւն գընա, հանգըստացի՛ր, մի՛ լար այդպես վըշտահար:
Ասիր՝ նման եմ եղբորդ, կուզես՝ լինեմ քեզ եղբայր:
Խարտյաշ աղջիկը ջերմացավ այդ խոսքերից ու ժրպտաց
Եվ արտասուքն ինչպես գոհար թարթիչներից ընկավ ցած:
Ասավ.

— Ընկե՛ր, դու շատ բարի ես, շատ խելոք, իմաստուն...
Արի՛ լինենք իրար ծանոթ, ինձ ուղեկցի՛ր մինչև տուն,
Եթե միայն չես ձանձրանա լըսել գանգաւ ու հառաչ:
Իմ անունը Նատալիա է, իմ աղգանունը Կովաչ:
Երիտասարդը սիրտ առավ, աղջըկա ձեռքը սեղմեց,
Կարծես թե նա մի վարդագույն մշուշի մեջ ընկըղմվեց:
Նա թոթովեց.

— Ուրախ եմ ես... Ինձ անվանեք՝ Սվետոզա՛ր...
Ես հայրենի Լեսկավայում ջուհակ էի մի թըշվառ:
Սակայն համառ անհագ ձըգտում էր իմ հոգին դեպի լույս:
Նըկարչություն սովորեցի ինքնագըլուխ և ինքնուս:
Ցերեկն անդուլ բանում էի, գիշերն՝ անդուլ սովորում
Եվ մոտալուտ երջանկության երազներով օրորվում:
Բայց պատերազմը իմ հույսերն ամեն հանեց ի դերև
Եվ ինձ քըշեց երկրե-երկիր՝ ինչպես պոկած մի տերև:
Հեռու եմ ես հայրենիքից, իմ օջախից հայրական.
Չգիտեմ ի՞նչ է ինձ պահել անհայտ ու մութ ապագան:
Հանկարծ հեգնանք փայլատակեց գեղեցկուհու աչքերում:

— Դուք նըկարիչ եք, ասացիք, և ի՞նչ էիք նըկարում:

— Ես նըկարում էի մի լիճ,— պատմեց տըղան երազկոտ,—
Գիշերային խաղա՞ղ մի լիճ և մի խըրճիթ նըրա մոտ:
Լըճի բեկբեկ հայելու մեջ լուսինն էր լուռ դողդողում,
Լըճի վրա անմեղուկյան լուսե կարապն էր լողում,
Խըրճիթի մեջ ապրում էր նա, երազներիս դիցունհին,

Տարուբերվում էր մի նավակ լըճի մամուռտ եզերքին։
 Խաղաղության անբիծ ոգին էր լողանում իմ լըճում։
 Իմ այդ նկարը «երջանիկ խախաղություն» էր կոչվում։
 Աղջիկն ասաց.— Խաղաղության քո լիճը թող, բարեկամ,
 Եթե կարող ես՝ Վոլգա-մայրը պատկերիր այս անգամ,
 Ինչպես պայթում է արկը թեժ նըրա հուզված հայելում,
 Ինչպես ծագող արևի դեմ նըրա ցայտքերն են ցուում,
 Ինչպես ուզմի նավերի տակ եռում է նա մոլությանմբ,
 Ինչպես ներկվում է Վոլգան իր զավակների ալ արյամբ,
 Ինչպես խիզախ բանվորուհին ճակատամարտ է վարում,
 Ինչպես ծնվում է նոր աշխարհ արնաշաղախ պայթարում...
 Քո երազած խաղաղության լիճն աշխարհում դեռ չըկա,
 Միայն արնոտ ու հաղթական կովից հետո նա կըգա։
 Գընանք մեզ մոտ, իմ հայրը քեզ կուսուցանի շառ բաներ,
 Կհավանի քեզ... Դու նըման ես իմ եղբորը վաղամեռ։
 — Գընանք,— ասավ երիտասարդը՝ նոր ոգով արթնացած։
 Կարծես նըրա աչքից խավար մի վարագույր ընկավ ցած։

Իվան Կովաչն ու Մարինա Սերգենյան միասին
 Միակ դըստեր դիմաց ելան, դարբասի դուռը բացին։
 — Նե՛րս եկ,— ասին,— երիտասարդ, մի բաժակ թեյ կըխըմես։
 Նատալիայի հյուրը մեր հյուրն է, սիրելի է նա մեզ։
 Ու Սվետոզարը ներս մըտավ, համեստ ու կոկ մի սենյակ։
 Ծաղասեղանը ծածկըված էր սըփուռցով ըսպիտակ,
 Լուսամուտում ճապոնական մի ծաղկաման էր դըրված,
 Պատին մի դեմք երիտասարդ՝ յուղաներկով նըկարված։
 — Սա իմ որդին է,— մըղկըտաց մայրը հոգոց քաշելով,—
 Իմ Նատաշան է նըկարել՝ մըտքում անգիր հիշելով։
 — Գիտե՞ս, Նատաշ, իմ նազելի,— հանկարծ դիմեց աղջըկան,—
 Այսօր եկավ Ալեքսեևը, սիրալիր այն տըղան։
 Ուզում էր քեզ գետափ տանել։ Ափսոս երկար չըմընաց։
 Ոտքի վըրա հայրիկիդ հետ վիճեց, վիճեց և գընաց։
 Հայրըդ կոպիտ պատասխանեց, վիրավորեց պատանոււն,
 Դե՛ ես թերուա եմ, վեճերից ոչինչ ես չեմ հասկանում,
 Բայց ես մի բան հաստատ գիտեմ, այն, որ սիրում է նա քեզ,
 Եվ շատ ազնիվ է, շա՛տ խելոք. բախտիդ քարով չզարկես։
 Իվան Կովաչը ուրեք բեղերը թավ ու երկար,
 Հետո դիմեց իր պառավին՝ կիսաքնքուշ, կիսաշար։

— Դու, Մարինա Սերգեննա, մի պըղտորի աղջկան։
 Ես այդ գոռոզ պատանու մեջ բան չեմ գտնում դուրեկան։
 Նըրա հոգու ազնվությունը ե՞րբ իսկույն տեսար դու,
 Դու մարդկանց մեջ միայն մի բան ես որոնում։ փնասցու
 (Նատա՛շ, հոգի՛ս. հեռո՛ւ պահիր քեզ այդ լաթած լակոտից։
 Նա ընդունակ է սևացնել կյանքըդ, անունըդ անբիծ։
 Սվետոզարի հոգին դողում էր տագնապով մի խըրթին։
 Ի՞նչ պատասխան կըտա աղջիկն իր հոր ու մոր խորհրդին...
 — Հայրի՛կ, դու զուր մի՛ բարկանա,— դուստրը խոսեց հեզաբար,—
 Ալեքսեյը քիչ գոռոզ է, բընությամբ դյուրավառ,
 Բայց լավ տըղա է, շատ գիտե պատմություններ ու փաստեր։
 Հետաքրքիր մի բույս է դա։ Դու հավատա քո ղըստեր։
 Իրեն նա չի շրջապատի ընկերներով դավաճան։
 Եթե հաճո է, Սվետոզար, ծանոթացնեմ քեզ նըրան։
 — Դու մի՛ խաբվիր, երիտասարդ,— Կովալը խիստ բորբոքվեց,—
 Այդ գիմնազիստը մութ մի տարր է, ավազակ է շատ մեծ։
 Կասկածելի է ինձ համար նըրա ուսումը շընչին։
 Միայն Մարքսից է բարբառում, չի ճանաչում Իլլիչին։
 Այդ չեմ ների մինչև անգամ ես հարազատ իմ որդո՛ւն։
 Եթե տեսնեք՝ ինչպե՞ս է նա Ստալինի դեմ հոխորտում։
 Իսկ ես ասում եմ. Ստալինը բուլշեիկ է հըմուտ,
 Նա լավ գիտե թըշնամական դավերն ամեն սև ու մութ։
 Եթե նա թույլ տա Ցարիցինը Կրասնովին հանձնելու,
 էլ որտեղի՞ց հաց կուղարկի Մոսկվա, Պիտեր կամ հեռու
 Իսկ այս աքլորը բարբառում, հակաճառում է նա ինձ,
 Իմ դեմ խոսում է իմ ցեխի բանվորների անունից...
 — Ինժեների կըրտսեր որդին է... ես տեսել եմ նըրան,—
 Ու Սվետոզարը կարմըրեց՝ մտիկ տալով աղջկան։
 Ատելություն ըզգաց հոգում դեպի տըղան անծանոթ,
 Սըրտում հանկարծ իրար դիպան անզոր նախանձ ու ամոթ
 Եվ որպեսզի իր հոգեկան տագնապը լուռ թաքցընի,
 Ավելացրեց։
 — Խելոք տըղա է, համարձակ պատանի...

Սերբական գունդը խիստ շտապ տեղափոխված էր քաղաք։
 Ամեն գիշեր գաղտագողի այնտեղ լինում էր հավաք։
 Միշտ նորանոր խըմբեր էին հրավիրվում հավաքին,
 Միշտ նորանոր մարդիկ էին գալիս-գընում տենդագին։

Սվետոզարին էլ այդ գիշեր իր վաշտապետը կանչեց,
նեքս տանելուց առաջ՝ գաղտնիք ու լրուօթյուն պահանջեց՝
վաշտապետի սենյակը շոգ էր և ծրխով մըշուշված։
Ինժեների կըրտսեր որդին գաղտնի իր ճառը հեաց.
— Լոկ Ցարիցինն է մընացել բոլշևիզմին ապավեն,
Ցարիցինից են ըսպասում ռազմական ուժ ու պարեն։
Բայց Կոլչակի ու Կրասնովի զորամասերն ահագին
Արդեն գալիս են, մոտենում այս հաստակող քաղաքին...
Հաղթանակի պարագային յուրաքանչյուր սերբիացի
Կը լիանա պարգևներով, նրա ճամփան կըբացվի,
եվ նա փառքով, հարըստությամբ ապահովված՝ կերթա տուն։
Կայսերական խոստումն է սա և հըրաման հաստատուն։

Երիտասարդ Ալեքսեկը շա՛տ խոսեց, հոխորտաց՝
Պառակտելով Սվետոզարի հոգին գետի պես հորդած։
Հիշեց նա տունը հայրենի, իր կեսկավան հեռավոր,
Քրոջական աչքերը հեզ ու խորշոմներն իրեն մոր...
Ա՛խ, այս վայրկյան վերադառնա՛լ, գրկել նըրանց, անուշ լաւ,
Լըսել խոսքերն այն հարազատ, խըմել ջըրերն այն զուլաւ,
Սուզվել, լողալ Մորավայի ալիքներում քաղցրագին,
Ջերժ ավազի վըրա պառկել, նայել կապույտ երկնքին։
Ինչպե՛ս նըրա հոգին ձըգտում է հարազատ այն հեռուն։
Ո՛վ կա մոտիկ նըրան այստեղ, այս ահավոր ափերում։
Ով կա մոտի՛կ... և նա հիշում է Կովաչի աղջըկան։
Նըրան խաթում, դավաճանում է սընգուրված այս տըղաւ,
Իսկ նա, նատաշը հավատում է և սիրում լակոտին,
Եվ չի տեսնում սըրա գործերն ու ձըգտումները հետին։
Ի՛նչ դառնություն դըժոխային, բախտի հեգնանք ինչքան շար,
Արյունկըզակ իր թըշնամուն սիրում է նա անկաշառ...
Իսկ ես... ես ինչ եմ... մի օտար, պատահական մի ճամփորդ,
Դեպի անհայտն եմ խարխափում ուղիներով խորդ ու բորդ-
Ունե՛մ, արդյոք, ես իրավունք՝ նըրա աչքերը բանալ,
Միջամըտել նըրանց գործին և ակամա ստորանալ։

Անցավ դաժան մի քանի օր անասելի տազնապում։
Ու Սվետոզարը խանդախանձ՝ գետի տեռասն էր շափում,
Երբ այն «լաքած լակոտի» հետ նատաշն անցավ քեռնցուկ։
Սվետոզարի հոգուն տիրեց աղեգալար մի անձուկ։

Ինչպես կապե՛լ է այդ խարդախն ու կախարդել աղջրկան...
 Պուցե աղջիկն է՛լ է կեղծում... նա է՛լ է նենգ, դավաճան:
 Ափսո՛ւս, ափսո՛ւս, հազա՛ր ափսոս ծերունազարդ Կովաչին...
 Ուրեմն ինչո՛ւ Սվետոզարի խավար աչքերը բացին:
 Ի՞նչ անի այժմ... ո՛ւմ դիմի... հո՛րը հայտնի: Աղջրկա՛ն...
 Ինչո՛ւ հայտնի. ի՞նչ գործ ունի նա վեճերում ոռուսական:
 Նա սերը զինվոր է. սերն այստեղ նրա սրտին չըժրպատաց,
 նա տուն կերթա՝ իր օջախին, իր լեռներին կարոտած:
 Նրա օտար այս կըռվի մեջ՝ մեկ չէ՞, արդյոք, թե ո՛վ—ո՛ւմ,
 Թե ի՞նչ գույնի դրոշակներ կփողփողան փողոցում:
 Այսպես խոսում էր ինքնիրեն ու համոզում դառնությամբ,
 Սակայն սրբաբան լալիս էր ջերմ կարեկցության մի լույս աճալ,
 Լքում էր նա, կարծես հոգուց, մի սրտակեղ աղաղակ .
 Ինչպե՛ս թողնել ծեր Կովաչին այս բոլորից անտեղյակ:
 Տեսնել ինչպես այդ վեհ ծերունկն անշունչ ընկած է գետին.
 Իշխանության գահի վրա տեսնել այս պիղծ լակոտին,
 Տեսնել չըքնաղ Նատալյային նրա գրկում դավադիր—
 նա չի կարող. այդ անաղնիվ է, այդ հանցանք է, ոճիր:
 Նա շուտ եկավ դեպի քաղաք և ըշտապեց հասալառ:
 Բայց հետևից հընչեց մի ձայն, ծանոթ մի ձայն, Սվետոզա՛ր...
 Նատաշն էր այդ: Նա մոտեցավ՝ անսեթևեթ ժրպիտով.
 — Ասա ինձ. ո՛ւր ես ըշտապում այդքան արագ ու վրդողով:
 Դու խրոսվե՛լ ես ինձանից: Ի՞նչ կա, խոսիր՝ մի տեսնենք:
 Գրնանք, ես լավ թիավարում եմ. նավակով կըգրոսնենք:
 Ու Սվետոզարը լուռ ու մունջ գնաց նրա հետևից:
 Մի պահ ցընդեց նրա սրբաբան խանդի խայթոց ու կըսկիծ:

Սահեց նավակը Վոլգայի գիշերային հայելում:
 Զրրի բեկրեկ ալյակներին լուսինն էր հեզ ցուցըլում:
 Սըվսըվալով անց էր կենում զեփյուռ մի զով, դուրեկան:
 Որքան աղջիկն ուրախ ու պարզ, տըղան մըռայլել էր այնքան:
 Նատաշն ուզում էր փարատել նրա խոհերը տըրտում:
 Թիավարում էր աշխուժով հոսանքն ի վեր, ու երգում.

X Գարնան ամպից անուշ անձրև է գալիս,
 Անձրևի տակ իմ սիրած յարն է գալիս:
 Ա՛խ, ըսպասի՛ր, իմ լույս պատկեր, իմ այծյամ,
 Ներս մի՛ գընա, թող քո տեսքով լիանամ.

Երեսիդ շողն ինձ խելագար է արել,
Հրպարտ էի, հալվել, խոնարհ եմ դառել,
Ախ, ըսպասի՛ր, իմ լույս պատկեր, իմ այծյամ,
Ներս մի՛ գընա, թող քո տեսքով լիանամ:

— Խոսի՛ր, ինչո՞ւ այդքան թրթվել ես դու այսօր, բարեկամ,
Կարծես քամին է անց կենում, կարծես կողքիդ ես չըկամ:
Տեսնո՞ւմ ես. ես ինչքան ուրախ եմ այս գիշեր, ինչ կայտա՞ռ:
Դու է՛լ ինձ հետ ուրախացիր, մի երգ երգիր ինձ համար:
Տըղան ուժերը հավաքեց ու կըմկըմաց կարևեր.

— Ուրախ ես դու. ուրախություն համար ունես պատճառներ:
Դու սեր ունես, ընկեր ունես. այսօր անցար թևանցով:
Իսկ ես — ջրից եզերք նետված, ես — մերժված, օտար ձուկ —
ես ի՞նչ սըրտով ուրախանամ:

— Ախ, դու խանդո՞ւմ ես, իմ խենթ,—

Թիերը բաց թողեց աղջիկն ու բարձրաձայն ծիծաղեց:—
Կարծում ես դու, թե ես սիրո՞ւմ եմ այդ նախշուն աղվեսի՞ն:
Ոչ, բարեկամ. այդ քեզ թրվում է, այդ կասկած է մի սին:
Նա մի ճահիճ է շողշողուն, ներքուստ փրտած և սրնանկ.
Նըրա հոգում չըկա մի շող, մի լար՝ սիրո ընդունակ:
Եվ ես, թեկուզ նրա՛ համար այսօր ուրախ եմ այսքան,
Որ հասկացել եմ, վերջապես, քողազերծել եմ նըրան:
Նա թըշնամի է թաքնըված, հայրիկըս ճիշտ էր ասում.
Խորհրդային իշխանության անկումն է նա երազում:

— Եթե միայն այդքան լիներ, երազելով լիանա՞ր...—
Երիտասարդը հառաչեց՝ կարծես իր մեջ, իր համար:—
Աղջիկն ըզգաց նըրա ձայնում աղետագույշ մի տագնապ,
Անմիջապես նա մակույկի զըլուխն ուղղեց դեպի՝ ափ,
Վայրի այծի թեթևությանը նա դուրս եկավ նավակից:
Տըղան նըրան էր հետևում՝ սըրտում խոնավ մի թախիժ:
Գետի ափին իրար կողքի քայլում էին համրաբար:
Խոսեց աղջիկը.

— Դու մի վիշտ ունես, ասա, Սվետոզար:

Պատմի՛ր բոլորը, ինչ գիտես, ինձ բա՛ց հոգիդ մինչև վերջ:—
Եվ նըրա կուրծքը դեռատի՛ անում էր խոր ելևէջ:

— Լըսի՛ր Նատաշ, իմ թանկագին,— խոսեց տըղան տատամսոս,—
Ես քիչ առաջ, երբ դու եկար, գընում էի քո հոր մոտ:
Ինչ որ հիմա պիտի հայտնեմ, նըրան պիտի հայտնեի...
Երեք օր է, ինչ ես այրվում եմ բոցերում ահռելի...

Այսօր միայն որոշեցի՝ հայտնել, ինչ որ ես գիտեմ.
 Դավադրություն է պատրաստվում սովետական զորքի դեմ,
 Ծրրագրոված է Կրասնովին հանձնել քաղաքը ներսից:
 Ալեքսեևն էլ է այդ սև դավադրության մասնակից...
 — Եվ այդ ամենն իմանալով՝ լրոել ես դու երեք օր:
 — Ես մեղավոր եմ քո առաջ,— խոսեց տղան գրխակոր,—
 Կարծում էի, ինչո՞ւ ծածկեմ, թե դու սիրում ես նրան,
 Կարծում էի՝ չես հավատա իմ սոսկալի հայտնության,
 Կըհամարես անարգ սաղրանք՝ առաջ եկած նախանձից.
 Կարծում էի, թե քո աչքին նա անբասիր է, անբիծ:
 Կարծում էի... ինչե՞ր շանցան իմ այս գրխով հիվանդոտ...
 Բայց ի վերջո որոշեցի աճապարել քո հոր մոտ
 Ու ծերուկին պատմել բոլորը... ես տեսա, վերջապես,
 Որ հարցն այստեղ վերաբերում է ոչ թե ինձ, ոչ թե քեզ,
 Այլ բովանդակ ժողովրդին, նրվիրական այն գործին,
 Որի համար Լեակալայից հասել եմ ես Ցարիցին,
 Որի համար ազնիվ քո հայրն է ողջ կյանքով պայքարում,
 Որի համար ծընվեց Լենինն այս չարատանջ աշխարհում,
 Որի համար նահատակվեց Բորիս եղբայրդ անգին,
 Որով լեցուն է, իմ նատաշ, գարնանաբույր քո հոգին:
 Ես ինքըս ինձ որոշեցի. եթե սիրում եմ նրան,
 Պետք է նրա աչքի մըշուշը փարատեմ անվարան,
 Թո՛ղ նատաշան չհալատա, թո՛ղ ինձ ըստոր համարի,
 Թող ինձ համար նրա ժըպիտը, իմ արևը—մարի,
 Միայն թե այս ոճիրը սև՝ չըկատարվի անխափան:
 Դե, բարեկամ, արդեն հիմա հայտնի է քեզ ամեն բան:
 Ինչպե՞ս վարվենք, ո՞ւմը դիմենք, որ այս աղետը կանխենք:
 Խոսեց աղջիկն ալեկոծված.
 — Դու իմ անմիտ, իմ անխելք,
 Դու չե՞ս տեսնում... դե լավ, լըսի՛ր. ես միայն քեզ եմ սիրում:
 Բայց մի՞թե այդ է կարևոր այս խաժամուժ օրերում:
 Դու պապանձվել ես երեք օր, իմ ձուկ, և չե՞ս ըզղացել,
 Որ մի խոշոր, մի սոսկալի, դավադրություն ես բացել,
 Գընանք, պատմե՛նք իմ հայրիկին: Մեզ լավ խորհուրդ կըտա նա:
 Բայց այս մասին թող այն լակոտը ոչ մի բան չիմանա:
 Դե տուն գընանք, մի վըհատվի՛ր, կըպայքարենք միասին,
 Հետո ձերոնց Լեակավայից կըփոխադրենք Ցարիցին,
 Կուզես, ինքներըս ուղղակի կերթանք այնտեղ, Լեակավա.
 Շուտով ամբողջ եվրոպայում կարմիր դրոշ կշողա:

Դավադիրները հավաքվել զինվորական շտաբում՝
 Խորհրդակցում են տազնապով կամ խորասուլյզ մըտածում:
 Ալեքսեան ու որդիները՝ գիմնագիտ, օֆիցեր,
 Լաստիկ դժգոհ են գններալ Սնեսարյովից.— Նա գիտեր,
 Տեղյակ էր նա այս գիշերվա նիստի մասին կարևոր,
 Բայց բացակա է քաղաքից, անհետացել է ուր որ...

— Ես պահանջում եմ, պարոնայք, այսօր այս հարցը պարզել.
 Կայսերական ըսպա՞ է նա, թե՛ բոլշևիկ է դարձել:—
 Եվ գիմնագիտը բորբոքված՝ Նոսովիչին է նայում,
 Ամերիկյան հաստիկ սիգարը բերանի անկյունում:
 Հեգնոտ նայում է գններալն ամբարտաձան այդ խակի՞ն
 Ու թաշկինակը հանելով մաքրում է քիթն ահագին,
 Հետո խոսում է.

— Բարեկամ, իզո՛ւր եք դուք բորբոքվում:
 Թե՛ ռազմական հեղաշրջումը ձեզ կատակ է թրվում:
 Անմըտություն է պահանջել Սնեսարյովից ավելին,
 Քան նա անում է: Հիշեցե՛ք. իշխանությունը վերին
 Նըրան այստեղ նըշանակել է ռազմական ղեկավար.
 Իթե ամեն քայլափոխին նա գործ անի մեզ համար,
 Բոլշևիկյան իր պաշտոնին չընդվիրվի արտաքուստ,
 Ինչ է, կարծում եք թե Ստալինը, որ հըսկում է անշուշտ,
 Այդ կարևոր դիրքի վըրա նըրան երկա՞ր՝ կպահի:
 Ոչ. Սնեսարյովն իր պարտքը մեծ՝ կայսերական ըսպայի,
 Ըզգույշ և նուրբ է կատարում: Ահա տեսեք մի նամակ:
 Կարդամ լսեք և դուք բանի էությունը կիմանաք:
 Բարակ ձայնով կարդում էր նա երբ ներս մտավ մի պահակ:
 Դավադիրները սուս կացան: Ծըխում էին զըլխահակ:
 — Ձեզ հետ խոսել է ցանկանում կոմդիվ ընկեր Կիկվիձեն:
 — Ասա թող ներս բարեհաճի. մենք ըսպասում ենք արդեն:
 Ու ներս մտավ մի հաղթանդամ բարձրահասակ տըղամարդ,
 Զինվորական բարե տըվավ, կանգնեց խըրոխտ ու հըպարտ:
 Սաստիկ սազում էր հասակին չերքեզական վերարկուն,
 Գըլխարկը թեք ունեւր դըրած, որ կիսով չափ էր ծածկում
 Նրա մազերը խիտ գանգուր, ճակատը լայն ու սպիտակ,
 Բեղերը նոր էին բուսել արծըվակեռ քթի տակ,

Հոնքերը թուփ՝ արծվի թևեր, աչքեր ուներ նըշաձև,
 Կողքից կախված ահագին թուրն ասես եղեգն էր թեթև:
 Այդ Կիկվիձեն էր հռչակված հերոսական մարտերում:
 Անունն անգամ ոսոխներին մահվան սարսափ էր բերում:
 Դավադիրները հերոսի խիզախ տեսքից վախեցան
 Ու ժրպտալով ոտքի ելան, ողջույն տրվին միաձայն:
 — Բարո՛վ, բարո՛վ, ընկեր կոմդիվ. առա՛ջ եկեք, նըստեք մո՛տ:—
 Ու զենեքալն առաջարկեց ամերիկյան ծըխախոտ:
 — Շնորհակալ եմ,— ժրպտաց կոմդիվն իբրև համեստ պատասխան:
 Հետո նայեց ներկաներին մի հայացքով զըննական:
 — Ամսի յոթին ես զորամասըս հանեցի Տամբովից
 Զինժողկոմի հրամանով: Հրամայել էր նա ինձ՝
 Լինել այստեղ Սնեսարյովի կարգադրության ենթակա:
 Ու ռազմական հրամանին հընազանդված՝ ես եկա,
 Թեպետ և ծանր էր դրույթյունն իմ Տամբովի նահանգում:
 Արդյոք՝ այստե՞ղ է Սնեսարյովը. ի՞նչ է նա պահանջում:—
 Պատասխանեց շտաբի պետը. — Լա՛վ արիր, որ եկար,
 Սնեսարյովն է Ցարիցինում զինվորական ղեկավար:
 Բայց բացակա է քաղաքից: Ես տեղակալն եմ նըրա:
 Այսօր դըրված է մարտական մի լուրջ խընդիր քեզ վըրա:
 Առաջին գունդըդ հետևակ՝ թող դիրք բըռնի Արչեգում:
 Այնտեղ գործում է թըշնամին, նա նոր գըրոհ է նյութում:
 Մի գումարտակ՝ Սերբյակովում դիրքերը թող պահպանի,
 Ֆիլոնովում թող այլ մի գունդ, ինչպես նաև հրետանի:
 Իսկ մնացած զորամասերն անմիջապես հավաքիր,
 Շարժվիր դեպի Ալեքսիևով և Ուրյուպինը: Խընդիր,
 Որ հարկավոր է կատարել քառասունութը ժամում:
 Այդ մահացու վերջին հարվածն է մերձիմահ թըշնամուն:
 Այնտեղ նա թույլ է քանակով, անկազմակերպ և անկարգ,
 Նրանք չունեն ռազմամըթերք. ոչ հըրացան և ոչ արկ:
 Այս նոր խընդիրը հեշտովյամբ դու կըլուծես, արդարև,
 Եվ քո փառքի դավիններին կավելացնե՛ս նոր տերև:
 Ժրպտաց կոմդիվը հեգնաբար: Ոտքի ելավ նա արագ.
 — Փառքի մասին չեմ մըտածում, զինվոր եմ ես հասարակ՝
 Բոլշևիկյան իմ պարտիայի հրամանին միշտ հըլու:
 Եվ սըրբազան գործի համար պատրաստ եմ ես մեռնելու:
 Զեր հրամանը մարտական կկատարվի տառ առ տառ:
 Ու դուրս զընաց՝ օրորվելով ինչպես դալար բարդի ծառ:

Բարի ճամփա մաղթեց ներան շտաբի պետը հանգիստ
Ու հեզնանքով շարունակեց. — Այսպես «ընկեր» գիմնազիստ,
Տես՝ ինչ ահեղ մարդիկ ունեն բոլշևիկները մեր դեմ:
Մենամարտի կանչել սըրան՝ չէիր ցանկա դու կարծեմ:
Մեր պայքարի անխափ մեթոդը քայքայելն է հիմա.
Ես այդ կարմիր Աքիլլեսին ուղարկեցի դեպի մահ —
Բաժանեցի՝ ես ներա ուժը մանրագույն մասերի՝
Ամեն մի մասն ուղարկելով երկու անգամ ավելի
Ուժեղ ու մեծ թշնամու դեմ: Իսկ դու կարո՞ղ ես գործել.
Կիկվիձեի շարժման մասին Դուդակովին հաղորդել:

Քաջ Կիկվիձեն այդ հըրամանն աղնրվորեն կատարեց:
Իր մասնատված զորամասով նետվեց կովի ասպարեզ:
Առավ ավանն Ալեքսիկով: Զարմանք պատեց բոլորին:
Ծրկաթգիծն արագորեն մաքրեց մինչև Պոլոդին:
Հետո շըրջեց իր հարձակումն Ուրյուպինի ուղղությամբ:
Սակայն ոսոխն ամենուրեք նախատեղյակ, անխուճապ,
Գընդացիների և արկերի ահեղ տարափ էր թափում:
Սըխալ հաշիվ էին արել ծարիցիսյան շտաբում:
Հերոս կոմդիվն անդուզ գընում էր, արշավում զայրագին,
Սարսափ ու մահ էր տարածում նրա խիզախ այրուծին:
Ուրյուպինի վրա նետվեց նա կայծակի սաստկությամբ.
Ջարդեց, փըշըեց, ավար առավ, գերեց և զորք և շտաբ,
Դուդակովյան ըսպաներին պատժեց մահով տեղն ու տեղ:
Նա կատարեց իր մարտական խընդիրն արագ և անշեղ,
Նա Ուրյուպին քաղաքն առավ՝ ջախջախելով թըշնամուն:
Բայց սըխալված էր. դրանով պայքարը չէր վերջանում:
Հանգչում էր զորքը: Հետախույզը ներս ընկավ հասպառ
Ու հաղորդեց.

— Ընկեր կոմդիվ, խաբել են մեզ նենգաբար:
Շըրջապատում են Ուրյուպինը կազակներն ըսպիտակ.
Ունեն հեծյալ երկու գընդեր, դինված ու թարմ հետևակ,
Դիրք է բռնել բարձունքներում նրանց հուժկու հրետանին
Երեք անգամ գերազանցում է մեզ թըվով թըշնամին:
Կոմդիվը ծանըր շունչ քաշեց, խորասուզվեց մի վայրկյան,
Հետո արագ ոտքի ելավ ու թելադրեց հըրաման.
— «Նահանջելու հընար չըկա. ոսոխը մոտ է արդեն:
Թողնել քաղաքն անձիջապես ու դուրս ելնել դեմ առ դեմ:

Այսօր փառքով պիտի ծածկի իր դրոշակն ամեն վաշտ:
Եվ զորամասը երգելով ելավ կըրկին կովի դաշտ:
Ոսոխն հանդ ուռաներով առաջ նետեց այրուձին:
Երկու մըրրիկ որոտաշունչ, իրար եկան, ձուլվեցին:
Քըրերը ծանրը զենգացին, ընկան ռազմիկ և նըժույգ,
Աղբյուրի պես արյուն ցայտեց ամեն ճակատ, ամեն կուրծք:
Կիկվիձեի հեծելազորը փոքրաթիվ էր՝ նըրան
Շրջապատեց ամեն կողմից կազակների սև լավան:
Բայց պայքարում էին մերոնք ինչպես վաղրեր անձնուրաց.
Երկու հարյուր հեծյալներից հարյուր հիսուն լուկ մընաց:
Եվ Կիկվիձեն, սըրտում կըսկիծ, արյան մըշուշն աչքերում,
Անհավասար մարտում ընկնող իր քաջերին էր նայում:
Ուրնշանում է այրուձին... դավադրություն է... ոճիր...
Հանկարծ գըլխում, ինչպես կայծակ, փայլատակեց մի վըճիռ.
Հեծելազորը պայքարից նա անհապաղ դուրս հանեց,
Եվ հետևակն ու հրետանին երկու թևի բաժանեց:
Մի ակընթարթ էր այդ... և նա նըշան տըվեց գըրոհի,
Եվ հետևակն առաջ նիտվեց դեպ այրուձին ոսոխի:
Կըրկին կըռիվը բորբոքվեց. մի կողմ սըվին, մի կողմ՝ սուր,
Կրկին իրար խառնըվեցին արյուն, քրտինք ու փըրփուր,
Ձիերը ծառս եղան դարձյալ սըվինահար փորերով՝
Արնոտ պայտերը մարդկային գանգերի մեջ խըրելով:
Հովազների նըման մարդիկ թըռչում էին ձիու թամբ,
Հեծյալին ցած էին քաշում օրհասական մոլուկամբ
Եվ կըրթոտում էին իրար՝ արյան լըճում թավալած,
Մինչև հանգչում էր կոկորդում վերջին տընքոց ու հառաչ:
Ճակատամարտը վերջացավ: Պարտված էր նենգ թըշնամին:
Սակայն մըռայլ էր Կիկվիձեն: Զորամասում չըկային
Երեք հարյուր տասներկու մարդ, յոթանասուներեք ձի,
Թևպետ ոսոխն էլ զոհ ուներ երկու անգամ ավելի:
Ռազմամըթերք չըկար այլևրս. ոչ փամփուշտ և ոչ արկ,
Իսկ նպահեստի իր զորքն այնտեղ, հեռվում նըստած է դառաթի:
Մինչդեռ ոսոխն ուժեղանում է, ճամփաները կապում:
Ոչ. խաբեցին խարդախաբար Յարիցինյան շտաբում:

Մըռայլ հոգով Ալեքսիկով նահանջեց Կիկվիձեն:
Մնասարյովը այնտեղ էր: Նա քաջատեղյակ էր արդեն
Ողբերգությանը, որ ծագեց Ուրյուպինյան ճակատում:

Նըստած կըլոր սեղանի շուրջ՝ նա շոկուլադ էր ուտում,
Երբ ներս մըտավ կոմդիվն արագ՝ զեկուցագիրը ձեռքին:
Կապույտ աչքերը զինդեկի՝ հոգնած էին, թախծագին:
Նուրբ խորշոմներ ուներ բարակ շուրթերի շուրջը պատած:
Երբ ըսպիտակ ձեռքը մեկնեց դեպի բազմոցն ու ժըպտաց,
Կիկվիձեին թըլաց մի պահ, թե տեսնում է այդ պահին
Ոչ թե ոազմի հրամանատար, այլ սեթեթ մի տիկին:
Նա հեզ լըսում էր կոմդիվին՝ հորանջելով ծուլաբար:
Եվ բան չասավ, չա՛րտասանեց որոշակի ոչ մի բառ:
Շըշմեց կոմդիվն այդ անտարբեր, տարօրինակ վարմունքից:
Նա գունատվեց .

— Ընկեր զինդե՛կ, արդյոք լըսո՞ւմ եք դուք ինձ:
Կըրկնում եմ ես. ինձ հարկավոր է անհապաղ օգնություն:
Ոստիք նոր ու թարմ ուժով այնտեղ թակարդ է նյութում:
Կըջախջախվի իմ գորամասն անհավասար կովի մեջ:
Ինձ խաբեցին: Ես ձեզ գըրել եմ... դուք լըռում եք անվերջ:
Ձինդեկը հեզ պատասխանեց՝ դեմքին ժըպիտ մի ժըլատ.

— Ընկեր կոմդիվ, սառչում է թեյը... համեցե՛ք շոկուլադ...
Ու վեր կացավ դանդաղաշարժ, ինչպես հոգնած մի տիկին,
Նըստեց վագոնն իրեն հատուկ, վերադարձավ ծարիցին:
Ծարիցինում հայտարարված է ոազմական դրություն:

✓ Ստալինը Կիկվիձեի զեկուցագիրն է կարդում՝
Ոլորելով բեղերը խիտ ու ծըխելով անդադար:
Եվ հեռագիրը թելադրում է. «Ռազմական ղեկավար
Սնեսարյովը, իմ կարծիքով, խարդախորեն խանգարեց
Ազատելու երկաթուղին Կատելնիկով — Տիխորեցկ...
Դըրա համար էլ մեկնեցի անձամբ ես ինքըս՝ ճակատ:
Ինձ հետ էին զրահակիրն ու սպասարկող մի ջոկատ...
Ես համոզված եմ. անկասկած՝ գիծը լըրիվ կըբանանք
Ջրահապատի հետ միասին, եթե առաջ ընթանանք
Մեր տասներկու հազարանոց ըսպառազեն բանակով,
Որ կաշկանդված է Գաշունում Սնեսարյովի հրահանգով:
Դըրա համար՝ Սնեսարյովի հրամաններին հակառակ՝
Մենք մի քանի որոշումներ ընդունեցինք, և արագ
Կենսագործում ենք: Շատ շուտով գիծը լըրիվ կըբացվի:
Չըկան արկեր և փամփուշտներ: Զորքը ձըգտում է կըռվի:
Այժմ երկու խընդիր ունեմ, ընկեր Լենին: Առաջին՝
Ծառ կանչեցեք Սնեսարյովին, նա խանգարիչ է գործին:

Նա չի կարող, նա չի ուզում, անընդունակ է գործել.
Իր ըսպիտակ հայրենակից կազակներին հարվածել...
Երկրորդ խնդիրը՝ մեզ համար ուղարկեցե՞ք ութը հատ
Զրահապատ ավտոմոբիլ: Փոխարիններ գուցե այդ
Քանակական սակավությունը մեր հետիոտն զորքերի,
Փոխարիններ գուցե նրանց կազմակերպումը թերի»:
Կարդաց Լենինն այս հեռագիրն ու մակագրեց զայրագին. ⁷
«Իմ կարծիքով՝ համաձայնվե՛լ Ստալինի պահանջին»:

ԳՐԱԳ ՌԻՔԵՐՈՐԿ

✓ Նադեժդա Կոնստանտինովնան մտահուզված է շատ խիստ:
Իլյիչն ինչքա՛ն է գունատված: Գիշեր-ցերեկ անհանգիստ
Նեւտվում է նա՝ Կրեմլից Կենտկոմ. Կլմինտերնից գործարան,
Ուր բանվորներն աղմբկահույզ դիմավորում են նրան,
Հազարավոր հարցեր տալիս և խանդավառ, և խրոտվ՝
Սովից այրվող իրենց աչքերը գալիքին հառելով:
Երկրի բոլոր հեռուներից մարդիկ դիմում են նրան:
Նա ընդունում է բոլորին, պատասխանում անվարան,
Խոսում, ժրպտում է կենսուրախ և կատակներ է անում՝
Բըթամատերը միշտ պահած բաճկոնակի թևերում:
Բայց իր մրտքում աճում է հոգսը՝ վիթխարի ծանրությամբ
Ինչպես պայծառ արևի դեմ՝ կարկըտաբեր մի սև ամպ.
Հոգսը քաղցած բանվորների և մուժիկի հոգսը մեծ,
Որ Սիբիրից հասած Մոսկվա՝ մի զույգ կոշիկ պահանջեց,
Հոգսը Կարմիր բանակների, պայքարի հոգսը դաժան,
Հոգսը հանուր երկրագնդի շղթայակապ մարդկության:
Գոտեմարտում է նա հոգսի յոթգրլխանի դևի հետ
Ինչպես հերոս հեքիաթական, անհաղթելի մի ասպետ:
Այրվում է նա մարդկանց հոգսով ինչպես արև կենսալից,
Ամեն վայրկյան նա նոր մի շող, մի հեռագիր է տալիս,
Արեգական շողերի պես ցայտում է միտքը նրա՝
Դեպ Արևելք, դեպ Արևմուտք, դեպի Հյուսիս ու Հարավ:
Հեռագրերն արագ թռչում են Ցարիցինը հեռու.
«Ժողկոմ ընկեր Ստալինին: Էլ բան չըկա ուտելու:—

Ոչ Պիտերում, ոչ Մոսկվայում: Վիճակը ծանր է, անելի:
Հաղորդեցե՛ք. ի՞նչ հրնարքով կարող եք դուք մեզ օգնել:
Ձեզնից բացի ոչ մի տեղից ըսպասելու հույս չկա:
Ուղարկեցե՛ք, ինչ որ կարող եք ձեռք բերել, ինչ որ կա,
Ձուկ, միս և ճարպ և ընդեղեն — ուղարկեցե՛ք անընդհատ,
Ուղարկեցե՛ք, միայն ինչքան կարող եք շուտ, միայն՝ շա՛տ»:

Եվ Ստալինն իր վագոնում այս հեռագիրը կարդաց:
Ծրխամորճում այրվող կրակն ավելի թեժ կայծկլւտաց:
V «Ձեզնից բացի ոչ մի տեղից...» ինչպես դրոշը մարտում,
Ինչպես կայծակը երկրնքի փոթորկաշունչ ոլորտում:
Փայլատակեց այդ խոսքը բոց, այրեց նրա մեծ հոգին,
Նրա մըտքի օվկիանն ընկավ հողմի նըման մոլեգին:
«Ձեզնից բացի ոչ մի տեղից...» — երկրի վըրա ոչ մի խոսք,
Դեռ չէր հընչել այսքան հուզիչ, այսքան ահեղ, անողոր:
Նա վագոնում քայլում է լուռ ու ծրխամորճ է ծրխում,
Այդ ահազանգը լենինի հուրհուրատում է գըլխում:
Ու մարգային կոմիտեում խոսեց նա կարճ ու դանդաղ.
«Ձեզնից բացի ոչ մի տեղից...» — պետք է այս խոսքն անհապառ
Հասնի ամեն կոմունիստի գիտակցությանն ու հոգուն,
Այս խոսքը պետք է գիտենա ամեն զինվոր բանակում:

Մետաղաձուլ գործարանի սուլոցը խորն է, խըռով:
Նըստած խոհուն և մըտահոգ, մըկանաձիգ վըզներով՝
Հարված նայում են բանվորները բարձրադիր ամբիոնին,
Ուր օդ ու սիրտ է սըղոցում ակնոցավոր պատանին:
— Այո, սա ծա՛ղր է, ընկերնե՛ր,— ճըչում է նա վըրդովված,—
Ցարիցիների պրուլետարին առաջարկել կես ֆունտ հա՛ց:
Թ՛վ Ռուսաստանը կործանեց, ո՛վ հասցըրեց այս օրին,
Քյժմ էլ գըցում է ծանրությունը մեր հոգնած ուսերին:
— Իսկ ո՛վ ես դու,— Կովաչի դուատորը հարց նետեց հեզնաբար:
Քկնոցավորը կանգ առավ՝ չըգըտնելով ոչ մի բառ:
— Ով էլ լինի, ճըշմարտությունն է պաշտպանում պատանին,—
Շեղից ելավ Իգնատ Պոպովը: Ի՞նչ... գըրողը տանի.
Մարտենի մոտ ես օրական հարյուր կաթսա եմ բերում,
Կես ֆունտ հացով ինչպե՞ս բանեմ ես բոցակեզ ցեխերում:
Ես գյուղացի եմ, ոսկորներս կարծրացել են հացով.
Կը խենթանամ, եթե չուտեմ փորիս ամբողջ պահանջով:

— Իգնատը ճիշտ է բարբառում,— հեզնեց Միրոն ու հազաց,—
 Ես վրկայում եմ. նա խրժուում է օրական վեց ֆունտ հաց։
 Վեց ֆունտ ուտում է օրական, վեց փութ հանում է շուկա։
 Եվ դու, Իգնատ, մի խանգարի. տեղին էր հարցն աղջերկա։
 Ո՞վ է, իրոք, այս հռետորը, ո՞ր ցեխումն է բանում։
 — Բանվոր եմ ես, բանվորների շահն եմ այստեղ պաշտպանում։
 — Սո՛ւտ ես ասում. դու գիմնագիստ ես, Մոսկվայից ուղարկված,—
 Ամբիոն թըռավ խիզախաբար աղջիկն ինչպես վայրի այծ,—
 Քո հինվածքում, եղբայր, չըկա բանվորական ոչ մի թել,
 Երկու շաբաթ է, ընդամենն, ինչ գործարան ես մըտել։
 Եվ աշխատանքն ատում ես դու, գործը լըքում ամեն ժամ,
 Աչքըդ հառած աղջիկներին՝ սիրաբանում ես էժան։
 Դու Կրասնովի գալու մասին հեքիաթ էիր ասում ինձ.
 էսեր ես դու, և մի՛ խոսիր բանվորների անունից։
 — Կորչի՛ էսերը...— դահլիճում ահեղ աղմուկ բարձրացավ
 Եվ գիմնագիստը վայր իջավ բեմից ոնց որ թըջված հավ։
 Նախագահող ընկեր Երմանը զանգ տըվավ ժըպտադեմ,
 Հընոցապան Իվան Կովաչը ծանրաքայլ ելավ բեմ։
 Այսպես խոսեց.

— Ճըշմարտությունը դու սիրո՞ւմ ես, Իգնատ։
 Ստամոքսի ճըշմարտություն գիտե ամեն մի միջատ։
 Ո՞րն է այսօր ճըշմարտություն. Իգնատի փո՞րն անհագուրդ,
 Թե՛ ապագան հայրենիքի, թե՛ մի սովյալ ժողովուրդ։
 Արյունակից մեր եղբայրները, Մոսկվայում, Պիտերում,
 Սովից այրվող իրենց հայացքը Վոլգային են հառում,
 Լենինը հաց է որոնում անքուն մինչև առավոտ,
 Հավատարիմ իր զինակցին նա ուղարկել է մեզ մոտ։
 Այնտեղ է նա, կայարանում, ես նրա մոտ գընացի
 Եվ նա ասավ ինձ ահավոր ճըշմարտությունը հացի։
 Լուսամուտից նա Վոլգային երկար նայեց և ասավ.
 «Վոլգան — դա մայրն է Ռուսիայի, հըզոր է նա, սըրտացավ,
 Հերոսական նըրա որդին այսօր նրան է կանչում։
 Ասում է. մա՛յր, սովից հանգչում է իմ բազուկը մարտում։
 Ասում է, մա՛յր, առա՛տ ես դու, տո՛ւր քո սովյալ որդուն հաց.
 Նա քո պատիվն է պահպանում ոսոխներից մոլեգնած։
 Այսպես ասավ, և իմ հոգուն տիրեց այրվող մի ամոթ.
 Եվ, ընկերներ, ձեր անունով ես երգվեցի նըրա մոտ —
 Ցարիցիների պրուխտարիատը հաց կըտա Մոսկվային.
 Թեկուզ օձի հազար լեզու և թույն թափի թըշնամին։

Դատեք ինքներդ, ընկերներ՝, ո՞րն է բարին այս բանում.
Ուտենք այսօր այնքան, ինչքան Իգնատի փորն է տանում,
Որպեսզի վաղն ըստրով դառնանք ու հավիտյան կիսաքա՞ղց,
Թե՛ կես ֆուռտով ապրենք այսօր ու տանք սովյալ երկրին հաց,
Որպեսզի վաղը տեր դառնանք ազատ, արդար մեր հացին:
Ամեն բանվոր թող պատասխան տա ինքնիրեն այս հարցին:
Այսօր մենք չենք առաջնորդվում, Իգնատ, միայն քո փորով,
Այլ՝ մեր երկրի, դասակարգի, մեր պետության շահերով...

— Կեցցե՛ լենինը...

— Հացը կըտանք եղբայրական Մոսկվային,—

Ու վզների մկանունքները նոր ուժով լարվեցին:

Իրար դիպան ափերը ծանրը, երկաթե զընգոցով:

— Կեցցե՛ Ստալինը. — շառաչեց միտինդն ինչպես անափ ծով:

- ✓ Ցարիցինի կայարանում տագնապ է, տոթ, եռուզեռ:
Շոգեքարշերն անդու հևում են ամբողջ օր ու գիշեր:
Անվերջ մեկնում են գընացքները՝ լի ձըկնով ու հացով.
Ապրանքատար վագոնների երկար ու ձիգ տողանցով,
Ժողկոմն անցնում է անդադար ու վագոններն ըստուգում,
Շոգից կիզված ու լողացած իր սեփական քրտինքում:
Անվերջ մեկնում են գընացքներն... իսկ նա լարված, մըտահույզ,
Կանգնած հրսկա քարտեզի դեմ ամբողջ գիշեր մինչև լույս
նոր աղբյուրներ է որոնում և նոր դըռներ է բացում,
Գիշերվա խոհն առավոտյան անշեղ գործի վերածում:
Այրվում է նա, ինչպես լենին, ինչպես արև, անըսպառ
նվ ուղարկում է կյանք տըվող իր գընացքներն անդադար
Դեպի Օրյոլ, դեպի Պենզա, դեպի Կոստրոմ, դեպի Տվեր,
Մինչև Սիմբիրսկ ու Նովգորոդ, մինչև Մոսկվա և Պիտեր:
Նա ուղարկում է հաց տանող նավերը մինչև Աստրախան.
Մինչև հեռու Անդրկովկաս, մինչև Բաքու, Թուրքեստան:
Անվերջ մեկնում են գընացքները լի ձըկնով ու հացով
Ու նավերի քարավաններն են ծանրաբեռ մըտնում ծով:
Ստալինը հաց է ուղարկում գիշեր-ցերեկ անդադար,
✓ Կապրի մանուկը հաղթության... Լենինը գոհ է, կայտառ:

Լոկոմոտիվը ծանրահև սուրում է զույգ ռելսերով՝
Ստալինյան հացով լեցուն վաթսուն վագոն քարշ տալով:
Ծրկու հըզոր զըրահապատ, կառախմբին ուղեկից,
Մեկը մաքրում է ճանապարհ, մյուսը գալիս հետևից:

Ջրահապատից արթուն դիտում է հեռուններն աննրկատ
Պուտիլովյան բանվորների հայրենասեր մի ջոկատ:
Փամփուռտակալը խաչաձև ու նրռնակները կապած,
Անտանելի շոգից քըլտնած, արևախաշ, կրծքաբաց,
Նըրանք երգում են, կատակում ու ծիծաղում սըրտագին՝
Արթուն աչքերը միշտ հառած վըտանգավոր ըստեպին:
Քանի անգամ ըսպիտակներն ուղին կըտրել են հանկարծ,
Վայրենական ոռնոցներով բըլուրներից իջել ցած,
Որ թալանեն, ավար առնեն քարավանները հացի,
Որ թույլ չըտան, և ոչ մի բուռ կարմիր Պիտերը հասնի:
Ջոկատի պետ Բորիս Կոստրովը, մարտենյան մի ասպետ,
Որ պայքարում էր հալոցքի բոցաերախ դևի հետ,
Հենց որ կարդաց Լենինի կոչը, մարտենից վայր իջավ,
Հացի համար հարավ մեկնող ջոկատներին միացավ:
«Մընաս բարով, սիրուն Թամար: Լաց մի լինիր, իմ անգին,
Նախ և առաջ պետք է հաղթել սովի դեղին վիշապին» —
Ասավ, առավ, իբրև պաշար, փոքրիկ մըրոտ մի տետրակ,
Ուր նա երգեր էր հորինում բանից ազատ ժամանակ:
Արշավախումբը Կոստրովի հյուսած մի երգն է երգում,
Մի հին ծանոթ եղանակով՝ լըսած մանկութ օրոցքում:

Քեզ է՝ դիմում Լենինը մեծ.

Մեզ հա՛ց տուր, հա՛ց, Վոլգա-մայր:

Նա քո չըքնաղ ափին ծընվեց

Ու կյանք առավ քեզ համար:

Ճամփել է նա քեզ աջակից

Իր հարազատ ժողկոմին.

Ստալինի հըզոր զարկից

Կըխորտակվի թըշնամին:

Մեզ չի հաղթի ոչ սուր, ոչ սով,

Ոչ էլ խավարը համառ,

Սընված քո սուրբ, արդար հացով՝

Անհաղթ ենք մենք, Վոլգա-մայր:

Շորորալով դանդաղաշարժ, ինչպես ուղտի քարավան,

Հացի գընացքը կես գիշեր հասավ Արշեդ կայարան:

— Ուռտ՛ւ... — ոռնաց կազակների հորդան ոնց որ սև ամպրոպ՝

Ու խավարում ամեն կողմից գըրոհ տըվին քառատրոփ:

Կափկափեցին զընդացիրներն, ինչպես կարկուտ, մոլեգին,
 Արկերն ահեղ շառաշուռով խավարը խիտ պատռեցին:
 Խավարի մեջ տեսավ Կոստրովը կազակին ըսպիտակ:
 Դեպի զընացքն էր նա սողում՝ ձեռքին պահած մի նըռակ:
 Ոստենց Բորիսը ոնց որ վագր ու պըլըվեց կազակին,
 Խըլեց նըռական ու ետ նետեց բազկի ուժով ահագին:
 Հսկըսեցին մենամարտել: Իրար գըրկած՝ ընկան վայր:
 Ֆշշաց կազակն ատելության, մահվան կըրթից խելագար:
 — Կըխորտակեմ երկաթուղին... ռելսերն ամեն կըհանեմ...
 Դու չես տանի մեր Դոնի հացը... ա՛ռ հա քեզ... կըսպանեմ՝մ...
 Վիշապայի բազուկներից Բորիսն իր վիզն ազատեց,
 Չոքեց կըրծքին ու թավ միրուքն ամուր ձեռքին փաթաթեց,
 Ու պատասխան տըվավ նըրան՝ տիտանաբար հեալով:
 — Ես հացը տեղ կըհասցնեմ քո դիակի՝ վըրայով:
 Դու հացը չես հափըշտակի պուտիլովյան բանվորից...
 Ու խավարում կազակների հորդան ոռնում է նորից:
 Ամբողջ գիշեր օրհասական կըռիվը շէր դադարում,
 Մինչև արևը բարձրացավ, շողաց արյան լըճերում:
 Վերջին անգամ էլ կազակները դիմեցին հարձակման
 Ու դիակներն սնտիր թողած՝ հողմացըրիվ հեռացան:
 Կըրկին սահում են զընացքները նորոգված ռելսերով:
 Կըրկին երգում են բանվորները մարտական հուլզեքով:
 Վոլգան ու Դոնը Մոսկվային և Պիտերին տըվին հաց,
 Ապրեց մանուկը հաղթության ու հայր-լենինը ժըպտաց:

ԳՐՎԱԳ ԻՆՆԵՐՈՐԳ

Վորոշիլովն իր բանակով մըտավ Կարմիր Ցարիցին:
 Ինչպես վարդերը, որ բացվում են հորդաբուխ մայիսին,
 Նրա կարմիր դըրռչակները փայլեցին քաղաքում,
 Ուր թըշնամին իր մութ ուժերն էր անդադար հավաքում:
 Վորոշիլովն իր հետ բերավ իր բանակի պետերին:
 Եկավ Ռուդնեն առյուծասիրտ, կոմանդարմի սիրելին,
 Եկավ հերոս Կորզարենկոն՝ ռազմիկների զորապետ,
 Ու Սոլովյեյն իր Դոնբասյան բուլշեիկյան գնդի հետ,

Եկավ Մելնիկը բոցաշունչ, հրետանու կիսաստված,
Եկան Արտյոմն ու Ժեկզնովը բոցերում լըվացված,
Եկան, լըցրին Ցարիցինի երակները նոր արյուն,
Մըտան մարզկոմ ու գործարան, հասան ամեն մի անկյուն,
Մըտան բուլվարը խառնահոծ, փակուղիները հետին,
Եվ ամենուր ստալինյան կանոն ու կարգ հաստեցին:

«Քաղաքի Հայր» Սիմոն Միլինը փընթիընթում էր խոժոռ.

Ի՞նչ են եկել ամեն կողմից՝ գըլուխներիս լիազոր...

Բայց Ստալինը ձեռքն ամուր թափահարեց հեգնաբար
Եվ ըսկըսեց հերկուլեսյան իր աշխատանքը համառ:
Նա ռազմական հիմնարկների Ավգյան գոմերը մաքրեց.

Ցըրեց շտարը ռազմական, դավադրության բույնը մեծ,
Հանեց աղվես նոսովիչին ու սպաներին դավակից,

Դարանակալ Սնեսարյովին նա վըտարեց բանակից:

Փոխեց նըրա անմիտ և նենգ հըրամանները բոլոր,

Հարեց հըսկա ռազմաճակատն ինչպես աղեղ զորավոր:

Կազմեց բանակը Տասներորդ և առաջին այրուձին,

Ջորամասերը ցիր ու ցան իրար եկան, ձուլվեցին:

Վորոշիլովը հաստատվեց նոր բանակի կոմանդարմ,

Ժողվեց իր շուրջը բուլշևիկ հերոսներին քաջադարմ:

Նա ցարական ըսպաներից առավ զընդերը կարմիր,

Պրուետարները թուր առան, դարձան խիզախ կոմանդիր:

Տրոցկին դըժգոհ էր. դազազած՝ հեռագըրեր էր տալիս,

Հըրամաններ էր արձակում և ըսպառնում շանթալից:

Բայց Ստալինը հեգնանքով հեռագըրերը կարդում

Ու տեսնելով, որ մուկ կըրքեր են փոթորկում այդ մարդուն,

Քըմծիծաղում էր ինքնիրեն ու մակագրում սառնասիրտ.

«Թողնել առանց ուշադրության»:

Նըվազախումբը չի թընդում այլևս հոծ բուլվարում,

Պաշտոնաթող օֆիցերներն այլևս չեն զարդարում

Ցարիցինի մայթերն իրենց բարակիրան տիկնանց հետ:

Էլ չի շըրջում ըսպեկուլանտը փողկապով սեթևեթ:

Ցարիցինում հայտարարված է ռազմական դըրություն,

Օրհասական բախումների կըծու վառողն է օդում,

Մոտ են արդեն մամոնտովյան հըրոսակներն ըստահակ,

Թընդանոթի ահեղ որոտն արդեն հասնում է քաղաք:

Ջրիակեր ամեն զեռուն՝ վաճառական, ֆաբրիկանտ,

Խավարամոլ տիրացուներ ու դոկտորներ մոլեռանդ,
Բոլոր նըրանք, որ դարերով ծրծել են հյութը մարդկանց
Ու վալելել են անաշխատ՝ ամեն բարիք, ամեն գանձ,—
Մըտած շարքերը գրլխակոր՝ գընում են լուռ և հըլու
Ցարիցիների պաշտպանության խըրամատներ փորելու:
Նըրանց հոգում միայն մի տենչ, մի շար երազ կա միայն,
Որ Ցարիցին մըտնի Կրասնովն իր տանկերով կործանման:
Բայց ակամա՝ Կրասնովի դեմ խըրամատներ են փորում,
Անհույս նայում են ըստեպին ու գըլուխներն օրորում:
Մինչ հեռավոր զավոդներում, գիշեր ցերեկ անդադար,
Անվերջ բուսնում է շողշողուն սվինների մի անտառ:
Այդ Ստալինն է քաղաքի պրոլետարիատը զինում,
Վառվում է լույսը ողջ գիշեր նըրա անքուն վագոնում:

Նա ցերեկները տապակվում է հըրատապ հարցերում
Ու գիշերները լենինին ըշտապ նամակ է գըրում:
Ծանր է վիճակը Հարավում: Տրոցկու մարդիկ ապիրատ
Նըրան թողին մի քայքայված, անդամալուծ ապարատ:
Հերկուլեսյան համառությամբ նա իր ուժերը լարեց
Ու հարձակվեց դեպի Հյուսիս, դեպի Հարավ — Տիխորեցկ:
Բայց Հյուսիսում կարմիր զորքերը քայքայված են արդեն,
Ե՛վ Միրոնովն է նահանջում, և՛ քաջարի Կիկվիձեն,
Կազակների սպիտակ հորդան այնտեղ երես է առել,
Լիպկից մինչև Ալեքսիկով երկաթուղին զըրավել,
Կադետական հըրոսակաները դեպ Վոլգա խուժեցին՝
Նավարկությունը կըտրելու՝ Ցարիցիների Կամիշին:
Իսկ Ռոստովում Կալինինի զորքն է քայքայվում տենդա:ից,
Առանց արկի ու գընդակի, և Տիխորեցկը տալիս,
Անդըրկովկասը գալարվում է սանձալից վիճակում,
Դահլճների կրունկի տակ արյունոտվում է Բաքուն,
Արդեն առել են կազակներն Ստավրոպոլը բերրի,
Կըտրել ուղին՝ պարենային հազարավոր բռնների:
Ոռնում է շուրջը, ոնց որ գոռ, փոթորկահույզ մի օվկիան,
Կրասնովական կազակների մշտաբորբոք Վանդեան:
Միայն կանգնած է Ցարիցին՝ անմատչելի, կրծքարաց,
Թըշնամական հորդաներով ամեն կողմից պաշարված,
Միայն կանգնած է Ցարիցին իբրև անառ մի Վերդեն
Բելոգվարդյան գազանային գըրոհներին դեմառդեմ:

Կարմիր զորքերը դուրս եկան, թըշնամու դէմ Խանգեցին,
Նկան Սալսկի փոթորիկները — Բուդյոննու աշուձին,
Նկավ հեռու Ստավրոպոլից Կորչագովի դիվիզիան,
Նկան Դոնից, Նիքիին Չիրից, հազարավոր պարտիզան,
Նկան զորքերը Ռոգոժյան՝ մարտաբորբոք Մոսկվայից,
Նկան բոլոր զորամասերը խանդավառ, ցասմալից,
Նկան հեռու քաղաքներից, ստեպներից անսահման
Ու դոնբասյան բանվորները հըզոր զորքին միացան:
Ցարիցինյան զրահակիրները մարաագոռ սուպեցին,
Նըրանց հեթից բոցահոսան՝ թընդաց երկինք ու գետին,
Քաջ Մեկնիկի թընդանոթները — պահապան առյուծներ —
Ցարիցինի դըռների մոտ մըռընչացին դոնչն ի վեր:
Կանգնեց կարմիր զորքի գլուխ, իբրև խիզախ կոմանդարմ,
Վորոշիլովը պանծալի, բուշկիկյան արծվի զարմ:

Կրասնովական Դոնի հորդան երկու թևի էր հատված:
Արևմուտքից Մամոնտովի հեծելազորը ոռնաց,
Ֆիցխելան՝ րովի խուժանը հոխորտաց՝ հյուսիսից,
Գալիս էին՝ խորտակելով երկաթուղու ամեն գիծ,
Առնում, ծածկում էին ըստեպն ինչպես մթին մառախուղ.
Նվ հըրդեհում ամեն քաղաք և թալանում ամեն գյուղ,
Գալիս էին՝ օտարերկրյա կործանարար տանկերով,
Ձինված խաշով ու բուրվառով, պատարագի զանգերով,
Գալիս էին ամեն կողմից ինչպես հեղեղն ահռելի՝
Կարմիր զորքից իրենց թըվով երկու անգամ ավելի:
Գալիս էին գոռոզ, վըստահ, որ Ցարիցինը կառնեն,
Կըկողպտեն ամեն պալատ, ամեն խըրճիթ կըխառնեն,
Հետևներից գալիս էին կանայք՝ շըփերթ երգելով,
Ապրանքատար սալակներով, պարաններով, պարկերով,
Գալիս էին ըստեպներից և՛ մոտակա, և՛ հեռու՝
Ցարիցինի ավարն անբավ՝ ատլաս ու խաս՝ տանելու:
Հետևներից գալիս էին գեներալներն արնախում,
Սպեկուլանտը մինիստրին արդեն պորտֆել էր ծախում,
Հետևներից գալիս էր ցարը, ճորտության բուժ ոգին՝
Գոռոզ նըստած օտարերկրյա վասալության գահույթին:

Վառվում էին ռազմադաշտերը բոցերում արնափայլ՝
Խաղաղ Դոնից մինչ Վոլգա-մայր, Մեդվեդիցից մինչև Սալսկ:

Հակառակորդ երկու բանակ սողում էին դեպ իրար
Դարանակալ հովիտներով ու փոսերով անհամար,
Դոփում էին երբեմն կավ ու մերթ ավազն ըսպիտակ,
Տընքում էր հողն արշավասույր բանակների ոտքի տակ,
Քամին փախչում էր ըստեպից մահասարսուռ ոռնոցով,
Գետերն արյուն ու դիակներ էին տանում դեպի ծով:

Ըսպիտակներն առան Կալաչը: Ներս մըտան մոլեգին:
Երեխաներն օրոցքներում սարսափահար զարթնեցին:
Ջարդում էին դարբաս ու դուռ օֆիցերները հարբած
Ու դուրս տանում խըրճիթներից կոշիկ, վեմակ, փետրաբարձ:
Փողոց փախան ջահել կանայք սարսափահար, կիսամերկ,
Մըթնում իրար խառնըվեցին օգնության ճիչ, լըկտի երգ...
Ամբողջ գիշեր՝ առեանգում էր, կողոպուտ էր, դըժոխք,
Ամենուրեք՝ խոզի ճըղղոց, հավի կաշկաշ ու նըզովք:
Ու թըպըտաց ամբողջ գիշեր ավանն ինչպես մորթված հավ,
Մինչև արևը Վուզայի հովիտներից բարձրացավ:

Առավոտյան փըչեց ուրիշ արյունահոտ մի քամի:
Հավաքեցին տըղամարդկանց հըրապարակը ժամի:
Կանգնած էր Ժուլը՝ մոլեգին մամոնտովյան օֆիցեր:
«Բուլշևիկյան վարակի» դեմ քարոզ կարդաց մի տերտեր:
Նաչը մեկնած՝ նա կոշ արավ — գենքերն առնել, հեծնել ձին,
Ու Կրասնովյան գորքերի հետ գընալ դեպի Ցարիցին:
Բայց Կալաչի ծերունիներն այսպես տըվին պատասխան.
— Երբ ձեզանից առաջ մեզ մոտ բուլշևիկները եկան,—
Բերին մեզ հող, ազատություն, և չըտարան ոչ մի ճուտ:
Իսկ դուք բերիք նորից մըտրակ, թըշնամություն, կողոպուտ:
Մամոնտովյան ըսպան մըթնեց և ըսպառնաց մոլեգին.
— Ես ձեր դիերը կոխ տալով կերթամ կարմիր Ցարիցին.
Իմ հետևից հոֆմանական հըզոր տանկերն են գալիս:
Ու կազակները Կալաչի՝ մըռընչացին ցասմալից.
— Դու մի՛ սպառնա կազակներին. մահից այն կողմ ահ չըկա,
Իսկ եթե ճիշտ է, որ մեզ մոտ գերմանացին պիտի գա,
Կանցենք իսկույն կենինի կողմը...— Գունատվել էր ըսպան:
— Նախագահին բերե՛ք,— ֆըշշաց՝ որպես մոլի մարդասպան:
Եվ դուրս բերին Իգնատևին՝ շըղթայակապ, գըզգըզված:
Թունոտ ու չար եղանակով կազակ ըսպան փըսփըսաց:

— Նախկին շտաբըս կապիտան... «կայսերական օֆիցեր».
Քավի՛ր հանցանքըդ այս վայրկյան, դու ժամանակ ունես դեռ:
Բուլշևիկյան օձիդ լեզվով այս խոզերին համոզի՛ր,
Հայտարարի՛ր, որ քո լենինը... հասկանո՞ւմ ես... խոսի՛ր:
Եվ Իգնատևը լուռ ու մունջ ելավ ամբիոնը քարե,
Որպես ծնվող ճըշմարտության մի տառապյալ մարգարե:
Այսպես խոսեց.

— Իմ եղբայրեն՛ր, բընիկ, եկվոր ժողովո՛ւրդ,
Հըրաժեշտիս վերջին պահին թողնում եմ ձեզ մի խորհուրդ.
Դուք ինձ գիտեք. ծընվել եմ ես մեք հարազատ Կալաշում:
Շատերիդ հետ ես միայն հողն ու խոփն էի ճանաչում:
Ցարի բանակն ինձ պարգևեց կապիտանի աստիճան.
Էլ ի՞նչ էր պետք... բայց ես, ահա, խոտորեցի իմ ճամփան:
Ես զընացի լենինի հետ բուլշևիկյան ընդհատակ...
Եվ այժմ ձեզ, իմ եղբայրեն՛ր, ասում եմ ես բացարձակ.
Մի՛ հավատաք այս վաճառված, հայրենադավ շըներին,
Մեր դեմ պայծառ է ապագան, լուսավորված է ուղին,
Սովետների իշխանության ուղին է այդ փրկարար:
Եվ առաջնորդը մեր լենինն է...

— Կաց...

— Լըռի՛ր...

— Խեղագար...

Պայթեց նազանը, նահատակը երերաց ու ծավվեց
Եվ այդ գիշեր մորթված սագի փետուրներում թավալվեց:

— Մարդասպանեն՛ր...

— Չարչարողեն՛ր...

— Դավաճանեն՛ր...

— Դահիճեն՛ր...

Եվ բրոունցքներն ըսպառնական մեկնրվեցին դեպի վեր,
Ձանգվածն ահեղ առաջ շարժվեց՝ հորձանք տալով ինչպես ծով.

— Զուլա՛տ, կըրա՛կ,— հըրամայեց ըսպան օձի ֆըշշոցով:

Փակեց աչքերը քահանան ճիվաղների գործակից,
Ճաթճաթեցին զընդացիրները ռուրբ հոգու օթյակից»,
Ունաց զանգվածը մարդկային մահվան ահեղ գալարքով,
Կարկըտահար հասկերի պես մարդիկ ընկան իրար քով,
Ցանկապատից փախչողներին բըռնում էին ու մորթում,
Երեք հարյուր դիակ ընկավ ժամտան առաջ փողոցում:

Հակառակորդ երկու բանակ սողում էին դեպ իրար
Դարանակալ հովիտներով ու փոսերով անհամար,
Դոփում էին երբեմն կավ ու մերթ ավազն ըսպիտակ,
Տընքում էր հողն արշավասույր բանակների ոտքի տակ,
Քամին փախչում էր ըստեպից մահասարսուռ ոռնոցով,
Գետերն արյուն ու դիակներ էին տանում դեպի ծով:

Ըսպիտակներն առան Կալաչը: Ներս մըտան մոլեգին:
Երեխաներն օրոցքներում սարսափահար զարթնեցին:
Ջարդում էին դարբաս ու դուռ օֆիցերները հարբած
Ու դուրս տանում խըրճիթներից կոշիկ, վերմակ, փետրաբարձ:
Փողոց փախան ջահել կանայք սարսափահար, կիսամերկ,
Մըթնում իրար խառնըվեցին օգնության ճիշ, լըկտի երգ...
Ամբողջ գիշեր՝ առևանգում էր, կողոպուտ էր, դըժոխք,
Ամենուրեք՝ խոզի ճըղղոց, հավի կաշկաշ ու նըզովք:
Ու թըպըտաց ամբողջ գիշեր ավանն ինչպես մորթված հավ,
Մինչև արևը Վոլգայի հովիտներից բարձրացավ:

Առավոտյան փըշեց ուրիշ արյունահոտ մի քամի:
Հավաքեցին տըղամարդկանց հըրապարակը ժամի:
Կանգնած էր Ժուկը՝ մոլեգին մամոնտովյան օֆիցեր:
«Բուլչևիկյան վարակի» դեմ քարոզ կարդաց մի տերտեր:
Քաշը մեկնած՝ նա կոշ արավ — զենքերն առնել, հեծնել ձին,
Ու Կրասնովյան զորքերի հետ գընալ դեպի Ցարիցին:
Բայց Կալաչի ծերունիներն այսպես տըվին պատասխան.
— Երբ ձեզանից առաջ մեզ մոտ բուլչևիկները եկան,—
Բերին մեզ հող, ազատություն, և չըտարան ոչ մի ճուտ:
Իսկ դուք բերիք նորից մըտրակ, թըշնամություն, կողոպուտ:
Մամոնտովյան ըսպան մըթնեց և ըսպառնաց մոլեգին.
— Ես ձեր դիերը կոխ տալով կերթամ կարմիր Ցարիցին.
Իմ հետևից հոֆմանական հըզոր տանկերն են գալիս:
Ու կազակները Կալաչի՝ մըռընչացին ցասմալից.
— Դու մի՛ սպառնա կազակներին. մահից այն կողմ ահ չըկա,
Իսկ եթե ճիշտ է, որ մեզ մոտ գերմանացին պիտի գա,
Կանցենք իսկույն լենինի կողմը...— Դունատվել էր ըսպան:
— Նախագահին բերե՛ք,— ֆըշշաց՝ որպես մոլի մարդասպան:
Եվ դուրս բերին Իգնատևին՝ շըղթայակապ, գըզգըզված:
Թունոտ ու չար եղանակով կազակ ըսպան փըսփըսաց:

— Նախկին շտաբըս կապիտան... «կայսերական օֆիցեր».
Քավի՛ր հանցանքըդ այս վայրկյան, դու ժամանակ ունես դեռ:
Բոլշևիկյան օձիդ լեզվով այս խոզերին համոզի՛ր,
Հայտարարի՛ր, որ քո լենինը... հասկանո՞ւմ ես... խոսի՛ր:
Եվ Իգնատևը լուռ ու մունջ ելավ ամբիոնը քարե,
Որպես ծնվող ճըշմարտության մի տառապյալ մարգարե:
Այսպես խոսեց.

— Իմ եղբայրներ, բռնիկ, եկվոր ժողովո՛ւրդ,
Հըրաժեշտիս վերջին պահին թողնում եմ ձեզ մի խորհուրդ.
Դուք ինձ գիտեք. ծընվել եմ ես մեք հարազատ Կալաչում:
Շատերիդ հետ ես միայն հողն ու խոփն էի ճանաչում:
Ցարի բանակն ինձ պարգևեց կապիտանի աստիճան.
Էլ ի՞նչ էր պետք... բայց ես, ահա, խոտորեցի իմ ճամփան:
Ես գընացի լենինի հետ բոլշևիկյան ընդհատակ...
Եվ այժմ ձեզ, իմ եղբայրներ, ասում եմ ես բացարձակ.
Մի՛ հավատաք այս վաճառված, հայրենադավ շըներին,
Մեր դեմ պայծառ է ապագան, լուսավորված է ուղին,
Սովետների իշխանության ուղին է այդ փըրկարար:
Եվ առաջնորդը մեր լենինն է...

— Կաց...

— Լըռի՛ր...

— Խելագար...

Պայթեց նագանը, նահատակը երերաց ու ծավվեց
Եվ այդ գիշեր մորթված սագի փետուրներում թավալվեց:

— Մարդասպաններ... .

— Չարշարողներ... .

— Դավաճաններ... .

— Դահիճներ... .

Եվ բրոունցքներն ըսպառնական մեկնրվեցին դեպի վեր,
Ձանգվածն ահեղ առաջ շարժվեց՝ հորձանք տալով ինչպես ծով.

— Զուլա՛տ, կըրա՛կ,— հըրամայեց ըսպան օձի ֆըշշոցով:

Փակեց աչքերը քահանան ճիվաղների գործակից,
Ճաթճաթեցին գընդացիներնը ասուրբ հոգու օթյակից»,
Ունաց զանգվածը մարդկային մահվան ահեղ գալարքով,
Կարկըտահար հասկերի պես մարդիկ ընկան իրար քով,
Ցանկապատից փախչողներին բըռնում էին ու մորթում,
Երեք հարյուր դիակ ընկավ ժամտան առաջ փողոցում:

Առան Կալաշ ու Կատուբան, հասան Սարեպտ ու Գումրակ,
Գալարվեցին քաղաքի շուրջ իբրև օձեր բոցօղակ,
Ռազմաճակատը պայտաձև ետ էր գալիս օր-օրին,
Նրանց թևերը ձախ և աջ, արդեն հասան Վոլգային:
Կրասնովական ըսպիտակ դեր կաղկանձում էր, հեռում՝
Ամուր պերկած կարմիր Վերդենն իր զազրելի թևերում:

Ահեղ վայրկյանն էր ճակատում: Նեղում էր գոռ թըշնամին:
Կազակային զազիր «ուռուհի» արդեն բերում էր քամին:
Նըրանք ճեղքում էին շըղթան և քաղաքին մոտենում:
Եվ հըրամկազմը հավաքվեց Ստալինի վագոնում:
— Զորքը ջարդված է, փոքրաթիվ,— խոսեց Միլինն ուժասպառ,—
Հետևը գետն է, և չըկա նահանջելու ճանապարհ...
Բոլորն իրենց այրվող հայացքը ժողովմին հառեցին:
Մինչ նա մաքրեց իր ծըխամորձը և լըցրեց վերըստին:
— Նահանջի միտքը սին երազ է, մահացու թուլություն:
Կորած է նա, ով այդ մասին է այս վայրկյան մըտածում:
Միայն մի խոհ այս դըրությունը հիմնիվեր կըփոխի:
Ինչպես ջարդե՛լ փրտած մըռութը հանդըգնող ոսոխի,
Ինչպես հաղթե՛լ... դուք ա՛յս մասին մտածեցեք ընկերնե՛ր,
Մի մոռանա՛ք, որ մեր առաջ միայն մի հարց կա. մեռնե՛լ,
Սակայն քաղաքը պաշտպանել, սակայն չըտա՛լ Ցարիցինն—
Ահա թե ինչ... գործի՛ դընել գնդա՛կը, ա՛րկը վերջին,
Կազմակերպել բանվորներից պաշտպանության նոր գընդե՛ր:
Ցարիցինը պայքարելու անըսպառ ուժ ունի դեռ:
Դե՛հ, ընկերներ. դեպի խրամա՛տ: Նահանջելու ոչ մի խո՛հ:
Կընահանջի ինքը Կրասնովն վաղը մինչև երեկո:
Եվ ծիծաղեց՝ իր հոգնաբեկ աչքերն ուրախ կըկոցած:
Մարդկանց ուսից ասես հըսկա մի ապառաժ ընկավ ցած:

Անվերջ եռում էր արսենալն ինչպես հըսկա մըջնաբույն:
Մարդիկ գինվում էին արագ և խըրամատ ըշտապում:
Ասլամազյանն ու Շեստակովն՝ արսենալի վարիչներ՝
Անքուն նըստած արկըղներին՝ խոսում էին այն գիշեր:
— Քուճըս տանում է... չորս գիշեր է, չեմ քընել, Գարեգի՛ն:
Ա՛խ մի ջարդենք, շըպըրտենք Դոնն այս կատաղած դեքթե՛ծ,
Ես Վոլգա-մոր անուշ գըրկում կլողանամ մի անգամ,
Կերթամ անտառը հայրենի և կըքնեմ՝ քսան ժամ:

Ասլամազյանն իր խոհերով տեղափոխվել էր հեռու,
 Իր հայրենի սարերը սեզ, երազ լեռները չոռու,
 Ու մըմըմում էր ինքնիրեն պատանեկան մի հին երգ՝
 Իր հընամյա ժողովրդի բախտի մասին արնաներկ:
 Ո՛ւմ լծի տակ է բազմատանջ իր Հայաստանը հեծում,
 Ո՛վ է տիրում այնտեղ հիմա, առևանգում ու ծեծում:
 Խըմբապետնե՛րը սանձաթող, տանուտերնե՛րը դաշնակ,
 Թե՛ փաշաները տաճկական՝ արյան, մահի միշտ անհագ:
 Իվ շո՛ւտ կըգա փերկության ժամը, ցանկալի այն ըոպեն,
 Երբ մեր գընդերն այն շարատանջ լեռներն ի վայր կըդոփեն,
 Կըխորտակեն խավարը խուլ, դարերի լուծը դաժան
 Եվ կըծընվի մոխիրներից մի նոր, չըքնաղ Հայաստան...
 Ասլամազյանն իր սըրտակեզ երազներից արթնացավ,
 Նայեց խոհուն, ցրված մըտքերը հավաքեց և ասավ.
 — Խոստովանում եմ, Միխայիլ, հոգիս լըքված էր արդեն,
 Սիրտըս դողում էր, թե մերոնք որտե՞ղ պիտի նահանջեն,
 Բայց երբ ընկեր Ստալինին տեսա այդքան սառնարյուն,
 Համոզվեցի, որ կհաղթենք, որ ոչ մի ուժ աշխարհում
 Զի կարենա ընկճել նրան... այդքան ամուր, անհողո՞ղդ...
 Ոչ. նա իրոք որ պողպատից է — պողպատե առաջնորդ:
 — Այդ հո այդպես է, բայց ասա. արդյոք, նա ե՛րբ է քընում:
 Ամբողջ գիշեր լույս է վառվում նրա անքուն վագոնում:
 — Սո՛ւ, — Գարեգինը վեր կացավ ու հարդարեց իր գոտին:
 Գալիս էր նա՝ հանգի՛ստ, ժըպտո՛ւն, ծոցատետրակը ձեռքին:
 Արսենալի երկաթակուռ սանդուղքներից իջավ վայր,
 Բարև տըվեց ընկերներին, կարեկցորեն, իբրև հայր,
 Հետո անցավ զենքով լեցուն արկըղների արանքով,
 Դիտեց բուրգերը ռումբերի՝ դասավորված իրար քով
 Ու հարց տվեց.
 — Քանի՞ հրացան եք բաց թողել այս գիշեր:
 Եվ ընկերները քարացան որպես երկու արձաններ:
 Զըգիտեին, չէին պահել ոչ մի հաշիվ ու համար,
 Առնում էին արկըղներով ու բաց թողնում անդադար:
 Նա մըռայվեց: Հետո խոսեց լակոնական ու հըստակ.
 — Պետք է հաշվել և ստուգել ամեն սվի՛ն, ամեն ա՛րկ:

Դավադիրները հավաքված են ապահով հարկի տակ.
 Շենքի ճակատը զարդարում է այլազգի մի դրոշակ:

Դավի բոլոր մասնակիցները հուսահատ են, մըռայլ.
 Ոչ օժանդակ ուժեր ունեն, ոչ էլ հըմուտ գնենալ:
 Սնեսարյովը տեղափոխված է, Նոսովիչը՝ փախած:
 — Գործը,— խոսեց Ալեքսեևը,— լոկ մազից է կախված:
 Կրասնովն այստեղ, քաղաքի տակն է: Կարմիրներն էլ արդեն
 վերջին ջոկատն ու վերջին արկն են ուղարկում նըրա դեմ:
 Այնինչ սերբերը տատանվում են: Ստրովներ և իժն'ր...
 Մենք պետք է մեր իսկ ուժերով գործի անցնենք այս գիշեր:
 Կառնենք շտաբ և արսենալ և անհապաղ, անպայման,
 ճակատներին կթելադրենք նահանջելու հըրաման:
 Կարմիր զորքերը հոգնատանջ են, ետ կըգան հաճույքով,
 եվ այդ կարող է որոշել ճակատագիրը...— բայց ո՞վ
 Մեզ կըփրկի բոլշևիկյան սարսափելի Չեկայից,
 եթե տանուլ տանք... պարոնայք, չեմ վախենում ես մահից,—
 Ծամածրոցն էսեռ ըսպան իր շրթունքները բարակ:—
 Ուժերը պետք է խընայել: Գուցե մենք դեռ կարենանք
 Սերբական գունդը դարձրենք մեր ելույթին մասնակից:
 Ես սերբերին կըհամոզեմ: Դուք ժամանակ տըվեք ինձ:

Նատալիան նոր է Դյոմոյի գործարանից եկել տուն,
 Կեռասենու շըվաքի տակ նա լըրագիր է կարդում:
 Ու Սվետոզարը պարտեզի ցանկապատից ընկավ ներս:
 Ժըպտաց աղջիկը խանդավառ, հետո մեկեն ըսթափվեց:
 Սերբյան զընդի ջոկատապետը խիստ գունատ էր, հուզված:
 — Նատալիա, ե՛լ, քանի ուշ չէ,— տագնապալից՝ նա հեաց,—
 Դավադիրները հավաքված են կոնսուլի դահլիճում
 եվ մեր զընդի պատասխանին են անհամբեր ըսպասում:
 Ջըմիացավ քաջարի գունդը մեր՝ նրանց ելույթին,
 Սարսափահար վերադարձան Ալեքսեևն ու որդին:
 Աղջիկը ներս վաղեց արագ, սանդուղներով ելավ վեր
 Ու ետ եկավ մի վայրկյան անց՝ ձեռքին լեցուն ռևոլվեր:
 — Գնանք,— ասավ,— ես կըսպասեմ... կոնսուլատի դըռան մոտ,
 իսկ դու հասիր պարետանոց, արա՛գ վազիր, թեթևո՛տ:
 եվ սերբ ջուլհակն ու ռուսական բանվորուհին մանկամարդ
 Կեռասու տակ համբուրվեցին ու սըլացան դեպի մարտ:

Կոնսուլատի դահլիճը լիքն է դավադիր ուժերով:
 Նըրանք մըթանն են ըսպասում՝ տագնապահույզ ու խըռով:

Հուսամուտից փողոց նայեց Ալեքսեւեր կրտսեր,
 Տեսավ այնտեղ Նատալիային՝ կանգնած, հայացքը սեւեռ:
 Աղջիկը լուրջ և մըտահոգ դեպի հեռուն էր նայում,
 Ու դիցական իր կեցվածքով անցորդներին հրմայում:
 «Ժամադրված ես,— գիմնազիստը բարբառեց ինքնիրեն:—
 Տեսնենք, թե ով պիտի գրրկի քեզ այս գիշեր քնքշորեն,
 Քո մազուկոտ սիրահարներն արդեն մեկնել են ճակատ:
 Ե՛ս կըգրկեմ էգուց իրանդ գեղեցիկ և հըպարտ:
 Ես քեզ էգուց կըլողացնեմ արարատյան կոնյակով
 Եվ շըրթունքներդ, որ լեցուն են վայրենի կըրակով,
 Կըհամրուրեմ կատաղաբար, կըհանգցընեմ ամեն բոց,
 Հետո քամված լիմոնի պես կըշըպըրտեմ քեզ փողոց...»:
 Ու գիմնազիստը, հեշտամո՛լ, նայեց կըրկին աղջըկան:
 Հանկարծ կարծես նրա մորթով հազար մըշյուն անցկացան:
 Նա կըռահեց վըտանգը մոտ, հեաց, ինչպես երազում.
 — Մենք մատնըված ենք, պարոնա՛յք... ա՛խ ես ապրել եմ ուզում...
 Դուրս հանեցին ռուլվերներն ու վեր թըռան սոսկահար՝
 Որոնելով փախուստի ելք՝ յուրաքանչյուրն իր համար:
 Բայց արդեն ուշ էր... Դուռն ահեղ հարվածներից կործանվեց
 Եվ սվինները պաղ փայլով երևացին դըռան մեջ...

Եվ «Солдат революции» կարճ լուրով լույս տեսավ.
 «Ցարիցիւնում հայտնաբերվեց բելոգվարդյան խոշոր դավ»:
 Ոչնչացված են սև դավի մասնակիցները մեղսոտ,
 Միլիոններով դրամ ու գանձ է՝ գըտնըվել նրանց մոտ:
 Սովետական իշխանության բազուկներով անվեհեր
 Խեղդված է օձն իրեն բընում՝ նախքան պիտի նա խայթեր:
 Զգուշացե՛ք, հուզաններից...

Սաշա Տրուբկան արագ անցավ գործարանից գործարան,
 Ամեն ցեխում զըրընգալով իբրև դարբնող մի կըռան:
 Ցարիցիւնի պրուլետարները բոցակեզ ցեխերում
 Պատկառելի բանվորուհուն լըսում էին ու եռում:
 — Դեպի ճակա՛տ,— աղաղակում էին նըրանք միաձայն,
 Մուրճը հանձնում էին կանանց, իրենք առնում հըրացան:
 Գործարանի դարբասներից գընում էին անընդհատ,
 Գընում էին՝ միահամուռ, շարքեր մըտած, ինչպես պատ,
 Գընում էին՝ թընգանոթի գործարանից, Դյումոյից,

Բրոնզաբազուկ հընոցպաններն ու ձուլողները պըղինձ,
Գընում էին Գրոզոլեսի բեռնակիրները կայտառ,
Հրապարակում աճում էր սուր սըվինների նոր անտառ,
Գընում էր նա, Իվան Կովաչը, մարտական շարքերում,
Ծերունական իր ուսերին նա հըրացան է կըրում,
Նրա կողքին գընում էր դուստրը, գեղեցիկ Նատաշան,
Կըռվի քայլերգը զիլ թընդում էր շուրթերում դյութական:
Հայացքներում ցասման հըրդեհ, կըրծքերը՝ ժայռ անխորտակ,
Գընում էր հայրը — մութ մի ամպ, աղջիկը — շեկ մի կայծակ:

Օգոստոսի քսանմեկի դյուցազնական առավոտ...
Վորոշիլովն ու տեղակալն ըշտապ եկան ՆՐԱ մոտ:
Ցուցմունք առան վերջին անգամ ու մեկնեցին խըրամատ:
Արդեն մոտիկ էր թըշնամին, սեղմում էր նա անընդհատ:
Կարմիր զորքերը նահանջում էին՝ ջարդված, հոգնատանջ,
Դեպի Վոլգա՝ շիմանալով, թե ահավոր ինչ վըտա՛նգ
Ունի պահած իրեն խորքում այդ գետն անա՛նց, անկամո՛ւրջ:
Ծանապարհին վիրավորներն էին նըվում սըրտառուչ,
Կամ ետ էին գալիս դանդա՛ղ, օրհասական ծուլությամբ:
Ամենուրեք թափված էին սայլի բեկոր, ձիու թամբ:
Վորոպոնով, Սադովայա կայարանները մոտիկ
Թաղված էին ծըխի, բոցի քուլաներում հեղձուցիկ:
Անվերջ, անդուլ ոռնում էին թընդանոթները ցասկոտ՝
Հողի հազար շաուրվաններ շըպըրտելով դեպի օդ:
Գընդացիները ճարճատում էին անթիվ բըներից:
Եվ կապարե կարկըտի տակ, մերոնք, դանդա՛ղ, տանջալից,
Քաշվո՛ւմ էին դեպի Վոլգա՝ վերջին բըլուրը թողած:
Կոմանդարմի հոգում ցասման անտակ օվկիանը դողաց.
«Մի՛թե տալիս ենք Ցարիցինը պայքարով այսքան կարճ,
Ջրահապատները տասնևվեց, երեք հարյուր շոգեքարշ,
Ու ռազմական պարենով լի հազարավոր վագոննե՛ր,
Գուցե բանա՛կը տասներորդ, ճակա՛տն ամբողջ, գո՛րծը մեր...
Ո՛չ. անձնուրաց, անդավաճան իմ ռազմիկները կըրկին
Ետ կըդառնան՝ ճակատելու և հաղթելու ոսոխին»:
Նա դոնբասյան բանվորների դիվիզիային մոտեցավ,
Նըրանց, որոնց իր հետևից, արյան, փոշու մեջ թաթավ,
Ուկրաինական ըստեպներից բերավ կարմիր Ցարիցին:
Նա մոտեցավ ինչպես մըրրիկ՝ թըրի կայծակը ձեռքին:

— Հետևը գետն է, ընկերներ, — գոչեց խրուպոտ, բոցավառ, —
Այնտեղ Վոլգան է, և չըկա նահանջելու ճանապարհ...
Առաջ... առաջ... իմ հետեի՛ց... հայրենիքի զավակներ...
Ինչպես հանկարծ երկրաշարժից երկրի երեսը թեքվեց
Ու Վոլգա-մայրը կանգ առնեք, հոսեր հունով՝ հակառակ, —
Կարմիր զորքերը կանգնեցին մի ակընթարթ, և արագ
Առաջ նետվեց Տարասը քաջ Կոմանդարմի հետևից,
Առաջ անցավ Ռուդնիկի գունդը մարտական իր թևից,
Առաջ անցավ ճակատն ամբողջ՝ կուրծքը տալով կրրակին,
Եվ ըսկըսվեց ճակատամարտը նոր թափով մոլեգին:

Այն ժամանակ ճանապարհին սուլեց ավտոն բարձրագոյ՝
Բարձրացնելով իր հետևից երկար ու թափ փոշեպոչ:
Սուրաց ավտոն գրնդակների և արկերի տարափում,
Հասավ այնտեղ, ուր թընդանոթը հող ու կյանք էր լափում:
Նա դուրս եկավ մեքենայից, քայլեց դաշտում համընթաց,
Տեսան գրնդերն Առաջնորդին և թեժ «ուռան» որոտաց:
Չէր շողշողում նրա կրծքին արքայական ժապավեն,
Չունեք փայլուն ուսադիրներ, և թուր շունեք ոսկեղեն,
Հագել էլ գորշ ու հասարակ գինվորական վերարկուն,
Նույն սաղավարտն էր զինվորի նըրա գըլուխը ծածկում,
Չէր տարբերվում նա շարքային մարտիկներից արտաքուստ,
Միայն աչքերը ռազմադաշտն էին չափում անհագուրդ,
Ինչպես աչքերն այն արծըվի, որ Կովկասյան լեռներում
Ժայռի գըլխից Արագվայի ալիքներին է նայում:
Որպես դարբին հաղթանակի, կոփելով կամք ու հավատ,
Դանդաղ ու վեհ, անցնում էր նա խըրամատից խըրամատ:
— Ողջո՛ւյն, Կովա՛ջ... եկել ես դիրքը, — նա ժրպտաց մեղմագին: —
Դեռ մենք ուժեղ ենք: Մի՞թե հերթն արդեն հասավ ծերուկին:
Իսկ ո՞վ մընաց մարտենի մոտ... — Երբ ծեր Կովաչը տեսավ
Առաջնորդին դիրքում կանգնած, հուզվեց անշափ, և ասավ.
— Ես ծերունի եմ, թե մեռնեմ, հոգ չէ, ընկեր Ստալին,
Կյանքիս ձըմեռը թող ձուլվի այս մեծ գարնան ձընհալին:
Իսկ դու... Քո կյանքը հազվագյուտ է... հեշտորեն չի ճարվի:
Իվ Առաջնորդը ծիծաղեց կիսահեգնոտ ու բարի.
— Դե, ես ըզգույշ եմ, չի կարող դյուրավ դիպչել ինձ գընդակ.
Ես լա՛վ գընդակ էի խաղում պատանության ժամանակ:
Բայց այդ պահին կաղկանձելով ու ոռնոցով ահավոր՝
Եկավ հեռվում պայթած արկի շիկակարմիր մի կրտոր,

Իվան Կովաչը վայր ընկավ՝ խոհուն ճակատը կիսված
 Եվ իր արյան շատրվանի ցայտքում անխոս թրպըրտաց։
 Ճշաց նատաշն աղեգալար և դեպի հայրը նետվեց։
 Խըրամատի հրամանատարը սարսափից գունատվեց։
 Բայց Առաջնորդն ու Կոմանդարմը գըլխարկներն առան վայր
 Ու ծածկեցին դըրոշակով զոհի դիակն արնավառ։
 Նահատակի գըլխին մի պահ կանգնած էին աներեր,
 Որպես պատվի, ականածուկյան երկու վրսեմ արձաններ։
 Եվ այդ պահին եկան կանայք բըլուրներով գընդակոծ,
 Ցարիցինյան հերոս կանայք՝ ամենն ուսած մի կապոց։
 Այդ՝ հաց էին բերում նըրանք և խմելու զովալ ջուր,
 Որը սիրած իր ամուսնուն, որը՝ որդուն անձնահուր։
 Կովաչի կինը երբ տեսավ մարդու դիակն արյունոտ,
 Ճըշաց հահը, ընկավ գետին ու չորեքթաթ եկավ մոտ։
 Նա քարացավ մի ականթարթ, հետո ելավ ջըղածիգ,
 Իր ծերուկի հրացանն առավ, հեկեկալով մըտավ դիրք։
 Իսկ Նատաշան մոտիկ նըստեց իր մայրիկին, որ օգնեց։
 — Չի մոռանա ձեզ մարդկությունը, քաջ մայրեր, աղջիկներ,
 Դուք, որ տարաք այսքան արյուն, այսքան զըրկանք, այսքան ցավ։
 Եվ Առաջնորդը համրաքայլ խըրամատից հեռացավ։
 — Կեցցե՛ լենինը... Գո՛ւնդ — առաջ։ — Հընչեց խըրոխտ

հըրաման,

Ու մարտիկներն «ուռա՛»-ներով բլուրն ի վայր սլացան,
 Հորձանք տվեց ճակատն առաջ, հողմաշառաչ, ինչպես ծով,
 Սվին ու թուր իրար դիպան օրհասական զընգոցով,
 Վառվեց հըրդեհը ռազմական հորիզոնից հորիզոն,
 Կոմանդիրները կանչեցին.

— Առա՛ջ...

— Առա՛ջ...

Դեպի Դո՛ն...

Աղեղնաձև լարվեց ճակատը Սարեպտից Կատուրքան։
 Հակառակորդը դուրս հորդեց վերջին բոցերն ու լավան։
 Բըռնել էր դաշտը ռազմական ծըխի, փոշու մի մութ ամպ,
 Վիճում էին թընդանոթներն առյուծների մոլուկյամբ,
 Վընգըստալով գալիս էր արկը վագրի պես արնախում,
 Քանդում դիրքերը, մարդ ու հող իրար խառնում, շաղախում։
 Գընդացիրներն էին հաչում շըների պես մոլեգին,

Գրնդակներն Վզզոցն ու սայլը սառեցնում էր հոգին,
 Գալիս էր գոռ հակառակորդը դիվային ոռնոցով,
 Շընչում էր նա մեր դիրքերին դժոխային մի բոցով:
 Ահեղագոչ դիմաց նետվեց Սոլովեյի այրուծին,
 Ահա թըրերը շանթարձակ՝ փոշու ամպում շողացին,
 Ահա թըրերն իրար դիպան, ձիերն ահեղ ծառացան,
 Մամոնտովի հեծելազորը ետ փախավ ցիրուցան,
 Փախավ, ձուլվեց ռազմի փոշուն, բայց ըստեպից լայնարձակ
 Հանկարծ բուռավ թըշնամական մի նոր, հըզոր գումարտակ:
 Նորից իրար խառնըվեցին երկու անհաշտ ուրազան,
 Նորից փախան, նորից եկան, նորից փախան ու եկան:
 Ահա նատաշն ու Մարինա Սերգեևնան միասին
 ✓ Դիրքից ելան, առաջ անցան՝ հետևելով Տարասին:
 Ահա Տարասն արևի նրման շառաչելով խոյացավ,
 Թըրի զարկից ընկավ ըսպան ու թըպըրտաց ինչպես հավ:
 Այնտեղ Միրոնն ու մի կազակ ըսկըսեցին մենամարտ,
 Գըրկեց վրտիտ պրոլետարին կազակը բիրտ, վայրի արջ,
 Բայց շուտ հասավ Կովաչի կինն ինչպես ահեղ թրխսամայր,
 Սըվինահար ոռնաց կազակն ու ճոճվելով ընկավ վայր:
 Ցարիցինի պրոլետարները ցասմալից գոչեցին.
 — Միայն անարգ դիերը ձեր կտեսանեն Ցարիցին:
 Փոփոխակի հաջողությամբ վառվում էր մարտը մոլի,
 Կռվում էին՝ երկու կողմից ատելության բոցով լի:
 Եվ Կոմանդարմը քաջարի՝ ավտոմոբիլը նրստած,
 Փայլատակում էր դիրքե-դիրք շանթի նրման սըրընթաց,
 Ծակում-անցնում էր ոսոխի շըղթան թափով մոլեգին,
 Անցնում թիկունքը, հարվածում ու ետ սուրում վերըստին:
 Ահա անցնում է Առաջնորդը դիրքերով ծըվատված
 Որպես հանճարը հաղթության, որպես կամքի կիսաստված:
 Աչքերի դեմ ծըխում է դաշտը: Նա կանգնեց բարձունքին՝
 Բոցակարկուտ ամպրոպի տակ, հեռադիտակը ձեռքին:
 Լարում է նա ռազմի աղեղն իր հոգու պես մեծ ու լայն,
 Ռազմաճակատը ճարճատում է Սարեպտից Կատլուբան:

✓ Ի՞նչ ուժ կարող է խորտակել ժողովրդի ուժը հորդ,
 Երբ նա ունի արդար զըրոշ և իմաստուն առաջնորդ:
 Կըկաղկանձի հըզոր առյուծն անապատում նետահար,
 Լեռան արծիվն իր ամպերից խոցված կըրծքով կըգա վայր,

Կայծակնահար կընկնի կաղնին կանգնած մի դար անվըրդով,
 Կրփըշըրվի ապառաժ լեռն ուժանակի հարվածով,
 Կըխորտակվեն բոլոր բերդերն ու բանակներն արնախում,
 Որ կան այսօր և կըլինեն բազմաշարշար աշխարհում,
 Պետությունները ոճրագործ կըղառնան հուշ ու մոխիր
 Եվ երկրագունդն իր հին կեղևը հիմն ի վեր կըփոխի,
 Բայց ոչ մի ուժ չի խորտակի ժողովրդի ուժը հորդ,
 Երբ նա ունի կարմիր դրոշ և լենինյան Առաջնորդ:
 Արդեն հեռվում, բլրան ետև, կայտառ թընդում է ուռան,
 Ահա փախչում է թըշնամին, մերոնք հասան կայարան:
 Փըռվեց ռազմի աղմուկներով հորիզոնից հորիզոն
 Օգոստոսի քըսանմեկի դյուցազնական երեկոն:

Կարմիր գընդերը ոսոխին նետել են ետ մինչև Դոն:
 Եվ Ստալինը ճակատից վերադարձել է վագոն:
 Վոլգան ազատ է վերըստին՝ Սարատովից Աստրախան.
 Շոգենավերը լի հացով, գիշեր-ցերեկ անխափան,
 Նորից լողում են դեպի վեր, մինչև խորքերը երկրի,
 Նորից գալիս է ժապավենը նոր, ըշտապ հեռագրի.
 «Ժողկոմ ընկեր Ստալինին: Ժամը քըսան: Ցարիցին:
 Էսերուհի Կապլանն այսօր վիրավորեց Իլյիչին՝
 Ռեվոլվերի երկու գընդակ արձակելով նենգաբար:
 Վերքերը լուրջ են...»:
 Ծըխամորճը,
 Հանգչելով,
 Սահեց վար:

Երգել այն վիշտը վիթխարի — դըժվար է, իմ ուժից վեր:
 Պետք է լինել մի Շեքըսպիր, կամ նոր, կախարդ մի Հոմերո:
 Ինչպե՞ս չափել այն մեծ ալիքը, որ ծովում լեռնացավ:
 Մի՞թե այդ վիշտ էր հասարակ, մըտերմական հոգու ցա՞վ...
 Ո՛չ. այդ ահեղ մի դըղըրդյուն էր, կայծակի մի հարված,
 Որից կիսվեց գիտակցությունն ու մինչև տակ երևաց
 Այն ահավոր դատարկությունը, որ կարող էր բացվել,
 Անեզր այն վիշտը, որ կարող էր աշխարհին վիճակվել:
 Կրծքում այրվում էր ցավն, ինչպես լավան լեռան խորքում:
 Բայց արտաքուստ հանգիստ ու վեհ՝ նա հեռագիր էր գըրում.
 «Ժամը երկուս: Մոսկվա — Կրեմլ: Ժողկոմխորհ: Լենինին:
 Ցարիցիայան մեր հարձակումը հաջողվեց լիովին:

Հակառակորդը խորտակված ու շրպրտված է հեռու,
Դոնից այն կողմ: Շարունակում ենք՝ առանց կանգ առնելու:

Լիբն է դահլիճը հոյակապ՝ Ցարիցինյան սովետի •
Կարմիր զորքի ռազմիկներով նրստած խոհուն, առնացի,
Հըրացաններն ամուր սեղմած անդավաճան ձեռքերում:
Հանդես է, տոն, բայց մարտական կանոն ու կարգ է տիրում:
Ջինվորական շինելների ֆոնի վրա գորշատես
Դրոշակներ են բռնելված բոսորափայլ բոցի պես,
Որ բարձրանում է սրվինի անտառներից օդն ի վեր:
Դրոշակների վրա վառվում են բոցեղեն պատգամներ:
Եվ աղջիկներն են երջանիկ այս երեկոն զարդարում,
Ինչպես լույսի ճերմակ շերտեր՝ կապարագույն ամպերում:
Այդ՝ գրթության քույրերն են մեր, քույրե՛ր, քույրե՛ր իսկական,
Որոնք արյան ու հըրդեհի սարսափներից անցկացան,
Եվ մեր վերքերը կապեցին իրենց քնքո՛շ մատներով,
Մեր տառապանքը մեղմեցին կարեկցությամբ ու սիրով:
Նըվագախումբը ռազմական՝ թընդաց «Խնտերնացիոնալ»,
Ոտքի ելան միահամուռ հայացքներով բոցափայլ:
Պատվի բռնած՝ լըսում էին, մինչև վերջին ելեէջ,
Իրենց կովի ու հաղթության հիմներգը սուրբ և անշեջ:
Եվ Կոմանդարմը հարազատ՝ ամբիոն ելավ զըվարթուն:
Ճարձատեցին ծափերն ինչպես գընդացիները մարտում:
Դյուցազնական հրըձվանքով լի՝ նայեց նա իր քաջերին,
Այսպես խոսեց.

— Երկար ու ծանր էր մարտական մեր ուղին:
Կոնստոպից մինչև Լուզանսկ, Դոնից մինչև Վուգա-մայր,
Մենք հարթեցինք հազար արգելք՝ տալով զոհեր անհամար:
Մեր ճանապարհը պանծալի դիակներով ծածկըվեց:
Բայց մեր հոգին չըփոքրացավ, չըղողղողաց, չընկճըվեց:
Հըպարտ եմ ես, որ կամ ձեզ պես հերոսների շարքերում,
Եվ ձեզ հոգուս ամենալավ ըզգացմունքներն եմ բերում
Այն վեհ, վըսեմ պատվի համար, որ դուք այսօր ստացաք:
Մեր հայրենիքը, Մեծ Լենինը ձեզ տըվին դըրոշակ
Ստալինի հըզոր ձեռքով, որ դեկն անշեղ է վարում:
Ավելի մեծ պատիվ չըկա մարդու համար աշխարհում:
Լինել զինվորը Լենինի, Ստալինին զինակից,
Նըրանց, որոնք դուրս են բերում մեր նավն ամեն փոթորկից:

Անարգ սոցիալ-դավաճանները, վաճառված ոսոխին,
 Լենինի մեծ կյանքի վրա թունոտ գընդակ նետեցին:
 Հըզոր կազմվածքը դիմացավ թունավորված գընդակին:
 Դյուցազնական հուժկու կամքով շընշում է նա ջերմագին
 Խավարամուլ ճիվաղներին և շըներին ի սարսափ
 Նվ ի հըրճվանք բուրր նըրանց, որ սըրտակեզ անձկությամբ
 Ծրկար օրեր, անմահ արև են ցանկանում Լենինին:
 Թող իմանա ամբողջ աշխարհը, թող լըսի թըշնամին,
 Որ բաբախում են մեր սըրտերն՝ արյան դաշտում, Զարկի տակ,
 Իլլիշի մեծ հըզոր սըրտի բախումներին համազարկ:
 — Կեցցե Լենինն... — իրար դիպան ծափերն այնպես հըրճվագին,
 Կարծես հազար արտուտ մեկեն դեպի արև ճախրեցին:
 Ոտքի ելան միահամուռ, ուրախ ուռան որոտաց:
 Ամեն հայացք լույսով լեցուն ծաղկի բաժակ էր բացված:
 Տոնի վերջում եղավ համերգ: Նըվագախումբը կայտառ
 Մարտիկների լարված ներվերը փայփայեց քնքշաբար:
 Ռազմի ահեղ ունեցներից հետո ինչ լավ է լըսել
 Հայրենախոս մեղեդիներ և ապագան երագել:
 Մի պահ լըռել է արկերի կաղկանձը շար, մահազույժ,
 Անմահ տողերն են Պուշկինի սահում հանդարտ և անուշ:
 Հոսում են վեհ ինչպես Վոլգան իր հարազատ ափերում,
 Վ Այնտեղ հոգին է ռուսական: Այդ Ռուսաստանն է բուրում:

Ա՛խ, Ռուսիա-մայր, հայրենի տուն,
 Անծայրածիր ըստեպնե՛ր,
 Որքան վի՛շտ կա քո լայն սըրտում,
 Որքան կարո՛տ, որքան սեր:

Քո լըլկըված լանջով անցավ
 Քանի՛ հորդա, քանի՛ ո՛տ.
 Ախ, կըռավեց քանի՛ ագռավ
 Քո ճամփեքին արյունոտ:

Քանի՛ անգամ կըռվի կոշով
 Քո զավակները ելան.
 Քանի՛ Ստեպան ու Պուգաչով...
 Քանի՛ շըղթա... կախազա՛ն...

Մի նոր կըռիվ ունեն այսօր
Քո զավակներն աշխարհում.
Քո այսօրվա կըռիվը նոր
Անհաղթ լենինն է վարում:

Եվ չի ընկճի ոչ մի ոսոխ
Այս նոր վերջին մարտը մեր...
Ախ, Ռուսիա-մայր, հայրենի հո՛ղ,
Հայրենական ըստեպնե՛ր...

Կարմիր ժողկոմն ու Կոմանդարմը վագոնում դեռ արթուն
Նըստած խոսում են աշխուժով, հեռագրերը կարդում:
Նա կատակում է անդադար ու ժրպատալով մըտերիմ՝
Ձեռքը դրած Կոմանդարմի երկաթակուռ ուսերին.
— Ոչ, Կոմանդարմ... դու, անկասկած, այստեղ տանուկ կըտայի՞ր,
Եթե չըգար մեզ օգնության ցարիցիսյան սիրալիր
Բանվորությունը... Նա նորից իր արյունով հաստատեց,
Որ ժողովուրդը պայքարում անպարտելի է ու մեծ,
Երբ նա գիտե իր պայքարի արդարությունը հըստակ,
Երբ զենք ունի նա իր ձեռքին ու լենինյան դըրռշակ:
Եվ երբ խոսում էին նըրանք այդպես ուրախ ու սիրով՝
Սըրտերը լի ապագայի արևային հույսերով,—
Նամակաբերը նոր նամակ բերավ ըշտապ, շնչահեղձ:
Ժողկոմն առավ, կարդաց արագ ու բարձրաձայն ծիծաղեց:
— Նայի՛ր,— ասավ,— Սարեպտայից Իգոր Կովիլն է գըրում.
«Խընդրեմ՝ ըշտապ ինձ հաղորդե՛ք, այս հըրատապ օրերում
Ձինվորական Խորհուրդն, արդյոք, թո՛ւյլ է տըվել ուղղակի,
Որ կոմանդիր Կորզարենկոն տըղամարդկանց հավաքի,
Տանի այնտեղ՝ Դոնից Վոլգա ինչ որ ջըրանցք բանալու:
Եվ Ստալինը ծիծաղեց մի հըրճվանքով անանուն,
— Տեսնո՞ւմ ես դու, իմ բարեկամ, ինչպես ռազմի բոցերում
Մարդկանց հոգին մեծ կառուցման երազներով է եռում:
Այդ շինարար հուժկու ոգին է լենինյան մեծ դարի:
Նա փըլուզման ու կործանման հըրդեհներում կատաղի
Նոր աշխարհի կախարդական իր աղյուսներն է թըրծում:
Նա չի կարող, և ոչ մի ժամ, շընչել իգուր, ապաքոյուն,
Այո, կըգա, և մոտ է նա, կըգա շուտով ժամանակ,
Երբ Վոլգա — Դոն, Վոլգա — Մոսկվա ջըրանցքները կըբանանք,

Երբ մենք իրար կրմիացնենք բոլոր ջրերն աշխարհի,
 Երբ խոլ քամին անապատում մեր նըվագով կըպարի...
 Նա Կովիլի նամակն առավ, նորից ուրախ ծիծաղեց,
 Եվ այսպիսի մի համառոտ մակագրովթյուն կատարեց.
 «Կաղետներին նախ կըխեղդենք՝ և՛ Վոլգայում, և՛ Դոնում,
 Հետո ջրանցք կըկառուցենք»։ Դրոսում արդեն լուսանում,
 Շիկնում էր լուռ՝ այգաբացի վարդագանգուր պատանին։
 Արդեն բացված պատուհանից ներս էր հոսում զով քամին։
 Եվ կարմրել էին կոպերն ինչպես ամպեր վաղորդյան,
 Տանում էր քունը... Լենինից նոր հեռագիր ըստացան.
 «Հաղորդեցեք եղբայրական ողջույնը մեր սըրտագին
 Ցարիցիյան հերոսներին, հրամկազմին ու զորքին,
 Որ պայքարում են ինքնազոհ, ինչպես անահ առյուծներ
 Սովետների իշխանության փառքի համար աներեր։
 Կարմիր դըրոշն առաջ տարեք՝ բարձրը պահած անսասան
 Եվ անողոք ջախջախեցե՛ք, խորտակեցեք տեղահան
 Աղայական-կովակային կարգերը բիրտ, արնախում,
 Եվ ցույց տըվեք, որ անկործան է, հավիտյան անկախում
 Սոցիալիզմի մեր հայրենիքը, Ռուսիան մեր հարազատ»։
 Եվ խո՛ր, երկա՛ր սուլեց դըրսում մի վիթխարի զըրահապատ։

ԳԻՎԱԳ՝ ՏԱՄՆԵՐՈՐԻ

Հըպարտ կանգնած էր Ցարիցինն ինչպես անառ մի ամրոց,
 Որին դիպչում էին անվերջ ու փըշըրվում հողմակոծ
 Ալիքները որոտաձայն Դոնի սպիտակ հորդայի։
 Փախչում էին ու ետ գալիս մի նոր թափով կատաղի։
 Եվ նա, արծիվ այդ ամրոցի երկնակարկառ կատարին,
 Հեռաթափանց իր հայացքով նայում էր ողջ աշխարհին,
 Տեսնում բազում բանակների շարժումն ահեղ, ճարճատուն,
 Ոչ միայն իր ոտքերի տակ, Հարավային ճակատում,
 Այլ բովանդակ Սովետական Ռուսաստանում։ Միայն նա,
 Որին օժտել էր բընովթյունը հորդառատ, անխընա
 Հողմակայուն առաջնորդի ամենատես հանճարով,—
 Լոկ նա՛ կարող էր ունենալ այնքան եռանդ ու կորով

Վարել մարտերը մոլեգին ցարիցիւնյան դաշտերում,
 Անվերջ հրդեհ հացի բեռներ Մոսկվա, Պիտեր և հեռուն,
 Դիմադրել Կարմիր Բաքվում բրիտանական թակարդին,
 Վերակազմել Հարավ-Դոնի ռազմաճակատը խըրթին,
 Սովից մեռնող զավոդներին երկաթ ու նավթ ուղարկել,
 Փընտրել-գըտնել թըշնամու դեմ թընդանոթներ ու արկեր,
 էսերական, մենշեկյան դավերն անվերջ խափանել
 Ու մեր բանակը հաղթության խըրամատները տանել:
 Կարող էր նա... և ուժը, թափն այդ անըսպառ մեծության՝
 Տրոցկին ըզգում էր Մոսկվայում: Եվ անհանգիստ էր Հուդան:
 Մեր զորքը նոր էր վըճռական իր հաղթանակը տարել,
 Դեռ նոր էր նա սպիտակներին Դոնից անդին վըտարել,
 Երբ ըսկըսվեց երկրորդ ահեղ պաշարումը քաղաքի:
 Կազակային դըժխեմ «ուռուն» նորից ոռնաց ամեհի:
 Կըրկին ճակատը ճարճատում էր, ոռնաձայն մոտենում,
 Եվ Զինխորհուրդը հավաքվեց Ստալինի վագոնում:
 Մարդիկ ուները ցընցեցին ու նայեցին զարմացած,
 Երբ նա Տրոցկու տարօրինակ այն հեռագիրը կարդաց:
 «Հըրամայում եմ Ստալինին, — խայթում էր նա ակնբախ, —
 Վերակազմել Հարավային Զորքի Խորհուրդն՝ անհապաղ,
 Այնպես, որ ձեր կոմիսարներն անկախ գործեն լիովին,
 Զըխառնըվեն զինվորական ու մարտական գործերին:
 Շտաբը Կոզլով տեղափոխել անմիջապես: Իմացե՛ք,
 Եթե իմ այս նոր հրամանն, ամբողջովին և անթեք,
 Զըկատարվի մեկ օրվա մեջ և մեկ վայրկյան ուշանա, —
 Դաժանագույն միջոցների ես կըդիմեմ անխընա»: —
 — Այս հեռագիրը վատ կատակ է, ծաղր է չար, ընկերներ՛ր. —
 Զեռքը դըրած թըրի կոթին՝ Կոմանդարմը ելավ վեր, —
 Ինչպես թե՛ «Զեր կոմիսարներն անկախ գործեն լիովին,
 Զըխառնըվեն զինվորական ու մարտական գործերին»: —
 Իսկ ո՞վ է մեր պարտիայի սիրտն ու հոգին բանակում,
 Ո՞վ է լըքվող ջոկատների շարքերն ի մարտ հավաքում,
 Ու ցույց տալիս մարտիկներին ուղին անխափ հաղթության,
 Ո՞վ է հըսկում, թոնազըրկում ըսպաներին դավաճան, —
 Մեր կոմունիստ կոմիսարները: Ոչ, հեգնանք է այս, դա՛վ:
 Մի՞թե Տրոցկին այդքան արագ ու հեշտորեն մոռացավ
 Նոսովիչին և Գրո:զլեսի խըռովությունը: Եվ նա
 Մի՞թե չունի՞ տեղեկություն, որ գընդերում կա հիմա

Հին ցարական ըսպաների մի վիթխարի բազմություն,
 Որ մեզ անվերջ դավաճանում է, քայքայում ու լքում:
 Եվ ի՞նչ է այս նշանակում՝ տանել խորհուրդը Կողմով՝
 Հերոս քաղաքը պաշարման օղակի մեջ թողնելով:
 Ջեմ հասկանում ես այսպիսի կործանարար հեռագիր.
 Առաջարկում են հեռանալ... Դե ե՛կ հիմա, հեռացի՛ր:
 — Իսկ դու բռնավ մի հեռանա, մի էլ խորհիր այդ մասին,—
 Ժրպտաց Ժողկոմն ու ծխամորճը ներս քաշեց վերստին,—
 Հրամաններն այն ժամանակ միայն իմաստ կունենան,
 Երբ կան, առկա են պայմաններ՝ նրանց անշեղ կատարման,
 Երբ հրաման արձակողներն, իրոք, տեղյակ են գործին,
 Եթե ուժերը խիստ հաշվել, կըշռադատել են կարգին:
 Այն ժամանակ, երբ թըշնամին դաշույնը դուրս է հանել,
 Բարձրացրել է քեզ վրա և ըսպառնում է սպանել,—
 Հրամայում են, որ նրա թևերը բաց արձակես,
 Մոծարկըդ դեմ անես, որ նա մահվան հարվածը տա քեզ:
 Պարզ է, որ դու չես կատարի այդքան անմիտ հրաման:
 Ջես արձակի դու բազուկները վերահաս քո մահվան:
 Հանձնել ճակատը մի խարդախ գեներալի քրմաքին,
 Լքել դիրքերը, ոնց որ այդ հրամայում է Տրոցկին,
 Մենք չենք կարող՝ որպես մեր մեծ պարտիայի անդամներ,
 Հայտարարում ենք, և Իլյիշը կըմբռնի դիրքը մեր,
 Տրոցկու հրամանը կատարել հիմարություն է, հանցանք,
 Տրոցկու այս գոռ ըսպառնալիքը՝ անվայել զառանցյալ:
 Մուժ վարքագիծըն այդ մարդու պետք է քննել Կենտկոմում:
 Նա անխընա վարկարեկում է, նենգաբար անգոսնում
 Մեր պարտիայի ականավոր անդամներին, այն մարդկանց,
 Որ վտանգի ահեղ ժամին կանգնած են միշտ կրթաբաժնի
 Հայրենիքի պաշտպանության ճակատներում պանծալի:
 Նա մեզ խածում է ի հաճույս խավարամոլ գայլերի...
 Նրա խընդիրը Կենտկոմում պիտի դրնել շեշտակի.
 Թող նա, Տրոցկին, էլ միանձնյա հրամաններ չարձակի,
 Հրամաններ, որոնք տեղին, պայմաններին չեն նայում
 Եվ ըսպառնում են ճակատին կազմալուծում, քայքայում:
 Ժողկոմն այսպես վերջացրեց, ոտքի ելավ ծանրաբար
 Ու հեռագրի թըղթի վրա մակագրեց երեք բառ.
 «Թողնել առանց ուշադրության»:
 Ո, ներս մըտավ մի զինվոր.

— Ըսպիտակներն առան Կալաշը,— լուր բերեց ահավոր:
Քաջ Կոմանդարմը վեր կացավ՝ հեռադիտակը ձեռքին:
Ամենքը դուրս ելան ըշտապ ու ռազմադաշտ մեկնեցին:

Աստրախանյան ըստեպներից, արյան, փոշու մեջ թաթավ,
Հոսկան իր գոռ դիվիզիայով Ցարիցինին մոտեցավ,
Քայլում էին գումարտակները հոգնաբեկ, աննշկուն:
Ամեն ռազմիկ մի վիշտ ուներ, մի թեթ կըրակ իր հոգում:
Ամեն ռազմիկ հետև թողած ուներ մի բան թանկագին,
Որն իր կընոջը դեռատի և իր թոթով մանուկին...

Հայացքներում ցասման հըրդեհ, ամեն մի սիրտ մի հընոց՝
Նըրանք անցան թըշնամական ըստեպներով ալեկոծ,
Նըրանց թըրերը կեռ՝ դիպան բրիտանական տանկերին,
Կալեդինյան ոհմակներին ու վայրենի Վրանգելին:

Քաղցից, տապից հոգնում էին ու վայր ընկնում գըլխակոր,
Բայց միշտ էլ բարձր էին պահում դըրոշակները բոսոր:
Քայլում էր զորքը՝ հոգնատանջ, բոկոտ, ծարավ ու քաղցած:
Առաջապահ հեծելադունդը կես գիշեր հասավ Ցաց:

Հեծյալ գընդի հրամանատարը Սերգենն էր: Հագին
Ըսպայական շինել ուներ ճարմանդներով թանկագին:

Կադետներին ներկայացավ իբրև կադետ գընդապետ,
Որ Կուբանից կապ է ստեղծում Դոնի սպիտակ զորքի հետ:
Նըրան սիրով ընդունեցին երկու գոռոզ օֆիցեր:

Ու մեկն ըզգույշ, իբրև գաղտնիք, հայտնեց նըրան, ինչ գիտեր.

— Ցարիցինի դըռների մոտ, Չոպուրնիկի գյուղի տակ
Գանգնած ենք մենք, ըսպայական երկու գընդեր ըսպիտակ:
Առավոտյան մըթնալուսին կարմիրներին կըխըփենք:

Նըրանք անգոր են այս անգամ՝ ոչ մարդ ունեն, ու ոչ զենք:
Ո՛ւխ, քեֆ կանենք Ցարիցինում, հերն անիծած մեռնողի:

Կուզե՞ս, խըմիր, իբրև նախերգ, երկու բաժակ դառն օղի:—
Օֆիցերները Կոտովյան՝ հարբած էին և անկեղծ

Եվ Սերգենը գաղտնիքի պարկերն ամեն դատարկեց:

Մըտերմաբար խոսում էին՝ մինչ մեր գունդը հասավ

Ու սպայական վաշտը լըռեց ինչպես բընում մորթված հավ:

Շառագունեց աշնանային մի ցրտաշունչ այգաբաց:

Մշուշապատ հորիզոնում արդեն որոշ երևաց

Ըսպաների երկար շղթան՝ կեռման ու սև գծերով:

Կանգնած էին մերոնք դաշտում՝ ներվերը պիրկ ու խռոզ:
 Խեթեակի դողում էին. արդյոք ցըրտի՞ց, թե՛ վախից:
 Մարտից առաջ քեզ միշտ բըռնում է խուլ մի դող, մի թախիծ:
 Ինչո՞վ, արդյոք, պիտի կըռվեն. ոչ արկ ունեն, ոչ փամփուշտ:
 Միայն նահանջն է այս դեպքում փըրկության ելքը, անշուշտ:
 Բայց նահանջի ուղին փակված է. այդ սահմանն է մահի,
 Հետևը զորքն է թըշնամու ու տափաստանն ամայի:
 Նահանջի միտքը սին երազ է, այդ՝ բոլորը գիտեն,
 Եվ պաղարյուն, հըպարտ կանգնած են թըշնամուն դեմ առ դեմ:
 Միայն թըրերն են հույսն այսօր: Ուստի թըրերն են սըրում,
 Թըրերը կեռ, որ անհամար օրհասական մարտերում
 Փայլատակել են անվըրեպ ու հաղթանակը տարել:
 Մարտից առաջ մեռելային մի լըռություն է տիրել:
 Զիբրն անգամ մահվան ոգին կարծես ըզգում են օդում.
 Ուստի հանդարտ են, անխըրխինջ, իրար էլ չեն կրծոտում...

Հեծան ձիերը և առաջ արշավեցին վարգավազ,
 Արկը պայթեց, ու դեմքերին շրպըրտեց հող ու ավազ,
 Սուլեց, ոռնաց գընդակների և արկերի մի ամպրոպ:
 Բայց այրուծին առաջ նետվեց՝ ահեղագող, քառատորփ:
 Սարսափ տիրեց ըսպաներին. կարծես մրրիկն էր գալիս,
 Կարծես մրրիկն էր արշավում՝ առած ոգի շանթալից:
 Շողում էին թըրերն ահեղ՝ գըլուխներից պահած վեր
 Փռու, ծըխի քուլաներում ինչպես հըրե լեզուներ:
 Իզուր էին հըրդեհաժայթ հըրանոթները հևում,
 Գընդացիրներն իզուր էին կրակ ու մահ անձրևում.
 Սերգեևի հեծելագուրը փոթորկվում էր առաջ,
 Հրե պատենջը պատռելով ինչպես հեղեղ աննահանջ:
 Իրար հասան, և թուր թըրի խաչաձևեց մոլեգին,
 Թընդանոթներն ու հրացանները մեկ վայրկյան լըռեցին,
 Միայն լըսվում էր պողպատի ղնգոցը պաղ, մահացու,
 Միայն երբեմըն չոր թոքով ատըրճանակն էր հազում:
 Ճակատամարտը վերջացավ անօրինակ հաղթությամբ:
 Լուկան մռայլ է: Հըրամկազմը նա կանչել էր շտաբ:
 Դժգոհ էր նա Սերգեևից, որ ինքնակամ գըրոհել
 Ու կոմդիվին իր հաղթության նախատեղյակ չէր պահել:
 Այնժամ Մենիկը ներս մտավ՝ միրուքի խուրճը դեմքին,
 Այսպես խոսեց.

— Գեներալները մեզ նեղում են կրկին,
 Ուսասպառվում է Յարիցինն օղակի մեջ պաշարման:
 Սրդ՝ Ռազմական Խորհուրդը մեր տալիս է քեզ հրաման՝
 Դիրքեր բռնել Յարիցինի հարավային մուտքի մոտ:
 Լուկան մրույլ էր և համառ: Պատասխանեց նա հեգնոտ.
 — Ի՞նչ ինչ Խորհուրդը Ռազմական... Ի՞նչ եք հոնքերը կիտում...
 Ես չեմ ուզում այստեղ մընալ: Կերթամ հարավ, դեպի տուն:
 — Ո՛չ, սըխալվում ես դու, կոմդիվ: Դու տուն գընալ չես կարող,
 Այն ժամանակ, երբ մեզ այստեղ ուժեր են պետք պայքարող:
 — Ինչ ի՞նչ: Ես չեմ կարող հոգնած իմ զորամասը տանջել.
 Հըրամայել է Տրոցկին ինձ... դեպի հարավ նահանջել:
 — Ի՞նչ, նահանջել... Ընկեր կոմդիվ... Կատակ է այդ, անեկդո՛տ.
 Դրրա համար պետք է լինել՝ կամ դավաճան, կամ երկշոտ:
 — Դուք Ձեզ կորցնո՞ւմ եք,— որոտաց կոմդիվը խիստ մոլեգին
 Ու բնազդաբար ձեռքը տարավ նա իր թրի դաստակին,—
 Իմ պարտքը վեհ՝ արիարա՛ր, պատվով եմ ես կատարել,
 Կոմունիզմի գործի համար հաղթանակներ եմ տարել
 Աստրախանյան ըստեպներում, Ստավրոպոլում, Կուրանում.
 Դրրա համար իմ դիվիզիան ունի պողպատ մականուն.
 Իսկ դուք այսօր ինձ անպատվո՞ւմ եք. անվանում դավաճա՞ն...
 Ոտքի ելավ Մելնիկն արի, այսպես տըվեց պատասխան.
 — Ընկեր կոմդիվ, դուք ձեռքը Ձեր թրի կոթից առեք վար
 Եվ մի հաշվեք առայժմ Ձեր հաղթանակներն անհամար:
 Տեսե՛ք՝ մենք էլ ունենք և՛ թուր, և՛ շատ գործեր սըխալական.
 Թող այդ հաշվի և փառք տա մեզ, եթե կուզե, Ապագան:
 Բայց այս վայրկյան, երբ թըշնամին սեղմում է մեզ, ծրվատում,
 Դուք ըսպառնում եք նահանջել, դասալըքել, գնալ տուն...
 Դեհ, փորձեցեք. ես կաշխատեմ՝ Ձեզ ուղեկցել արկերով...—
 Ասավ Մելնիկը և նըստեց վիրավորված ու խրոփ:
 Բայց անօգուտ անցավ այդքան ըսպառնալիք, համոզում,
 Լուկան մընաց անդրդվելի, նա նահանջել էր ուզում:
 Այնժամ խոսեց Մելնիկն էլի եղանակով հաշտարար.
 — Լա՛վ, ընդունենք՝ Յարիցինից դու զորամասըդ տարար,
 Հապա ընկեր Ստալինին ինչպե՞ս պիտի հանդիպես:
 Վեր կաց, գընա՛նք. հենց այս գիշեր ըշտապ կանչել է նա քեզ:
 Լուկան արագ ոտքի ելավ.— Գընա՛նք,— ասավ քինալից,—
 Ես չեմ վախի ձեր մոսկովյան հռչակավոր ժողովից...
 — Այո, գընա՛նք,— ասաց Մելնիկն ու գըլխարկը վերցրեց. —

Ամեն մարդու չի վիճակված այս աշխարհում լինել մեծ:
Ամեն մեծի ժրպտում են կյանքն ու պատմությունը ո՛չ միշտ...
Եթե մերժես դու Ստալինին, այդքան գոռոզ ու հանգիստ,
Ինչպես որ ինձ այս րոպեին անմշտորեն մերժեցիր,—
Այն ժամանակ ես քեզ կասեմ. դու աքաղաղ ես ընտիր:

Ի

Հըսկա մի տուն է գետափին՝ հեռախոսի թելերով:
Դրոների մոտ ժամապահներ՝ կանգնած արթուն, անխռով:
Կանոն ու կարգ ամենուրեք, համազգեստներ նրբակար,
Կաշվե փափուկ բազկաթոռներ, շրջանակներ ու նրկար:
Բազմոցների վրա նըստած էին խոհուն, առնացի
Հրուշակավոր կոմանդիրները Տասներորդ բանակի.
Քաջ Սոլովյն, ամպրոպային գրոհների ռահվիրան,
Ու Կորչագովն արիասիրտ, լայնաթիկունք, նրբիրան,
Բելյակովը, զորահակիր գնացքների բոց հոգին,
Կոբզարենկոն, ջահել ժրպիտն ու աղվամազը դեմքին:
Եվ շատ ուրիշ կոմանդիրներ, երիտասարդ ու տարեց,
Որոնց անվամբ Կարմիր Բանակն իր վեհ ուղին զարդարեց:
Որ թուր ունեն իրենց կողքին ու հաղթանակ՝ հետևում,
Որոնց անունը ոսոխին արկի շառաչ է թրվում:
Եվ Սերգեևը լուռ կանգնած ու ժրպտալով մեղմորեն՝
Նայում էր սեգ այդ բազմությանն ու հարց տալիս ինքնիրեն.
Նրբանց միջից ո՛րն է Ստալինն ու Կոմանդարմը հերոս,
Որ հրուշակվեց իր դոնբասյան դուլցազնական մարշերով:
Կոմանդիրները ներս մըտած նորեկներին երբ տեսան
Հագուստներով ծրվեն-ծրվեն, բեղ-միրուքները խոպան,
Սակայն հըպարտ իրենց փառքով, ինքնավրստահ ու վայել,—
Ոտքի ելան, ողջույն տրվին, ըսկըսեցին փայփայել:
Ու Սերգեևն ըզզաց նրբանց հայացքներում անվեհեր.
Ինչքան գորո՞վ եղբայրական, ինչքան հարգա՞նք, ինչքան սե՛ր...
Այդ հայացքները խանդավառ՝ հերոսության բոցով լի՝
Բազկաթոռները թավշապատ, հատակն ինչպես հայելի,
Համազգեստները մաքրափայլ, պատերը կոկ, յուղաներկ,
Թըվում էին Սերգեևին՝ շրջող երազ, թուլիչ երգ:
Նա ինքնամոռ հիացումով նայում էր այդ բոլորին,
Քաղցր էր թըվում իր վերքն իրեն ու հաղթանակը՝ դյուրին:
Հովան կանգնած էր գըլխահակ՝ դեմքին կընճիռ մի անվերժ,
Եվ թավշային մի շրջյունով դիմացի դուռը բացվեց

Ու դուրս եկան երկու հոգի՝ վրճիռ ու կամք դեմքերին:
Կոմանդիրները հարգանքով արագ ոտքի կանգնեցին:
Մուխ էր հանում երկուսից մեկը բեղերից իրեն թափ:
Այդ Ստալինն էր: Համրաքայլ նա իռլանդի մոտեցավ,
Ձեռքը սեղմից, նայեց դեմքին ու հարց տրվավ կիսկատակ.
— Խոսիր, իռլա. կրպաշտպաննե՞նք Ցարիցինը, թե՛ կտանք:
— Կպաշտպանենք,— հնչեց մրուրը ու շեշտակի պատասխան:
Եվ ըսկըսեց Ռազմի Խորհուրդը՝ նիստը մեծ հաղթութան:

Մերոնք դիրքեր էին բռնել բազմաշարժար Գոմրակում:
Կըռվում էին հերոսաբար և անվրեպ կըրակում:
Եվ Կոմանդարմը պանծալի շուներ ոչ քուն, ոչ հանգիստ.
Նա չէր նրստում կաթինետում՝ հեռու արկից, վրտանգից:
Գիշերն անքուն երկնում էր նա իր հրամանն անվահեր,
Առավոտյան գընում ճակատ, որ կատարումն ըստուգեր:
Վորոպոնով կայանում, ընկերներով միասին,
Իր վագոնում սեղանի շուրջ հակվել էր նա քարտեզին,
Որ մարտական գործողության մի նոր արար մըշակեր.
Հանկարծ հընչեց սարսափահար մի աղաղակ.— Կազակնե՛ր...
Եվ Կոմանդարմը, Սուլվեյը, Մեյնիկովն ու Մեյնիկն
Անմիջապես ներքև թըռան շտաբային վագոնից:
Մերոնք ահով փախչում էին՝ խրամատները թողած:
Կոմանդարմի դեմքի վրա թարթիչ անգամ չդողաց.
Հանգիստ նետեց նա կարաբինն իր ուսերից, ու դաժան
Գըլխով արեց դեպի հարավ: Զինակիցները տեսան
Կազակների հեծելազորն այգիներում մոտակա:
Սուսերամերկ ու վարգավազ գալիս էր նա մեր վրա:
— Արագավազ է Ձեր նըթույգը. շո՛ւտ, ընկեր Կոմանդարմ,
Հեծեք իսկույն,— հընչեց մի ձայն տագնապալից, քընքշախառն:
Եվ բոլորի սըրտում ծագեց միայն մի տենչ, մի տագնապ.
Փըրկել մի կերպ Կոմանդարմին կործանումից անխուսափ:
Բայց նա չափեց ոտից գըլուխ փախուստի միտք հայտնողին
Արագ հեգնոտ մի հայացքով, և նըկատեց այդ պահին
Անտեր թողած մի գընդացիր կայարանի պատի մոտ:
Անմիջապես վրա ցատկեց վագրի նման թեթևոտ:
Նա գընդացիրը քարշ տըվավ դեպի առուն դիմացի,

Տեղավորեց ոսոխի դեմ, չոքեց հեքով առնացի,
 Փամփուշտակալն իսկույն դրրեց, նըշան բրոնեց անսրխալ,
 Եվ ըսկըսեց «Մաքսիմը» գոռ կատաղաբար կըտկըտալ
 Վայրկենապես ամայացած վագոնների տողանցում՝
 Տալով իր խոլ արծագանքներն ինչպես որոտ ու ճայթյուն:
 Այնժամ ամենքը նետվեցին Կոմանդարմին օգնության:
 Սոլովկեյի հըրամանով խուճապողները դարձան:
 Բերին ուրիշ մի գընդացի: Բայց օգնության հարկ չըկար.
 Ոսոխների հեծյալ լավան հողմացըրիվ: Խելագար,
 Փախչում էր ետ՝ հետև թողած լոկ դիակներ ու փոշի:
 Եվ հեռացավ ու ծածկըվեց վարագույրով մըշտուշի:



Պաշարումի երկրորդ ալիքն էլ ոռնաձայն փըշըրվեց:
 Մեր պատմության վըսեմ գըրքում մի բոց երես էլ գըրվեց,
 Ճնոյեմբերի քըսանհինգի առավոտյան մուկլուսին
 Քաջ Բուդյոննու հերոսական ամպրոպաշունչ այրուձին
 Գնիլուակսայ կայարանում տըվեց անհղ թըրամարտ
 Ու կրասնովյան մի զորամաս ջարդեց մինչև վերջին մարդ:
 Առավ հաղար-հաղար գերի, առավ հաղար հըրացան,
 Առավ անթիվ գընդացիներ, թընդանոթներ ցարական,
 Առավ քարվանը սայլերի, ռազմապարեն ու ձիեր»...

✓ Ռազմի ավարը հաշվեցին յոթը ցերեկ ու գիշեր:
 Թըվել մարտերն այդ օրերի, գործերը վեհ, սըխրական,
 Երբ ծըվատում էին արկերն ամեն ըստեպ ու ավան,
 Հյուսել այդ վեպն անծայրածիր — դըժվար է, իմ ուժից՝ վեր.
 Դեռ կը ծընվի մեր Ֆիրդուսին, կըգա կախարդ մի Հոմեր:
 Հագարավոր հողեր տըվինք այդ մարտերում ահարկու.
 Ընկավ Եմմանն ինքնամոռաց, անդուլ դարբինը հոգու,
 Ընկավ Տարասը լեռնալանջ՝ Կոմանդարմի կուռ վահան,
 Ընկավ Իվան Կովաչի դուատըրը, գեղեցիկ նատաշան:
 Ընկան անթիվ աստղեր, վարդեր այդ արյունոտ օրերին.
 Ընկավ Ռուդնեն առյուծասիրտ՝ Կոմանդարմի սիրելին:
 Ծանր էր տանել այդքան կորուստ, այդքան կըսկիծ ու կարոտ,
 Երբ դեռ հեռու էր հաղթանակն, ուղին դըժվար, քարքարոտ:
 Զորքը հոգնած, արյունաքամ, պարեն չըկա, արկ չըկա,
 Եվ Ստալինը ճակատից վերադարձել է Մոսկվա,

Տրոցկին լարում է նոր դավեր, վարկաբեկում վատաբար.
Ծանր է պըսական անմահության, ծանր է լինել զորավար...

Դիզվում էին խոհերն անվերջ հանգույցներով անմեկին.

Կոմանդարմին այն ժամանակ հեռագրատուն կանչեցին:

Այդ Ստալինն էր. նա խոսում էր հեռավոր Մոսկվայից:

Վայրկենապես անէացան տարակուսանք ու թախիծ,

Ստալինը, թեկուզ հեռու, միշտ նրբանց հետ է հոգով:

— Ապարատով խոսում ենք ես, Կորգարենկոն, Կուզնեցով,
Սոլովեյը և մի քանի ցարիցիոյան ընկերներ:

Դեղեկատները մեր կողմից Մոսկվա կըգան այս գիշեր:

Կամիշինում մեր դրուժյունն այս օրերին վատացավ.

Իսկ ես մենակ եմ... Քիչ հետո նա պատասխան ըստացավ.

— Աստրախանից, Վորոնեժից կանչիր փորձված ընկերներ,
եվ գործն ամուր դիր: Չէ որ դու և՛ տնօրեն ես, և՛ տեր:

Կոմանդարմը գոտեպընդվեց այդ առնական խոսքերից

Ու թելադրեց մի նոր հարցում՝ հուզված հոգու խորքերից:

— Ասեք խնդրեմ՝ Արևմուտքում ի՞նչ նորություն կա հիմա:

— Առայժմ այնտեղ առանձնապես նշանավոր բան չըկա:

— Դեհ, ամենայն հաջողություն: Բարեկեցե՛ք Իլյիչին,

Սեղմում ենք ջերմ ու սրտալի ձեռքը նրա թանկագին:

— Իլյիչն հոգով ձեզ հետ է. նա սիրում է ձեզ, դեերիդ:

Ապարատի առջև կանգնած՝ ժրպտում էին հարգալից

Հրոշակավոր կոմանդիրները Տասերորդ բանակի,

Իրար ամուր միաձուլված որպես մի սիրտ, մի հոգի:

Եվ դուրս եկան հեռագրատան շենքից ուրախ ու կայտառ:

Գետեզրյա զորանոցում հընչում էր զիլ մի կիթառ:

Բուդյոննովյան քաջերն էին այնտեղ երգում ու պարում.

Այդ ուսական հոգին էր մեծ, այդ Ռուսաստանն էր բուրում...

ԴՐՎԱԳ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԳ

Ցարիցիոյան ստեպներին ձմեռն իջավ դժժընդակ,

Ու Վոլգա-մայրը կուշ եկավ իր սառուցե քողի տակ,

Իջավ մըշուշն ինչպես գիշեր, բըռնեց երկինք ու գետին:

Բորանը բաց թողեց միգոմ իր խուլական այրուծին:
 Անթաղ դիերը գերեզման գրտան ձյունի շերտերում:
 Դառն ու անհույս կրճավելով թրռավ ագռավը հեռուն:
 Մենակ կանգնած էր ծարիցինն իբրև կարմիր մի վերդեն
 Մամոնտովյան հողմագալար գրորհներին դեմառդեմ:
 Նըրանք դոփում էին դաշտերն ու ճամփաները կեռման.
 Օղակն էին հյուսում համառ՝ երրորդ ահեղ պաշարման:
 Եվ դեպքերի սըլաքը շար՝ նըրանց օգտին էր գործում.
 Ջրկար բազուկն Ստալինի ծարիցինյան ամրոցում:
 Մեկնել էր նա գոտեմարտի ուրիշ դաժան ճակատներ,
 Որ Կոլշակի արնոտ ժանիքն ու կոտորները կոտորեր:
 Ջրկար բազուկն Ստալինի: Վորոշիլովն էլ չրկար.
 Տրոցկին խարդախ՝ իր դավերով նըրան տարավ վատաբար:
 Ըսպիտակները, քաջ գիտակ հուդայական դավերին,
 Իրենց գընդերը հյուսիսից մինչև Կալաչը բերին:
 Առան Կալաչ ու Կատուբան, հասան Սարեպտ ու Գումրակ.
 Պաշարեցին Կարմիր Վերդենն օղակներով երեքտակ:
 Բայց ի՛նչ կանի ագռավն արծվին, կամ բորենին՝ առյուծին.
 Թըշնամու դեմ կըռվի ելավ Բուդյոննու սեգ այրուծին:
 Մառախուղից ելավ հանկարծ՝ ինչպես մըրրիկ, ինչպես բոց,
 Կայծակնափայլ սուսերներով, դըրոշակներով հողմակոծ:
 Նըստած նըժույգ հըրդեհաբաշ, կայծակե թուրը ձեռքին՝
 Քաջ զորավարն առաջ տարավ դյուցազնական այրուծին:
 Մառախուղից հանկարծ բուանում էր թըշնամուն ընդառաջ
 Եվ ըսկըսվում էր մահացու թըրի զընգոց ու շառաչ,
 Ձիերը ծառս էին լինում՝ տիտանաբար փընչալով,
 Թըռչում էին պատնեշների, փըշալարի վըրայով:
 Ինչպես հըրդեհն է չոր դաշտի տատասկ ու փուշ լափիզում,
 Կամ հողմը խոլ՝ ցըրիվ տալիս տերեն աշնան պարտիզում,
 Այդպես ցըրում էր Բուդյոննին, առնում ավար ու գերի՝
 Թիկունքն անցած Մամոնտովյան կազակային գընդերի:
 Ընկավ նըրա ահեղ զարկից Կրակցովը գոռ գեներալ,
 Գոլուբենցեվը խորտակվեց հորդաններով իր հեծյալ,
 Կարմիր գընդերը կես գիշեր Բալկի վըրա նետվեցին
 Ու շարդեցին մի դիվիզիա մինչև հեծյալը վերջին:
 Ալեքսենն իր գընդերով առաջ եկավ անխափան
 Մինչև դարբասը քաղաքի բազմաշարշար Կատուբան,
 Բայց մի վայրկյան միայն շողաց ռազմի արևը գլխին

ինչպես ամպրոպ վերա հասավ Բուդյոննու հոծ այրուծին,
Փախան գողոզ գեներալի գընդերն ահից խելագար,
Հետևներից Բուդյոննու թուրն էր փայլատակում խուլաբար,
Դեմից նրանց ըսպասում էր դեռ ավելի ահռելին:
Նրանք դիպան քաջ Մենիկի թնդանոթի արկերին:
Եվ թրերի, թընդանոթի ամպրոպային զարկի տակ
Հնկան ինչպես մորեխն արտում վեցն էլ գընդերն ըսպիտակ:

Անդուլ սուրում էր Բուդյոննին, փոթորկաթև, մարտից մարտ,
Փառքը վազում էր առջևից, ինչպես ահեղ ավանգարդ:
Հյուսիսային ավաններից, արյան, ձյունի մեջ թաթավ,
Նրա մրրիկն Արևմտյան ահեղ ճակատը հասավ:

Ջրվերջրեց նա իրեն հետ հրետանի և արկեր,
Որ շուտ հասներ, և թըշնամին նախատեղյակ չբիախչեր:
Նա քաջ գիտեր դիմադրական կորովը նենգ ոսոխի:
Միայն նրա թրի փայլից՝ նա սոսկահար կրփախչի:
Գիտեր. անթիվ թընդանոթներ ավար կառնի մարտերում:

Հրետանու վարպետներին նա իրեն հետ էր բերում:
Մառախուղի միջով տարավ հըրաշագործ այրուծին
Եվ գող դիպավ նա գեներալ Տուկուլչինի կորպուսին:
Ոսոխն անհոգ մըտել էր քուն իր գընդերով անհամար՝
Շուրջը խորունկ խըրամատներ ու պատնեշներ փըշալար:
Թնդաց ուռան որոտագոչ: Աղմուկ, սոսկում ու խուճապ:

✓ Թրերն ահեղ շառաչեցին կայծակների սաստկությամբ:
Հակառակորդը բըռնված իր սեփական թակարդում
Ջարկվեց փըշե պատնեշներին՝ կիսագինված, կիսաթոն:
Ճակատամարտը վերջացավ: Լըռեց ոռնոցն արկերի:
Անէացավ մի ողջ կորպուս՝ թողած ավար և գերի:

(Այդ մահացու վերջին հարվածն էր Կրասնովյան բանակին:
Տիտանական պըտուլտ գործեց Բուդյոննու բոց այրուծին:
— Ոսոխների գըլխին իջավ ինչպես մի ծանրը մըկունդ:

Իր արշավի ճանապարհին ջարդեց քըսան և վեց գունդ:
Առավ գերին հազար և բյուր, հազար և բյուր հրացան,
Առավ բազում թընդանոթներ, գընդացիներ ցարական,
Առավ քարվանը սայլերի՝ արկով, գանձով ծանրաբեռ,
Առավ ձիեր արագավազ, առավ թրեր ու թամբեր:
Առավ Կալաչ ու Կատուբան, առավ Սարեպտ ու Գումրակ:
Մաքրեց դաշտերը հայրենի՝ հորդաններից ըսպիտակ,

Ու հաղթության, փառքի երգով վերադարձավ Յարիցին:
Այսպես ծընվեց մառախուղից Բուդյոննու բոց այրուձին:

Խաղմարեմից իջան Կրասնովն ու իր բանակը ջախջախ:
Եվ Դենիկինը բեմ ելավ՝ ավելի ժանտ ու ճիւղա:
Նա Յարիցինն արյունաքամ՝ չորրորդ անգամ պաշարեց:
Բրիտանական թընդանոթներ, սավառակներ նա բերեց:
Իվ որոշված էր քաղաքի ճակատագիրը դժխեմ.
Փոթորկալից մրթին ամպեր էին դիզվել նրա դեմ,
Իվ Յարիցինը կատարեց իր պարտքը վեհ պատմական.
Մի ձիգ տարի կանգնեց անառ, որպես ահեղ պատասխան,
Կոմունիզմի գալաբարո ոսոխներին դեմառդեմ:
Մի ձիգ տարի նա դիմացավ, կանգնեց որպես ամուր վեմ
Իելոգվարդյան հողմաշառաչ հեղեղների կենտրոնում:
Փըշրում էր նա նըրանց անվերջ և իրարից բաժանում:
Մի ձիգ տարի նա պայքարեց՝ արյունաքամ ու լարված,
Ու Մոսկվային, երկրի սըրտին արյուն տըվեց, տըվեց հաց...

Առան Կալաչ ու Կատլուբան, հասան Սարեպտ ու Գումրակ:
Վերջին մարտերն էին գընում արյունաներկ բլրի տակ:
Ու Սվետոզարը դիրք մըտած գընդացրային ջոկատով
Մեբոնց նահանջն էր պաշտպանում: Գընդացիրները թոթով,
Դիպուկ ժուտ հարվածներով հընձում էին թըշնամուն.
Լենկնում էին նըրանց դիրքը մերձվուգյան դաշտերում,
Այնժամ ոսոխն ամպրոպային իր ողջ կըրակը դժխեմ՝
Կենտրոնացրեց գընդացրային այդ ահավոր բընի դեմ:
Երեք խիզախ գընդացրորդ ընկան արյան դիրքերում:
Ու Սվետոզարը պարզ տեսավ. վայրկյանը մահ է բերում:
Նա մընացած ընկերներին հըրամայեց. դեհ, տըղերք.
Դուք ձեր երկու գընդացիրներն առեք իսկույն ու փախեք:
Իսկ ես նըրանց իմ «Մաքսիմով» կհամոզեմ դեռ այստեղ:
Եվ ըսկըսեց «Մաքսիմն» իր ճառը և ճարտար և ահեղ:
Եվ երբ մահվան ժապավենի վերջին կըրակը պարպեց,
Եվ երբ ճիշով օրհասական մի շար ոսոխ էլ պառկեց,
Երբ մոտենում էր, վարզավազ, ինչպես լավան, թըշնամին,
Ջոկատապետը լուռ փարվեց իր անկենդան «Մաքսիմին»:
Արդեն մոտիկ էին նըրանք, և մահն արդեն վերահաս.
Նա գընդացիրն ամուր գըրկեց ինչպես կըրքոտ սիրահար,

Կանգնեց ափին ու մըրմընջաց.— Առ քո որդուն, Վոլգա-մայր...
Ու վայր նետվեց, թաղվեց գետի ալիքներում փրփրաբաշ։
Օդում հավետ անէացավ վերջին հառաչը՝ «Նատաշ...»...



Ինը հարյուր քրսան թրվի հունվարի լույս երեքին
Ամուր սառույցը Վոլգայի դոփեց կարմիր այրուձին։
Թումանովյան գընդերն էին ինչպես ահեղ ուրագան։
Ըսպիտակները սոսկահար թողին քաղաքն ու փախան,
Դեպի վագոն արշավեցին վաճառական ու տերեր՝
Քըրտնակալած, թեերի տակ՝ պայուսակներ ու զարդեր։
Իկան տերերը քաղաքի հաղթանակի երգերով,
Իկան կարմիր դըրողակներով ու վարդագույն վերքերով։
Եկան տեսան իրենց առաջ մի գորշ, խավար ավերակ.
Քանդել էին ջըրմուղ ու թել, կըտրել և ջուր և կըրակ։
Փողոց ելան Ցարիցինի պրոլետարները հուզված,
Նըրա տերերն իրավագոր ու պաշտպաններն անձնուրաց,
Նըրա տերերն ու պաշտպաններն արնաշաղախ երեկվա
Այսօր դարձան հըրթաշագործ շինարարները նըրա։
Քաջ Սերգենն, արդեն թողած իր փառապանծ այրուձին՝
Դարձավ կարմիր ճարտարագետ և արշավեց վերըստին
Ավելի բարդ ու դժվարին ճակատներով կառուցման։
Նա կառուցեց երկաթագուն նըժույգների գործարան։
Այդ նըժույգները դուրս ելան դարբասներից լայնաբաց.
Նըրանց խըրխինջն անծայրածիր ըստեպներում զըրընգաց։
Նըրանք անցան ու հերկեցին այն ըստեպները բերրի,
Որոնք մի օր հերկվում էին պայթյուններով արկերի։
Նըրանք անցան ու հերկեցին խըրամատները խոպան,
Որտեղ ընկավ Իվան Կովաչը, պանծալի հընոցպան։
Եվ Ցարիցինը արկերով հազար անգամ ծըվատված,
Այրված անթիվ հըրդեհներով և թալանված, և քանդված,
Դարձավ երգի ու երկաթի հըռչակավոր մի քաղաք։
Ուպես անանց հըզորության ու ցընծության աղաղակ՝
Նըրա կըրծքում հըպարտ կանչում են բյուրավոր շշակներ։
Ամենուրեք տիտանական գործարաններ են կանգնել
Իրենց անթիվ ծըխաններով՝ երկնակարկառ, ահագին,
Իվ սեգ մի տեսք են ընծայել այս հինավուրց քաղաքին։

Ասֆալտապատ պողոտաներ, ապարանքներ բազմահարկ,
 Հրապարակներ լայնածավալ, այգեստաններ, պարտեզ-պարկ,
 Երիտասարդ բանվորների աչքերն ուրախ, իմաստուն
 Եվ ժրպիտներն աղջիկների, ծիծաղ ու երգ ու խոստում,
 Ու Վոլգա-մայրը՝ նավերի քարավաններ շալակած,
 Եվ ամեն ինչ առատ, առատ, առատ ինչպես ճերմակ հաց:
 Հին Յարիցինը նոր կյանքով ու պատմությամբ է եռում.
 Յարիցինի փառքը զընգում է հեռավոր փերում:
 Ուստի մեր նոր Յարիցինի շինարարները ջահել
 Գրտան ներան մի նոր անուն՝ արժանավոր ու վայել:
 Ո՞վ Յարիցինը պաշտպանեց՝ տալով իր կյանքը բոցին,
 Ո՞ւմ անունով մեր քաջարի գրնդերն ի մարտ գընացին:
 Ո՞վ Յարիցինը դարձրեց կոմունիզմի անառ բերդ,
 Ո՞վ ջախջախեց օձի գըլուփն ու հաղթանակն ավարտեց,—
 Այդ Ստալինն էր մեծագործ, հաջորդը մեծ Լենինի.
 Եվ կամեցան, որ քաղաքին այդ վեհ անունը լինի,
 Անունը քաղցր ու անսասան ինչպես երկիր ու երկաթ
 Որոշեցին, որ Յարիցինը հին՝ կոչվի ՍՏԱԼԻՆԳՐԱԴ:

Վ Ե Ր Ջ Ե Ր Գ

Ահա անցավ իմ նավն անտակ, անծայրածիր օվկիանից,
 Եվ իմ հոգին, ինչպես մըշուշ, պատեց անհուն մի թախիծ:
 Նըստած եմ ես ծովգերքին՝ հոգիս մըռայլ ու խըռով.
 Քանի՞ կաթիլ, արդյոք, առա ես իմ երգի թևերով,
 Ո՞ր լայնությունը չափեցի, ո՞ր խորությունը հասա,
 Եվ չըլողա՞ց, արդյոք, իմ նավը չափանց հեշտասահ...
 Ունա՞յն հարցեր... ա՛խ, ես գիտեմ, որ չեմ երգի Հոմերոս,
 Եվ չեմ կերտել քո գործերին և քեզ վայել մի հերոս,
 Բայց երջանիկ եմ, որ ապրում եմ, Առաջնորդ, քո դարում,
 Եվ դըրվագներն եմ քո կյանքի իմ երգերով մեծարում:
 Անցավ այն խուլ դյուցազնական կրոիվների էպոպեն,
 Եվ նոր հոգսով սաղմնավորվեց կյանքիդ ամեն մի ռուպեն:
 Երկրին զարկել էր պատերազմը... կործանիչ մի կաթված,
 Դաշտերը մերկ, սմբակներով և արկերով ծըվատվա՞ծ,
 Գործարանները մահամերձ, արտերն ամեն ամայի,
 Ամենուրեք մըռայլ ուրուն աղքատություն ու մահ:
 Դու մեծագործ Լենինի հետ, նըրան հըզոր զինակից,

Դուրս հանեցիր երկիրն արագ անկման ահեղ վիճակից,
Դու միշտ անմահ էինինի հետ, նրբան ձուլված հավիտյան,
Օրորեցիր օրոցքը բոց բանվորական պետության:
Շառագունեց հորիզոնում մի նոր կյանքի արշալույս
Եվ բորենին հին աշխարհի՝ ինչպես խավար՝ տվավ խուլյս,
Հաղթանակի հուրհեր մանուկն իր օրոցքից ելավ դուրս,
Կանգնեց ամուր ոտքի վրա, կապեց գոտին, առավ գուրզ,
Նրբա թովանքն ու զորությունն արար աշխարհ ճանաչեց:
Նրբա պայծառ հայացքի տակ մի նոր աշխարհ կանաչեց:

Մեռավ էինինն... Ու լուրն ահեղ, ինչպես կայծակ սրբունթաց,
Մեր պատմության ամպակուտակ հորիզոնում դրդաց,
Մըթնեց աշխարհը, մարդկությունը կանգ առավ դալկացած,
Կարծես արևն ակնթարթում շառաչելով ընկավ ցած:
Եվ մարդկային անափ այդ վիշտը, այդ կըսկիծն անպատում
Դու կըրեցիր, պարփակեցիր տիտանական քո սրբություն.
Տեսար դու մահը էինինի... Օ՛, բընությունը դաժան
Դեռ չէր պատժել մարդուն երբեք այդքան ահեղ, տարածամ,
Եվ այն պահին, երբ մեր հոգին թափում էր դառն արտասուք,
Ինչպես անձրևն օվկիանոսում, ինչպես դաշտում պարող բուք,
Երբ մեզ տիրել էր տըխրությունն ինչպես մի ծանրը մութ ամպ,
Եվ երբ ամեն ծառի վրա ագռավային շարությամբ
Կոմունիզմի ձմեռնամուտն էր կըռավում թըշնամին,—
Վըշտի, ոխի այդ ահավոր ու ցըրտաշունչ օրերին
Հընչեց շեփորը պողպատե յոթնաբանյա քո երգման:
Ինչպես հուլիսի, հաղթանակի պողպատածուլլ մի արձան,
Կանգնած վըսեմ դագաղի դեմ այնտեղ հանգչող արևի,
Ձեռքդ մեկնած հորիզոնին, աշխարհներին, դարերին,
Դու երգվեցիր առաջապահ մեր բանակի անունից
Նրբա դրոշն առաջ տանել՝ միշտ անաղարտ և անբիծ:
Դու երգվեցիր... Եվ քո երգումն, իբրև կըրակ սըրբազան,
Վառվեց բոլոր հոգիներում և լույս հանեց ապագան:
Քո երգումով գոտեպընդված՝ մենք մեծ ուղին քայլեցինք,

**Քո երդումով թևավորված՝ առանք երկիր ու երկինք,
Քո երդումով անցանք հազար վերելքներով դժվարին
Ու բարձրացանք հաղթանակի հավերժական կատարին:
Քո երդումով լուսավորված ամրոցը մեր աներեր
Ողջ աշխարհին տալիս է լույս և անթառամ օրենքներ:
Քո երդումով դու քանդեցիր մահվան գաղտնիքն ահավոր,
Քո երդումով լենինը կա, լենինը դու ես այսօր:**

1940, հունվար

«Վաղ ժամանակ մի հայ շենում

Մի հարգեալ հարս է լինում»:

ՀՈՒՆ ԹՈՒՄԱՆԾԱՆ

Գեղեցիկ է նա, Հեթմանց Կարինեն,
Մի նոր աշխարհի, նոր հովտի շուշան,
Նըրա վեպը խոր՝ դեռ չի հորինել
Ոչ մի վիպագիր ու ոչ մի գուսան:
Աչքերը զուլալ, սարի ականաղբյուր,
Իրանն առվակի ափին բուսած ուռ,
Հոգին առաջին ձյունի պես անբիծ.
Պախրի պես թեթև գալիս է հանդից,
Քայլում է գյուղում հըպարտ, կուրծքը դուրս.
Իր ուժին գիտակ և ինքնավայել,
Սափորը բրնձած ուտին ասես գուրգ:
Եվ սիրատու չոր եթե մի ջահել
Նըրան երկյուղած մի խոսք է նետում,
Ժըպտում է նա լոկ՝ մանրիկ, սըրտաբաց:
Այդպես լեռնային լիճն է վետվետում
Օտար քարերից իրեն մեջ նետված,
Բայց չի փոթորկվում:

Կարինեն Հեթմանց

Մեկին է տըվել իր սերը՝ միայն,
Եվ Վահանն է դա, կարմիր պարտիզան:
Նա ջահել կաղնի, սա ուռ է դալար,
Ուտին ու կաղնին փարված են իրար:
Եվ խելոք է նա, տընարար մի կին,
Սազում են իրար երեսն ու հոգին:
Հենց որ նա մտավ Հեթմանց հարկի տակ,
Մառանը լցվեց հազար բարիքով,
Փայլեց մաքրությամբ լուսամուտ ու բակ
Եվ սիրեց նըրան կեսուրը հոգով:

Ո՞ւմ հարսն է այսքան սիրուն, հարգեոր,
Կա մի Կարինե և մեկ Ուռուձոր:

Եվ դու արի տես՝ այս Ուռուձորում
Փոխում են տարին երեք նախագահ,
Վիճում են, կռվում, իրար տակ փորում,
Բայց կարգ ու կանոն չըկա ու չըկա:
Ո՞վ է մեղավոր, ինչո՞ւ, չգիտեն.
Նիստեր են անում, գոռում խռպոտած:
Եվ այդ նիստերից մեկում՝ Ժպտադեմ
Ռայկոմի ջահել քարտուղարն ասաց.
— Կի՛ն ընտրենք, կանայք արդար կլինեն.
Եվ կա թեկնածու, ահա Կարինեն:
Կարինեն շիկնեց, շրթունքը դողաց:
Աչքերում ասես գերանդի շողաց,
Բայց կանգնել է լուռ, ինչպես երազում:
Նրա փոխարեն կեսուրն է խոսում.
— Էդ ո՞նց... էս գյուղում տղամարդ չկա՞,
Դուք իմ հարսին եք ընտրում նախագահ,
Որ կանգնի խոսի իր քավորի դժժ...
Ի՞նչ եք ծիծաղում... ես համաձայն չեմ:

Ու վախեցել էր Կարինեն
Ինչպես խրտնած մի պախրա:
— Ոչ, ո՛չ, Վահան, ինձ ըսպանեն,
Ես չեմ լինի նախագահ:
Տասը մարդու գործ կատարեմ
Տղամարդու, աղջկա,
Քեզ շոր կարեմ, քեզ արտ վարեմ,
Բայց չեմ լինի նախագահ:
Մարիամ ազին ուրախացավ.
— Ջան, Կարինե, կանաչե՛տ
Կախեց Վահանն ունքերը թավ
Փոթորկալից ամպի պես.
— Ես չեմ ուզում կողքիս կըպած
Զխոսկան հարս, միայն կին,
Ուզում եմ ես՝ ճակատը բաց
Կովի ընկեր իմ կողքին:

Սա մեծ պատգամն է լենինի
Ծվ սուրբ ավանդ մեզ համար.
Կինն էլ այսօր պետք է լինի
Իշխանության ղեկավար:
Ընտրում են քեզ, եթե փախչես,
Մարդիկ «ամոթ» կասեն ինձ,
Էլ դու սիրած իմ կինը չես,
Կրաժանվեմ քեզանից:

Կանգնած է խոհուն Հեթմանց Կարինեն:
Ուռուձոր գյուղի նախագահն է նա:
Քավոր, սանահեր եկել են ահա,
Որ նրա խոսելն ու գործը տեսնեն:
— Դե ասա տեսնեմ, ընկեր նախագահ.
Բաս Ուռուձորում ուրիշ տուն չըկա՞,
Որ իմ սելն ես դու պարհակ ուղարկում,
Բոստանըս գյուղին ճանապարհ սարքում:—
Հարց. տվին էսպես ծերերը ղոռա,
Իրար բոթեցին և աչքով արին:
Շիկնեց Կարինեն, մոլորվեց մի պահ,
Հետո փրսփրաց իր քարտուղարին.
— Ասա ծերուկին՝ չըհամարձակվի
Սըրանից հետո ծեծել աղջկան.
Մովիկն ամեն օր պիտի մասնակցի
Բոլոր փորձերին մեր թատրոնական:
Ասա, որ հարսին նույնպես չծեծի.
Դատարան կըտամ հենց որ լսեցի...
Զարմացած մոլոր ծերերն եկան տուն:
Քավոր Սեթն ասաց սանահեր Վերդուն.
— Զխոսկան տեղով էսքան անարուռ,
Խոսեց, կդառնա մի կըրակ ու հուր:

Եվ եկան օրեր... Գյուղն էր ճարճատու
Կռկկտիվ շարժման մրրիկների մեջ:
Պայքարի ամրոց դարձավ ամեն տուն
Ամեն ժամ նոր հարց, նոր հանգույց ու վեճ:
Ու քավոր Սեթն, սանահեր Վերդին
Զախչախներ դառել թշնամու ջաղցին.

Ամեն պատի տակ ասում, քըշփըշում,
Սոցիալիզմի դեմ սըտեր են փըշում:
Ի՞նչ ասես. ծեր են, հաստակող ու թարս,
Կարինեն խոնարհ, շխոսկան մի հարս,
Խիզախ է հոգին, կայծակով լեցուն,
Բայց սովորույթը փակում է լեզուն
Ահեղ անմարմին կեսուրի նըման:
Ձըգվեց Կարինեն... և երեկոյան
Ժողովի կանչեց բոլոր ծերերին:
Մի պահ կանգ առավ հուզված ու լըռին
Ու հետո ճայթեց... այնպես վարարեց,
Եվ այնպես խոսեց, և այնպես վառեց,
Որ կեսուրն ասավ իր քավոր Սեթին.
— Գետինը պատռեր, մտնեի գետին:
Աշխարհում էլ հարգ, պատիվ չըմնաց,
Գառ էր Կարինես, ձեռքիցըս գընաց:
Բայց Վահանն այդ օր ուրախ եկավ տուն
Համբուրեց կընոջն ու փոքրիկ որդուն
Եվ ասավ.— Հիմա դու շես միայն կին,
Այլ կովի ընկեր ամուսնուդ կողքին:

Եվ եկան օրեր, եկան տարիներ,
Ինչպես ծառն այգում ծաղկեց Կարինեն:
Անունը լեռան ձյունի պես անբիծ՝
Գալիս է մենակ անտառից, հանդից,
Անցնում թաղեթաղ, մտնում ամեն տուն,
Շողքի պես ամեն երդիքից կաթում,
Տեսնում ամեն ցավ, ուղղում ամեն բաց
Ու լուսավորում սըրտերը մարդկանց:
Ահել ու ջահել սիրում են նըրան.
Սանահեր Վերդին ու քավոր Սեթին
Հետը հաշտվեցին մի տարի հետո,
Էլ չեն բամբասում, չեն խոսում վըրան:
Իսկ Մարիամ աղին առաջվա նըման
Հյուսում է հարսի ծամերը սև-սաթ:
Վահանն է միայն վերջերս անհանգիստ:
Ի՞նչ է պատահել: Մի երիտասարդ
Ջինկոմ է եկել Կարմիր Բանակից

Եվ Կարինեի գլուղսովետին կից
Ռազմական խմբակն է դեկավարում:
Գոհ է Կարինեն... և շատ է սիրում
Ներա ցուցմունքով կրրակել նազան...
Իրավունք ունի, Վահանն այդ գիտե.
Եվ պարտավոր է Կարինեն գուցե.
Պետք է կրրակել ամենքն իմանան,
Երբ ժամը հընչի, երբ գա թշնամին...
Սակայն դուր չեկավ մի բան Վահանին:
Բերք էին բաշխում և հանդես էր մեծ,
Հոսում էր հայոց բոցկլտուն գինին:
Կարինեն ամբողջ մի գավաթ խմեց
Ու պարի կանչեց կայտառ զինկոմին:
Լեռներից փըշող աշնան զով քամին
Ծածանում էր սև մազերը նըրա,
Եվ պարում էր նա, նազում, կաքավում,
Կարծես բոցեղեն անձրև էր մաղվում
Վահանի գլխին ու սըրտի վրա:
Պարում էր զինկոմն ինչպես երազում
Եվ հրաժեշտի խոսքերն էր ասում:

Կանցնեն օրեր և տարիներ,
Զեմ մոռանա, քեզ Կարինե
Լեռները մեր ծաղկավետ
Ուր կատաղի ձիեր նըստած
Կյանքի ցողով սրտներս թաց,
Սուրում էինք իրար հետ:
Քաղցր է մեռնել ու տալ հոգին
Այս սիրասուն հայրենիքին,
Ուր կա այսքան երգ ու սեր,
Այսքան քարեր քանդակազարդ,
Այսքան երազ և այսքան վարդ
Եվ քեզ նման աղջիկներ:

Երբ Կարինեն երեկոյան
Հոգնած, ուրախ եկավ տուն,
Վահանն այսպես դիմեց նրան`

Ունքերը կախ ու տրտում.

— Ես չեմ ուզում ստից հարբած

Անտառ ու սար չափող կին.

Ուզում եմ ես՝ ճակատը բաց

Կյանքի ընկեր իմ կողքին:

Սա մեծ պատգամն է Լենինի,

Նրա վրձիոն իմաստուն.

Հավատարիմ պետք է լինի

Ամեն մի կին իր մարդուն:

Բավ է երկիր կառավարես,

Հըրաժարվիր վաղվանից,

Եթե մերժես, իմ կինը չես,

Կրածանվեմ քեզանից:

Շիկնեց Կարինեն, շրթունքը դողաց,

Աչքերում ցասում և արցունք շողաց:

Ծանր էր վճիռը, վիրավորական:

Ելավ և այսպես տըվեց պատասխան.

— Արթո՞ւն եմ ես, թե երազում...

Գո՞ւ ես, Վահան, այդպես ասում,

Ձեմ հավատում քո խոսքին.

Դո՞ւ խավարից ինձ հանեցիր,

Դո՞ւ իմ կյանքի ուղին բացիր,

Հիմա փակո՞ւմ ես կրկին:

Իս միայն քոնն եմ, հավատա,

Քեզնից բացի ոչ ոք չկա

Իմ սիրո մեջ, իմ հոգում:

Էլ չեմ խոսի զինկոմի հետ,

Գընում է նա էգուց ևեթ,

Իզուր ես դու փոթորկվում:

Գընում է նա... բայց իմացիր,

Որ այս գիշեր ըսպանեցիր

Դու մեր կյանքում մի լավ բան.

Այդ փոխադարձ հավատն էր մեր,

Որ միշտ կանգնած էր աներեր

Սիրո բերդին պահապան:

Եվ եկան օրեր, եկան տարիներ,
 Երկրում երկրի պես աճեց Կարինեն:
 Էլ չէր առաջվա թեթևոտ պախրան,
 Որ վեր է նայում, լեռներ երազում:
 Գրլուփը ծանրած խոհերով հասուն՝
 Նայեց նա հողին ինչպես հասկ ամուսն:
 Լեռներից վազող առուն փրփրավետ
 Դարձավ լայնահուն ու խորունկ մի գետ:
 Գուսանները նոր՝ նրբան երգեցին
 Համբավը գյուղից տարան քաղաքներ,
 Նետեց Ուտուձորն իր շապիկը հին
 Խավարի, ցեխի դժխեմ ցնցուտին,
 Սկրսեց մետաքս ու բետոն հագնել:
 Ուրախ դեմքերով թատրոնն է լեցուն:
 Պատմում է հայոց քաղցրախոս լեզուն,
 Բե ինչպես այնտեղ հեռու Դոնքասում,
 Ստախանովը, Բանվոր հասարակ,
 Հանքեր է փորում հեքյաթից արագ
 Ու կոմունիզմի դռները բացում:
 Իվ շողշողում է անունը նրա
 Մեր հայրենիքի, մեր դարի վրա:
 Ժպտաց Կարինեն... Գնում է նա սեզ
 Աշխատանքային երթի առաջից:
 Ջի հանձնել մրցման դրոշմը երրեք
 Եվ չի մըրոտել անունն իր անբիծ:
 Նրա հետ մեկտեղ Վահանն է աճել,
 Վարչական շրնորհք ու փառք նվաճել,
 Գործի են կանչել նրան քաղաքից:
 Եվ տըխուր է նա: Մի թանձր թախիծ
 Պատել է հոգին ամպի պես մըռայլ:
 Ժողկոմը ջահել և մի գեներալ
 Մի շաբաթ հետո վերստին եկան
 Ու որոշեցին. լեռներում այս զով,
 Զուգված այս կանաչ թավշյա թիկնոցով,
 Ուր երկինքը լույս, կապույտ է այսքան,
 Պետք է հաստատվի ռեսպուբլիկական
 Հսկա մի սովխոզ, մի անառ ամրոց
 Մեր ազնրվացեղ ռազմիկ ձիերի:

Այդ հայրենիքին պատիվ կբերի:
 Հընուց են հայտնի լեռները հայոց
 Երիվարներով սեզ ու սանձակոծ,
 Որ զուգեւ են միշտ գնդերն ամենհի
 Պարսիկ և արաբ հըրոսակաների:
 Մեր լեռներն այսօր հրձիւնքով կտան
 Առյուծ նըժուլգներ մեր հայրենիքին
 Որ քաջ Բուդյոննու Կարմիր այրուձին
 Հայոց լեռնային հողմերի նըման
 Ոսոխների դեմ սուրա հաղթական,
 Երբ հնչեն ռազմի շեփորները վես
 Ու կովի կոշե Առաջնորդը մեզ:
 Սովխոզը հըսկա՝ պահանջում է փորձ,
 Պահանջում է սիրտ ու ձեռք հաստատուն,
 Որ ճգմե ճամփին ամեն խորդուբորդ...
 Եվ Վահանն է դա — վայել թեկնածուն:
 Այսպես խոսեցին: Շիկնեց Կարինեն,
 Շողշողաց հոգում հրձիւնքի մի ծով
 Լեռները շափեց խիզախ հայացքով,
 Եվ իր Վահանին նայեց քնքշորեն:
 Բայց Վահանը լուռ ուսերը թոթվեց.
 — Դժվար է գործը, շարշարանքը մեծ,
 Հսկա մի սովխոզ, ահավոր սարեր,
 Սնափ արոտներ, ձիեր սանձարձակ,
 Գիշեր մինչև լույս գալլ ու ավազակ,
 Թալան, դատարան, ամոթանք, ըստվեր...
 Բացակայության օրեր, տարիներ,
 Մենակ կմնա գյուղում Կարինեն...
 Ո՛չ. դժվար է դա, ուժերիցըս վեր...
 Ո՛չ... — Վահանն այսպես տվեց
պատասխան,
 Եվ ինքն ու կինը մըռայլ առն ենկան:

— Ես չեմ ուզում՝ կողքիս կպած
 Լեղապատառ ամուսին.
 Ուզում եմ ես՝ ճակատը բաց
 Գործի ընկեր իմ կողքին:
 Եւ Ստալինի պատգամն է բոց,

Ով սուրբ է նա մեզ համար,
Մեր կամքի դեմ չըկա ամրոց
Ոչ ահեկի, ոչ անառ:
Ընտրել են քեզ, եթե փախչես,
Գործի շանցնես հուսալից,
Դու ինձ համար էլ Վահան չես,
Կրաժանվեմ քեզանից...
Նվ ես կերթամ քո փոխարեն
Կատարելու գործը մեծ:
Ժպտաց Վահանն... Ու Կարինեն
Ռտֆի ելավ ու ձգվեց:

— Կարինե,— գռչեց Վահանը սրտանց,—
Ինքի՛ր ինձ, գժրծել պատրաստ եմ ահա.
Կարող ես դու սարն անել տեղահան...
Նվ մյուս առավոտ նըժույգներ նստած
Խրանք երկուսով սովխող սլացան:
Գեղեցիկ է նա, Հեթմանց Կարինեն
Լեռների գրկում խիզախ բարձրաբերձ:
Դեռ քանի՞ գուսան, քանի՞ բանաստեղծ
Նըրա վեպն անմահ՝ պիտի հորինեն:
Համբավը նրա դեռ պիտի տանեն,
Պատմեն աշխարհի բոլոր կողմերում
Իվ ասեն.— Տեսեք հայոց աղջըկան,
Տեսեք, ինչ ազնիվ ծաղիկներ բուսան,
Ինչ լույս է ծաղկել, ինչ կյանք է եռում
Հայոց լեռներում, հայոց լեռներում:

1941, Երևան

Կանգնած կարմիր կոմիսարի առաջ,
Անասնական սարսափն իր աչքերին,
Հայացքը հանցավոր ներքև հառած՝
Այսպես խոսեց գերմանական գերին.
— Այդ լեյտենանտը քաջ էր, ահռելի,
Նա մեզ կատաղաբար դիմադրեց,
Մինչև վերջին գնդակն իր ընկառեց:
Մենք զարմացած էինք... Բայց ավելի
Սարսափելի էր նա, երբ որ... պարեց:

* * *

Հպարտ է, երջանիկ Որյան Վաչեն,
Ամենալավ կոմբայնավարն է նա,
Տպագրված է իր պատկերն արդեն
Սիրուն աղջիկների սրտի վրա:
Թիկնեղ է, արծվաքիթ ու սևաչյա,
Հասակն ասես դալար մի բարդենի,
Բազկում՝ եռանդ, սրտում՝ գանձեր ունի:
Կարող է ցորենի ծովում ծուփ-ծուփ
Նա իր կոմբայնն իբրև մակույկ վարել,
Ծրեկոյան կարող է գալ անումբ,
Հերոս խաղալ, երգել և նկարել:
Բայց նա ամենից լավ գիտե պարել:
Հոգի է, զարդ բոլոր հանդեսներում,
Նրան ամենքն են հյուր հրավիրում,
Քանի՜ հըպարտ մայրեր նըրա համար
Զուգել են դուստրերին ու հառաչել,
Քանի՜ մատաղ սրտեր կարոտավառ
Շշնջացել են երազում. «Վաչե»...
Բայց անտարբեր, անխախտ է պատանին.
Սիրում է նա միայն Մովսիսարին:

* * *

Մովիկի հետ աճել է նույն թաղում:
Չուկ էր բռնում ծովից նրա համար,
Դեզի ետև պահմըտոցիկ խաղում,
Դիտմամբ կաղում, որ նա զվարճանար:
Թիթեռի պես թռավ իր մանկությունն
Ու լրացավ քսաներկու տարին,
Եվ նա մի օր, պայծառ մի իրիկուն,
Երբ լեռներից հոգնած գալիս էր տուն,
Հանկարծ բախում տեսավ Մովինարին:
Տեսավ կարծես թե առաջին անգամ
Կեցվածքը երազուն, ինչպես այժյամ,
Շուրթերը կիսաբաց ու վարդագույն...
Աղջիկն էլ այդ զգաց ու հասկացավ,
Ներքև թողեց արտեանունքը թավ,
Մանրիկ ժպտաց ու ներս փախավ իսկույն:
Այնուհետև նրանք սկսեցին
Պահմըտոցի խաղալ մի այլ սիրով,
Պահվում էր Մովինարը վերջստին
Եվ շէր գտնում Վաչեն շաքաթներով:

* * *

Ահա թիկնել է նա սարի լանջին,
Մաղկանց գորգի վրա երանավետ
Եվ երազում է: Հովր տարփագին:
Գալիս է լուռ, քսվում նրա դեմքին
Ու խաղ անում գանգուր մազերի հետ:
Նա երազում է: Ջինջ երկնքի տակ
Արտերն են ծովածուփ տարուրերվում,
Ներքև ժպտում է լիճը կապուտակ
Եվ իր սիրած եզերքներին փարվում:
Նա երազում է.

— Ախ, իմ Մովինար,
Դու լինեիր Սևանն, իսկ ես՝ կղզին,
Ինձ փարվեիր քո թևերով դալար,
Համբուրեիր սիրով ու քաղցրագին:
Բայց ոչ, ես չեմ ուզում լինել կղզի.
Նա փոքր է, քո սիրուն հավասար չի:

Դու լիճ լինես, իսկ ես՝ ամբողջ քար,
 Որ քեզ պահեմ գրկումս հավիտյան,
 Որ դու պարես ինձ հետ և ինձ համար,
 Որ քեզ ուրիշ տղերք աչքով չըտան:
 Բայց ոչ. քարափ լինել ես չեմ ուզում.
 Կանգնած է քարն անշարժ և անհուզում:
 Ես արտ լինեմ կանաչ, դու՝ քաղցր հով,
 Ես քուն մտնեմ երկնքի տակ անամպ,
 Դու գաս, անցնես քաղցրիկ սվավալով,
 Ինձ համբուրես, քնից ես արթնանամ:
 Բայց դու կանցնես կերթաս ուրիշ լանջեր,
 Ես կըմընամ այստեղ նորից անսեր:
 Ոչ. պահմտոց խաղանք առաջվա պես,
 Ես քեզ փնտռեմ՝ սրտումըս ծով կարոտ,
 Ձորից ինչպես այծյամ դու հայտնվես,
 Ծիծաղելով թռչես ու գաս ինձ մոտ:
 Բանանք իրար սրտներըս պարզորեն,
 Եվ արթնանան արտերն ալիք-ալիք,
 Եվ բերք լինի, ծովածավալ ցորեն,
 Առատութուն, բերկրանք ու հարսանիք...
 Այսպես նա երազում էր, լուռ, բարի,
 Հայրենական խաղաղ երկնքի տակ:
 — Վաչե՛,— կանչեց մի ձայն տագնապալի
 Ու վեր ցատկեց Վաչեն ինչպես գնդակ:

Հնչում է ռադիո-ձայնը զայրագին
 Գյուղի հրապարակում կիրակնօրյա.
 — Ուխտադրուժ նետվել է թշնամին
 Մեր շեն, խաղաղ հայրենիքի վրա:
 Գալիս է նա խուժդուժ, զրրահակիր,
 Որ մեր ծաղիկն ու մեր հոգին ճզմի.
 Ուրեմըն՝ ե՛լ, վերածնված երկիր,
 Հայրենական արդար պատերազմի:
 Ահեղ համբավն անտես ամպի նման
 Ծածկեց երկինքն ու լիճը լուսածին:
 Մըղկտացին սրտերը մայրական
 Եվ անեծքի այրող նետեր թռան
 Դեպի այն ոճրագործ թշնամին:

Ամբողջ գիշեր թնդում էր նաղարան
 Կոլխոզային գյուղի հրապարակում:
 Բացված էր ճոխ հրաժեշտի սեղան:
 Հայրենի արաղով լի թասերն առան,
 Որդիներին բանակ են ուղարկում:
 Երբ թամաղան իր թասը դատարկեց,
 Մերուկ աշուղ Ջարեհն այսպես երգեց.
 — «Գրնում եք պատերազմ, հայոց քաջեր,
 Թող ձեր կոխած ճամփեն կանաչ լինի,
 Թո՛ղ սարսափի Հիտլերը մարդակեր,
 Իր սիրտը ձեր թըրին ճանաչ լինի:
 Թո՛ղ ձեզ ճանաչ լինի Թուր-կայծակին,
 Թո՛ղ ձեր տակին խաղա Սասնա տան ձին,
 Հիշե՛ք մեր նախահայր առյուծ-Հայկին,
 Որ զարկը ձեր շանթի շառաչ լինի:
 Շանթի շառաչ լինի անունը մեր,
 Պաշտպանեցեք պատի՛վն ու տո՛ւնը մեր,
 Ստալինյան եղբայրությո՛ւնը մեր
 Կռվում թող ձեր աչքի առաջ լինի:
 Աչքի առաջ մեր հացն ու մեր գինին,
 Իրգերը նոր ու տաճարները հի՛ն,
 Հայաստանի հավատարիմ որդին,
 Հայրենական մարտում թող քա՛ջ լինի:
 Թող քա՛ջ լինի ձե՛ր կուռը, հայ քաջեր,
 Թող կործանվի՛ Հիտլերը մարդակեր,
 Ջարեհս երգեմ հաղթանակի երգեր,
 Գերեզմանիս ճամփեն թող կա՛րճ լինի...»:
 Երբ ավարտեց աշուղն իր երգը նոր
 Զուռնան զլեց կայտառ մի եղանակ:
 Լրար անցան ջահել և ալեւոր,
 Մեջտեղ բացին պարի հրապարակ.
 — Ո՛ւր է Վաչեն, Վաչեն պիտի պարի՛...
 Վաչեն հանկարծակի նետվեց հանդես:
 Պտուտահողմ էր, բարձրացավ կարծես՝
 Ոլորելով փոշին ճանապարհի:
 Պարում էր խանդավառ և կատաղի,
 Գետինը դողդողում էր ոտքի տակ,
 Թեթև նետվում էր վեր, ինչպես գնդակ,

Մեկ փոթորկվում էր ահավոր թափով,
 Ինչպես Սեանն ալեկոծման պահին,
 Ապա դառնում հանկարծ մեղմիկ մի հով,
 Որ սիրատարփ երգեր սվսվալով՝
 Շոյում է ծաղիկներն իրիկնային:
 Հիացմունքի խանդով նայում էին,
 Ու ծափ տալիս ջահել և ալեոր:
 Վաչեն անհագ նայում էր շորս բոլոր:
 Ահա գըտավ նրան, Մովինարին,
 Գըլուխ տըվեց, կանգնեց նրա դիմաց,
 Ինչպես կանգնում է փոթորկոտ ծովում
 Ալիքն ալիքի դեմ: Եվ կարկամած,
 Սիրատոչոր աչքերն իրար գամած՝
 Մի պահ կարծես կովի են պատրաստվում:
 — Պարի՛ր, Մովի՛կ, պարի՛ր Վաչեի հետ,—
 Հորդորեցին ամենքը մեկ-բերան:
 Եվ մեր գեղեցկուհին, ինչպես մի նետ,
 Թողած աղեղն իր ամոթխածության,
 Պոկվեց տեղից: Ինչպես խրոնած պախրան
 Փախչում է, կանգ առնում, նայում հետև,
 Ապա նորից է սըլանում թեթև՝
 Կատարելով մի լայն բոլորագիծ,
 Որ խուսափի աչքից հետապնդող,
 Այդպես էլ սա... կարծես լույսի մի շող՝
 Մերթ վախեցած փախչում էր տղայից,
 Կանգնում էր մերթ, ժպտում խորհրդավոր,
 Հետո կրկին ճախրում նրա բոլոր:
 Վաչեն պարում էր խենթ ու վերացած:
 Ոտքերի տակ երկիրը չէր կարծես,
 Թևում էր եթերում սիրով հարբած:
 Նա մի խորախորհուրդ հայացք ուսաց,
 Կարդում է հայացքում. «սիրում եմ քեզ»:
 Առավոտյան կոմբայնավար Վաչեն
 Մընաք բարով ասավ ծնողներին:
 — Թո՛ր, որդի, ինչպես բնից բաղեն,
 Քո ծնողները թող ափսոս չասեն,
 Որ քեզ նման զավակ աշխարհ բերին:
 Գրնա՛ և գա՛րկ անարգ ֆաշիստներին,

Վերադարձիր միայն հաղթանակով...
 Ծեր հայրը գունավոր թաշկինակով
 Սըրբեց արցունքը մորուքից կախված
 Ու համբուրեց մեկնող իր զավակին:
 Եվ մայրը փաթաթվեց կարոտագին,
 Նրեց մի պահ և տխրածայն ասաց.
 — Տալիս եմ քեզ հայրենիքի համար,
 Որդուց էլ թանկ նվեր չունի մի մայր.
 Գնա՛, որդի, մընում եմ աչքս բաց...
 Գընա՛, այդպես է գիրը մայրերի...
 Պահի՛ր քեզ, չըմբռնե՛ս, չընկնե՛ս գերի...
 Եվ մոտեցավ տղան Ծովինարին:
 Երկու խորունկ հայացք առան իրար,
 Ինչպես երկու երկինք: Եվ այդ պահին
 Արտերը ոսկեծով ծփում էին.
 — Քե՛զ եմ թողնում կոմբայնս, Ծովինա՛ր...
 — Պատրաստ եմ ես կոմբայն կառավարել,
 Իսկ դու կովի՛ր, ինչպես գիտես պարել...
 Ես քոնն եմ... — կըսպասեմ քեզ հավիտյան...
 Եվ ինձ հիշի՛ր... — զեփյուռն առավոտյան
 Ծովինարի մազից առավ մի փունջ
 Ու Վաչեի ճակատը հովհարեց,
 Ու հրաժեշտի համբույրը քաղցրաշունչ
 Պապակ շուրթերն իրար միավորեց:

Գնացքը հեռանում է հեփհե՛
 Կլանելով անծայրածիր ուղին:
 Ծանոթ լեռներն արդեն թողած հետև՝
 Վաչեն մտքով նայում է դեռ գյուղին:
 Թվում է իր սրտից մինչև այնտեղ,
 Ուր Ծովինարը համբուրեց նրան,
 Զգված է կարոտի մի նուրբ-ասեղ,
 Մի շիկափոկ աներևույթ պարան,
 Որ կըձգվի անվերջ ու կերկարի
 Թեկուզ մինչև բեռն այս աշխարհի:
 Անցնում են կայարան ու կայարան,
 Լեռներ, դաշտեր, գետեր և անտառներ,
 Կաղրեկը, Կովկասի ծերով հսկան,

Գեղաժիծաղ դաշտերն ուկրաինական
 Եվ շեկ անծայրաժիր տափաստաններ:
 Ո՞ւր է տանում գնացքը Վաչեին:
 Նա իր զինվորության երկու տարին
 Ապրել է փառաշուք այն քաղաքում,
 Ուր գալարվում է հորդաջուր Նևան,
 Ուր ծովն է մոտ, ոսոխը՝ հարևան,
 Ուր թշնամուց վտանգ է գուշակում
 Իր պղնձե մատով հեծյալը մեծ:
 Վաչեն այնտեղ եղավ և սովորեց
 Հըրետանու դղրդալից լեզուն:
 Այսօր ցասման կրակներով լեցուն՝
 Նորից աճապարում է կենինգրադ:
 Գուցե գտնի այնտեղ մարտկոցն իր հին,
 Իր կապուտաշ խարտյաշ ընկերներին:
 Եվ գընացքի սուղոցն ինչպես մկրատ
 Կտրեց նրա երազների շղթան:
 Գընացքն արդեն հասել էր կայարան.
 Իջավ նա վազոնից, քաղաք մտավ՝
 Զորս կողմ ագահաբար մտիկ տալով:
 Ահա շարքերի հետ փոշեթաթավ
 Անցնում է Նևայի պողոտայով:
 Ահա Անիշկինի կամուրջը քար,
 Զորս պղնձե կտրիճ տիտանաբար
 Սանձում են թափը շորս նժույգների:
 Ի՞նչ գեղեցիկ է, ի՞նչ զարհուրելի:
 Այստե՛ղ կանգնել, խորհել է նա հաճախ
 «Ինչպե՛ս կարող է այս պղդինձը պաղ
 Շնչել անզուսպ և ունենալ հոգի...»:
 Ահա շքեղ կենտրոնը քաղաքի,
 Ապարանքներն անթիվ ու երկնահաս,
 Սյուները, կամարներն ինչպես երազ,
 Եվ հոյակապ տաճարն Իսահակի,
 Որի գմբեթն ինչպես ոսկյա մի թագ
 Շողում է հուլիսյան արևի տակ:
 Ահա պալատը ծովակալության
 Երկինքը մըխրճված իր նիզակով,
 Հեծյալ Պետրոսը մեծ, հզոր Նևան,

Որ հաղթական կամարների տակով
Արքայաբար անցնում է դեպի ծով:
Շողում է նեայից մինչև Սևան
Մի լույս լազուր, մի հայրական տանիք:
Եվ վաչեի հոգում հասկի նման
Հասունանում է խոսքը՝ «հայրենիք»:

Այն օրվանից անցել են ամիսներ,
Երբ առաջին անգամ հերոսը մեր
Տեսավ ճակատամարտը: Մուժ փոսում,
Անխոս պառկած հրանոթի կողքին,
Խուզարկելով գիշերը խավարշտին՝
Նա, անհամբեր, կովին էր ըսպասում:
Բայց լուռ էր թշնամին: Շարժում չրկար:
Վաչեն շուրթերն ամուր սեղմեց իրար
Որ չդողան... «ամոթ է, անվայել,
Կովիր այնպես, ինչպես գիտես պարել...»:
Բայց այդ մի պահ էր լոկ... հանկարծակի,
Խավարը պատռելով իրեն հագի՝
Ունաց գիշերն ու դաշտը որոտաց,
Հազարավոր դժոխքներից հորդած
Մահվան հողմերն — ահեղ վրնգստացին:
Բռունցքի մեջ հավաքելով հոգին՝
Վաչեն հրամայեց.

— Մարտկոց, կրա՛կ...

Նրա երկյուղն անցավ այն ժամանակ:
Այնօրվանից Վաչեն գիշեր-ցերեկ
Լըսում էր դղրդյունը ռումբերի,
Երբ հողն էր դողդողում ամենուրեք,
Հրդեհն էր ոլորում մազերը շեկ,
Երբ որ ճարճատյունով զարհուրելի
Ընկնում էին ծառերը հաստաբուն
Եվ փուլ էին գալիս կամուրջ ու տուն:
Արդեն վաղուց ընտելացել էր նա
Ռազմի հրեշավոր տեսիլներին,
Տեսել էր բաց աչքով արյուն ու մահ,
Ավեր ու մոխրակույտ և ավելին:
Տեսել էր, թե ինչպես դառնագոռոշ

Արկն էր պայթել նրա ճանապարհին
Եվ աղիքները՝ մոտ իր ընկերոջ
Ծառից կախված տարուբերվում էին
Ինչպես պատառ-պատառ նետված պարան,
Բայց ոչ թե վախն էր համակել նրան,
Այլ հուրն ատելության անհանգչելի:
Եվ նա զրահապատ հըրեշների
Ոհմակը ջախջախել էր շատ անգամ
Ահեղ և անվրեպ իր արկերով:
Տեսել էր ցասմավառ հակազորոհ
Ու ճաշակել նահանջը դառնահամ...

Անցել են տոթակեզ օրերն ամռան:
Թամբեց աշունը հողմաբաշ իր ձին:
Արնածարավ գնդերը հիտլերյան
Մըռայլ ու մահազույժ ամպի նման
Լենինգրադի վրա կուտակվեցին:
Հերոս քաղաքը հետ էր շարտում
Ֆաշիստական հեղեղը գարշելի:
Այդ առավոտ մարտկոցը Վաչեի,
Սքողված իր աննշմար թաքստոցում,
Վըրիժառու ռումբերն էր ուղարկում
Առաջ հոխորտացող տոտալներին:
Նրանք մերոնց մարտկոցն ի հայտ բերին
Եվ նենգավոր ճիվաղների նման
Ամբողջ գեհնն իրենց կատաղության
Շարտեցին այն կողմ: Եվ սկսվեց
Կյանքի, մահվան օրհասական մրցում,
Հրետանային տենդոտ մի բանավեճ,
Որ հորձանք տալով անտառի մեջ՝
Անդուլ մի ոռնոցի էր վերածվում:
Եվ ճողփելով հեղեղն իր իսկ արյան՝
Հակառակորդը հարձակման դիմեց:
Թևերը ձախ և աջ առաջացան
Եվ մեր մարտկոցն առան օղակի մեջ:
Ընկան մեկ-մեկ, հերոսական մահով,
Հրետանային իր ընկերներն արդեն:
Իսկ թշնամին գալիս էր ոռնալով:

Մարտկոցի մոտ մնաց միայն Վաչեն
 Արկերը վերջացել էին վաղուց,
 Իսկ թշնամին սեղմում էր անընդհատ
 — Ա՛խ,— մոռնաց Վաչեն ինչպես առյուծ
 Ու վերցրած լեցուն մի ավտոմատ՝
 Շարունակեց կռվել ավտոմատով:
 Բայց գնդակներն այստեղ էլ վերջացան:
 Նետեց նա ավտոմատը զայրույթով
 Ու մի ձեռքում նռնակ, մյուսում՝ նազան,
 Շարունակեց հնձել թշնամական
 Դարձերը, որ գալիս էին ընդհուպ...
 Նրա սրտով անցան ինչպես կայծակ
 Հայրենական արտերը ոսկեծուփ
 Կապույտ ու լուսավոր երկնքի տակ,
 Լեռները սեգ, Սևանը կապուտակ,
 Համբույրը հայրական, հայացքն իր մոր,
 Որ կարոտով ճամփին է իր հառել,
 Նվ Մովսիկի խոսքերը թևավոր.
 «Կռվիր այնպե՛ս, ինչպես գիտես պարել»:
 Ինչպես նա կուզենար նորից փարվել
 Իր հոգու մեջ փայլատակող կյանքին,
 Նորից նստել սարի լանջին մենակ՝
 Սիրով ու երազով լցրած հոգին
 Նրբ արնախում գայլերը ոռնացին.
 — Ռո՛ւս, անձնատո՛ւր եղիր...

Այն ժամանակ
 Պարզեց Վաչեն թևերն իր կապարե,
 Որ խիստ հոգնել ու ծանրացել էին,
 Նայեց մահվան կատարածուններին,
 Խորունկ շընչեց և ըսկսեց... պարել:
 Պարում էր կատաղի և խանդավառ՝
 Հոգով փոխադրված մի այլ աշխարհ,
 Թեթև նետվում էր վեր, ինչպես գնդակ
 Գետինը դողդողում էր ոտքի տակ,
 Մերթ փոթորկվում էր մոլեգին թափով,
 Ինչպես Սևանն ալեկոծման պահին,
 Ապա դառնում հանկարծ մեղմիկ մի հով,
 Որ սիրատարփ երգեր սվսվայով,
 Շոյում է ծաղիկներն իրիկնային:

Նայում էին թշնամիներն ապշած,
 Այդ խենթ պարին, այդքան տարօրինակ...
 Կապկանուման մի եֆրեյտոր ասաց.
 — Խփենք, ահից խելագարված է նա:
 — Զրկրակե՛լ,— գոռաց մի լեյտենանտ:—
 Բռնել՝ ո՛ղջ-ո՛ղջ և ուղարկել շտա՛բ...
 Մինչդեռ վաչեն պարում էր հողմաթափ՝
 Հտպիտ կապիկների ծիծաղի տակ,
 Ռումբերն էին պայթում որպես թմբուկ,
 Սուլում էր անտառում իբրև նվագ
 Ականային մահասարսուռ մի բուք:
 Սրտում խոսում էր նա. «մնաք բա՛րով,
 իմ հայրենի՛ք, իմ սե՛ր, իմ ընկերնե՛ր,
 Կյանքիս ուղին ես անց կացա պարով,
 Եվ այժմ պարելով պիտի մեռնեմ...»:
 Եվ այն պահին, երբ դահիճները շար
 Սեղմում էին օղակն ըսպառնալից,
 Վաչեն հանկարծակի մի խելագար
 Պտույտ գործեց, թեքվեց ու գրպանից
 Հանեց նռնակը...

— Դուք ուրա՛խ եք, հա՛...
 Դուք ցանկանում եք սե՛րը կործանել,
 Դուք ցանկանում եք աշխարհում ցլանել
 Ատելության փոթորիկնե՛ր... ահա՛:
 Եվ նա նետեց նռնակն իրեն վերջին
 Ֆաշիստական ամբոխի մեջ ապշած,
 Պայթեց ու բարձրացավ մահվան փողին,
 Արձագանքից անտառը դրդըրդաց...

Երբ օժանդակ զորքերը մեր հասան
 Այնտեղ, ուր լեյտենանտը քաջ
 Պարեց վերջին իր պարն անմահության,
 Կապիկների դիակույտում տեսան
 Նրա դիակն ազնիվ՝ կրծքին կակալ,
 Ծակատի շուրջ վարդափթիթ պըսակ —
 Ու հայրենի երկիրը՝ գլխի տակ...

1941 հուլիս, Երևան

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Լեւիք	.	.	.	.	.	.	.	.	.	3
Ստալին	.	.	.	.	.	.	.	.	.	5

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԵԾ ստորյան

Ֆիրդուսի .	.	.	.	.	.	.	.	.	.	9
Երկու հանճարեղ գլուխ .	.	.	.	.	.	.	.	.	.	18
Նրեանին .	.	.	.	.	.	.	.	.	.	23
Սկան .	.	.	.	.	.	.	.	.	.	26
Շքանշանի երգում	.	.	.	.	.	.	.	.	.	31
Ողջունյն Առաջնորդին	.	.	.	.	.	.	.	.	.	34
Դուրբես ու Մարգարիտ	.	.	.	.	.	.	.	.	.	35
Ա. Ս. Գուշկինին	.	.	.	.	.	.	.	.	.	37
Վերածնունդ .	.	.	.	.	.	.	.	.	.	42
Հաղորտություն .	.	.	.	.	.	.	.	.	.	46
18-րդ համագումարը	.	.	.	.	.	.	.	.	.	49
Կոմիտաս .	.	.	.	.	.	.	.	.	.	51
Գորուն .	.	.	.	.	.	.	.	.	.	52

Հայրենական պատերազմ

Դու քաղցր ես .	.	.	.	.	.	.	.	.	.	54
Մարտակոչ .	.	.	.	.	.	.	.	.	.	55
Նա պիտի կռիվի .	.	.	.	.	.	.	.	.	.	58
Միցկևիչ և Հեյլեր	.	.	.	.	.	.	.	.	.	60
Կապիտան Գաստելլո	.	.	.	.	.	.	.	.	.	63
Կոմունիզմի զորավարը .	.	.	.	.	.	.	.	.	.	66
Ուղերձ իմ ժողովրդին	.	.	.	.	.	.	.	.	.	68
Կիևը մերն է .	.	.	.	.	.	.	.	.	.	73
Արդաթանդի խնձորները .	.	.	.	.	.	.	.	.	.	74
Մենք չենք տա Մոսկվան	.	.	.	.	.	.	.	.	.	76
Լսե՛ք, դարեր	.	.	.	.	.	.	.	.	.	79
Նրա զերջին խոսքը	.	.	.	.	.	.	.	.	.	81
Բլինդաժում	.	.	.	.	.	.	.	.	.	82
Ստալինգրադ	.	.	.	.	.	.	.	.	.	85
Լուսանկար	.	.	.	.	.	.	.	.	.	86
Վերջին ժամ	.	.	.	.	.	.	.	.	.	88
Ծառում .	.	.	.	.	.	.	.	.	.	90
Հայոց լեզուն .	.	.	.	.	.	.	.	.	.	93

Շնորհաժողորագիր	94
Կյուրոսի կտակը	96
Բացիկ բանակի գեներալ Հ. Բաղրամյանին	97
Հաղթանակի բերկրանք	98
1945 թվի մայիսի 9-ը	99

Փոքրկից հետո

Ներքող հաղթության	100
Հայրենաքաղձություն	101
Ընկուզենու ստվերում	103
Ասք հսկտեմբերյան	105
Սովետական Վրաստանին	108
Ողջույն Ուզբեկստանին	110
Խաչատուր Աբովյան	112
XIV համագումարին	115
Դեկտեմբեր Կարտիական համագումարի	116
Մոսկվա	118
Բորենինների սիմֆոնիա	123
Սովետական Բանակին	124
Կոմունիզմի բանակ	125
Պատասխան	127
Նամակ ընկեր Ժանիս Զուլմաչին	129
Տոնօրյա խոհեր	132
Նազիմ Հիքմեթ	134
Խաղաղության աղափնին	136
Նրեան	138
Խոսք եղբայրության	141
Գաղել կառուցման	144

Պ Ո Ն Մ Ն Ե Ր

Ռուջանի քաբափը	147
Վեպի հերոսները	247
Դյուլցազնագիրք	251
Կարինե	347
Վաչե	350

Խմբագիր՝ Ե. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Վ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Կոնսերվ. սրբագրիչ՝ Ս. ՄԱՐՈՒԹՅԱՆ

»

ՎՋ. 04585: Գումակեր 347: Տիրաժ 5000:

**Տպագր. 22³ ժամ., հեղինակ. 16.1 ժամ., հրատարակչական 16,7 ժամուկ:
Հանձնված է տրատիր. 6 III 1951 թ.: Ստորագրված է տպագր. 1951 թ.,**

Գինը՝ 11 ո. 70 կ., կազմը՝ 4 ո.

Հայպոլիգրաֆհրատի № 3 տպարան, Լենինի պողոտա № 51, Երևան, 1951 թ.: